

Հ Ա Յ Ե Ց Ա Կ Ա Ր Գ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ՄԱԿ-Ի «ՌԻՈ+20» ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ՝
«ՄԻՆԶԵՎ 2030 Թ. ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՕՐԱԿԱՐԳ»
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ
(առ 2016 թ. ապրիլի 30-ը)**

К О Н Ц Е П Ц И Я

**СТРАТЕГИИ РЕАЛИЗАЦИИ РЕКОМЕНДАЦИЙ
САММИТА ООН “РИО+20”
В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ
В КОНТЕКСТЕ ВСЕМИРНОЙ ПРОГРАММЫ
“ПОВЕСТКА ДНЯ В ОБЛАСТИ УСТОЙЧИВОГО РАЗВИТИЯ
НА ПЕРИОД ДО 2030 ГОДА”**

C O N C E P T

**ON THE STRATEGY OF THE REALIZATION
OF THE UN SUMMIT “RIO+20” RECOMMENDATIONS
IN THE REPUBLIC OF ARMENIA
IN THE CONTEXT OF THE WORLD PROGRAM
“THE 2030 AGENDA FOR SUSTAINABLE DEVELOPMENT”**



European Union



Empowered lives.
Resilient nations.



Միջգերատեսչական հանձնաժողովի աշխատանքներին հասարակական կազմակերպությունների և փորձագետների մասնակցությանը և սույն գրքի հրատարակմանը աջակցել են **Եվրոպական Միությունը, Գլոբալ էկոլոգիական հիմնադրամը և ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը** «Հայաստանում Ռիո+20» գործընթացի շրջանակներում կառավարական կառույցների և ոչ-կառավարական հատվածի միջև երկխոսության հնարավորությունների ստեղծում» փոքր դրամաշնորհային ծրագրի շրջանակներում:

Ծրագրի իրականացնողը՝ «Հանուն կայուն մարդկային զարգացման» ասոցիացիան/UNEPNatCom իր երախտագիտությունն է հայտնում հովանավորներին՝ ցուցաբերված աջակցության համար:

Участие общественных организаций и экспертов в деятельности Межведомственной комиссии и изданию этой книги содействовали **Европейский Союз, Глобальный экологический фонд и Программа ООН по развитию** в рамках проекта в системе малых грантов «Формирование возможностей для диалога между правительственными структурами и неправительственным сектором в рамках процесса “PostRio+20” в Армении».

Исполнитель проекта – Ассоциация «За устойчивое человеческое развитие»/UNEPNatCom выражает благодарность спонсорам за оказанную поддержку.

The participation of non-governmental organizations and experts in the activities of the Interdepartmental Commission and the publication of this book were promoted by **the European Union, the Global Environment Fund and the UNDP** in the framework of small grants programme «Enabling dialogue between governmental structures and non-governmental sector within the framework of the “PostRio+20” process in Armenia».

Project Executor - the Association “For Sustainable Human Development” /UNEPNatCom expresses gratitude to the sponsors for the provided support.



**«ՀԱՆՈՒՆ ԿԱՅՈՒՆ
ՄԱՐԴԿԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ»
ԱՍՈՑԻԱՑԻԱ**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	4
ԱՄՓՈՓ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ	7
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	8
ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ	10
I. ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ, ՇՐՋԱԿԱՍԻԶԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ	10
II. ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ /ՎԵՐԱԿԱՆԳՎՈՂ/ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՋԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆ	14
III. ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՅՈՒՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	17
IV. ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՅՈՒՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	26
V. ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՋԱՐԳԱՑՈՒՄ	33
VI. ԿԱՅՈՒՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՋԱՐԳԱՑՈՒՄ	36
VII. ԿԱՅՈՒՆ ՔԱՂԱՔՆԵՐ / ԿԱՆԱԶ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋԱՐԳԱՑՈՒՄ	39
VIII. ԱՆՏԱՌՆԵՐԻ ԿԱՅՈՒՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ	55
IX. «ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ԿԱՅՈՒՆ ՋԱՐԳԱՑՄԱՆ» ՄԱԿ - Ի ՏԱՍՆԱՄՅԱԿԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ՄԱՍՆԱԿՅՈՒԹՅՈՒՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԵՏԱԳԱ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐԻՆ	61
X. ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ ԿԱՅՈՒՆ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ, ԿԱՅՈՒՆ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ ԵՎ ՀԱՄԱԹԻՎ	64
XI. «ԿԱՆԱԶ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ» ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՋԱՐԳԱՑՈՒՄ	66
ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ	74
ԱՄՓՈՓ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	90
ՀԱՎԵԼՎԱԾ 1.	
<i>Աղյուսակ 1.</i> «Վաշինգտոնյան փոխհամաձայնության» (1979) և «Կանաչ համաձայնագրի» (2009) միջև եղած հիմնական տարբերությունները (UNEP, 2009)	92
ՀԱՎԵԼՎԱԾ 2.	
<i>Աղյուսակ 2.</i> Հայաստանի Հանրապետությունում «Հետևիո+20» գործընթացի ուղղությունների կապը Կայուն զարգացման նպատակների հետ	94
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	114
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	116

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետությունը սկսած 1992 թվականից՝ ՄԱԿ-ի «Երկիր մոլորակ» հիմնարար գազաթնաժողովի կայացումից ի վեր, գործուն մասնակցություն է իրականացնում կայուն զարգացմանը նպատակաստորոված համաշխարհային գործընթացում: ՀՀ հասարակությունը բարձր է գնահատում արդի քաղաքակրթության ջանքերը առավելագույնս ներդաշնակեցնելու հանրային կյանքի տնտեսական, սոցիալական և էկոլոգիական առաջնայնությունները՝ անցում կատարելով դեպի կանաչ տնտեսություն հանուն կայուն զարգացման, և կարևորում Հայաստանի Հանրապետության գործունեությունը այդ ասպարեզում:

Ակտիվորեն մասնակցելով ՄԱԿ-ի «Ռիո+20» գազաթնաժողովի աշխատանքներին, մեր երկիրը շարունակեց համագործակցությունը միջազգային հանրության հետ «Հետ Ռիո+20» համաշխարհային գործընթացի շրջանակներում, ձգտելով կատարել գազաթնաժողովի կողմից ընդունված հանձնառությունները, հաշվի առնելով նաև հանրապետության առջև ծառայած մարտահրավերներն ու հիմնախնդիրները:

«Հանուն կայուն մարդկային զարգացման» ասոցիացիայի նախաձեռնությամբ և ՀՀ Կայուն զարգացման ազգային խորհրդի (ԿԶԱԽ) առաջարկությամբ ՀՀ վարչապետի որոշմամբ 09.12.2013թ. ստեղծվեց Միջգերատեսչական հանձնաժողով՝ հասարակական կազմակերպությունների լիիրավ մասնակցությամբ, որի գործունեությանը ներգրավվեց նաև փորձագիտական հանրությունը: ՀԿ-ների և փորձագետների մասնակցությանը, ինչպես նաև նախագծի ընթացքում բազմաթիվ միջոցառումների անցկացմանը (բավական է նշել 24 կլոր սեղանների կազմակերպումը Երևանում և մարզերում) աջակցել են EU/GEF, UNDP կառույցները Փոքր դրամաշնորհների ծրագրի շրջանակներում:

Քանզի «Հետ Ռիո+20» գործընթացը պսակվեց «Վերափոխենք մեր աշխարհը. Մինչև 2030թ. կայուն զարգացման օրակարգ» համաշխարհային ծրագրի ընդունմամբ, որի առանցքը կազմում են Կայուն զարգացման 17 նպատակները 169 թիրախներով/խնդիրներով, հանձնաժողովի կողմից մշակված ռազմավարության հայեցակարգում առավելագույնս հաշվի են առնվել այդ ծրագրի սկզբունքներն ու մոտեցումները և, հատկապես, նշված նպատակները/թիրախները: Ուստի մանրակրկիտ փորձագիտական աշխատանքի և լայնածավալ հանրային քննարկումների արդյունքում մշակված և Կայուն զարգացման ազգային խորհրդի կողմից 05.05.2016թ. հավանության արժանացած սույն հայեցակարգը հիմք է ծառայելու Հայաստանի Հանրապետությունում Կայուն զարգացման նպատակների տեղայնացման և իրականացման բազմակողմանի գործընթացի համար:

ԿԱՐԻՆԵ ԴԱՆԻԵԼՅԱՆ,

աշխ. գիտ. դոկտ., պրոֆ., ՀՀ ԿԶԱԽ քարտուղար,
Միջգերատեսչական հանձնաժողովի փոխնախագահ,
«Հանուն ԿՄԶ» ասոցիացիայի/UNEPNatCom նախագահ,
ՀՊՄՀ Էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոնի վարիչ

ПРЕДИСЛОВИЕ

Начиная с основополагающего Саммита ООН «Планета Земля» в 1992г., Республика Армения осуществляет действенное участие во всемирном процессе переориентации к устойчивому развитию. Общество РА высоко оценивает усилия современной цивилизации, целенаправленные на максимальную гармонизацию экономических, экологических и социальных приоритетов общественной жизни, стремясь к переходу к зеленой экономике в интересах устойчивого развития, и осознает важность участия Республики Армения в данной сфере.

Активно участвуя в работе Саммита ООН «Рио+20», наша страна продолжила сотрудничество с международным сообществом в рамках всемирного процесса «Post Rio+20», стремясь реализовать рекомендации Саммита, с учетом проблем и вызовов, стоящих перед республикой.

По инициативе Ассоциации «За устойчивое человеческое развитие» и предложению Национального совета по устойчивому развитию (НСУР), решением Премьер-министра РА 09-го декабря 2013г. была сформирована Межведомственная комиссия с полномочным участием представителей неправительственных организаций, к деятельности которой было привлечено также экспертное сообщество. Участию НПО и экспертов, а также организации многочисленных мероприятий в процессе проекта (достаточно упомянуть 24 круглых стола, организованных в Ереване и регионах) оказали содействие EU/GEF, UNDP в рамках Программы малых грантов.

Поскольку процесс “Post Rio+20” увенчался принятием всемирной программы «Преобразование нашего мира: Повестка дня в области устойчивого развития на период до 2030 года», базовым компонентом которой являются 17 целей устойчивого развития с 169 задачами, в Концепции стратегии, разработанной Комиссией, учтены принципы и подходы данной программы и, в особенности, цели/задачи. Следовательно, разработанная в результате детальной экспертной работы и широких общественных обсуждений и одобренная Национальным советом по устойчивому развитию 05. мая 2016г., данная Концепция послужит основой для многостороннего процесса имплементации и реализации Целей устойчивого развития в Республике Армения.

КАРИНЕ ДАНИЕЛЯН,

*докт. геогр. н., проф., секретарь НСУР РА,
зам. председателя Межведомственной комиссии,
председатель Ассоциации «За УЧР»/ UNEPNatCom,
зав. Кафедрой экологии и устойчивого развития АГПУ*

PREFACE

Since the UN founding Earth Summit in 1992, the Republic of Armenia has been effectively participating in the global process of reorientation towards Sustainable Development. The Armenian society highly appreciates the efforts of the modern civilization, aimed at the maximum harmonization of economic, environmental and social priorities of public life and at the transition to a Green Economy for Sustainable Development, and recognizes the importance of Armenia's participation in this area.

By actively participating in the work of the UN Summit "Rio + 20", our country has continued its cooperation with the international community within the framework of the worldwide process "Post Rio + 20" in an effort to implement the recommendations of the Summit, taking into account the problems and challenges the Republic faces.

An Interdepartmental Commission was established on December 9, 2013 with the initiative of the Association "For Sustainable Human Development", the proposal of the National Council for Sustainable Development (NCSD) and the decision of the Prime Minister. The Commission involves NGO representatives with full participation rights, as well as representatives of the expert community. The participation of NGOs and experts and the organizations of numerous events in the framework of the project (such as the 24 round tables, organized in Yerevan and the regions) were supported by the EU/GEF, UNDP in the framework of the Small Grants Program.

Since "Post Rio+ 20" process was crowned with the adoption of the world program "Transforming Our World: The 2030 Agenda for Sustainable Development", the basic component of which are the 17 Sustainable Development Goals with 169 targets/objectives, the Strategy Concept developed by the Commission takes into account the principles and approaches of this program and, in particular, its goals and objectives. Therefore, developed as a result of a thorough expert work and broad public discussion, and approved by the NCSD on 05 May 2016, this Concept will serve as a basis for the multilateral process of implementation and realization of Sustainable Development Goals in Armenia.

KARINE DANIELYAN,

*Ph.D in Geography, Professor, the RA NCSD Secretary,
Vice-President of Interdepartmental Commission,
Chairperson of Association "For SHD"/ UNEPNatCom,
Chairperson of Chair on Ecology and Sustainable Development of ASPU*

ԱՄՓՈՓ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Սույն հայեցակարգը կոչված է աջակցելու Հայաստանի Հանրապետությանը ընդգրկվելու «ՀետՌիո+20» համաշխարհային գործընթացում, որը նպատակաուղղված է ՄԱԿ-ի «Ռիո+20» կայուն զարգացման գազաթնաժողովի հանձնառությունների կատարմանը [1]: Հաշվի առնելով, որ վերոհիշյալ գործընթացը հանգեցրեց «Մինչև 2030 թ. կայուն զարգացման օրակարգ» [2] համաշխարհային ծրագրի մշակմանն ու հաստատմանը, և սույն հայեցակարգի սկզբունքներն ու մոտեցումները լիովին համապատասխանում են այդ ծրագրի գաղափարախոսությանը և հիմնադրություններին, ներկայացված հայեցակարգը կարող է հիմք ծառայել տվյալ ծրագրի, հասկապես Հայաստանի Հանրապետությանում կայուն զարգացման նպատակների/թիրախների տեղայնացման և իրականացման համար:

Ելնելով «Ռիո+20» գազաթնաժողովի որոշումներից և «Ռիո+20» ազգային գնահատման զեկույցում [3] ներկայացված կայուն զարգացման տեսանկյունից ՀՀ առաջնահերթ հիմնախնդիրներից, սույն ռազմավարության հայեցակարգում ընդգրկվել են գործունեության հետևյալ ուղղությունները.

1. Հանքարդյունաբերության գործունեությունը և շրջակա միջավայրի ու բնակչության առողջության պահպանությունը:
2. Այլընտրանքային (վերականգվող) էներգետիկայի զարգացում և էներգախնայողություն:
3. Ջրային ռեսուրսների կայուն կառավարում:
4. Թափոնների կայուն կառավարում:
5. Օրգանական գյուղատնտեսության զարգացում:
6. Կայուն զբոսաշրջության զարգացում:
7. Կայուն քաղաքներ / կանաչ ճարտարապետության զարգացում:
8. Կայուն անտառակառավարում, կենսաբազմազանության պահպանում:
9. «Կրթություն հանուն կայուն զարգացման» ՄԱԿ-ի գործընթացի իրականացում:
10. Հազարամյակի զարգացման նպատակների վերափոխումը կայուն զարգացման նպատակների: Կայուն զարգացման ցուցանիշները և համաթիվը:
11. Աղքատության հաղթահարման և կայուն զարգացման նպատակով կանաչ տնտեսության զարգացման ոլորտում օրենսդրական և տնտեսական գործիքների ներդրման խթանում:

Հայեցակարգը մշակվել է նշված ուղղությունների ոլորտների նկատմամբ, «ոլորտի իրավիճակի վերլուծություն - իրավական կարգավորում – իրավիճակի բարելավմանը միտված առաջարկություններ» սխեմայի համապատասխան: Հայեցակարգային հիմնադրությունները և սկզբունքները մշակվել են, որպես ելակետ ընդունելով արդի քաղաքակրթության զարգացման ՄԱԿ-ի շրջանակներում ընդունված պաշտոնական դոկտրինի՝ կայուն (ներդաշնակ, հավասարակշռված, հարատև) զարգացման ձևակերպումը, որը հետևյալն է. *Կայուն զարգացումը (ԿԶ) - դա զարգացում է, որը ներկա և հաջորդ սերունդների ներկայացուցիչներին երաշխավորում է պատշաճ, առավելագույնս հնարավոր հավասար մեկնարկային պայմաններ՝ իրենց ընդունակությունները դրսևորելու և կենսական կարիքները բավարարելու համար: Կայուն զարգացումը հիմնվում է այնպիսի տնտեսության վրա, որը մարդու իրավունքները պաշտպանող ժողովրդավարական հասարակության մեջ զուգորդվում է էկոլոգիական անվտանգության և սոցիալական արդարության սկզբունքների հետ* [4]:

Հարկ է նշել, որ կանաչ էկոնոմիկայի կայացման ասպարեզում Հայաստանի Հանրապետությունում, տարբեր միջազգային կառույցների աջակցությամբ, իրականացվում են մի շարք տեղական ծրագրեր, որոնք, համակարգված մոտեցում դրսևորելու պարագայում, կարող են հիմնապայմաններ հանդիսանալ ազգային մակարդակում ոլորտի զարգացման համար, և սույն հայեցակարգը կոչված է նաև ծառայելու այդ խնդրին:

Հայեցակարգը համահունչ է «Աղետների ռիսկերի նվազեցման ազգային ռազմավարության» [5], ինչպես նաև «2016-2020 թթ. Հայաստան-ՄԱԿ զարգացման աջակցության» ծրագրի [6] հիմնադրություններին, ուստի ի գործու է աջակցելու նաև այդ կարևոր ծրագրերի իրականացմանը:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նախապատմություն

Համաշխարհային հանրությունը 1992 թվականից, ՄԱԿ-ի «Երկիր մոլորակ» Շրջակա միջավայրի և զարգացման գազաթնաժողովի շրջանակներում անվերապահորեն հռչակեց կայուն զարգացումը որպես արդի քաղաքակրթության զարգացման համընդհանուր ուղի: Երկրները հանձնառություններ ստանձնեցին այդ ուղղությամբ ազգային ռազմավարություններ իրականացնել՝ միակցելով նաև Ռիոյի Հռչակագրի և Օրակարգ 21-ի [4] շրջանակներում ուրվագծված քաղաքականության միջոցառումները:

Չնայած կայուն զարգացման ուղղությամբ երկրների և միջազգային կառույցների զգալի հավաքական ջանքերին, ավելի քան երկու տասնամյակ անց դեռևս տիրապետող են սոցիալ-տնտեսական և էկոլոգիական հաշվեկշռված զարգացման մարտահրավերները և չի հաջողվել հասնել գերիշխող նպատակին՝ հաղթահարել հետզհետե խորացող և ընդլայնվող գլոբալ էկոլոգիական ճգնաժամը, որը առավել ցայտուն դրսևորվում է կլիմայի փոփոխության, շրջակա միջավայրի աղտոտվածության, էկոհամակարգերի դեգրադացման ասպարեզում և արտահայտվում բնական ավերիչ աղետների կտրուկ աճով: Ակնհայտ է նաև, որ շրջակա միջավայրի էկոլոգիական իրավիճակի վատթարացումը զգալի բացասական ազդեցություն է ունենում տնտեսության զարգացման և բնակչության առողջության վրա: Նշված հիմնախնդիրները խիստ արդիական և կարևոր են նաև Հայաստանի Հանրապետության համար: Վերջին ժամանակահատվածում առավել ինտենսիվացած համաշխարհային էներգետիկ, պարենային և ֆինանսական ճգնաժամերի արդյունքում հատկապես հրամայական է դարձել շրջակա միջավայրի պահպանման ընդունելի սահմանները չհատելու և էկոլոգիական ու սոցիալական անհետադարձելի կորուստները նվազագույնի հասցնելու ուղղությամբ հավասարակշռված և նպատակաուղղված ջանքերի ներդրումը:

ՄԱԿ-ի «Ռիո+20» կայուն զարգացման գազաթնաժողովը (2012թ.), ամփոփելով անցած 20-ամյա ուղին, եզրակացրեց, որ կիրառվող ջանքերը դեռևս անբավարար են, քանի որ գլոբալ էկոլոգիական ճգնաժամը շարունակում է խորանալ: Ուստի գազաթնաժողովը կոչ արեց երկրներին և տարաբնույթ միջազգային կառույցներին ակտիվացնել ջանքերը կանաչ տնտեսության զարգացման ուղղությամբ և 2012-2021թթ. հռչակեց կայուն արտադրության ու սպառման տասնամյակ: Որոշվեց նաև մշակել կայուն զարգացման համընդհանուր նպատակներ և շարունակել այն գործունեությունը, որը իրականացվել էր «Կրթություն հանուն կայուն զարգացման» 2005-2014թթ. տասնամյակի շրջանակներում: Երկրներին առաջարկվեց տնտեսական քաղաքականության ասպարեզում անցում կատարել նեոլիբերալ սկզբունքներից դեպի կանաչ համաձայնագրի սկզբունքները (տես հավելված 1), զգալիորեն բարձրացնելով պետության կարգավորիչ դերը՝ բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման և պահպանության, աղքատության հաղթահարման և սոցիալական բևեռացման կրճատման գործում՝ կայուն զարգացման նպատակով:

Կանաչ տնտեսության սկզբունքներն են.

- Բավարարել մարդկանց և բնության պահանջմունքները, տնտեսության զարգացումը չպայմանավորելով միայն ֆինանսական ցուցանիշներով:

- Էապես փոխել հանրային կառավարման գործող համակարգը. մշակել տնտեսական սպառնալիքների սահմանային իրատեսական մեծությունների համակարգ և պետություն – մասնավոր հատված – քաղաքացիական հասարակություն համագործակցությամբ հասնել լիարժեք տնտեսական անվտանգության ապահովմանը:

- Ապահովել սոցիալական և բնապահպանական արդարությունը, ստեղծել կյանքի որակի ընդունելի չափանիշներ բոլորի համար՝ ներառյալ հաջորդ սերունդները:

- Ապահովել այլ կենսաբանական տեսակների ապրելու իրավունքը, ապահովել երկրագնդի վրա առկա կեսաբազմազանության բոլոր տեսակների պաշտպանությունը:

- Ստեղծել այնպիսի տնտեսական համակարգեր, որտեղ կարող են ներգրավվել բոլոր մարդիկ՝ առանց սահմանափակումների: Ապահովել, որպեսզի բոլոր ազգերը ունենան հավասար հնարավորություններ ռեսուրսների օգտագործման տեսակետից և որ բնիկ ժողովուրդները/տեղացիները հնարավորություն ունենան տնօրինելու իրենց ռեսուրսները, բարելավել կյանքի որակը զարգացող երկրներում:

- Արհեստական լծակների, հիմնականում սուբսիդավորման և այլ թաքնված գործիքների բացառմամբ հասնել բոլոր երկրների համար հավասար և արդար մրցակցային դաշտի ապահովմանը:

- Հնարավորինս կրճատել զարգացող երկրների արտաքին պարտքի բեռը և տնտեսական կախվածությունը միջազգային ֆինանսական կառույցներից և զարգացող երկրներից: Հնարավորություն ընձեռել ազգային կառավարություններին՝ իրականացնելու անկախ և անկաշկանդ տնտեսական և ժողովրդագրական քաղաքականություն:

- Ապահովել կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը բոլոր գործողություններում, ներառյալ կրթությունը և աշխատանքը: Ապահովել, որ բոլոր մարդիկ գնահատվեն հավասարաչափ:

- Դադարեցնել գերօտագործումը և երկրագնդի ռեսուրսների գերշահագործումը, վերադարձնել երկրագունդը իր նախնական կլիմայական վիճակին, փոփոխել կենցաղի վարման բնույթը դեպի էկո-տեխնոլոգիաներ և ցածրածխածնային տնտեսական գործունեություն:

- Փոփոխել տնտեսության վարման ներկա բնույթը՝ ներկա ֆինանսական և տնտեսական ցուցանիշներից դեպի իրական կյանքի որակի բարելավում՝ գիտակցելով, որ բոլորը շաղկապված են և հանդիսանում են շահառուներ: Տնտեսական աճից անցում կատարել դեպի մարդկային զարգացում՝ առաջնահերթ ուշադրություն դարձնելով սոցիալական և ժողովրդագրական խնդիրների վրա:

- Պայքարել կլիմայի փոփոխության դեմ: Զարգացնել այլընտրանքային՝ վերականգնվող էներգետիկ աղբյուրներ օգտագործող էներգետիկան:

- Ապահովել տնտեսության արդյունավետությունը 21-րդ դարում, լուծել ներկա տնտեսական խնդիրները և աջակցել «կանաչ աշխատատեղերի» ստեղծմանը: Ստեղծել այնպիսի տնտեսական համակարգ, որը հիմնված կլինի ոչ թե շահույթի և այլ ֆինանսական ցուցանիշների վրա, այլ կնպաստի կայուն զարգացմանը:

- Հասնել գործազրկության նվազագույն ընդունելի մակարդակի՝ ինքնազբաղվածության խթանման միջոցով:

- Ամբողջությամբ վերափոխել և վերակազմակերպել տնտեսությունները՝ վերը նշված խնդիրներին հասելու նպատակով: Հնարավորինս կիրառել սոցիալական շուկայական տնտեսության մոդելը՝ հիմնված ազգային մրցակցային առավելությունների իրացման վրա:

Կանաչ տնտեսությունը առաջնային հարց է համարվել «Ռիո+20» ՄԱԿ-ի գազաթաժողովի (2012), Եվրոպայի նախարարների «Շրջակա միջավայր Եվրոպայի համար» (2011) համաժողովի ժամանակ, նաև այն ԵՄ քաղաքականության և ԵՄ Արևելյան գործընկերության առանցքային ուղղություններից է [7-11]:

Գազաթաժողովի հանձնարարականները կյանքի կոչելու նպատակով ծավալվեց «Հետ Ռիո+20» համաշխարհային գործընթաց, որի արդյունքում ձևավորվեց «Մինչև 2030 թ. կայուն զարգացման օրակարգ» համաշխարհային ծրագիրը, որը հաստատվեց ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 70-րդ նստաշրջանում: Այդ ծրագրի հենասյուներն են կայուն զարգացման 17 նպատակները՝ 169 թիրախներով:

Մշակվել և հաստատվել է նաև «Կրթություն հանուն կայուն զարգացման» Գործողությունների գլոբալ ծրագրի իրականացման ճանապարհային քարտեզը [12], «Կայուն արտադրության ու սպառման» տասնամյակի շրջանակներում մշակվել և իրականացվում է 6 բազմաբնույթ ծրագիր:

Հայաստանի Հանրապետությունը նույնպես, որպես ՄԱԿ-ի ընտանիքի պետությունների պատասխանատու գործընկեր և պարտավորված սեփական պետության ու սերունդների ապագայի համար, 1992 թվականից միացել է վերոհիշյալ համաշխարհային գործընթացին և 2012 թվականին, միանալով ՄԱԿ-ի «Ռիո+20» գագաթնաժողովի «Ապագան, որը մենք ցանկանում ենք» եզրափակիչ փաստաթղթին՝ կայուն զարգացման գործուն քաղաքականության իրականացման հանձնառություն է ստանձնել:

2013թ. դեկտեմբերին 9-ին ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծվել է միջգերատեսչական հանձնաժողով՝ հասարակական կազմակերպությունների և անկախ փորձագետների մասնակցությամբ՝ «Ռիո+20» գագաթնաժողովի որոշումների իրականացման նպատակով: Այդպիսով Հայաստանի Հանրապետությունը առաջիններից ընդգրկվեց լայնորեն ծավալված «Հետ Ռիո+20» համաշխարհային գործընթացին: Մեր երկիրը կարող է օգտագործել հարուստ դրական միջազգային փորձը կայուն զարգացման ասպարեզում և տեղայնացնել այն, հաշվի առնելով անցումային շրջանի հնարավոր մարտահրավերներն ու խոչընդոտները, ինչպես նաև ազգային առանձնահատկությունները: Հանձնաժողովի գործունեությանը աջակցում են Եվրամիությունը, ՄԱԿ-ի Գլոբալ էկոլոգիական հիմնադրամը և ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը:

Հանձնաժողովի կողմից մշակվել է սույն հայեցակարգը, որի 11 թեմատիկ ուղղությունները ընտրվել են ՀՀ «Ռիո+20» ազգային գնահատման զեկույցի և ՄԱԿ-ի «Ռիո+20» գագաթնաժողովի «Ապագան, որը մենք ցանկանում ենք» եզրափակիչ փաստաթղթի հիման վրա: Հայեցակարգի ուղղությունները և մոտեցումները հավանության են արժանացել ՀՀ Կայուն զարգացման ազգային խորհրդի կողմից:

Ուշագրավ է, որ ընտրված ուղղությունները և հայեցակարգային սկզբունքներն ու մոտեցումները լիովին համապատասխանում են վերոնշյալ «Մինչև 2030թ. կայուն զարգացման օրակարգ» համաշխարհային ծրագրի հիմնադրույթներին, մասնավորապես՝ կայուն զարգացման նպատակներին/թիրախներին (տես հավելված 2):

Հանձնաժողովի գործունեության շրջանակներում կազմակերպվել են բազմաթիվ լայնածավալ քննարկումներ մայրաքաղաքում ու մարզերում՝ իշխանական կառույցների, հասարակական կազմակերպությունների, համայնքների, մասնավոր հատվածի և փորձագիտական հանրության ներկայացուցիչների մասնակցությամբ, և սույն հայեցակարգում ընդգրկվել են այդ քննարկումների կոնսենսուսային արդյունքները:

Հայեցակարգի նպատակը

Սույն հայեցակարգը կոչված է, ելնելով ՄԱԿ-ի «Ռիո+20» գագաթնաժողովի հանձնարարականներից, ինչպես նաև երկրում տիրող իրավիճակի՝ կայուն զարգացման տեսակետից բազմակողմանի ուսումնասիրությունից, հիմնախնդիրների ու մարտահրավերների բացահայտման և գնահատման արդյունքներից, հարուստ միջազգային ու ազգային դրական փորձից, հիմք հանդիսանալ «Մինչև 2030թ. կայուն զարգացման օրակարգ» համաշխարհային ծրագիրը և հատկապես կայուն զարգացման նպատակները Հայաստանի Հանրապետությունում տեղայնացնելու և իրականացնելու ռազմավարության համար:

ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ

I. ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ,

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Ոլորտի իրավիճակի վերլուծություն, իրավական կարգավորում

Իրավիճակի վերլուծություն

Հայաստանի Հանրապետության տարածքում հաշվարկված է 670-ից ավելի հանքավայր, այդ թվում 30-ը մետաղական: Նշված հանքավայրերից շահագործվում են 400-ից ավելին, դրանցում առավել արժեքավորները մետաղականներն են, որոնցից 22-ը շահագործվում են: Շրջակա միջավայրի համար առավել սպառնալիք են ներկայացնում տասնամյակների ընթացքում ձևավորված 21 պոչամբարները:

Չնայած կատարված աշխատանքներին, ոլորտում առկա են մի շարք բացթողումներ՝ մինչ օրս ոլորտում ներդրված չէ WGS-84 միասնական կոորդինատային համակարգը: Նախկինում ընդերքօգտագործման թույլտվությունները տրվում էին ինչպես «Բալթյան 42», այնպես էլ պայմանական կոորդինատներով, որի արդյունքում էլ ներկայումս իրականացվող բազմակողմանի տեսչական ստուգումներից պարզվել է, որ ն՝ շահագործվող հանքավայրերում, ն՝ երկրաբանական ուսումնասիրությունների նպատակով տրամադրված ընդերքի տեղամասերում աշխատանքներն իրականացվում են տեղադիրքերի խախտումներով, որոնք օր առաջ անհրաժեշտ է շտկել:

Լուրջ բացթողումների շարքին է դասվում ստորերկրյա քաղցրահամ ջրերի ոչ արդյունավետ օգտագործումը, ինչը հանգեցրել է, հիմնականում Արարատյան արտեզյան ավազանի ստորգետնյա քաղցրահամ ջրերի սպառմանը, որի արդյունքում, ինչպես ցույց են տվել 2014թ. ընթացքում իրականացված մասնագիտական ուսումնասիրություններն ու դիտարկումները, բարձրացել է նշված ջրերի հանքայնացումը (այս խնդիրը ավելի մանրամասն քննարկվում է ջրային ռեսուրսների բաժնում):

Լեռնահանքային արդյունաբերությունը ունի բացասական ազդեցություն շրջակա միջավայրի և բնակչության առողջության վրա: Հանքաքարի արդյունահանումը և հարստացումը ուղեկցվում է տարբեր տոքսիկ քիմիական նյութերով և ծանր մետաղներով՝ աշխատանքային և շրջակա միջավայրի աղտոտմամբ: Հատուկ նպատակով ուսումնասիրությունները (ՀՀ ԳԱԱ Էկոլոգոնոսֆերային կենտրոնի, Հայաստանի ամերիկյան համալսարանի Առողջապահության ուսումնասիրության և զարգացման կենտրոնի, Երեանի պետական համալսարանի և այլն) բացահայտել են, որ հանքալեռնային արդյունաբերական շրջաններում առկա են էկոլոգիական և բնակչության առողջության համար լուրջ ռիսկեր, որոնք հատկապես կապված են օդ-ջուր-հող-գյուղմթերք համակարգով ծանր մետաղների, այդ թվում տոքսիկության առաջին դասի տարրերի, սնման շղթայի տարբեր օղակներ ներթափանցման հետ:

Այսպես, օրինակ, հայտնաբերվել է, որ հանքուղիներից, պոչամբարներից առանց մաքրման հոսքաջրերի միախառնումը մակերևութային ջրերին և ոռոգման ցանցերին, բերել է ոռոգման ջրերի ծանր մետաղներով աղտոտմանը: Գրանցվել են ծանր մետաղների (Mo, Cu, Pb, As, Zn, Cd, Hg) և այլ տարրերի տարբեր պարունակություններ Ողջի և Դեբեդ գետերի և դրանց վտակների ջրերում: Այդպիսի աղտոտված ջրերով տարիներ շարունակ ոռոգված գյուղատնտեսական հողահանդակների և տնամերձերի հողերում գրանցվել են ծանր մետաղների բարձր, ՍԹԿ նկատմամբ գերազանցումներով, պարունակություններ: Աղտոտված հողերում աճեցված բուսական ծագման գյուղմթերքի ուսումնասիրությունները գրանցել են ՍԹԿ-ի նկատմամբ գերազանցումներով ծանր մետաղների պարունակություններ: Այդպիսի պատկեր է գրանցվել

Քաջարան, Կապան, Ալավերդի, Աղթալա քաղաքների տարածքներում, ինչպես նաև Սյունիքում ուսումնասիրված մի քանի գյուղերում:

Ուսումնասիրությունների արդյունքում բացահայտվել է նաև որոշ ծանր մետաղների վտանգավոր պարունակություն՝ աղտոտված շրջանների երեխաների մազերում և արյան մեջ:

Իրավական կարգավորում

Ընդերքի ոլորտի իրավահարաբերությունները ներկայումս կարգավորվում են իրար հետ փոխկապակցված մի շարք օրենքներով, որոնք հիմնականում նպատակաուղղված են ընդերքի պահպանության և օգտագործման, շրջակա միջավայրի պահպանության և աշխատանքի անվտանգության ապահովման, բնական պաշարների և ռեսուրսների օգտագործման դիմաց օրենսդրությամբ սահմանված վճարների հետ կապված նեղ ոլորտային խնդիրների լուծմանը, նաև ընդերքի օգտագործման և պահպանման կանոնները խախտելու համար պատիժ սահմանելուն մասնավորապես՝ ՀՀ Ընդերքի մասին, ՀՀ քաղաքացիական, ՀՀ Ջրային, ՀՀ Հողային և ՀՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքերով, ինչպես նաև «Բնապահպանական վերահսկողության մասին», «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին», «Թափոնների մասին», «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին», «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքներով ու դրանցից բխող այլ իրավական ակտերով, ինչպես նաև համապատասխան միջազգային կոնվեցիաներով:

1) 2012թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած և միջազգային լավագույն փորձին համահունչ ՀՀ Ընդերքի մասին նոր օրենսգրքով ընդերքօգտագործման ոլորտում սահմանվեցին հետևյալ հիմնական սկզբունքները և մոտեցումները, որոնք նախկին օրենսդրությամբ սահմանված չեն եղել՝ մասնավորապես.

- Երկրաբանական տեղեկության մատչելիության բարձրացում և անվճար տրամադրում, որի իրականացման նպատակով նախատեսվում է «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ում առկա ողջ երկրաբանական տեղեկության թվայնացում և տեղադրում ինտերնետային կայքում, որը բաց կլինի հանրության համար:

- Օրենսգրքով սահմանված է ընդերքօգտագործման թույլտվությունների ստացման նպատակով հայտերի ընդունման ժամանակ «Մեկ պատուհանի» սկզբունքի կիրառումը, համաձայն որի ընդերքօգտագործման թույլտվություն ստանալու նպատակով, տնտեսվարող սուբյեկտը, դիմումի հետ միաժամանակ լիազոր մարմին է ներկայացնում օրենսդրությամբ պահանջվող փաստաթղթերի փաթեթը, իսկ լիազոր մարմնին այն ներկայացնում է օրենսդրությամբ սահմանված փորձաքննությունների: Ընդերքօգտագործման թույլտվությունները տնտեսվարող սուբյեկտներին տրվում են միայն վերը նշված փորձաքննական դրական եզրակացությունների դեպքում:

- Մինչև ընդերքօգտագործման թույլտվություն ստանալու հայտը լիազոր մարմնին ներներկայացնելը, տնտեսվարող սուբյեկտները նախատեսվող գործունեության վայրի հարակից համայնքների հետ պետք է անցկացնեն քննարկումներ՝ ներկայացնելով կատարվելիք աշխատանքները, իսկ հանքարդյունահանման դեպքում ազդակիր համայնքներին ներկայացվում է բնակչության կենսամակարդակի բարելավման, ինչպես նաև համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացին մասնակցության երաշխիքներ և այդ հանդիպումների արձանագրությունները հայտի հետ միաժամանակ ներկայացնում է լիազոր մարմնին:

- Օգտակար հանածոների բոլոր տեսակների երկրաբանական ուսումնասիրության և շահագործման նպատակով թույլտվությունների տրման գործընթացներին ցուցաբերվում է միանման մոտեցում՝ առանց մրցույթի և աճուրդի:

- Սահմանվել են ընդերքօգտագործման իրավունք հայցող կազմակերպության ֆինանսական և տեխնիկական կարողությունների ու միջոցների մասին տեղեկությունների ներկայացման պահանջը, դրանց բովանդակությունն ու ներկայացվող պահանջներ:

- Նախատեսվել է օգտակար հանածոների արդյունահանման ՇՄԱԳ հաշվետվության կազմում ներառել նաև հանքի փակման նախնական ծրագիր, որի նպատակն է շահագործված հանքավայրի տարածքի անվտանգ տեսքի բերելը, ռեկուլտիվացիոն աշխատանքներ իրականացումը, աշխատուժի սոցիալական մեղմացման նախատեսումը, ինչպես նաև հանքի փակումից հետո հետագա 5 տարիների ընթացքում համապատասխան լիազոր մարմնի կողմից՝ ընդերքօգտագործողների հանքավայրի շահագործման ընթացքում կատարված վճարների հաշվին տարածքի մոնիթորինգի իրականացումը: Իսկ հանքի ֆիզիկական փակումից 2 տարի առաջ ընդերքօգտագործողը պարտավոր է ներկայացնել հանքի փակման վերջնական ծրագիր:

- Սահմանվեցին նաև տեխնածին հանքավայր և արտադրական լցակույտեր հասկացությունները, ինչը թույլ է տալիս օգտակար հանածոների ուսումնասիրության, արդյունահանման կամ վերամշակման արդյունքում առաջացած ապարների կուտակումները օգտագործել որպես հումքի տեխնածին սկզբնաղբյուր: Ընդերքօգտագործման իրավունքի դադարելուց հետո վերջիններս օրենսդրությամբ սահմանված կարգով որպես տեխնածին հանքավայրեր տրամադրվելու են օգտագործման, իսկ մինչ ընդերքօգտագործման իրավունքի դադարումը ընդերքօգտագործողները կարող են առանց լրացուցիչ թույլտվություն ստանալու օգտագործել դրանք:

2) «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքով 2012թ. հունվարի 1-ից սահմանվել է բնօգտագործման վճարի առանձին տեսակ՝ ռոյալթին, որի հաշվարկման կարգն պրոգրեսիվ է՝ ըստ շահութաբերության մակարդակի բարձրացման: Այդ դրույթը վերաբերվում է նաև մետաղական օգտակար հանածոների օգտագործումը փոխհատուցելու նպատակով, ինչպես նաև մետաղական օգտակար հանածոների և դրանց վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի իրացումից ստացվող բարձր շահութաբերությանը:

3) «Ռիո+20» Ազգային գնահատման զեկույցից հետո 2014 թվականին ընդունվեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը (որով ուժը կորցրած ճանաչվեց 1995 թվականին ընդունված «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքը) և ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքում կատարվեցին լրացումներ և փոփոխություններ, համաձայն որոնց ընդերքօգտագործման իրավունքը տրամադրվելու է, ինչպես արդեն նշվել է, «մեկ պատուհանի» սկզբունքի կիրառմամբ: Որպես արդյունք կարող ենք արձանագրել, որ նշված պահանջների արդեն իսկ տրամադրվում են օգտակար հանածոների արդյունահանման և օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թույլտվություններ:

4) ՀՀ կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 10-ի նիստի N42 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել «Ոչ մետաղական հանքանյութերի վերամշակման ոլորտի հայեցակարգը»:

5) ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունվել է «Թափոնների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որում առաջին անգամ սահմանվել են «ընդերքօգտագործում» և «պոչամբար» հասկացությունները:

Որպես վերոհիշյալ որոշման տրամաբանական զարգացում 23.06.2015թ. ընդունվել է «Ողջիի, Փխրուտի, Արծվանիկի պոչամբարներում կուտակված և կուտակվող, ինչպես նաև «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ գործունեության արդյունքում գոյացած և գոյացող արտադրական լցակույտերի մշակման ներդրումային ծրագրի մասին» ՀՕ-102-Ն ՀՀ օրենքը, որի հիմնական գաղափարն այն է, որ հնարավորություն ստեղծվի վերամշակելու պոչամբարներում կուտակված արտադրական լցակույտերն (հանքախյուսը): Համաձայն օրենքի, ներդրումներ իրականացնող կազմակերպությունը պետք է կառուցի ֆաբրիկա՝ տարեկան 12.5 մլն. տոննա արտադրողականությամբ՝ վերամշակելու համար ներկայումս չօգտագործվող լցակույտերը:

Նախատեսվում է նաև կառուցել կոմպոզիտային նյութերի գործարան՝ տարեկան առնվազն 10 հազ. տոննա արտադրողականությամբ՝ որպես հումք օգտագործելով պոչամբարի խյուսը:

Սույն օրենքը ընդերքօգտագործման բնագավառում առաջադեմ քայլ է, քանի որ մի կողմից նպատակաուղղված է համապատասխան տարածաշրջանի էկոլոգիական վիճակի բարելավմանը, մյուս կողմից՝ այն հանդիսանում է ներդրումների ներգրավման կոնկրետ ծրագիր՝ հստակ ժամանակացույցով:

Ոլորտում առկա բացթողումները և օրենսդրական անհամապատասխանությունները շտկելու նպատակով էլ անհրաժեշտ է 2015-2025 թթ. իրականացնել ինչպես օրենսդրական, այնպես էլ ինստիտուցիոնալ բարեփոխումներ, որի իրականացման նպատակով ներկայումս մշակվում է բնական պաշարների կառավարման ռազմավարություն և ընդերքի ոլորտի կանոնակարգմանն ուղղված ստորև ներկայացված հայեցակարգային մոտեցումներ:

II. ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ (ՎԵՐԱԿԱՆԳՎՈՂ) ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՅՈՒՄ

ԵՎ ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆ

Ոլորտի իրավիճակի վերլուծություն, իրավական կարգավորում

Իրավիճակի վերլուծություն

Հայաստանի էներգետիկ ոլորտը 90-ականների ծայրահեղ ճգնաժամից հետո վերջին երկու տասնամյակում արձանագրել է զգալի առաջընթաց: Վերականգնվող էներգիայի օգտագործումը կարևորագույն դեր է խաղացել էներգետիկ ոլորտի ճգնաժամային վիճակից դուրս գալու կայունացման գործընթացի մեջ ու առաջիկա տարիների ընթացքում կմնա որպես գերակայող ուղղություն՝ հաշվի առնելով էներգետիկ պահանջարկի աճը, էներգետիկ անվտանգությունը և գոյություն ունեցող հնամաշ կայանների կանխատեսվող կոնսերվացումը:

Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի և Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվել է Հայաստանում վերականգնվող էներգետիկայի զարգացման ուղեցույցային ծրագիր, որը ներկայացնում է հանրապետությունում տեխնիկապես հասանելի, տնտեսապես և ֆինանսապես շահավետ վերականգնվող էներգիայի (ՎԷ) ներուժը, ինչպես նաև սահմանում է ՎԷ զարգացման նպատակները կարճաժամկետ (մինչ 2013թ.), միջնաժամկետ (մինչ 2015թ.), և երկարաժամկետ (2020թ. և հետո) հեռանկարում: Այն համառոտ նկարագրում է այդ նպատակներին հասնելու համար անհրաժեշտ քայլերը:

Համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 8-ի «ՀՀ հիդրոէներգետիկայի ոլորտի ռազմավարական զարգացման ծրագիրը հաստատելու մասին» N 35 արձանագրային որոշման, ՓՀԷԿ-երի գումարային դրվածքային հզորության ներուժը մինչև 2025թ. գնահատվել է շուրջ 400 ՄՎտ (առանց Սևանա լճի ավազանի ՓՀԷԿ-րի), իսկ տարեկան արտադրանքը՝ շուրջ 1,0 մլրդ.կՎտժ:

Այդ ցուցանիշներին հասնելու նպատակով Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են բարենպաստ շուկայական մեխանիզմներ՝ ՓՀԷԿ-րի կառուցման ոլորտում մասնավոր ներդրումներն ապահովելու համար:

2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ էլ. էներգիա են արտադրել 174 փոքր ՀԷԿ-եր, որոնց գումարային դրվածքային հզորությունը կազմել է մոտ 311 ՄՎտ, իսկ էլեկտրական էներգիայի փաստացի միջին տարեկան օգտակար առաքումը՝ 877 մլն.կվտժ: 2015թ. էլ. էներգիայի արտադրությունը փոքր ՀԷԿ-րի կողմից կազմել է շուրջ 837 մլն.կվտժ, որը Հայաստանում արտադրված ամբողջ էլ. էներգիայի (7798 մլն.կվտժ) մոտ 11% է:

Ըստ տրամադրված լիցենզիաների 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ կառուցման փուլում են գտնվում ևս 45 ՓՀԷԿ, նախագծային՝ մոտ 90 ՄՎտ գումարային հզորությամբ և 315 մլն.կվտժ էլ. էներգիայի տարեկան արտադրությամբ:

Համաձայն ՀՀ կառավարության 22 հունվարի 2009 թվականի նիստի N3 արձանագրային որոշման, հավանության է արժանացել՝ «Փոքր հիդրոէլեկտրակայանների զարգացման սխեման», ըստ որի նախատեսվում է կառուցել ևս 85 փոքր ՀԷԿ-եր մոտ 97 ՄՎտ նախագծային գումարային դրվածքային հզորությամբ (2014 թվականի հուլիսի 1-ի դրությամբ):

Կարևորելով Սևանա լճի բնապահպանական հիմնախնդիրները, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության (ՀՀ ԷԲՊՆ) առաջարկությամբ փոփոխություն է կատարվել ՀՀ կառավարության 2009 թվականի հունվարի 22-ի նիստի N 3 արձանագրային որոշման մեջ, (քաղվածք ՀՀ կառավարության 2011 թվականի օգոստոսի 4-ի N 30 նիստի արձանագրությունից)՝ հանելով ՓՀԷԿ-երի զարգացման սխեմայից «Սևանա լճի ավազան» բաժինը:

Ընդհանուր առմամբ, փոքր ՀԷԿ-երի ցանցի զարգացումը արդարացիորեն դիտարկվում է որպես այլընտրանքային էներգետիկայի դրական դրսևորում: Սակայն, Հայաստանի Հանրապետությունում փոքր ՀԷԿ-երի կառուցումն ու գործարկումը հաճախ իրականացվում է առանց բնապահպանական նորմերի պահպանման, որի արդյունքում տուժում են բնական, հատկապես ջրային, էկոհամակարգերը: Հաճախ փոքր ՀԷԿ-երը կառուցվում են խոցելի էկոհամակարգերի տարածքներում (մերձգետային անտառներ, գլխուտային նոսրանտառներ, հարավային լայնատերև անտառներ), որը տարիներ անց կարող է հանգեցնել անտառների դեգրադացմանը, հետևաբար կենսաբազմազանության վերացմանը, տեղի բնակիչների ապրելամիջոցների նվազեցմանը և բնական աղետների առաջացմանը (սողանքներ, ջրային ռեժիմի խախտում): Առանձին դեպքերում չեն ապահովվում նաև իրական էկոլոգիական թողքերը և թույլատրելի ջրօգտագործման ծավալներն ու պահանջները: Փոքր ՀԷԿ-երի կառուցապատման բարձր խտությունը (կասկադային) ազդում է տեղական բնակչության կողմից ռոռզման ջրերի և այլ բնական ռեսուրսների կայուն օգտագործման հնարավորությունների վրա: Այս ամենը ստեղծում է էկոլոգիական և սոցիալական հիմնախնդիրներ:

ՀՀ կառավարությունն, ի դեմս ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության, միջազգային ֆինանսական հաստատությունների և այլ շահագրգիռ կողմերի, բացահայտել է ռազմավարական ներդրումների երեք ոլորտներ, որոնք կհանգեցնեն էլեկտրական էներգիայի արտադրության ընդլայնմանը: Ոլորտների ընտրությունը հիմնված է Հայաստանի Հանրապետությունում ռեսուրսների առկայության և համապատասխան տեխնոլոգիաների գների համեմատության վրա:

Հատկացվող միջոցները կուղղվեն վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հետևյալ ոլորտներին.

1) Երկրաջերմային էներգիայի զարգացում. Նախատեսվում է Կարկառի տեղանքում հետազոտական հորատման և ներդրողների ներգրավման համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթի պատրաստում:

2) Արևային ֆոտովոլտայիկ կայանների կառուցում: Նախատեսվում է 30-50 ՄՎտ հզորության արևային կայանների կառուցում՝ մրցութային եղանակով ներգրավելով մասնավոր ներդրողներին: Առաջին ծրագրերի իրականացման արդյունքով հնարավոր կլինի դիտարկել ֆիքսված սակագնի մակարդակ՝ բավարար գրավիչ ներդրողների համար և մատչելի՝ վերջնական սպառման սակագնի առումով:

3) Ջերմային պոմպերի և արևային ջրատաքացուցիչների կիրառման ընդլայնում:

Իրավական կարգավորում

Հայաստանի Հանրապետությունում էներգետիկայի ոլորտի ազգային քաղաքականության հիմնական նպատակներից մեկը սահմանված է էներգախնայողության բարելավումը և վերականգնվող էներգետիկ աղբյուրների հետագա զարգացումը:

Էներգետիկայի ոլորտում համագործակցության, վառելիքաէներգետիկ համալիրների ներուժն արդյունավետ օգտագործելու նպատակով էներգետիկայի ոլորտում երկարաժամկետ և

փոխշահավետ համագործակցության հիմքեր են դրվել 2014թ. մայիսի 29-ի Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրով, ինչպես նաև 2009թ. նոյեմբերի 27-ի Մաքսային միության մաքսային օրենսգրքի մասին պայմանագրով:

Վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության ոլորտը կարգավորող իրավական փաստաթղթերն են՝ «էներգետիկայի մասին» ՀՀ օրենքը՝ ընդունված 2001 թվականի մարտի 7-ին; «էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենքը՝ ընդունված 2004 թ. նոյեմբերի 9-ին: ՀՀ կառավարության 2005թ. հունիսի 23-ի «Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման համատեքստում էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին» N 24 արձանագրության թիվ 1 որոշումը, ՀՀ կառավարության 2007 թվականի հունվարի 18-ի «ՀՀ էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ազգային ծրագիրը հաստատելու մասին» N2 արձանագրային որոշումը, ՀՀ կառավարության 2007թ. նոյեմբերի 1-ի «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության դրույթներով նախատեսված ՀՀ էներգետիկայի նախարարության գործունեության ծրագիրը հաստատելու մասին» N1296-Ն որոշումը, ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 8-ի «Հիդրոէներգետիկայի ոլորտի ռազմավարական զարգացման ծրագիրը հաստատելու մասին» N 35 Արձանագրային որոշումը, Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշումը՝ «Հայաստանի Հանրապետության տարածքում վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագները սահմանելու մասին», էներգասպառող սարքերի պիտակավորման կարգը հաստատող ՀՀ կառավարության 2015թ. դեկտեմբերի 17-ի թիվ 1493-Ն որոշում և մի շարք այլ կարգավորող որոշումներ:

Ի լրումն վերոհիշյալ օրենսդրական փաստաթղթերի, «Ռիո+20» Ազգային գնահատման զեկույցը հրատարակելուց հետո, 2012-2014 թվականներին Հայաստանի Հանրապետությունում կատարվել են մի շարք օրենսդրական փոփոխություններ և ստեղծվել են խրախուսական մեխանիզմներ վերականգնվող էներգետիկ աղբյուրները օգտագործելու նպատակով, մասնավորապես՝ 2013 թվականի հունիսի 19-ին ընդունվել է «էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-86-Ն ՀՀ օրենքը, որի համաձայն, կարգավորման ենթակա չեն՝

ա) բացառապես սեփական կարիքների համար ջերմային էներգիայի արտադրության, փոխադրման և բաշխման գործունեությունները,

բ) ջերմային էներգիայի արտադրության, փոխադրման և բաշխման գործունեությունները, եթե այդ համակարգերի դրվածքային հզորությունը չի գերազանցում 5,8 ՄՎտ,

գ) մինչև 150 կՎտ (ներառյալ) հզորությամբ արևային էլեկտրակայանների արտադրության գործունեությունը՝ կառուցման ժամանակահատվածում,

դ) բացառապես սեփական կարիքների համար էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության, ինչպես նաև դիզել գեներատորային կայաններում էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունը:

Բացառապես սեփական կարիքների համար էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունը կարգավորման ենթակա է միայն կայանի կառուցման ժամանակահատվածում:

«Էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա ունեցող անձի համար Հայաստանի Հանրապետության Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման վերաբերյալ առաջին որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնհինգ տարվա ընթացքում փոքր հիդրոէլեկտրակայանների կողմից և էներգիայի վերականգնվող այլ ռեսուրսների (հողմային, արեգակնային, երկրաջերմային և կենսազանգվածի) կիրառմամբ էլեկտրակայանների կողմից քսան տարվա ընթացքում

արտադրվող ամբողջ էլեկտրաէներգիան (հզորությունը) ենթակա է գնման՝ շուկայի կանոններով սահմանված կարգով:

Էներգետիկ ոլորտի ՀՀ օրենսդրության գործող կարգավորումները անհրաժեշտ է կատարելագործել, մասնավորապես էներգետիկ անվտանգության մասով, և համապատասխանեցնել դրանք այլ իրավական ակտերին: Այս ուղղությամբ իրականացվող օրենսդրական կարգավորումները պետք է ընդգրկեն նաև համապատասխան խրախուսող տնտեսական մեխանիզմների զարգացում (այդ խնդիրները առավել ընդգրկուն ներկայացված են «Առաջարկվող լուծումներ» բաժնում):

Վերականգնվող էներգետիկայի ոլորտում ներդրումները խթանելու նպատակով Հայաստանում ընդունվել են մի շարք ռազմավարական և օրենսդրական փաստաթղթեր, որոնցից վերջինը 2013թ. հոկտեմբերի 23-ին ՀՀ նախագահի կողմից հաստատված «Հայաստանի էներգետիկ անվտանգության հայեցակարգ»-ն է, ինչպես նաև հայեցակարգի դրույթների իրականացումն ապահովող 2014-2020 թվականների միջոցառումների ծրագիր ժամանակցույցը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N 836-Ն որոշումը, որով ևս ամրագրվում են վերականգնվող էներգետիկայի ընդլայնման պահանջներն, ինչպես նաև վերականգնվող էներգառեսուրսների արդյունավետ օգտագործման և էներգախնայողության միջոցառումները:

III. ԶՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՅՈՒՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ոլորտի իրավիճակի վերլուծություն, իրավական կարգավորում

Իրավիճակի վերլուծություն

Հանրապետության ջրային ռեսուրսների կառավարմանն առնչվող առանցքային հիմնախնդիրներ են՝ ջրային ռեսուրսների ոչ արդյունավետ կառավարումը; Սևանա լճի էկոհամակարգի հավասարակշռության խախտումը; Արարատյան հարթավայրի արտեզյան ջրավազանում ջրի քանակի սպառումը/էկոհամակարգի խախտումը; ՓՇԷԿ-երի ինտենսիվ զարգացման արդյունքում գետային էկոհամակարգերի խաթարումը; տարբեր տիպի ջրօգտագործողների միջև շահերի բախումը (խմելու ջուր, ոռոգում, ձկնարդյունաբերություն, հիդրոէներգետիկա, էկոհամակարգեր):

1. Զրային ռեսուրսների կառավարում

Զրային ռեսուրսների պատշաճ կառավարման համար կարևորագույն նախապայմաններից է հանրապետության ջրային ռեսուրսների և ջրային պաշարների գնահատումը և դասակարգումը, ինչն իր հերթին հնարավորություն կտա կայացնել որոշումներ՝ կապված ջրերի ռազմավարական պաշարների սահմանման և գետային հոսքի կարգավորման հետ: Կարևոր է նաև ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման պլանների մշակումը, ինչի համար անհրաժեշտ կլինի մշակել մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների մոնիթորինգի նոր ծրագրեր՝ հիմնված գետավազանային կառավարման մոտեցման վրա:

Հանրապետության ջրային ռեսուրսների կառավարմանն առնչվող առանցքային հիմնախնդիրներ են Սևանա լճի գործողությունների պլանի թերի իրականացումը, Արարատյան արտեզյան ավազանի ստորերկրյա ջրային ռեսուրսների հիդրոերկրաբանական անհրաժեշտ ուսումնասիրությունների բացակայությունը և արտեզյան ջրերի ոչ կարգավորված օգտագործումը: Զրային ռեսուրսների համապարփակ կառավարման կարևոր հիմնախնդիրներից է նաև ջրաէկոհամակարգերի պահպանման գոտիների սահմանման բացակայությունը:

(սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան գոտիների, էկոտոնի և այլն) և դրանց ոչ պատշաճ պահպանումը:

Ռազմավարական խնդիր է նաև ջրատնտեսական համակարգերի ոչ պատշաճ կառավարումը: Այս առումով ամենահրատապ հարցերից է ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների բարելավումը (խմելու ջրի ջրամատակարարման և ոռոգման համակարգերից հոսքակորուստների կրճատում, ջուր խնայող տեխնոլոգիաների ներդրում, ջրամատակարարման ծառայությունների բարելավում, կեղտաջրերի մաքրման կայանների կառուցում, ոռոգման համակարգերի զարգացում և ոռոգման մշակույթի բարելավում՝ գյուղատնտեսության մեջ առաջավոր ազդեցություն ունեցող միջոցառումների ու ոռոգման եղանակների կիրառմամբ և այլն): Հատուկ ուշադրության է արժանի հիդրոտեխնիկական կառուցվածքների անվտանգության ապահովման, նաև մեծ քանակությամբ կառուցվող փոքր ՀԷԿ-րի կողմից էկոհամակարգերի վրա բացասական ազդեցության գնահատման խնդիրները:

Հանրապետությունում առկա են բախումներ ջրօգտագործման բնագավառում, որը պայմանավորված է ջրային ռեսուրսների ոչ արդյունավետ կառավարմամբ և անխնա օգտագործմամբ: Կոնֆլիկտներն առկա են ինչպես տարբեր բնագավառների (խմելու ջուր, ոռոգում, ձկնարդյունաբերություն, հիդրոէներգետիկա, էկոհամակարգեր) ջրօգտագործողների, այնպես էլ նույն բնագավառի ջրօգտագործողների միջև:

2. Սևանա լճի հիմնախնդիրը

1) Սևանա լճի ջրերը և ավազանի բնական պաշարները համարվում են Հայաստանի տնտեսության զարգացման անկյունաքարերից մեկը: Լճի ջրհավաք ավազանը կազմում է հանրապետության ընդհանուր տարածքի վեցերորդ մասը, որն իր մեջ է պարփակում երկրի ռազմավարական կարևորագույն նշանակություն ունեցող բնական պաշար՝ լճին տալով, ինչպես աշխարհագրական, այնպես էլ տնտեսական ռազմավարական նշանակություն:

Սևանա լճի էկոհամակարգի բաղադրիչներն ու ռեսուրսները տասնամյակներ շարունակ էկոլոգիապես անընդունելի մեծածավալ օգտագործման պատճառով գտնվում էին անմխիթար վիճակում: Իրավիճակը շտկելու նպատակով Սևանա լճի վերաբերյալ ընդունվել է 2 օրենք (15.05.2001թ. և 14.12.2001թ.) և 2009թ. ՀՀ նախագահին առընթեր ստեղծվել է Սևանա լճի հիմնահարցերի հանձնաժողովը:

Սևանա լճի հիմնախնդիրների լուծման հիմնական ջանքերը կենտրոնանում են Սևանա լճի մակարդակը շարունակական բարձրացնելու, լճի ջրհավաք ավազանի ջրային ռեսուրսների անարդյունավետ օգտագործումը կանխարգելելու, փաստացի ջրօգտագործման պայմանների նկատմամբ վերահսկողության համակարգը կատարելագործելու, լճի ջրհավաք ավազանի ջրային ռեսուրսների որակը բարելավելու, կենսաբանական ռեսուրսները պահպանելու և վերականգնելու, Սևանա լճի ափամերձ տարածքների ջրածածկման հետ կապված խնդիրները լուծելու, կոշտ թափոնների կառավարումը կատարելագործելու ուղղությամբ:

Սևանա լճի հիմնախնդիրների լուծման հիմնական դժվարություններն են՝ բնակչության ծանր սոցիալական վիճակի արդյունքում կենսառեսուրսների գերօգտագործումը, կենսաբազմազանության պետական հաշվառման, պետական կադաստրի, մոնիթորինգի համակարգի և տվյալների բազայի ըստ էության բացակայությունը, բնապահպանական միջոցառումների կատարման համար ֆինանսական ռեսուրսների սակավությունը, Արփա-Սևան թունելի անբավարար վիճակը և այլն:

2) *Սևանա լճի մակարդակ:* Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ օրենքով նախատեսված է լճի մակարդակը յուրաքանչյուր տարի բարձրացնել միջինը 20 սմ-ով, իսկ 30 տարում ապահովել 6 մ բարձրացում: Լճի ջրի

մակարդակի բարձրացման համար հիմնական նախապայմանն է լճի դրական հաշվեկշիռը, որն էլ վերջին տարիներին պահպանվել է, բացառությամբ 2014թ.՝ սակավաջրության պայմաններում Արարատյան հարթավայրի հողերի ոռոգման համար 269,63 մլն. խմ ջրառի հետևանքով: Ընդհանուր առմամբ, 2001 թվականից Սևանա լճի մակարդակը բարձրացել է 3,68 մետրով, իսկ 2011 թվականի վերջի դրությամբ հատել է լճի մակարդակի էկոլոգիական առումով դրական թիրախային 1900մ նիշը, հավասարվելով 1963թ. լճի մակարդակի ցուցանիշին: Հարկ է նշել, որ վերը նշված օրենքով սահմանված է լճից ոռոգման նպատակով ջրի բացթողումների մինչև 170,0 մլն մ³ չափաքանակը: Սևանա լճից օրենքով սահմանված 170 մլն.խ.մ. ջրառի գերազանցումը կհանգեցնի լճի բացասական ջրային հաշվեկշռի և կնպաստի վերջինիս ճահճացման գործընթացին: Այդ քանակով ջրառը հինգ տարվա ընթացքում կարող է բերել լճի մակարդակի իջեցմանը շուրջ 0,5 մ., ինչը կխախտի լճի էկոլոգիական հավասարակշռությունը, կկրճատվի հիպոլիմնիոնի շերտը՝ ավելացնելով լճի ջրային էկոհամակարգի սապրոզենությունը:

30.06.2015թ. դրությամբ Սևանա լճի մակարդակը 1900,56մ է և 6 սմ-ով բարձր է նախորդ տարվա նույն օրվա համեմատությամբ:

Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր Սևանա լճի հիմնահարցերի հանձնաժողովի առաջարկությամբ 2010 թվականի հունիսի 24-ին հաստատվել է «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների ծրագիրը», որը ներառում է շուրջ 43 միջոցառում:

3) *Սևանա լճի էնդեմիկ ձկնատեսակների պոպուլյացիաների վերականգնում:* Էնդեմիկ ձկնատեսակների բնական վերարտադրության խոչընդոտներից են՝ ձվադրավայր հանդիսացող գետերի վրա կառուցված փոքր ՀԷԿ-երի համար իրականացվող ջրառը: Անհրաժեշտ է վերանայել էկոլոգիական թողքերի հաշվարկման մեթոդաբանությունը և Սևանա լճի ձկնատեսակների բազմացումն ապահովող բնական ձվադրավայրեր հանդիսացող գետերի համար ընդունել համապատասխան ցուցանիշներ: Միաժամանակ հարկ է նշել, որ յուրաքանչյուր տարի պետական բյուջեի միջոցների հաշվին Սևանա լճում իրականացվում է էնդեմիկ ձկնատեսակների՝ գեղարքունի և ամառային իշխանի պոպուլյացիաների համալրման աշխատանքներ, ինչը նպաստավոր պայմաններ է ստեղծել էնդեմիկ ձկնատեսակների բնականոն վերարտադրությունն ապահովելու համար: 2005-2014թթ. Սևանա լիճ է բաց թողնվել 2527,6 հազ. հատ մանրաձուկ:

Հաշվարկների համաձայն, 2014թ. Սևանի իշխանի կենսազանգվածը կազմել է լճի ձկների ամբողջ կենսազանգվածի մոտ 2-4%-ը, այսինքն 1,5-2տ, ինչը նախորդ տարիների համեմատությամբ կարելի է դիտարկել որպես դրական միտում:

Սիգի ընդհանուր կենսազանգվածի և բաշխվածության խտության համեմատական վերլուծության արդյունքում բացահայտվել է նրա պաշարների համեմատական աճը 2013-2014 թվականներին, որը լճում 2011-2012 թվականներին բեղուն սերնդի հայտնվելու հետևանք է: Ընդ որում վերջին տարիներին սիգի առատ կերային բազայի՝ զոոպլանկտոնի բուռն աճը ապահովում է ձկան աճի տեմպերը, հնարավորություն տալով արդյունագործական չափերի հասնել առավել վաղ 1+ տարիքում:

4) «Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքներ» ծրագրի շրջանակներում Նորատուսի (17 հա), Մարտունու (34,2 հա) և Վարդենիսի (98,8 հա) տարածաշրջաններում իրականացվել են 150 հա տարածքի ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքներ:

ՀՀ կառավարության 2014թ. սեպտեմբերի 4-ի N 947-ն որոշմամբ հաստատվել է Սևանա լճի և նրա ջրհավաք ավազանի մշտադիտարկումների տվյալների միասնական էլեկտրոնային շտեմարանի ստեղծման, տվյալների հավաքագրման, գրանցման, ամփոփման և տրամադրման

կարգը, որի կիրարկումը զգալի կերպով կարողականացնի մշտադիտարկումների իրականացման և ցուցանիշների ամփոփման աշխատանքները:

3. Արարատյան արտեզյան ավազանի հիմնախնդիրը

Արարատյան հարթավայրի արտեզյան ջրավազանի հորիզոնի կտրուկ անկումը և գրունտային ջրերի մակարդակի իջեցումը հետևանք է ձկնաբուծության զարգացման համար վերջին տարիներին մեծ քանակությամբ տրված ջրօգտագործման թույլտվությունների (լիցենզիաների): 2008թ. ձկնաբուծությունը ընդգրվել է պետական զարգացման առաջնահերթ ծրագրերի շարքում: 2008-2013թթ. 274 նոր հորատանցքի համար տրամադրվել են ջրօգտագործման թույլտվություններ՝ 23268լ/վ գումարային ծախսով: Ջրօգտագործման թույլտվություններ տրամադրելուց առաջ հաշվի չեն առնվել 2006-2007թթ. գույքագրման արդյունքները, ըստ որի 2008թ. դրությամբ ավազանում ստորերկրյա ջրերի օգտագործումը արդեն իսկ գերազանցում էր հաստատված թույլատրելի միջին տարեկան ջրօգտագործումը (34661լ/վ): Բացի այդ, փաստացի ջրօգտագործումն էլ իր հերթին գերազանցել է ջրօգտագործման թույլտվությամբ տրամադրված ծավալները:

Արարատյան արտեզյան ավազանի հիմնախնդիրը կառավարության ուշադրության կենտրոնում է և լուծման համար իրականացվել են մի շարք միջոցառումներ:

«2014թ. ՀՀ բնապահպանության նախարարության կողմից մշակվել և ՀՀ ազգային ժողովի քննարկման է ներկայացվել «ՀՀ ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «ՀՀ ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթները:

Հայաստանի Հանրապետության վերոնշյալ օրենքների նախագծերի ընդունմամբ կկարգավորվեն կարգավորումից դուրս մնացած հարաբերությունները, կհստակեցվեն որոշակի դրույթներ, ինչը կհանգեցնի օրենքների առավել հասցեագրված կիրառմանը և կբացառի դրանց տարաբնույթ մեկնաբանությունները՝ մասնավորապես.

- Համապատասխան լիազորություն տալ ՀՀ կառավարությանը՝ սահմանելու օգտագործելի ջրային ռեսուրսների չափաքանակները, որոնք կամրագրվեն ՀՀ կառավարության կողմից ջրավազանային կառավարման պլանների ընդունման ժամանակ: Ջրավազանային կառավարման պլաններն իրենց մեջ ներառելու են ոչ միայն օգտագործելի ջրային ռեսուրսների չափաքանակները, այլ նաև այլ ռեսուրսների՝ ըստ առանձին նպատակների (խմելու-կենցաղային, ձկնաբուծական, ոռոգման և այլն), օգտագործելի չափաքանակները, Արարատյան դաշտում ստորերկրյա ջրային ռեսուրսներից նոր ջրօգտագործման թույլտվություն տրամադրել՝ ՀՀ Ջրի ազգային խորհրդի դրական եզրակացության առկայության դեպքում:

- Ստորերկրյա հորատանցքերի հորատման գործնեության լիցենզավորում, ինչի արդյունքում այդ աշխատանքների իրականացման նկատմամբ կմեծանա հսկողությունը:

- ՀՀ կառավարության 03.04.2014 թվականի «Ապօրինի շահագործվող, ինչպես նաև չշահագործվող հորատանցքերի համար ջրօգտագործման թույլտվությունների տրման, դրանց լուծարման և կոնսերվացման կարգը հաստատելու մասին» N 340-Ն որոշման համաձայն արգելվում է ՀՀ Արարատի և Արմավիրի մարզերում ձկնաբուծության նպատակով նոր հորատանցքերի ջրօգտագործման թույլտվությունների և ջրօգտագործման թույլտվություն ստացած, սակայն մինչև այժմ դեռևս չհորատված հորատանցքերի մասով շինարարության թույլտվությունների տրամադրումը, իսկ ջրօգտագործողն ապօրինի շահագործվող, հորատված, չշահագործվող հորատանցքերի ջրօգտագործման թույլտվությունների և ժամկետանց ջրօգտագործման թույլտվությունների երկարաձգման հայտի փաթեթին կից լիազոր մարմին պետք է ներկայացնի նաև իր կողմից մինչև 2014 թվականի օգոստոսի 1-ը փաստացի

ջրօգտագործման ծավալները մինչև 1/3 չափի հասցնելու միջոցառումների ծրագիր և պարտավորություն՝ դրա իրականացման վերաբերյալ: Գործընթացը հսկելու համար ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծվել է միջգերատեսչական հանձնաժողով՝ շահագրգիռ ներկայացուցիչների մասնակցությամբ:

- 2014թ. ընթացքում լուծարվել, կոնսերվացվել և փականային ռեժիմի է բերվել 311 հորատանցք, որի արդյունքում խնայվել է մոտ 23888,3լ/վ ջուր, ինչը տարեկան կազմում է մոտ 753,3 մլն խոր.մ: Հորատանցքերի լուծարման և կոնսերվացման աշխատանքների արդյունքում արդեն նկատելի են դրական փոփոխություններ, մասնավորապես 2014թ. -ին արձանագրվել են մակարդակների բարձրացումներ առանձին հորատանցքերում 2-12սմ, ծախսի ավելացում 0,3-0,9լ/վ:

- Առաջիկայում աշխատանքներ են տարվելու համայնքային նշանակության և ջրօգտագործող ընկերություններին պատկանող հորատանցքերի մոնիթորինգի ուղղությամբ:

4. Մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների աղտոտում

Մակերևութային ու ստորերկրյա ջրային ռեսուրսները հիմնականում աղտոտվում են կենցաղային ու արտադրական կեղտաջրերով, լեռնահանքային արդյունաբերության գործունեությամբ, գյուղատնտեսությունից վերդարձվող ջրերով, ինչպես նաև կենցաղային ու արտադրական թափոններով:

Հայաստանում կենցաղային կեղտաջրերի հավաքման ու մաքրման նպատակով մինչև 1990-ականների սկիզբը կառուցվել և շահագործվել են ավելի քան 4200 կմ երկարության կոյուղու կոլեկտորներ և հավաքող խողովակաշարեր, ինչպես նաև կեղտաջրերի մաքրման 20 կայաններ: Բոլոր քաղաքները և մոտ 150 գյուղեր միացած են եղել ջրահեռացման համակարգերին, որոնցով սպասարկվել է քաղաքային բնակչության 60-80%-ը և գյուղական բնակչության մինչև 50%-ը: Երևանի բնակչության 97%-ը միացած է եղել կոյուղու ցանցին: Անկախություն ձեռք բերելուց հետո ստեղծված էներգետիկ և տնտեսական ճգնաժամի տարիներին ջրահեռացման համակարգերը հայտնվեցին անմխիթար վիճակում, որն էլ բերեց նրանց արագ քայքայման:

Այսօր Հայաստանի մեծ թվով գյուղական բնակավայրեր գուրկ են ջրահեռացման ծառայություններից, իսկ նախկինում գոյություն ունեցող 20 կեղտաջրերի մաքրման կայաններից ոչ մեկը պիտանի չէ հետագա շահագործման կամ վերակառուցման: Ջրահեռացման համակարգ ունեցող ոչ բոլոր բնակավայրերում են պատշաճ ուշադրություն դարձվում դրանց պահպանման ու շահագործման վրա: Արդյունքում ոլորտում առաջացել են բազմաթիվ խնդիրներ, որոնցից են՝

- չմաքրված կեղտաջրերը օգտագործվում են ոռոգման նպատակով՝ առանց առողջապահական ռիսկերի վերահսկման,

- գլխավոր հատակագծերի չնախատեսված փոփոխությունները, հատկապես քաղաքների կենտրոնական թաղամասերում, բերում են ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերում բեռի չնախատեսված ավելացման՝ լուրջ խնդիրներ առաջացնելով ջրամատակարարման ապահովման և կեղտաջրերի հեռացման գործընթացում,

- քաղաքամերձ տարածքներում բնակելի նոր թաղամասերը կառուցապատվում են առանց ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի համար մշակված լուծումների,

- որպես անջատ համակարգեր հաշվարկված և կառուցված կոյուղու համակարգերին, առանց հետևանքների գնահատման, միացվում են հեղեղային կոյուղագծերը, որի արդյունքում անձրևների ժամանակ պարբերական բնույթ են կրում կոյուղու ցանցում վարարման դեպքերը, ստեղծելով հակասանիտարական իրավիճակ:

Կարգավորման կարիք ունեն նաև արտադրական ձեռնարկությունների, հանգստյան տների, հասարակական սննդի օբյեկտների կեղտաջրերի հեռացման ու մաքրման խնդիրները: Նշված ձեռնարկությունների զգալի մասը կեղտաջրերն առանց մաքրման ուղղակիորեն լցնում

են քաղաքային ջրահեռացման համակարգեր, մակերևութային ջրավազաններ, կամ էլ մղում են ստորգետնյա հորիզոններ, աղտոտելով ջրային ռեսուրսները և ստեղծելով բնապահպանական ու առողջապահական լուրջ խնդիրներ:

Հստակ չեն բացահայտվում և վերահսկվում արտանետվող կեղտաջրերի աղտոտման ծավալները: Արդյունավետ չեն աշխատում իրավակիրարկման մեխանիզմները: Բնակավայրերի տարածքներից դուրս կազմակերպված հանգստի և խրախճանքի օբյեկտներում լուծված չեն կեղտաջրերի մաքրման հարցերը, հաճախ տիրում է հակասանիտարական վիճակ: Առաջացած կեղտաջրերը լցվում են հարակից գետեր, կամ էլ հատուկ այդ նպատակի համար փորված ջրաթափանց հորեր (Սևանա լճի ափամերձ գոտի): Չբարելավված ջրահեռացման ծառայությունները մեծացնում են ինչպես մակերևութային և ստորերկրյա ջրերի աղտոտման, այնպես էլ համաճարակային հիվանդությունների բռնկման ռիսկերը:

Ջրահեռացման համակարգերի ֆինանսավորման ցածր մակարդակը, տնտեսական խրախուսիչ մեխանիզմների բացակայության և իրավական անկատարության ներկա վիճակը ևս մեկ տասնամյակ պահպանվելու դեպքում, ավելի կքայքայվի եղած համակարգը, իսկ արդյունքում այդ համակարգերի վերականգնման ու բարելավման համար պահանջվող ներդրումների չափը կկրկնապատկվի:

Ոլորտի քաղաքականությունը պետք է ուղղված լինի կեղտաջրերի հեռացման ու մաքրման գործընթացում հարցի լուծմանն ուղղված նախաձեռնությունների աջակցմանն ու խրախուսմանը, ֆինանսական միջոցների ներգրավման համար բարենպաստ պայմանների ստեղծմանը:

Ոլորտի քաղաքականության զարգացման շրջանակներում անհրաժեշտ է կեղտաջուրը դիտել որպես *արժեքավոր ռեսուրս*, քանի որ մաքրված կեղտաջուրը կարող է հանդիսանալ որպես կայուն և հաստատուն ջրային ռեսուրս, որը կախված չէ եղանակային պայմաններից ու կլիմայական փոփոխություններից:

2005 թվականից սկսվեց ջրահեռացման համակարգի վերականգնումը: 2012թ. կառուցվեցին և շահագործման հանձնվեցին Գավառ, Մարտունի և Վարդենիս քաղաքների, իսկ 2014թ. Դիլիջան և Ջերմուկ քաղաքների կեղտաջրերի մաքրման կայանները: Նույն թվին ավարտվեց նաև Արմավիրի մարզի Փարաքար համայնքի կեղտաջրերի մաքրման կայանը, որը կառուցվել է, համադրելով կեղտաջրի մաքրման բնական և ավանդական եղանակները: Այդ կայաններից 5-ը ապահովում են միայն մեխանիկական մաքրում, և միայն Փարաքարի մաքրման կայանն է նախատեսված նաև կենսաբանական մաքրման համար: Ֆրանսիական կառավարության ֆինանսավորմամբ 2015-2016թթ. նախատեսվում է վերականգնել Երևանի «Աերացիա» մաքրման կայանը:

Վերը նշված խնդիրները լուծելու համար անհրաժեշտ է իրականացնել միջոցառումներ՝ ուղղված ոլորտի օրենսդրական, ինստիտուցիոնալ բարեփոխումներին, ինչպես նաև նոր, առաջադեմ տեխնոլոգիաների կիրառմանը: Նման միջոցառումներից են՝

- կեղտաջրերի հեռացման ու մաքրման ազգային քաղաքականության և ռազմավարության ընդունում, (հիմք կարող է ծառայել ՀՀ գյուղատնտեսության նախարարության Ջրային տնտեսության պետական կոմիտեի նախաձեռնությամբ 2014թ. միջազգային խորհրդատուի կողմից մշակված «Հայաստանում կեղտաջրերի կայուն հավաքման և մաքրման ազգային ռազմավարությունը»),

- ջրահեռացման համակարգերի վերականգնում,

- ջրմուղկոյուղու ընկերությունների պայմանագրերում կեղտաջրերի հեռացման ու մաքրման պարտավորությունների ներառում,

- կեղտաջրերի մաքրման կայանների կառուցման ու շահագործման գործընթացին աջակցող և խրախուսող տնտեսական խթանիչ մեխանիզմների ընդունում,

- կեղտաջրերի մաքրման այլընտրանքային, համեմատաբար էժան, տեխնոլոգիաների կիրառում մաքրման նոր կայանների կառուցման գործում,

- մաքրված կեղտաջրերի և մշակված տիղմի նպատակային վերօգտագործման նորմերի և համապատասխան իրավական ակտերի ընդունում,
- ջրահեռացման ոլորտի մասնագետների պատրաստում և վերապատրաստում:

5. Ջրամատակարարման համակարգում մեծածավալ կորուստներ

Խմելու ջրի մատակարարման համակարգ:

Հայաստանի բնակավայրերում կենտրոնացված ջրամատակարարում իրականացնում են 5 մասնագիտացված կազմակերպություն՝ «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունները, որոնք սպասարկում են 45 քաղաք և 375 գյուղական համայնք (բնակչության 80%-ը): 4 քաղաքի (Նոր Հաճն, Քաջարան, Դաստակերտ և Շամլուղ) և 579 գյուղական համայնքների ջրամատակարարումն իրականացվում է ՏԻՄ-երի կողմից: Սակայն վերջիններիս կողմից սպասարկվող ջրամատակարարման վիճակն անբարենպաստ է գյուղական համայնքներում, ուր մասնագիտական ներուժի և ֆինանսական միջոցների բացակայության պայմաններում չի ապահովվում որակյալ ծառայություն:

Վերջին 15 տարիների ընթացքում իրականացված ներդրումների շնորհիվ զգալիորեն բարելավվել է համակարգի տեխնիկական վիճակը, լավացել է խմելու ջրի որակը, նկատելի բարելավվել է սպառողներին մատուցվող ծառայությունները, ավելացել է ջրամատակարարման տևողությունը: Միաժամանակ, ջրամատակարարման տևողությունը ներկայումս շարունակում է բնութագրվել տարածքային անհամաչափություններով:

Այսօր քաղաքային բնակչության 99.6%-ի համար հասանելի է կենտրոնացված ջրամատակարարումը: Հայաստանի 17 քաղաքում, ներառյալ Երևանը, ապահովված է մինչև 24 ժամյա, իսկ 7 քաղաքում շուրջօրյա ջրամատակարարում ունի բնակչության 50%-ից ավելին: 4 քաղաքում (Վեդի, Արարատ, Ճամբարակ և Գյումրի) բնակչության 50%-ն ունի 2-6 ժամյա ջրամատակարարում, իսկ Բերդ քաղաքում 2-4 ժամյա ջրամատակարարումն իրականացվում է երկու օրը մեկ: Երևան քաղաքի բաժանորդների 98%-ը և մյուս բնակավայրերի բաժանորդների 85%-ն ունեն ջրի հաշվիչներ, ինչի արդյունքում բնակչության մոտ ձևավորվում է խմելու ջրի նկատմամբ խնայողական վերաբերմունք:

Համակարգում դեռևս խնդիր է ջրի մեծածավալ կորուստները (շուրջ 75%):,

Խմելու ջրի ոչ բոլոր աղբյուրներն ունեն ազգային և միջազգային նորմերին համապատասխանող պահպանվող սանիտարական գոտիներ: Խմելու ջրի աղբյուր հանդիսացող ջրերի որակի ապահովման նպատակով ջրամատակարարման աղբյուրների սան.պահպանման խիստ ռեժիմի գոտին հաճախ չի ապահովվում: Միաժամանակ անհրաժեշտ է արդիականացնել ջրամատակարարման աղբյուրների սան.պահպանման երկրորդ և երրորդ գոտիների որոշման մեթոդաբանությունը, ինչպես նաև խմելու ջրաղբյուրների ջրի և ռեկրեացիոն նպատակով օգտագործվող ջրերի անվտանգության չափանիշները ներդաշնակեցնել միջազգային նորմերի հետ:

Համայնքների կողմից սպասարկվող ջրամատակարարման համակարգերում ջրի որակի շեղումներ հաճախ են արձանագրվում, ինչը կապված է ինչպես ջրի վարակազերծման բացակայության, այնպես էլ ջրամատակարարման համակարգերի քայքայվածության, տեխնիկական և մասնագիտական ներուժի բացակայության հետ: Մի շարք գյուղական համայնքներ դեռևս չունեն կենտրոնացված ջրամատակարարում կամ ջրամատակարարումն իրականացվում է մի քանի օրը մեկ անգամ հաճախականությամբ: Ջրամատակարարման ընդհատումների արդյունքում ցանցում առաջացած բացասական ճնշումը նպաստում է ջրի որակի վատթարացմանը:

ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N442-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական

ծրագրով խմելու ջրի համակարգը կշարունակի մնալ պետական ներդրումային գերակա-
յությունների շարքում:

Ներդրումային քաղաքականությունը նպատակաուղղված կլինի խմելու ջրի համակարգերի
արդյունավետության բարձրացմանը՝ ուշադրության կենտրոնում պահելով, հատկապես, ջրի
կորուստների նվազեցման խնդիրը:

Ոռոգման համակարգ:

Հանրապետությունում հիմնական ջրօգտագործող բնագավառը գյուղատնտեսությունն է,
որի տեսակարար կշիռը կազմում է ՀՆԱ-ի 33%-ը: Գյուղատնտեսական արտադրանքի 80%-ն
արտադրվում է ոռոգելի հողագործության արդյունքում, ինչից էլնելով ջրային համակարգերի
կառուցումը միշտ էլ առաջնահերթ է եղել Հայաստանում:

Ոռոգման համակարգում այսօր գործում են 2100 կմ երկարության մայր և երկրորդային
ջրանցքներ, 16000 կմ երրորդային ջրանցքներ, 75 ջրամբարներ, 703 խորքային հորեր և 263
պոմպակայաններ:

Վիճակագրական տվյալներով, այսօր Հայաստանում ոռոգվում է մոտ 134 հազ. հա
գյուղատնտեսական հողատարածք (փորձագիտական գնահատմամբ, այն հասնում է 180 հազ.
հա): Այսպիսով, տարբեր գնահատականներով, 120-166 հազ. հա գյուղատնտեսական հողատա-
րածքներ չեն ոռոգվում: Այս իրավիճակը բացատրվում է ինչպես ոռոգման ջրի անարդյունավետ
կառավարմամբ, այնպես էլ համակարգում ջրի կորուստների առկայությամբ, որը
պայմանավորված է ոռոգման համակարգի անսարքությամբ (խողովակների, փականների,
ծորակների վթարային վիճակ): Պաշտոնական տվյալներով, 2013թ. այն կազմել է 44%: Սակայն
փորձագիտական տարբեր գնահատումներով, համակարգում առկա են մինչև 70-75%
կորուստներ:

Կորսված ջրերը, իրենց հերթին, ողողում են դաշտերը, առաջացնելով ճահճային տեղամա-
սեր: Միևնույն ժամանակ անջրդի հողատարածքները ենթարկվում են աղակալման և դեգրա-
դացման, խախտվում են լանդշաֆտը և տեղանքի կենսաբազմազանությունը: Դրա արդյունքում
հսկայական չափի գյուղատնտեսական հողատարածքներ չեն մշակվում կամ լավ բերք չեն
տալիս: Առաջանում են ինչպես բնապահպանական (գյուղատնտեսական հողատարածքների
դեգրադացում), այնպես էլ սոցիալական խնդիրներ:

Ոռոգման համակարգում առկա հիմնախնդիրները լուծելու համար առաջարկվում է
ստեղծել ջրաբալանսային կայաններ, ներդնել ոռոգման նոր ժամանակակից տեխնոլոգիաներ՝ այդ
թվում կաթիլային ոռոգումը, կառավարել ձնհալքի ռեժիմը:¹

6. ՓՀԷԿ-երի ինտենսիվ զարգացման արդյունքում գետային էկոհամակարգերի խաթարում

Բնապահպանական տեսակետից փոքր ՀԷԿ-երը համարվում են էլեկտրաէներգիայի
արտադրության բավականին մաքուր աղբյուրներ: Սակայն հանրապետությունում ընդունված
կառավարման ոչ համալիր ռազմավարության, մեծ քանակով ՓՀԷԿ-երի կառուցման և

¹ Ձնածածկ մակերեսը հատուկ ծածկոցներով արևի ճառագայթներից պաշտպանելու մեթոդը հնարավոր-
ություն է տալիս երկարացնել ձնհալքի սկզբնական փուլը երեքից-չորս ամսով և ամառվա ամենասակավա-
ջուր ամիսներին ունենալ ոռոգման ջրի պաշար: 2010-14թթ. Հայաստանում Արագած լեռան ձյունածածկ
տարածքի վրա (100մx20մx1մ ծավալով) կատարվել են փորձնական հետազոտություններ և դրանց
արդյունքները թույլ են տալիս գնահատել ձնհալքից առաջացած ջրային ռեսուրսի ծավալները, որոնք կազմում
են տարեկան մոտ 3,0 մլն.խոր.մ: Այդ ռեսուրսը կարելի է օգտագործել ոռոգման նպատակներով՝
անմիջապես մշակաբույսերի վեգետացիոն շրջանում, ջրարբիացնել արոտավայրերը, ինչպես նաև կուտակել
ջրամբարումներում՝ հետագայում օգտագործելով գյուղատնտեսության կարիքների համար: Այս համատեքս-
տում անհրաժեշտ է իրականացնել մի քանի պիլոտային ծրագրեր, ինչպես նաև կատարել ՀՀ տարածքում
գտնվող բարձրադիր փոքր լճային էկոհամակարգերի մոնիտորինգ:

անվերահսկելի շահագործման արդյունքում առաջացել են բազմաթիվ բնապահպանական ու սոցիալական խնդիրներ, ինչպես նաև հակամարտություններ հանրության տարբեր շերտերի միջև: Այս ամենն օրենքների անկատարության ու հակադրության, ինչպես նաև հանրության էկոլոգիական իրազեկության և գիտակցության ցածր մակարդակի արդյունք է:

ՓՀԷԿ-երի կառուցման համար ջրօգտարժման թույլտվության մեջ բացակայում է էկոհամակարգային մոտեցումը, մասնավորապես բնապահպանական տեսակետից հիմնավորված չէ էկոլոգիական թողքի մեծությունը:

Հայաստանում չկա գիտականորեն հիմնավորված մեթոդաբանություն՝ էկոհամակարգերի վրա ՓՀԷԿ-երի ազդեցությունը, ինչպես նաև դրանց սոցիալ-տնտեսական, մշակութային ու ժողովրդագրական ազդեցությունը համալիր գնահատելու համար: Անտեսված է բնական ռեսուրսների ողջամիտ օգտագործումը, և գետերը դիտարկվում են միայն որպես հիդրոէներգետիկ ներուժ ունեցող ռեսուրս, առանց հաշվի առնելու դրանց գումարային ազդեցությունը շրջակա միջավայրի ու համայնքների վրա:

Արդյունքում, ՓՀԷԿ-երի գործունեության հետևանքով այսօր արդեն 16 գետային էկոհամակարգեր գտնվում են ճգնաժամային վիճակում, իսկ 3-ը՝ աղետալի: Եվ կանխատեսվում է ջրային էկոհամակարգերի վիճակի հետագա վատթարացում՝ կապված կլիմայական փոփոխությունների հետ: Փորձագիտական տվյալներով կլիմայական փոփոխությունների արդյունքում կանխատեսվում է գետային տարեկան հոսքի նվազում 15%:

Իրավական կարգավորում

Հայաստանի Հանրապետությունում ջրային ոլորտի հարցերը կարգավորվում են՝ ՀՀ Ջրային օրենսգրքով (2002), «Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» ՀՀ օրենքով (03.05.2005, ներկայումս բարելավման ընթացքում է), «ՀՀ ջրի ազգային ծրագրի մասին» (2006թ.) ՀՀ օրենքով, «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքով (15.05.2001), այլ օրենքներով և իրավական ակտերով:

Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության հարցերը կարգավորող հիմնական փաստաթուղթը ՀՀ Ջրային օրենսգրքն է, որը պարունակում է համապարփակ ավագանային կառավարման գաղափարը, խթանում է ջրի բաշխման առաջարկի վրա հիմնված սկզբունքի կիրառումը ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման ժամանակ, հիմք է հանդիսանում ջրային պետական կադաստրի ինստիտուտի կայացման համար, պարտադրում է տեղեկատվության վրա հիմնված ջրօգտագործման թույլտվությունների տրամադրում, հնարավորություն է ընձեռում ջրային ռեսուրսների կառավարման և ծախսաձածկման ընթացքում տնտեսական լծակների օգտագործման համար:

Համաձայն «ՀՀ Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» օրենքի, «Ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության գերակայություններից է բնակչության հիմնական կարիքները բավարարելու, ջրի անբավարարության հետևանքով հիվանդությունները նվազեցնելու ու կանխարգելելու և ջրային էկոհամակարգերը պահպանելու համար անհրաժեշտ քանակի և որակի վերականգնվող ջրային ռեսուրսների պահպանումը և օգտագործումը»:

Ներկայումս ջրային ոլորտի բարեփոխումները գտնվում են անցումային ամենակարևոր փուլում, ինչը կապված է ջրային ռեսուրսների կառավարման գործառույթների ապակենտրոնացման հետ (կենտրոնից դեպի ջրավազանային կառավարման բաժիններ):

IV. ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՅՈՒՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ոլորտի իրավիճակի վերլուծությունը, իրավական կարգավորում

Իրավիճակի վերլուծություն

Հայաստանի Հանրապետությունում թափոնների կառավարման խնդիրներն ամենասուր բնապահպանական և սոցիալական հիմնահարցերից են: Հատկապես կարևորվում է շրջակա միջավայրի համար մեծ վտանգ ներկայացնող պոչամբարների բացասական ազդեցությունը: Պոչամբարների մեջ պարունակվող ծանր մետաղները և տոքսիկ նյութերը ներթափանցվում և կուտակվում են ջրամբարներում, գետերի հուններում: Թունավոր նյութերի արտահոսք է տեղի ունենում. փոշու, ջրի միջոցով տեղափոխվում են մշակովի հողատարածքներ՝ վնասելով մարդկանց առողջությանը, շրջակա միջավայրին: (Այդ խնդիրը ավելի մանրամասն քննարկվում է հանքարդյունաբերությանը նվիրված գլխում:)

Հանրապետությունում արդիական են մնում թափոնների անվտանգ գործածության *հիմնախնդիրները*, քանի որ դեռևս լուծված չեն թափոնների առավելագույնս օգտագործման, դրանց գոյացման նվազեցման և էկոլոգիապես անվտանգ հեռացման/ոչնչացման հարցերը: Այս հարցերն առավել սրվում են հանրապետությունում արդյունաբերական թափոնների վնասագերծման և թաղման մասնագիտացված պոլիգոնների, ինչպես նաև վտանգավոր թափոնների էկոլոգիապես անվտանգ եղանակով վերամշակման, վնասագերծման մասնագիտացված ձեռնարկությունների բացակայության պատճառով: Բացակայում են նաև սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան կենցաղային թափոնների հեռացման կազմակերպված վայրերը: Չկա արդյունաբերական և կենցաղային թափոնների տարանջատված հավաքման համակարգ՝ գործնականում բոլոր տեսակի թափոններն առանց տեսակավորման, հեռացվում են միևնույն քաղաքային և գյուղական աղբավայրեր:

Այսօր առավել արդիական է հանրապետությունում վտանգավոր թափոնների էկոլոգիապես անվտանգ հեռացման հիմնախնդիրը, մասնավորապես.

- երկրում առկա ժամկետանց թունաքիմիկատների ոչնչացման հիմնախնդիրն վերջնական լուծում տալու համար Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանոցի լիկվիդացման հարցը,
- սնդիկին առնչվող հարցերի կանոնակարգման իրավական հենքի ստեղծման, սնդիկ պարունակող թափոնների հաշվառման, էկոլոգիապես անվտանգ հեռացման, դրանցով շրջակա միջավայրի աղտոտվածության ուսումնասիրման հարցերը,
- տնտեսական գործունեության արդյունքում առաջացած պոլիքլորացված բիֆենիլներ պարունակող թափոնների էկոլոգիապես անվտանգ հեռացման հարցը,
- էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումների թափոնների հաշվառման և օգտակար մետաղների կորզման նպատակով դրանց վերամշակման հարցը,
- փաթեթվածքների, էլեկտրոնային և էլեկտրական սարքավորումների, տրանսպորտային միջոցների, կուտակիչների և օգտագործումից հետո այլ ապրանքների թափոնների հավաքման և օգտահանման ծախսերի մի մասը հոգալու նպատակով արտադրողների լայն պատասխանատվության սկզբունքների ներդրուման հարցը,
- վտանգավոր թափոնների վերամշակման, վնասագերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեությամբ զբաղվող կազմակերպությունների լիցենզավորման հարցը:

Թափոնների կառավարման ոլորտում հանրապետությունում կարևորվում է իրավական դաշտի կատարելագործումը, արդյունաբերական տեխնոլոգիաների նորացումն ու աստիճանական անցումը սակավաթափոն և անթափոն արտադրության, ինչպես նաև այնպիսի տնտեսական և սոցիալական գործելակերպի, որը կխթանի թափոնների նվազեցումը և կրկնակի օգտագործումը, կհեշտացնի նորագույն տեխնոլոգիաների ներդրումը:

Հայաստանում առկա է թափոնների կառավարման բարելավմանն ուղղված միջոցառումներ և դրական փորձ, ներառյալ կոշտ կենցաղային թափոնների վերամշակումը.

- ՀՀ Կառավարությունը սահմանել է վտանգավոր թափոնների վերամշակման, վնասագերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման գործընթացը:

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վտանգավոր թափոնների վերամշակման, վնասագերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզիա են ստացել 11 կազմակերպություն, որոնց մեծ մասը զբաղվում է բժշկական թափոնների վնասագերծման գործունեությամբ:

- 2011թ. մարտից ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության, Հայաստանում ՄԱԿ-ի զարգացման ծրագրի և «Էկո-ինժինիրինգ» ընկերության համատեղ ջանքերով մեկնարկել է Հայաստանում պլաստիկ թափոնների հավաքման և վերամշակման ծրագիրը:

- 2011 թվականից Վանաձորում և Գյումրիում գործում են աղբի տեսակավորման և վերամշակման փոքր գործարաններ, որոնք զբաղվում են աղբի, հատկապես՝ պլաստմասե շշերի և պոլիէթիլենի տոպրակների վերամշակմամբ: Վերամշակման ժամանակ կենցաղային աղբից առանձնացվում են խառը և կոշտ պլաստիկները՝ պոլիէթիլենային թաղանթներ և պլաստմասե շշեր, թուղթը, ապակին և մետաղը: Օգտահանված նյութերը վերամշակումից հետո դառնում են երկրորդային արտադրանքի հումք: Երևանում և մի շարք այլ քաղաքներում իրականացվում է թղթի և պլաստիկ նյութերի տարանջատված հավաքում և վերամշակում:

- 2009թ. մարտի 10-ին Երևանի քաղաքապետարանը ճապոնական «Շիմիցու» կորպորացիայի հետ կնքել է համաձայնագիր՝ Նուբարաշենի թափոնակուտակիչում կենսագազի հավաքման և այրման ծրագրի վերաբերյալ, որը կնպաստի աղբավայրում ջերմոցային գազերի արտանետումը կրճատելու, բնապահպանական, շրջակա միջավայրի բարելավման և սանիտարահիգիենիկ պայմանների բարձրացմանը: Ներկայումս Նուբարաշենի գործող թափոնակուտակիչում՝ մոտ 8 հա տարածքի վրա, փորված հորատանցքերով և հորիզոնական գազամուղերով միոցների միջոցով մեթան գազը մղվում է կենտրոնական ուղղահայաց խողովակ (ջահ) և այրվում: Տարածքը ծածկված է հերմետիկ թաղանթով և հողի շերտով: Ծրագրի իրականացման տևողությունը 16 տարի է: Պայմանագրի գործողության ժամանակահատվածում՝ մինչև 2023 թվականը, ըստ հաշվարկների, պետք է իրականացվի 512 հազար տոննա CO₂ գազին համարժեք արտանետումների սերտիֆիկացված կրճատում: Նպատակահարմար է զարգացնել ծրագիրը և իրականացնել այն նախնական տարբերակով՝ այրվող գազից ստանալով ջերմություն կամ էլեկտրականություն:

Չնայած իրականացվող աշխատանքներին, դեռևս լուծման կարիք ունեն հանրապետությունում խորհրդային տարիներին պաշտոնապես կառուցված և ներկայումս ժամանակակից քաղաքաշինական, սանիտարահիգիենիկ և բնապահպանական նորմերի պահանջներին չհամապատասխանող 60 կոմունալ աղբավայրերի (շուրջ 250 հեկտար տարածք) հետագա շահագործման և կոնսերվացման, ինչպես նաև տարիների ընթացքում ստեղծված կամ տարերայնորեն ձևավորված ավելի քան 500 աղբանոցների փակման հարցերը, որոնք զբաղեցնում են զգալի տարածքներ և առաջացնում են լուրջ բնապահպանական և սանիտարական խնդիրներ:

Իրավական կարգավորում

«Թափոնների մասին» ՀՀ օրենքը (24.11.2004թ.), սահմանում է երկրի պետական քաղաքականությունը թափոնների գործածության բնագավառում՝ նպատակ ունենալով կանխարգելելու դրանց վնասակար ազդեցությունը շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա և առավելագույնի հասցնելու դրանց օգտագործումը որպես երկրորդային հումք: Օրենքի գործողությունը չի տարածվում՝ ա/ ռադիոակտիվ թափոնների, բ/ հոսքաջրերին խառնվող և բնական ջրատարներ թափվող նյութերի, գ/ արտանետման աղբյուրներից անջատվող գազային խառնուրդների հետ մթնոլորտ արտանետվող նյութերի:

Թափոնների ոլորտում հասարակական հարաբերությունների կարգավորման հարցում կանխարգելիչ նշանակություն ունի Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքը, որը պատասխանատվություն է սահմանում վտանգավոր քիմիական և կենսաբանական նյութերի ու թափոնների հետ վարվելու անվտանգության կանոնները խախտելու համար:

Քննարկվող ոլորտին առնչվում են նաև հետևյալ օրենքները.

- «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենք (12.12.1992թ. ՀՕ-43),

- «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենք (23.06.2011թ. ՀՕ-237-Ն),

- «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք (07.05.2002թ. ՀՕ-337),

- «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենք (30.05.2001թ. ՀՕ-193),

- «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենք (28.12.1998թ. ՀՕ-270),

- «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ օրենք (20.12.2006թ. ՀՕ-245-Ն),

- «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենք (15.05.2001թ. ՀՕ-188):

Օրենքներով թափոնների գործածության ոլորտում նշվում են առանձին պետական մամիների, տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման մարմինների իրավասությունները: Սակայն օրենսդրությամբ հստակեցված չէ ոլորտի համալիր խնդիրների լուծման և հսկողությունն ապահովող պետական մարմինը:

Թափոնների ոլորտի ներկայիս օրենսդրական կարգավորումները գործնականում չեն ապահովում օրենքի պահանջների հստակ կատարում և չեն նախատեսում այնպիսի պատասխանատվության միջոցներ, որոնք կստիպեն հատկապես իրավաբանական անձանց խիստ զգոն լինել թափոնների առաջացման և գործածության հարցում:

Բացի վերոնշյալ խնդիրների լուծումը, օրենսդրական բարեփոխումները պետք է ընթանան այն ուղղությամբ, որպեսզի զարգացվեն տնտեսական խրախուսանքի միջոցները այն տնտեսավարողների նկատմամբ, ովքեր կներդնեն, կկիրառեն կամ կիրականացնեն առավելագույն անթափոն միջոցներ, մեխանիզմներ կամ տեխնոլոգիաներ, կամ կընտրեն դրանց այն տեսակները, որոնք էկոլոգիապես անվտանգ են և շրջակա միջավայրի վրա ունեն նվազագույն վնասակար ազդեցություն: (Այդ խնդիրները առավել ընդգրկուն ներկայացված են «Առաջարկվող լուծումներ» բաժնում:)

Ոլորտի կարգավորման նպատակով 2015 թվականին ընդունվել են. «Թափոնների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (22.06.2015թ. ՀՕ-105-Ն), «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (22.06.2015թ. ՀՕ-106-Ն), «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (22.06.2015թ. ՀՕ-107-Ն):

«Թափոնների մասին» ՀՀ օրենքի իրավակիրարկումն ապահովելու նպատակով ընդունվել են ավելի քան 40 այլ իրավական ակտեր, որոնցով կարգավորվում են թափոնների գործածության՝ հավաքման, փոխադրման, պահման, մշակման, վերամշակման, օգտահանման, հեռացման, վնասագերծման և թաղման փուլերը, սահմանում են դրանց ներկայացվող պահանջները, ինչպես նաև թույլ են տալիս իրականացնել այդ պահանջների կատարման նկատմամբ վերահսկողություն:

Ընդունված օրենքին և ենթաօրենսդրական ակտերին համապատասխան, երկրում իրակացվում է հետևյալը.

- Թափոնների անձնագրավորում, որի համաձայն 1-4-րդ դասի վտանգավոր թափոններ առաջացնողների կողմից մշակվում և հաստատվում են թափոնների անձնագրեր, որտեղ ամրագրվում է թափոնի տեսակն ու վտանգավորության դասը, ինչպես նաև տեղեկություններ դրանց կազմի վերաբերյալ: Անձնագրերն անհրաժեշտ են այդ թափոնների անդրսահմանային փոխադրումների կարգավորման, թափոնների տեղադրման համար բնապահպանական վճարների սահմանման, բնապահպանական իրավախախտումների համար համապատասխան պատժամիջոցների կիրառման համար:

- Թափոնների գոյացման նորմատիվների և դրանց տեղադրման սահմանաքանակների հաստատում, որի համաձայն թափոնների գործածության մեջ ներգրավված իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար հաստատվում են վտանգավոր թափոնների տեղադրման սահմանաքանակներ՝ այդ թափոնները կազմակերպության արդյունաբերական հրապարակներում կամ հատուկ հատկացված վայրերում տեղադրելու համար:

- Թափոնների պետական հաշվառում «Ձև N 1-թափոն» տարեկան վարչական վիճակագրական հաշվետվությունների տվյալների հիման վրա:

- Թափոնների գոյացման, վերամշակման և օգտահանման օբյեկտների և թափոնների հեռացման վայրերի ռեեստրների ստեղծման և վարման աշխատանքներ:

Հայաստանի Հանրապետությունում թափոնների կառավարման ոլորտը կարգավորվում է նաև երկրի կողմից վավերացված կոնվենցիաներով՝

- «Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» Բազելի կոնվենցիա (1999),

- «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի կոնվենցիա, (2003),

- ինչպես նաև «Սնդիկի վերաբերյալ» Մինամատայի կոնվենցիա, որը Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է 2013թ:

Նշված միջազգային պայմանագրերի պահանջներին համապատասխան երկրում իրականացվում է կայուն օրգանական աղտոտիչներ (ԿՕԱ) պարունակող թափոնների, այդ թվում՝ ժամկետանց պեստիցիդների, պոլիքլորացված բիֆենիլներ (ՊՔԲ) պարունակող յուղերի, սնդիկ պարունակող թափոնների հաշվառում:

Բազելի կոնվենցիայով ՀՀ ստանձնած պարտավորությունները կատարելու նպատակով ՀՀ կառավարության կողմից հաստատվել են՝

- վտանգավոր թափոնների ցանկը, որոնց ներմուծումն ու արտահանումը ենթակա է սահմանափակումների՝ Հայաստանի Հանրապետության կողմից երրորդ երկրների հետ առևտրի դեպքում,

- վտանգավոր թափոնների ցանկը, որոնք արգելված են ներմուծման համար՝ Հայաստանի Հանրապետության կողմից երրորդ երկրների հետ առևտրի դեպքում,

- ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը, ինչը նպաստում է թափոնների գործածության ոլորտում հաշվառման, թափոնների անձնագրավորման, դրանց

անդրսահմանային փոխադրման կարգավորման, թափոնների տեղադրման համար բնապահպանական վճարների ու տուգանքների սահմանման, բնապահպանական վերահսկողության, նորմավորման իրականացմանը, ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված միջոցառումների անցկացմանն ու թափոնների գործածության արդյունքում վթարների առաջացման ռիսկի կամ հասցված նյութական վնասի գնահատմանը,

- ՀՀ տարածքում գոյացող արտադրության և սպառման թափոնների ցանկը, ինչը թափոնների դասակարգումն է ըստ անվանումների և ծածկագրի և նպաստում է թափոնների գործածության ոլորտում հաշվառման, բնապահպանական վերահսկողության, նորմավորման իրականացմանը:

Թափոնների կառավարման ոլորտի կարգավորման խնդիրը

Թափոնների կառավարման հետ կապված հարաբերությունների իրավական կարգավորումն իրականացվում է «Թափոնների մասին» ՀՀ օրենքով: Ոլորտին առնչվող այլ հարցերի, այդ թվում՝ առանձին տեսակի թափոնների հետ կապված հարցերի կարգավորումն իրականացվում է հիմնականում ՀՀ կառավարության մի շարք որոշումներով:

Չնայած այն հանգամանքին, որ «Թափոնների մասին» ՀՀ օրենքով նշված են այն ոլորտները, որոնք դուրս են իր կարգավորման շրջանակից և ենթակա են կարգավորման այլ օրենքներով, Հայաստանի Հանրապետության օրենքներով թափոնների հետ կապված ոլորտային հստակ կարգավորումներ չեն նախատեսվում, հիմնականում ամրագրված են համապատասխան արգելքներ ու պատասխանատվություն՝ թափոնների ոլորտի իրավական ակտերի պահանջները չկատարելու համար: Որպեսզի նախատեսված արգելքները գործուն լինեն, անհրաժեշտ է սահմանել իրավախախտմանը համաչափ պատասխանատվության միջոցներ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը մի քանի հոդվածով անդրադառնում է հողերի, անտառների և բնական միջավայրի շահագործման, ինչպես նաև ռադիոակտիվ թափոնների հետ կապված խախտումներին և նախատեսում է տարբերակված պատասխանատվություն քաղաքացիների և իրավաբանական անձանց համար, իսկ ՀՀ քրեական օրենսգիրքը պատասխանատվություն է նախատեսում միայն վտանգավոր քիմիական և կենսաբանական նյութերի և թափոնների հետ վարվելու անվտանգության կանոնները խախտելու համար: Այս ոլորտում անհրաժեշտ է խստացնել պատասխանատվությունը, հատկապես խոշոր տնտեսվարողների համար՝ պարբերաբար տուգանք վճարելու և թափոնների վերաբերյալ օրենքի պահանջները չկատարելու հնարավոր տարբերակները բացառելու նպատակով:

«Թափոնների մասին» ՀՀ օրենքով թափոնների գործածության ոլորտում նշվում են առանձին պետական մամիների, տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման մարմինների իրավասությունները:²

Թափոնների ոլորտի ներկայիս օրենսդրական կարգավորումները գործնականում չեն ապահովում օրենքի պահանջների հստակ կատարում և չեն նախատեսում այնպիսի պատասխանատվության միջոցներ, որոնք կստիպեն, հատկապես իրավաբանական անձանց, խիստ զգոն լինել թափոնների առաջացման և գործածության հարցում:

Բացի վերոնշյալ խնդիրների լուծումը, օրենսդրական բարեփոխումները պետք է ընթանան նաև այն ուղղությամբ, որ զգալի արտոնություններ տրամադրվեն ու տնտեսական խրախու-

² Համաձայն հասարակական կազմակերպությունների կարծիքի, ոլորտում օրենքով համակարգային իմաստով պատասխանատու պետական մարմինը հստակեցված չէ և արդյունավետ վերահսկողություն ապահովելու նպատակով հարկավոր է հստակեցնել համապատասխան օրենսդրական պահանջների կատարման համար պատասխանատու պետական մարմինը:

սանքի այլ միջոցներ կիրառվեն այն տնտեսվարողների նկատմամբ, ովքեր կներդնեն, կկիրառեն կամ կիրականացնեն առավելագույն անթափոն միջոցներ, մեխանիզմներ կամ տեխնոլոգիաներ, կամ կընտրեն դրանց այն տեսակները, որոնք էկոլոգիապես անվտանգ են և շրջակա միջավայրի վրա ունեն նվազագույն վնասակար ազդեցություն:

Թափոնների առաջացման ու գործածության ոլորտի օրենսդրական կատարելագործման հիմնական ուղիները պետք է լինեն, ոլորտի՝ համակարգային իմաստով պատասխանատու պետական կառավարման մարմնի հստակեցումը, պատասխանատվության միջոցների խստացումը՝ տարբերակված սկզբունքով՝ ըստ տնտեսվարողի մեծության կամ թափոնների առաջացման ծավալների, ինչպես նաև տնտեսվարողների տնտեսական խթանում՝ նույն սկզբունքի հիման վրա:

Հանրապետությունում կոշտ կենցաղային թափոնների կառավարման բարելավմանն ուղղված ծրագրեր.

Ոլորտի բարելավման ուղղությամբ երկրում իրականացվում են միջազգային ֆինանսավորմամբ ծրագրեր՝

1) Երևան քաղաքի աղբահանության խնդրի շուրջ իրականացվում են ծրագրեր, կապված սանիտարական մաքրման և աղբահանության, ինչպես նաև գործող և նոր աղբավայրերի էկոլոգիական անվտանգության բարձրացման, ժամանակակից նորմերին համապատասխանության հարցերի հետ: Կարևորվում է նաև զարգացնել և ընդլայնել աղբի վերամշակման ոլորտը:

2) Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) ֆինանսական աջակցությամբ Հայաստանում իրականացվում են՝

- Կոշտ կենցաղային թափոնների կառավարման ոլորտում ներդրումային դրամաշնորհային ծրագիր, որի առանցքային խնդիրն է ոլորտի ազգային ռազմավարական տեսլականի սահմանումը և պլանավորումը, տարբեր նախարարությունների/գերատեսչությունների և ոլորտի ինստիտուցիոնալ կարողությունների համակարգման անհրաժեշտությունը:

Իրականացվող «Կոշտ կենցաղային թափոնների կառավարման բարելավման ներդրումային» դրամաշնորհային ծրագրի շրջանակում ՔՈՎԻ (COWI) ինժեներական խորհրդատվական ընկերության խորհրդատուների թիմը մշակել և ՀՀ կառավարության հաստատմանն է ներկայացրել «Հայաստանի կոշտ կենցաղային թափոնների կառավարման ոլորտի ռազմավարական զարգացման պլանը, ճանապարհային քարտեզը և երկարաժամկետ ներդրումային պլանը» վերջնական հաշվետվությունը: Խորհրդատուն ներկայացրել է հանրապետության ԿԿԹԿ համակարգի պլանավորման 5 տարբերակ, որոնցից ՀՀ պետական շահագրգիռ գերատեսչությունների, քաղաքացիական հասարակության միջազգային և տեղական ներկայացուցիչների հետ քննարկման արդյունքում՝ նախապատվությունը տրվել է «Տարածաշրջանային համակարգ՝ ներառյալ Երևանը, որտեղ կհավաքվի շրջակա մարզերի աղբը» տարբերակին:

Ներդրումային դրամաշնորհային ծրագրի 2-րդ փուլում ԱԶԲ-ի ՔՈՎԻ խորհրդատվական թիմը իրականացնում է Գյումրի քաղաքը և հարակից տարածքները սպասարկող տարածաշրջանային աղբավայրի համար իրագործելիության ուսումնասիրությունը (ՀՀ Շիրակի մարզ):

- Աղբատության հաղթահարման ճապոնական հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ իրականացվում է «Հայաստան: Հեռավոր և փոքր համայնքների համար կոշտ թափոնների կառավարման լուծումներ» տեխնիկական օժանդակությունը: Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է ունենալ աշխարհագրական և ռելիեֆային առումով տարանջատված ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի-Ագարակ, Կապան-Քաջարան, Գորիս, Սիսիան և ՀՀ Վայոց Ձորի

մարզի Եղեգնաձոր-Վայք-Ջերմուկ տարածաշրջանների համար՝ շրջակա գյուղական համայնքներով հանդերձ, աղբահանության սխեմաներ:

3) Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎՋԵԲ) կողմից դեռևս 2009թ. ՀՀ քաղաքաշինության նախարարության դիմումի համաձայն մշակված և հաստատված «Կոտայքի կոշտ կենցաղային թափոնների կառավարման» վարկային ծրագիրը (2014թ. հունիսի 16-ին ՀՀ վարչապետի հանձնարարությամբ ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը նշանակվել է «Կոտայքի կոշտ կենցաղային թափոնների կառավարման» վարկային ծրագրի 2-րդ փուլի միջոցառումները կազմակերպվող մարմին) իրականացվում է ՀՀ Կոտայքի մարզում՝ հետապնդելով Հրազդան քաղաքային համայնքում Եվրոպական ստանդարտներին համապատասխան աղբավայրի կառուցման նպատակը, որը սպասարկելու է Կոտայքի մարզի 7՝ Աբովյանի, Բյուրեղավանի, Եղվարդի, Ծաղկաձորի, Հրազդանի, Նոր Հաճնի, Չարենցավանի և ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանի քաղաքային համայնքները իրենց շրջակա գյուղերով: 2014թ. դեկտեմբերի 19-ին ՀՀ կառավարության, ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության, ծրագրի շահառու համայնքների և ՎՋԵԲ-ի միջև ստորագրվել են վարկային, դրամաշնորհային և ծրագրի իրականացման ու աջակցության համաձայնագրերը:

ՀՀ կառավարության համաձայնությամբ և հանձնարարականի համաձայն ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունը ՎՋԵԲ-ի հետ քննարկում է ՀՀ Գեղարքունիքի մարզի մնացած համայնքների «Կոտայքի կոշտ կենցաղային թափոնների կառավարման» ծրագրում ընդգրկման հարցը: ՎՋԵԲ-ը սկսել է ծրագրի նախապատրաստական աշխատանքները, և առաջիկայում նախատեսվում է տեխնիկական և բնապահպանական ուսումնասիրություն և ֆինանսական հոսքերի ներգրավման միջոցառումներ:

4) Գերմանական զարգացման բանկի (ԳՋԲ) աջակցությամբ, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության միջև 16.08.2011թ. կնքված եռակողմ ֆինանսավորման համաձայնագրի համաձայն 2012 թվականի հունիսի 29-ին կնքված «Վանաձոր քաղաքի Կոշտ կենցաղային թափոնների համակողմանի կառավարման համակարգի մշակման իրագործելիության հետազոտություն» ծրագրի շրջանակներում Գերմանական ERM GmbH խորհրդատվական ընկերության կողմից իրականացվում են ուսումնասիրություններ ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի և հարակից համայնքների համար: Հետագայում հետազոտությունները ընդգրկել են ամբողջ Լոռու մարզի և ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնքի համար աղբահանության միասնական համակարգի՝ աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների կազմակերպման, նոր աղբավայրի կառուցման, դրանց նախահաշվային արժեքների վերաբերյալ, ինչպես նաև նոր աղբավայրի տեղադիրքի վերաբերյալ առաջարկություն ներկայացնելու համար: Աշխատանքներն ընթացքի մեջ են: 2014թ. դեկտեմբերի դրությամբ ներկայացված հաշվետվությունների համաձայն, ընտրվել է Քարաձորի նոր սանիտարական աղբավայրի տեղադիրքը, որը պետք է համապատասխանի ԵՄ շինարարական և շահագործման ստանդարտներին, ներառյալ Վանաձորում, Սպիտակում և շրջակա բնակավայրերում գոյացող թափոնների տեղադրման համար, ինչպես նաև Դիլիջանում գոյացող թափոնների դեպի նոր աղբավայր տեղափոխման համար անհրաժեշտ շարժական սարքավորանքը:

V. ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Ոլորտի իրավիճակի վերլուծություն, իրավական կարգավորում

Իրավիճակի վերլուծություն

Օրգանական գյուղատնտեսությունը ճանաչվել է «Ռիո+20» զագաթաժողովի քսանամյա հոբելյանի այն կարևոր ուղղություններից, որոնք դասվում են կայուն կամ կանաչ տնտեսության զարգացման խորհրդանիշների թվին: Հայաստանը «Ռիո+20» զագաթաժողովի որոշումների ներքո ընդունվել է որպես օրգանական գյուղատնտեսության մոդելային երկիր: Նպատակ է դրվել որոշել օրգանական արտադրության գյուղմթերքի ու սննդի մրցունակ ու կայուն արժեչափաները, նպաստել կայուն օրգանական արտադրանքի տեղական պահանջարկի ձևավորմանը, ինչպես նաև արտադրության խթանումը ի նպաստ գյուղատնտեսության կայուն զարգացմանը ու կայուն սպառմանը, տնտեսական աճին և այլն: Օրգանական արտադրության մեջ բացառվում է գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների (ԳՁՕ-ների) կիրառումը:

Բոլոր թույլատրելի նյութերն ունեն բացառության բնույթ ու կիրառման խիստ սահմանափակումներ, որոնք սահմանված են ու գտնվում են իրավասու օրգանական անկախ հավաստագրման/սերտիֆիկացման համակարգի հսկողության ներքո: Օրգանական գյուղատնտեսական ու սննդի շուկան հանդիսանում է այլընտրանքային շուկա ու աշխարհում վերապրում է շարունակաբար զարգացում, ինչը առաջին հերթին թելադրված է սպառողների բնապահպանական ու առողջ ապրելակերպի ինքնագիտակցության մակարդակի բարձրացմամբ: Վերջինս էլ իր հերթին, ստանալով պետական աջակցություն, սկսում է կարգավորվել օրենսդրական կամ այլ տիպի նորմավորող շրջանակների միջոցով: Պետական ռազմավարության մաս կազմելով, օրգանական գյուղատնտեսության պետական հոգացության շրջանակները սովորաբար նախատեսում են օրգանական ֆերմերների ու ագարակատերերի խրախուսման տարբեր մեխանիզմների կիրառում, որոնք սակայն դեռևս բացակայում են Հայաստանի Հանրապետությունում:

Գյուղատնտեսության ոլորտն Հայաստանում ընդգրկում է 340000 ֆերմերային տնտեսություն և մեծ թվով մասնավոր ընկերություններ, որոնք զբաղված են գյուղատնտեսական ծառայություններով, ինչպես նաև մարկետինգով և գյուղատնտեսական արտադրանքի մշակմամբ: Մասնավոր ագարակատերերին է պատկանում վարելահողի 71,7 տոկոսը, բազմամյա մշակաբույսերով տարածքների 78,3 տոկոսը, և խոտածածակ հողերի 48,4 տոկոսը: Մասնավոր հատվածն արտադրում է գյուղատնտեսության համախառն արտադրանքի 98 տոկոսը: Հողերը բաժանվել են ավելի քան 1,2 միլիոն հողակտորների: Ներկայումս միջինում մեկ տնտեսությունն ունի 1,4 հեկտար հողատարածք, ներառյալ 1,1 հեկտար վարելահող:

Հայաստանում օրգանական գյուղատնտեսության զարգացման կարևոր նախադրյալներից են այն փաստերը, որ հողի սեփականաշնորհումից հետո պարարտանյութերի և վնասատուների դեմ պայքարի միջոցների օգտագործումը նվազել է տնտեսական խնդիրների և այդ միջոցների պակասի արդյունքում: Այդպիսով, գյուղատնտեսության մեջ շրջակա միջավայրի պայմանները բարելավվել են անցյալ սոցիալիստական ինտենսիվ գյուղատնտեսության պայմանների հետ համեմատած: Այդուհանդերձ, ագրոքիմիական միջոցների ներմուծումը շարունակում է վտանգել շրջակա միջավայրը: Օրգանական գյուղատնտեսության զարգացումը կաջակցի Հայաստանի Հանրապետության բնապահպանական մի շարք հիմնախնդիրների (հողի դեգրադացիա և բնահողի էրոզիա, շրջակա միջավայրի, այդ թվում ջրերի, աղտոտում, կենսաբազմազանության կորուստ և բնական պաշարների անվերահսկելի օգտագործում, այլն) լուծմանը:

Օրգանական գյուղատնտեսության առաջին փորձը իրականացվել է Հայաստանում 1991 թվականից սկսած, գերմանական մասնագետների աջակցությամբ, Արարատյան դաշտում՝ Դմիտրով գյուղում, սակայն համակարգային մոտեցումը ոլորտին սկսել է ձևավորվել 2002 թվականից: Օրգանական գյուղատնտեսության արտադրության ընդհանուր հողատարածքը

2009թ. կազմում էր 2000 հեկտար, որից հավաստագրված էր 1500 հեկտարը, ներառյալ՝ վայրի հավաքման տարածքները, ոչ հավաստագրված, անցումային շրջանի դեպի օրգանականի տակ գտնվող՝ 500 հեկտար: Հետագա տարիների ընթացքում օրգանական կառավարման տակ գտնվող տարածքները փոփոխվել են ու կազմել է 19000 հեկտար 2012 թվականին, ներառելով սերտիֆիկացված գյուղատնտեսական, վայրի հավաքի տարածքներ և անցումային դեպի օրգանական հողատարածքները: Օրգանական մեղվաբուսականի քանակը կազմում է մոտ 530 մեղվաբուսականի 2013 թվականին, մոտավորապես 16000 կգ մեղր արտադրողականությամբ:

Օրգանական գյուղատնտեսությունը կարգավորող ազգային օրենսդրությունն առկա է և օրգանական գյուղատնտեսությունը բարձր է դասվում ագրոարդյունաբերական ազգային քաղաքականության մեջ: Կառավարության աջակցությունը օրգանական գյուղատնտեսության ոլորտին գրեթե բացակայում է:

Հայաստանում առկա է տեղական օրգանական հավաստագրման մարմինը՝ «Էկոգլոբ» կազմակերպությունը, որն արժանացել է միջազգային ճանաչման ԵՄ, ԱՄՆ, Շվեյցարիայի, Կանադայի շուկաների կողմից: Հայկական արտադրողներն օգտվում են «Էկոգլոբ» կազմակերպության կողմից տրամադրվող օրգանական հավաստագրման հնարավորություններից: Միջազգային ճանաչում ունեցող օրգանական հավաստագրման առկայությունը Հայաստանում առավել հարմարեցված է տեղական սոցիալտնտեսական ու մշակութային պայմաններին, նպաստում է առավել մեղմ անցմանը օրգանական արտադրությանը, ինչպես նաև ապահովում է տարբեր շուկաների պահանջներին համապատասխանող ծառայություններ՝ նպաստելով տեղական օրգանական արտադրողների արտահանման ներուժի աճին ու մրցունակությանը տեղական ու միջազգային շուկաներում:

Օրգանական գյուղատնտեսության խորհրդատվության հնարավորությունները դեռևս շատ սահմանափակ են և հիմնականում տրամադրվում են դոնորների կողմից ֆինանսավորվող հասարակական կազմակերպությունների կողմից:

Օրգանական գյուղատնտեսությունն իր շուկայական կողմնորոշման ուղղվածությամբ և շուկաների պահանջարկով կարող է լավ հիմքեր ստեղծել լրված և չօգտագործվող հողերը գյուղատնտեսական կիրառության մեջ ներգրավելու համար: Այն կարող է դառնալ մի կարևոր գործունեություն, որի շնորհիվ կնվազի գյուղաբնակների արտահոսքը դեպի մայրաքաղաք կամ արտերկիր՝ որպես աշխատուժ:

Հողային ռեսուրսների ներկայիս կոնսոլիդացիան կարող է միավորել օրգանական տեսլականով ֆերմերներին՝ նրանց խմբերով և կոոպերատիվներով կազմակերպելու նպատակով: Օրգանական գյուղատնտեսությունը, որը հիմնված է հետևելիության պարտադիր պահանջների վրա, անուղղակիորեն խթանում է ինտեգրումը արժեքային շղթայի դերակատարների միջև, մի բան, որ, ընդհանուր առմամբ, բացակայում է այսօրվա իրավիճակում: Կարելի է, հետևաբար, ակնկալել ավելի լավ գործող շուկաներ: Այս կերպ, օրգանական գյուղատնտեսությունը հաղթահարում է բազմաթիվ գերակա մարտահրավերներ:

Հայտնի է, որ օրգանական արտադրության պահանջները հիմնվում են մեծամասնորեն հողի, բույսերի, կենդանիների տեսակների այնպիսի կառավարման վրա, որը խրախուսում է բնական ռեսուրսների խնայողությունը, պահպանությունը ու բարելավումը: Ջերմոցային գազերի արտանետումների նվազեցումը օրգանական գյուղատնտեսության միջոցով կարող է նոր հնարավորություն դառնալ ինչպես ֆերմերների և ներդրողների, այնպես էլ, ընդհանուր առմամբ, երկրի համար: Օրգանական գյուղատնտեսության վարումը կարող է կլանել ածխածինը և այդպիսով նվազեցնել ջերմոցային գազերի արտանետումները: Օրգանական գյուղատնտեսության մեջ ածխածնի կլանումից ստացվող եկամուտը 50,000 հեկտարից կարող է հասնել տարեկան 1-2 միլիոն ԱՄՆ դոլլարի:

Համեմատության համար՝ սովորական (ավանդական) արդյունաբերական գյուղատնտեսությունն արտադրում է բարձր բերք մեկ հեկտարի և մեկ աշխատողի հաշվարկով, մինչդեռ դա պահանջում է անկայունորեն բարձր արտաքին ներդրումային միջոցներ, ինչպիսիք

են հանածո վառելիքի միջոցները, սինթետիկ պարարտանյութերը և թունաքիմիկատները, որոնց արդյունքում տեղի է ունենում քիմիական նյութերով աղտոտում, ջրի մեծաքանակ օգտագործում և հողի դեգրադացում, կարճ ասած՝ բնական կապիտալի սպառում: Եթե թունաքիմիկատների օգտագործումից առաջացած ազդեցությունների բացասական հետևանքների համար գանձվեին տուգանքներ, ապա դրա հետ կապված ծախսերը զգալիորեն կմեծանային:

Չնայած օրգանական գյուղատնտեսությունը առավել աշխատատար չէ Հայաստանի պայմաններում, բայց նայնպես այն կարող է նպաստել զբաղվածության աճին՝ բազմաթիվ մեխանիզմների միջոցով: Չօգտագործվող և լքված գյուղատնտեսական տարածքների մշակումը օրգանական մեթոդի կիրառմամբ կառաջացնի զբաղվածության աճ գյուղական տարածքներում: Նոր գրավիչ աշխատատեղերն, ինչպիսիք են օրգանական խորհրդատվությունը, օրգանական կառավարիչները, օրգանական տեսուչները և այլն, հասանելի կլինեն շահագրգիռ անձանց և տեղական կազմակերպությունների համար:

Հայաստանի օրգանական գյուղատնտեսությունը աջակցության կարիք ունի: Պետական աջակցության բացակայության պայմաններում դոնորների աջակցությունը առավել կարևոր է: Անհրաժեշտ է նախաձեռնել դոնորների հետ քննարկումներ օրգանական արժեզրթաներին տեխնիկական, ֆինանսական ու շուկայավարման աջակցության վերաբերյալ: Անհրաժեշտ է ստեղծել պետական աջակցության մեխանիզմ, որի շնորհիվ ազարակատերերը անցում կկատարեն ավանդական գյուղատնտեսությունից դեպի օրգանական արտադրություն: Հրատապ անհրաժեշտ է մշակել ու ներդնել խթանող ու աջակցող մեխանիզմներ Հայաստանում օրգանական գոյատնտեսությունը զարգացնելու համար: Տեղական փորձառությունը և մասնագիտական ռեսուրսները պետք է հնարավորինս օգտագործվեն նման աջակցության ծրագրերում:

Ազգային օրգանական օրենսդրությունը պետք է վերանայել և համապատասխանեցնել այն հիմնական շուկաների գործող պահանջներին, հայրենական արտադրողների ու առևտրային ընկերությունների համար առավել դյուրին դարձնելու մուտքը շուկաներ և ձևավորելու տեղական սպառման շուկան, ինչպես նաև սպառողներին մոլորությունից ու կեղծիքից պաշտպանելու համար:

Անհրաժեշտ է մշակել Օրգանական գյուղատնտեսության ազգային պլան կամ ծրագիր (ՕԳԱՊ կամ ՕԳԱԳԾ)՝ ճյուղի զարգացման քաղաքականության համակարգված կիրարկումն ապահովելու համար: Ճանաչել օրգանական արժեզրթաների բնապահպանական/էկոլոգիական ծառայությունները: Հայաստանի շրջաններում օրգանական ֆերմերները պետք է փոխհատուցվեն/վճարվեն իրենց ծառայությունների դիմաց: Տեղական, մարզային և ազգային գյուղատնտեսական և բնապահպանական իրավասու մարմինները պետք է ընդգրկվեն կարողությունների ստեղծման գործում՝ օրգանական արժեզրթաներին աջակցելու նպատակով:

Պետք է կազմակերպել համապարփակ օրգանական ուսուցողական դասընթացներ ֆերմերների և արժեզրթաների մասնակիցների համար: Դասընթացներն ուղղել օրգանական ստանդարտների, բնապահպանական և կանաչ գյուղատնտեսության հմտությունների զարգացմանը և նախատեսել դրանք տարբեր շրջանների և դրանց յուրահատուկ օրգանական արժեզրթաների համար: Հողի բերքիության բարելավման, դեգրադացման կանխարգելման, հիվանդությունների, վնասատուների և մոլախոտերի հսկման էկոլոգիական և կենսաբանական լուծումների տարբեր և դրանց կիրառումը ներկայացնել տարբեր շրջաններում/գյուղատնտեսական գոտիներում կազմակերպված ցուցադրական նախագծերի միջոցով:

Օրգանական մեթոդների կիրառման տնտեսական առավելությունները միջնաժամկետ և երկարաժամկետ կտրվածքներով (ներդրման և եկամուտների հարաբերակցությունը) պետք է ներկայացվեն արժեզրթաներին և տեղական ծառայություններ մատուցողներին (գյուղխորհրդատվություն, մարքեթինգային ծառայություններ, ասոցիացիաներ և այլն), բարելավելու համար նրանց մոտիվացիան օրգանական արտադրության մեթոդի անցնելու համար:

Պետք է ուսուցողական դասընթացներ կազմակերպել ընտրված համայնքների համար,

որոնք մասնագիտացված են վայրի բուսատեսակների հավաքի և նախնական մշակման մեջ՝ հիգիենայի, կայուն հավաքչության, հետազոտելիության և հաշվառումների հարցերով՝ հիմնել օրգանական ու բազմաֆունկցիոնալ գյուղատնտեսության պիլոտային ծրագրեր ընտրված համայնքներում և գյուղատնտեսական վայրերում զարգացնել «մաքուր արտադրության» ոլորտներ՝ մեղվաբուծություն, անտառների կողմնարդյունք, դեղաբույսերի հավաքում ու մշակում և այլն:

Իրավական կարգավորում

Օրգանական գյուղատնտեսության մասին օրենքը ուժի մեջ է մտել 2009թ. մայիսին: Օրենքը մշակելիս հիմնվել են ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության Կոդեքս Ալիմենտարիոսի օրգանական գյուղատնտեսության ուղեցույցի ու Եվրոպական Հանձնաժողովի օրգանական կանոնակարգերի դրույթների վրա: Այդ օրենքը շրջանակային է և սահմանում է օրգանական գյուղատնտեսության հիմնական պահանջները: Ենթաօրենսդրական ակտերը, որոնք հաջորդեցին օրենքին, սահմանում են մակնշման, արտադրության, անցումային շրջանի պահանջները, օրգանական սերտիֆիկացման կարգը, օրգանական արտահանման ու ներկրման կանոնները:

VI. ԿԱՅՈՒՆ ԶՐՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Ոլորտի իրավիճակի վերլուծություն, իրավական կարգավորում

Իրավիճակի վերլուծություն

Համաձայն Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության ձևակերպման, «Կայուն զբոսաշրջությունը դա զբոսաշրջություն է, որը հանգեցնում է բոլոր ռեսուրսների այնպիսի կառավարմանը, որպեսզի բավարարվեն/ ապահովվեն տնտեսական, սոցիալական և գեղագիտական կարիքները, միաժամանակ պահպանելով մշակութային ամբողջականությունը, էական էկոլոգիական գործընթացները, կենսաբանական բազմազանությունը և կյանքի համար անհրաժեշտ համակարգերը»:

Հաշվի առնելով հանրապետությունում բնական և պատմամշակութային հարուստ զբոսաշրջային ներուժի առկայությունը՝ զբոսաշրջության զարգացումը դասվում է ՀՀ կառավարության գործունեության գերակա ուղղությունների թվին: Զբոսաշրջության բնագավառի պետական քաղաքականության նպատակն է մեծացնել զբոսաշրջության ներդրումը ազգային եկամտի ավելացման, համաչափ տարածքային տնտեսական զարգացման և բնակչության կենսամակարդակի բարձրացման գործընթացում՝ պայմանավորված.

- զբոսաշրջային այցելությունների քանակի աճով,
- զբոսաշրջությունից ստացված եկամտի ավելացմամբ,
- աշխատատեղերի ստեղծմամբ:

Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջության զարգացման պետական կարգավորման հիմքում ընկած են.

- Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին ՀՀ օրենքը (17.12.2003թ. ՀՕ-11-Ն),
- Զբոսաշրջության զարգացման հայեցակարգը (ՀՀ Կառավարության հավանությանն է արժանացել 2008թ.):

Վերոնշյալներում սահմանվում և ամրագրվում են զբոսաշրջության ոլորտում ՀՀ պետական քաղաքականության նպատակներն ու հիմնադրույթները, ինչպես նաև երկրում զբոսաշրջության վիճակն ու առկա զբոսաշրջային ռեսուրսների նկարագիրը, զբոսաշրջության

զարգացման խոչընդոտներն ու մարտահրավերները, տեսլականներն ու թիրախները, պետական քաղաքականության սկզբունքները և այլն:

Հայաստանի Հանրապետությունում կայուն զբոսաշրջության զարգացման առումով հատկապես կարևոր է, որ զբոսաշրջության զարգացման հայեցակարգում տարբերակված կերպով ներկայացվում է զբոսաշրջության դերն ու նշանակությունը՝ տնտեսական, սոցիալական, բնապահպանական, քաղաքական ասպեկտներով: Վերջիններիս վրա են խարսխված կայուն զարգացման և, մասնավորապես, զբոսաշրջության կայուն զարգացման գաղափարները:

2005-13թթ. հաստատվել են Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջության զարգացումը կանոնակարգող պետական մի շարք ծրագրեր՝ գործողությունների թե՛ համապետական, և թե՛ տեղական ընդգրկմամբ: Մասնավորապես, ՀՀ կառավարության 16.07.2005թ. «Օաղկաձորը միջազգային չափանիշներին համապատասխանող զբոսաշրջության կենտրոն» նպատակային խնդիրների լուծման ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 948-Ն որոշումը, ՀՀ կառավարության 16.10.2008թ. «Զբոսաշրջության զարգացման հայեցակարգից բխող 2008-2012թթ. միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1322-Ն, ՀՀ 26.06.2009թ. կառավարության «Տաթև» զբոսաշրջային կենտրոն հայտարարելու մասին» N 848-Ն որոշումը և ՀՀ կառավարության 31.01.2013թ. «Գորիս քաղաքում զբոսաշրջության զարգացման» ծրագիրը հաստատելու մասին» N 77-Ա որոշումը:

2015թ. ՀՀ կառավարության 05.02.2015թ. N134-Ն որոշմամբ ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի կենսառեսուրսների կառավարման գործակալության կազմում ստեղծվել և գործում է էկոտուրիզմի աջակցության և զարգացման բաժին, որի նպատակը Հայաստանի Հանրապետության տարածքում բնական էկոհամակարգերի, այդ թվում բնության հատուկ պահպանվող տարածքների զբոսաշրջային գրավչություն ունեցող ռեսուրսների պահպանության և կայուն օգտագործման ապահովումն է, ինչպես նաև այդ ոլորտում պետական քաղաքականության ձևավորմանն ու կառավարմանն աջակցելը:

Կայուն զբոսաշրջության զարգացման տեսանկյունից կարևորագույն նշանակություն ունի համապատասխան որակավորում ունեցող մասնագետների պատրաստումը: Այս առումով առանձնահատուկ դերակատարություն է ստանում հանրապետության բարձրագույն կրթական համակարգը: Ներկայումս զբոսաշրջության ոլորտի մասնագետներ են պատրաստվում ՀՀ 11 բուհերում և 2 պետական քոլեջներում:

Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջության զարգացման գործում կարևոր դերակատարություն ունեն նաև հասարակական կազմակերպությունները: Ներկայումս զբոսաշրջության ոլորտում գործում են հասարակական հատվածի 10 կազմակերպություն, որոնց գործունեության շրջանակն ընդգրկում է էկոլոգիական զբոսաշրջությունը, զբոսավարական գործունեությունը, հայ խոհարարական ավանդույթների պահպանումն ու զարգացումը, ներգնա զբոսաշրջությունը և այլն:

Զուգահեռաբար, իրականացվում է ակտիվ մարքեթինգային քաղաքականություն, ամրապնդվում է զբոսաշրջության ոլորտում միջազգային համագործակցությունը (այդ թվում՝ թե՛ երկկողմ, և թե՛ ՄԱԿ-ի Համաշխարհային զբոսաշրջային կազմակերպության մակարդակներով):

Չնայած առկա դրական քայլերին և զարգացումներին, զբոսաշրջության կայուն զարգացման տեսանկյունից երկրում առկա են լուծում պահանջող մարտահրավերներ ու հիմնախնդիրներ:

Զբոսաշրջության ոլորտում պետական քաղաքականության նպատակների իրականացումը և Հայաստանի զբոսաշրջային արդյունքի ներկայացմամբ համաշխարհային զբոսաշրջային շուկայում Հայաստանի մրցունակության բարձրացումը ապահովելու համար, ի թիվս այլ խնդիրների, անհրաժեշտ է մի շարք միջոցառումներ իրականացնել՝ ուղղված պետական քաղաքականության հետևյալ խնդիրների լուծմանը.

- Մարզային և համայնքային նշանակության ավտոճանապարհների բարեկարգում: Դա թույլ կտա տարածականորեն առավել բազմազանեցնել զբոսաշրջային երթուղիները՝

ընդգրկելով այցելության նոր նպատակակետեր՝ դրանով իսկ նպաստելով հանրապետության զբոսաշրջային ներուժի լիարժեք և համաչափ օգտագործմանը, զբոսաշրջության տարածական ապակենտրոնացմանը: Դա, իր հերթին, կարևոր նշանակություն կունենա զբոսաշրջային նոր տարածքների սոցիալ-տնտեսական զարգացման առումով:

- Ջրոսաշրջային տարածքների մաքրության և հիգիենիկ պատշաճ պայմանների ապահովում, աղբահեռացման, թափոնների կառավարման արդյունավետ համակարգերի ներդրումը:

- Ջրոսաշրջային ենթակառուցվածքների զարգացումն ու արդիականացումը (այդ թվում՝ միջին կարգի և համեմատաբար մատչելի տեղավորման հաստատությունների ցանցի ձևավորումը):

- Հայաստանի զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացում:

- Համայնքներում զբոսաշրջության զարգացում:

- Ներգնա տուրիզմում ուղեկցորդների վերապատրաստման և լինցենզավորման համակարգի ներդրում՝ կարևորելով նրանց կողմից ներկայացվող մեր երկրի մասին տեղեկատվության անվտանգության ու քաղաքական նշանակության կարևորությունը:

Ձուգահեռաբար, կարևոր է ազգաբնակչության (մասնավորապես, զբոսաշրջային տարածքների բնակիչների) տեղեկացվածության ապահովումը՝ զբոսաշրջության կայուն զարգացման դրույթների մասով (ոչ սպառողական վերաբերմունք և զբոսաշրջային ռեսուրսների կայուն օգտագործում, կանաչ և էկոզբոսաշրջության զարգացում, «աղքատամետ» սոցիալական ուղղվածության զբոսաշրջություն և այլն):

Կարևորվում է նաև մարզային և համայնքային զբոսաշրջային կառույցների հզորությունների ավելացումը, դրանց գործունեության համակարգումն ու փոխհամաձայնեցումը, մարզային զբոսաշրջային-տեղեկատվական բազաների ստեղծումը: Սա թույլ կտա ապակենտրոնացնել ոլորտի զարգացումը Հայաստանի Հանրապետությունում և տեղական մակարդակով աշխուժացնել զբոսաշրջության զարգացման գործընթացը, ապահովել տեղի բնակչության առավել բարձր ներգրավվածությունը:

Երկրում արդեն իսկ իրականացվում են նախապատրաստական աշխատանքներ՝ մարզային զբոսաշրջային մարքեթինգի ու բրենդինգի, մարզերի զբոսաշրջային գրավչության և մրցունակության բարձրացման մոտեցումների ձևաչափ-առաջարկի մշակման ուղղությամբ:

Ջրոսաշրջության ռազմավարությունների մեջ կայուն զարգացման սկզբունքների ներգրավման գլխավոր միջոց կարելի է համարել Կայուն զբոսաշրջության սերտիֆիկացումը: Անհրաժեշտ է մշակել և ներդնել Կայուն զբոսաշրջության սերտիֆիկացման ծրագիր, որը կանդրադառնա այնպիսի ոլորտներին, ինչպիսիք են՝ էներգիայի օգտագործումը, ջրօգտագործումը, թափոնների հավաքումը և հեռացումը, վտանգավոր նյութերի վերահսկումը, դեպի մթնոլորտ արտանետումները և տրանսպորտի օգտագործումը, շենքերը և ենթակառուցվածքները, բնությունը և կենդանական/բուսական աշխարհը, մշակույթն ու համայնքը և այլ: Որպես առաջին քայլ նապատակահարմար է սկսել բնության վրա հիմնված զբոսաշրջությունից՝ հաշվի առնելով դրա սերտ կապը փխրուն էկոհամակարգերի և զգայուն շրջակա միջավայրի հետ:

Իրավական կարգավորում

Այս ոլորտը կարգավորող «Ջրոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքը ընդունելուց հետո այն մի քանի փոփոխությունների է ենթարկվել, մասնավորապես՝ 08.06.2004թ. ՀՕ-91-Ն, 08.12.2010թ. ՀՕ-241-Ն և 26.02.2013թ. ՀՕ-13-Ն օրենքներով: Ջրոսաշրջության ոլորտի իրավական կարգավորման հարցում ուշադրության է արժանի նաև ՀՀ կառավարության 2015թ. փետրվարի 12-ի «Ջրոսաշրջության աջակցության ծառայություններ»

2015 թվականի ծրագիրը և ծրագրի իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին» թիվ 120-Ն որոշումը:

Նշված փոփոխությունների մեջ անհրաժեշտ է առանձնացնել Օրենքի 12-րդ հոդվածը, որի նկատմամբ 2010թ. ընդունված փոփոխության համաձայն, ուժը կորցրած է ճանաչվում հյուրանոցային գործունեության տեսակների լիցենզավորման անհրաժեշտությունը: Նշված փոփոխության համար որպես հիմնավորում է ծառայել այն փաստարկը, որ որոշ ոլորտներում գործունեությունը հնարավոր է կարգավորել և վերահսկել առանց համապատասխան լիցենզիա տրամադրելու:

Կարելի է փաստել, որ ոլորտը լիցենզավորման դաշտից դուրս բերելով և դրա փոխարեն այլ ուղղություններ չնախատեսելով, այն փոքր ինչ դուրս է բերվում պետական վերահսկողությունից, ինչպես նաև գործող օրենսդրական կարգավորումների պարագայում նվազագույնի է հասցված պետության մասնակցությունը զբոսաշրջության և հատկապես զբոսաշրջային գործունեություն ծավալող սուբյեկտների նկատմամբ ներազդելու հնարավորությունների տեսակետից:

Այն պարագայում, երբ զբոսաշրջությունը օրենքի ուժով ճանաչվում է որպես տնտեսության գերակա ճյուղ, արդարացված չի կարելի համարել ոլորտին պետության մասնակցության սահմանափակ հնարավորությունները: Այն, որ պետության կողմից արդյունավետ վերահսկողություն չի իրականացվում զբոսաշրջային գործունեություն ծավալող սուբյեկտների նկատմամբ, ինչպես նաև զբոսաշրջիկների անվտանգության հարցերում, ապահովագրական ոլորտում և համապատասխան սուբյեկտներին որոշակի ֆինանսական պահանջներ առաջադրելու հարցում պետությունն ունի զուսպ դերակատարում, կարելի է գնահատել որպես գործող իրավակարգավորման թերություն:

Ոլորտի իրավական կարգավորումը հետագա զարգացման կարիք ունի, և որպես դրական օրինակ կարող են ընդունվել Ռուսաստանի Դաշնության համապատասխան ոլորտի իրավակարգավորումները:

VII. ԿԱՅՈՒՆ ՔԱՂԱՔՆԵՐ/ԿԱՆԱՉ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Ոլորտի իրավիճակի վերլուծություն, իրավական կարգավորում

«Ռիո+20» օրակարգում ամրագրված քաղաքաշինության և ճարտարապետության զարգացման ասպեկտերին վերաբերվող խնդիրները համահունչ են կայուն քաղաքների առջև կանգնած մարտահրավերներին, որոնց հաղթահարման համար անհրաժեշտ է միջազգային փորձի հիման վրա մշակել զարգացման ազգային ռազմավարություններ և միջոցառումներ՝ կառուցապատման էկոլոգիական մոտեցումների, նախագծման և շինարարության մեջ «կանաչ» ճարտարապետության ու քաղաքաշինության սկզբունքների ներառմամբ:

Քաղաքների կայունությունն ապահովող գործոններն իրենց մեջ ներառում են տարածական պլանավորման, ճարտարապետության, արդյունաբերության, էներգետիկայի և տրանսպորտի, ինչպես նաև մարդկային գործունեության գրեթե բոլոր ոլորտների խորը և համակարգված ինտեգրումը: Այս համատեքստում ներկայացված են վերը նշված ոլորտների ներկա իրավիճակի վերլուծությունն ու միջազգային փորձի հիման վրա առաջադրվել են կայուն քաղաքների ստեղծմանն ուղղված ռազմավարության հիմնական սկզբունքները:

1. Կայուն տարածական պլանավորում

1) Տարածական պլանավորումն իր տարբեր՝ ազգային, տարածաշրջանային և համայնքային մակարդակներում քաղաքաշինական ծրագրային պլանավորման, հողօգտագործման և գոտևորման արտահայտումներով կայուն բնակավայրերի նախադրյալների

ստեղծման առանցքային տարրերից մեկն է: Քաղաքաշինական պլանավորման միջոցով սահմանվում են հողամասերի նպատակային օգտագործմանն ու կայուն զարգացման, բնական և պատմամշակութային ժառանգության պահպանման, ինչպես նաև կենսագործունեության բարենպաստ տարածական միջավայրի կազմակերպման հիմնական դրույթներն ու պայմանները:

2) Հողերի կառավարումը, այդ թվում՝ տարածքների կառուցապատման նպատակով հողօգտագործումը, կարգավորվում է մի շարք օրենսդրական ակտերով՝ ՀՀ հողային օրենսգրքով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև մի շարք այլ իրավական ակտերով, որոնց հիման վրա մշակված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերն ուղեցույց են հանդիսանում բնակավայրերի վարչական սահմաններում ներառված հողերի արդյունավետ կառավարման համար:

3) Վերջին տարիների ընթացքում իրականացված բարեփոխումների շրջանակներում վերանայվել են քաղաքաշինական գործունեության ընթացակարգերը մանրամասնեցնող օրենսդրական ակտերը, տեղական մակարդակում պարտադիր մշակման ենթակա պլանավորման փաստաթղթերի կազմին և բովանդակությանը ներկայացվող պահանջները: «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքով կանոնակարգվել են համայնքների գլխավոր հատակագծերի հաստատման և հողերի նպատակային նշանակության փոփոխման ընթացակարգերը:

4) Համայնքի վարչական սահմաններում քաղաքաշինական գործունեությունը կանոնակարգվում է գլխավոր հատակագծով և քաղաքաշինական գոտևորման նախագծով («Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14.3-րդ հոդված): Գլխավոր հատակագիծը, հանդիսանալով ռազմավարական բնույթի քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ, սահմանում է համայնքի (բնակավայրի) տարածական զարգացման հիմնական ուղղությունները, հողատարածքների կառուցապատման առաջնահերթ, միջնաժամկետ և հեռանկարային փուլերը: Քաղաքաշինական գոտևորման նախագիծը համայնքի տարածական զարգացման մանրամասն պայմանները սահմանող գործադրական բնույթի փաստաթուղթ է և հիմք է քաղաքաշինական նպատակներով հողամասերի և կառուցապատման թույլտվությունների տրամադրման համար:

5) Համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը ենթակա են փորձաքննության ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշմամբ սահմանված կարգով: Այն քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը, որոնք զուգորդվում են շրջակա միջավայրի ու պատմության և մշակութային հուշարձանների պահպանության, արտակարգ իրավիճակների (հրդեհների, պայթյունների, փլուզումների, սելավների և այլն) կանխարգելման, կապի համակարգերի, տրանսպորտային, էներգետիկ ու ինժեներական այլ ենթակառուցվածքների, արդյունաբերական անվտանգության, ինչպես նաև ընդերքի արդյունավետ օգտագործման, տեխնոլոգիական, սանիտարահիգիենիկ միջոցառումների իրականացման հետ պետք է ենթարկվեն համալիր փորձաքննությանը: Համալիր փորձաքննությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքում իրականացվում է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ համապատասխան փորձագիտական և (կամ) համապատասխան ոլորտին առնչվող մասնագիտական եզրակացություն տալու իրավասությամբ օժտված շահագրգիռ պետական մարմինների մասնակցությամբ:

Քաղաքաշինական գործունեության կադաստրային վարումն ու մոնիթորինգը համայնքում կատարում է համայնքի ղեկավարը, ամբողջ մարզի համար՝ մարզպետը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, համաձայն որի մոնիթորինգը ներառում է նաև.

ա) քաղաքաշինական գործունեության օբյեկտների որակական, քանակական և համալիր գնահատումը.

բ) քաղաքաշինական փաստաթղթերով նախատեսված՝ քաղաքաշինական գործունեության օբյեկտների օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար տեղեկատվական հիմքի ստեղծումը.

գ) քաղաքաշինական գործունեության օբյեկտներում բնական աղետների ու տեխնածին երևույթների ազդեցության գնահատման և դրանց հետևանքների վերացման համար տեղեկատվական հիմքի ստեղծումը: ՀՀ տարածքի քաղաքաշինական կադաստրի վարումը, կադաստրային ամփոփումը և մոնիթորինգն իրականացնում է ՀՀ քաղաքաշինության նախարարությունը:

6) ՀՀ կառավարության 30.12.2010թ. թիվ 51 արձանագրային որոշմամբ հաստատվել է գործող քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համակարգի՝ եվրոպական նորմերին համապատասխանեցման առաջնահերթ միջոցառումների ծրագիր: Գործող քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համակարգում ընդգրկված շուրջ 1200 փաստաթղթերից եվրոնորմերին համահունչ մշակվել և գործողության մեջ են դրվել թվով 250 նորմատիվ փաստաթուղթ, որոնցից 27-ը շինարարական նորմերն են:

7) *Քաղաքաշինական ծրագրերի իրականացման բաց և թափանցիկ գործընթաց.* Քաղաքաշինական ծրագրերի ու նախագծերի քննարկման և որոշումների ընդունման գործընթացները համաձայն «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 28.10.1998թ. N660 որոշման պետք է իրականացվեն բաց և թափանցիկ ընթացակարգով՝ հասարակայնության ներկայացուցիչների մասնակցությամբ: Պրակտիկայում այդ պահանջը որոշ դեպքերում անտեսվում է:

8) *Հողօգտագործման և պլանավորման ապակենտրոնացում.* Կառավարման ապակենտրոնացման պայմաններում կառուցապատմանն առնչվող գրեթե բոլոր թույլտվական գործառույթները վերապահված են տեղական իշխանություններին՝ համայնքների ղեկավարներին, ուստի կայուն բնակավայրեր պլանավորելու ու ստեղծելու համար անհրաժեշտ է համալիր մոտեցման կիրառում, այդ թվում՝ տեղական իշխանություններին օժանդակություն ցուցաբերելու, հասարակության տեղեկացվածության բարձրացման և որոշումների կայացման գործում համայնքների բնակչության մասնակցության ընդլայնման ճանապարհով: Գլխավոր հատակագծերի մշակման գործընթացն ավելի մատչելի դարձնելու, կատարված բարեփոխումների վերաբերյալ իրազեկումն ապահովելու նպատակով ՀՀ մարզերում կազմակերպվել են սեմինարներ - խորհրդակցություններ, համայնքների ղեկավարների և այլ պատասխանատուների մասնակցությամբ:

9) Հայաստանում կիրառվող շինարարական նորմերի արդիականացման նպատակով մի շարք շինարարական նորմերի թվում մշակվել և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 14-ի N263-Ն հրամանով հաստատվել են ՀՀԾՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում՝ շինարարական նորմերը», որոնցով սահմանվում են բնակավայրերի պլանավորման համակարգի ձևավորման նորմատիվային պահանջները, ապահովելով գործառնական գոտիների փոխկապվածությունն ու կոմպակտ տեղադրումը, տարածքի ռացիոնալ և արդյունավետ օգտագործումը, ճարտարապետա-քաղաքաշինական ավանդույթների, բնակլիմայական, լանդշաֆտային, ազգային և կենցաղային հատկանիշների, շրջակա միջավայրի և պատմամշակութային հուշարձանների պահպանության ապահովման համալիր պայմանները:

10) *Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտներ*. Հիմք ընդունելով «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածը, առանձնահատուկ քաղաքաշինական արժեք ունեցող տարածքների համար (գրոսաշրջային կենտրոններ, միջպետական և հանրապետական նշանակության պետական ավտոճանապարհներին հարող հատվածներ, քաղաքների պատմական կառուցապատման տարածքներ, Սևանա լճի էկոլոգիական գոտիներ) առանձնացված են ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով, կիրառվում է քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորումը: Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների կարգը սահմանվել է ՀՀ կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի N 792-Ն որոշմամբ: Հատուկ կարգավորման մեխանիզմը թույլ է տալիս քաղաքաշինական գործունեության նկատմամբ սահմանել լրացուցիչ նորմեր և պահանջներ՝ ելնելով տվյալ տարածքի առանձնահատկություններից, ինչը հատկապես կարևորվում է այս կամ այն համայնքներում տարածական պլանավորման փաստաթղթերի բացակայության դեպքում:

ՀՀ կառավարության 2013 թվականի մարտի 7-ի նիստի N9 արձանագրային որոշմամբ (19-րդ կետի 1-ին ենթակետ) հավանության է արժանացել «Երևանի փոքր կենտրոնի կառուցապատման մասին» ՀՀ օրենքի հայեցակարգը, որի կարևոր ակնկալիքներից է «Փոքր կենտրոնի» գերուրբանիզացման միտումների կանխարգելումը՝ կառուցապատման խտության սահմանային չափերի ամրագրման, ֆինանսական/տնտեսական լծակների կիրառմամբ այնպիսի պայմանների սահմանման միջոցով, որոնք թույլ կտան կառուցապատողների ներդրումային նախաձեռնություններն ուղղել «Փոքր» կենտրոնից դեպի Երևան քաղաքի այլ վարչական շրջաններ, և որը կնպաստի մայրաքաղաքի ընդհանուր կայուն և համաչափ զարգացմանը:

Միջազգային համագործակցություն. ՀՀ Կառավարության և Ասիական զարգացման բանկի համագործակցության արդյունքում՝ Կայուն քաղաքաշինական ներդրումային ծրագրի շրջանակում Հայաստանի չորս քաղաքներում՝ Գյումրիում, Վանաձորում, Դիլիջանում և Ջերմուկում տրամադրվում է քաղաքականության մշակման և խորհրդատվության տեխնիկական աջակցություն՝ մշակելու քաղաքային զարգացման/ներդրումային ծրագրեր (ՔԶՆԾ): ՔԶՆԾ-երը կկենտրոնանան զարգացման և քաղաքականության մշակման այն հիմնական մարտահրավերների վրա, որոնք վերաբերվում են քաղաքային սեկտորներին, ներառյալ քաղաքային տրանսպորտը, ջրամատակարարումը և ջրահեռացումը, կոշտ կենցաղային թափոնների կառավարումը, կենտրոնացված ջեռուցումն ըստ թաղամասերի, բնակարանային ապահովումը, տնտեսական զարգացումը, նյութատեխնիկական ապահովումը, գրոսաշրջությունը և լուսավորությունը: ՔԶՆՊ-երի տևողությունը կլինի 10 տարի:

Երևան քաղաքում 2015 թ. ստորագրվել են ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի գրասենյակի և ՀՀ կառավարության, ինչպես նաև ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի գրասենյակի, ՀՀ կառավարության, Գորիսի քաղաքապետարանի և «Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոն» հայաստանյան գրասենյակի միջև Համագործակցության փոխըմբռնման հուշագրերը: Ծրագրի շրջանակներում ՀՀ Սյունիքի մարզի Գորիս քաղաքում մեկնարկել է «Գորիսը՝ խելացի քաղաք» ծրագիրը:

Բնակավայրերի կայուն զարգացման, տարածական պլանավորման բնագավառներում արդյունավետ համագործակցություն է իրականացվում Եվրոպայի խորհրդի Տարածական պլանավորման համար պատասխանատու նախարարների համաժողովի (CEMAT)-ի, ՄԱԿ-Հաբիտատի (UN-Habitat) և Լանդշաֆտի Եվրոպական Կոնվենցիայի իրականացման աշխատանքների շրջանակներում:

2. Կայուն տրանսպորտ

1) Վերջին տարիներին քաղաքային շարժունակության, երթևեկության կազմակերպման վիճակի բարելավման, կուտակումների նվազեցման և հասարակական տրանսպորտը բնակչության համար հասանելի դարձնելու ուղղությամբ իրականացվել են որոշակի միջոցառումներ: Սակայն մայրաքաղաքում, հատկապես կենտրոնում, առկա է տրանսպորտային միջոցների բարձր խտություն, ինչն էլ երթևեկության ծանրաբեռնվածության և կուտակումների պատճառ է: Երևան քաղաքի ճանապարհափողոցային ցանցի բեռնաթափումը հանդիսանում է գերակա խնդիր, որի լուծմանն ուղղված ծրագրերը կրում են շարունակական բնույթ:

2) Վերջին տարիների ընթացքում Հայաստանը, միջազգային դոնոր կազմակերպությունների ֆինանսավորմամբ, զգալի առաջընթաց է արձանագրել քաղաքային ճանապարհների բարելավման և վերականգնման ուղղությամբ:

3) *Ճանապարհային ցանցի բարելավում.* Մայրաքաղաքի ճանապարհային ցանցի բեռնաթափման նպատակով իրականացվող հետևողական ծրագրերից են Երևան քաղաքի ճանապարհափողոցային ցանցի ընդլայնումը, տարբեր մակարդակներով տրանսպորտային հանգույցների, նոր շրջանցիկ և տարանցիկ ճանապարհների կառուցումը: Հետիոտն երթևեկության անվտանգության ապահովման և տրանսպորտային հոսքերի ընդհատումների կանխման նպատակով քաղաքապետարանի տարեկան ծրագրերով նախատեսվել է վերգետնյա հետիոտնային անցումների կառուցում, ինչպես նաև շահագործմանն ու պահպանմանն ուղղված աշխատանքների իրականացում:

4) *Ավտոկայանատեղեր.* Ճանապարհների թողունակության բարձրացման, կանգառ և կայանում կատարած տրանսպորտային միջոցներով երթևեկելի մասերի ծանրաբեռնվածության նվազեցման նպատակով ընդունվել է ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում ավտոկայանատեղի կազմակերպման կարգը սահմանելու մասին» N 1293-Ն որոշումը: Սահմանափակվել է Երևան քաղաքի վարչական տարածք մուտք գործող միջմարզային ավտոբուսային և միկրոավտոբուսային երթուղիների մուտքը մայրաքաղաքի վարչական տարածք, կանոնակարգվել են դրանց վերջնական գառները և ուղեգծերը, որի արդյունքում զգալիորեն բեռնաթափվել են մայրաքաղաքի կենտրոնական փողոցները:

5) *Երթևեկության անվտանգություն.* 2013 թվականին ընդունվել է Տրանսպորտային անվտանգության ռազմավարությունը, որի նպատակն է ապահովել տրանսպորտային անվտանգության միջազգային պահանջներին համապատասխանող համակարգի կայացումը, որը կերաշխավորի քաղաքական, տնտեսական և արտակարգ իրավիճակներով պայմանավորված ու այլ բնույթի ռիսկերի կառավարումը, տրանսպորտային պատահարներից վնասվածքների և մահացության մակարդակի, ինչպես նաև փոխադրումների բնագավառում ծախսերի նվազեցումը՝ բարձրորակ տրանսպորտային ծառայություններ մատուցելու միջոցով հասարակության համար ստեղծելով կենսագործունեության բարենպաստ միջավայր:

6) *Տրանսպորտային ոլորտի օրենսդրական բարեփոխումներ.* Տրանսպորտային միջոցների ապահովման և հասանելիության մակարդակի բարձրացման նպատակով համապատասխան փոփոխություններ են կատարվել կանոնավոր ուղևորափոխադրումների, բեռնափոխադրումների և մարդատար տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների ոլորտները կանոնակարգող իրավական ակտերում: Հասարակական տրանսպորտի կանգառասրահներում ուղևորների երթևեկը, ինչպես նաև տրանսպորտային միջոցների հոսքերի կառավարման նպատակով 2013 թվականից կիրառվում են էլեկտրոնային չվացուցակները: Ելնելով երթևեկության կազմակերպման և անվտանգության ապահովման նկատառումներից՝ էական փոփոխություններ

են կատարվել մայրաքաղաքի մի շարք փողոցների երթևեկության կազմակերպման սխեմաներում:

7) *Էլեկտրատրանսպորտ*. Վերջին մի քանի տարիներին Երևանում որոշակիորեն ավելացել է տրոլեյբուսներով տեղափոխվող ուղևորների քանակը: Չնայած այդ հանգամանքին և էլեկտրատրանսպորտային ոլորտում կատարվող ներդրումներին, տրոլեյբուսների և դրանց հարակից սարքավորումների վատթար վիճակը հանգեցնում է ծառայությունների մատուցման ցածր հաճախականության և վառելիքային տրանսպորտին երթևեկության հիմնական մասնաբաժնի զիջման: Այդ իսկ պատճառով դեռևս ցածր է տրոլեյբուսներով տեղափոխվող ուղևորների տեսակարար կշիռը ներքաղաքային ընդհանուր ուղևորափոխադրումներում՝ կազմելով մոտ 2.5%: Հաշվի առնելով էլեկտրատրանսպորտի բացառիկ նշանակությունը էկոլոգիական տեսանկյունից, կարևոր է իրականացնել թե՛ վերգետնյա, թե՛ ստորգետնյա տրանսպորտի (մետրոյի) զարգացումը և ցանցերի ընդլայնումը Երևան քաղաքում:

3. Շենքերի և փողոցային լուսավորության էներգաարդյունավետություն

1) Հայաստանում ներկայումս «կանաչ ճարտարապետության» սկզբունքները, այդ թվում նախագծման և շինարարության մեջ էներգաարդյունավետ լուծումների կիրառումն, արդի հիմնախնդիրներ են քաղաքների էկոլոգիական և բնակչության կյանքի որակի բարելավման տեսանկյունից: Հանրապետությունում էներգախնայողության ներուժի 40%-ը պատկանում է շենք-շինություններին: Շենքերի էներգաարդյունավետության և էներգախնայողության բնագավառում ռազմավարությունների մշակման և իրականացման ուղղությամբ ՀՀ կառավարության կողմից կատարվել են օրենսդրական, ինստիտուցիոնալ բարեփոխումներ և ձեռնարկվել մի շարք միջոցառումներ, այդ թվում՝

ա) բնակելի շենքերի էներգաարդյունավետության և էներգախնայողության բնագավառը կարգավորվում է «Էներգետիկայի մասին», «Էներգետիկայի և էներգիայի սպառման բնագավառներում պետական տեխնիկական վերահսկողության մասին», «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին», «Քաղաքաշինության մասին», «Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենքներով և մի շարք ենթաօրենսդրական ակտերով:

բ) 2010 թվականին հաստատվել է Հայաստանի Հանրապետության էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ազգային ծրագրի կատարմանն ուղղված ՀՀ կառավարության գործողությունների ծրագիրը, որով սահմանված այլ դրույթների թվում հստակեցվել են նաև շենքերում էներգաարդյունավետության նոր նորմերի և ստանդարտների մշակումը:

գ) ՀՀ կառավարության 22.11. 2012թ. «Էներգետիկայի բնագավառի ներդաշնակեցման ենթակա իրավական ակտերի միասնական համալիր ցանկը հաստատելու մասին» N1481-Ս որոշման համաձայն՝ նախատեսվում է «Շենքերի էներգաարդյունավետության մասին» Եվրոպական պառլամենտի և խորհրդի 2010 թվականի մայիսի 19-ի N2010/31/ԵՄ հրահանգի ներդաշնակեցում:

դ) Մշակվել և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2011 թվականի սեպտեմբերի 26-ի N167-Ն հրամանով հաստատվել է ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն» շինարարական նորմերը, որը գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարությունում:

ե) ՀՀ կառավարության 2013 թվականի մարտի 14-ի N225-Ն որոշմամբ ՀՀ քաղաքաշինության նախարարության կանոնադրությունում ներառվել են քաղաքաշինության բնագավառում էներգախնայողությանը և էներգաարդյունավետությանն առնչվող օրենսդրական դաշտի կատարելագործման, նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և շենքերի էներգախնայողության ու

Էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակման, ինչպես նաև շինարարությունում էներգախնայող տեխնոլոգիաների կիրառման գործառնությունները:

զ) ՄԱԿ-ի Գլոբալ Էկոլոգիական հիմնադրամի (այսուհետ՝ ԳԷՀ) հետ համատեղ մշակվել և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2013 թվականի նոյեմբերի 6-ի N343 հրամանով հաստատվել է հանրապետությունում նոր կառուցվող և վերակառուցվող բնակելի, հասարակական և արտադրական շենքերի պատող կոնստրուկցիաների ջերմամեկուսացման տեխնիկական լուծումների խորհրդատվական ձեռնարկը:

է) Գործարար միջավայրի բարելավման շրջանակներում ՄԱԿ-ի ԳԷՀ-ի հետ համատեղ մշակվել և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2013 թվականի դեկտեմբերի 23-ի N394 հրամանով հաստատվել է Էներգաարդյունավետ անհատական բնակելի տների օրինակելի նախագծերի կատալոգը (աշխատանքային նախագծերով):

Էներգաարդյունավետ նախագծերով կառուցված առանձնատների շահագործման ընթացքում, ջեռուցման և հովացման հետ կապված հաշվարկված ծախսերը («ավանդական» տեխնոլոգիաներով կառուցված տների համեմատությամբ) կնվազեն շուրջ երկու անգամ: Նշված նախագծերը տեղադրված են ՀՀ քաղաքաշինության նախարարության, ՀՀ մարզպետարանների ու քաղաքապետարանների պաշտոնական կայքերում և անվճար տրամադրվում են բնակիչներին՝ զգալիորեն խնայելով նախագծի պատվիրման և փորձաքննության անցկացման համար պահանջվող ֆինանսական միջոցներն ու ժամանակը:

ը) ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ին ընդունվել է «Պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների կիրառման մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության N1504-Ն որոշումը, որով հաստատվել են պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայող և էներգաարդյունավետ միջոցառումների կիրառման ենթակա պահանջները, սահմանելով, որ դրանք ենթակա են կիրառման օբյեկտների նախագծման, փորձաքննության և շինարարության աշխատանքների պետական գնումների կազմակերպման գործընթացներում:

Նշված միջոցառումների կիրառումը հնարավորություն կտա պետական միջոցների հաշվին կառուցվող, վերակառուցվող և հիմնական նորոգվող հասարակական նշանակության (կրթության, մշակութային, մարզական, առողջապահական, սոցիալական, վարչական և այլն) օբյեկտներում էականորեն նվազեցնել օգտագործվող վառելիքաէներգետիկ ռեսուրսների սպառման ծավալները, կրճատել օբյեկտների շահագործման ծախսերը և դրանցում ապահովել նորմատիվային հարմարավետության պայմանները:

թ) ՄԱԿ-ի ԳԷՀ-ի հետ համատեղ մշակվել և Ստանդարտացման ազգային ինստիտուտի կողմից գրանցվել է էներգաարդյունավետության թվով 27 ստանդարտներ, այդ թվում 2013 թվականին գրանցված՝ «Էներգախնայողություն. Շենքի էներգետիկ անձնագիր. Հիմնական դրույթներ. Տիպային ձև» ՀՍ 362-2013 ազգային ստանդարտը, որով կանոնակարգվում է շենքի էներգետիկ անձնագրավորման հիմնական դրույթները և սահմանվում է բնակելի և հանրային շենքերի համար էներգետիկ անձնագրի ձևը:

ժ) 2015 թվականից սկիզբ է առել Եվրամիության աջակցությամբ «Հաբիթաթ-Արմենիա» միջազգային կազմակերպության կողմից իրականացվող «Վերականգնվող էներգիայի և էներգիայի արդյունավետ օգտագործման հնարավորությունը Վայք և Սպիտակ քաղաքներում» ծրագիրը, որի հիմնական նպատակն է աջակցել Սպիտակի և Վայքի քաղաքապետարաններին՝ զարգացնել և փորձարկել էներգիայի խնայողության մոդելներ՝ բազմաբնակարան և հանրային շենքերում էներգաարդյունավետությանն ուղղված միջոցառումների և արևային էներգիայի կիրառման ճանապարհով: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է թվով 47

բազմաբնակարան շենքերում (ք.Սպիտակ՝ 27, ք.Վայք՝ 18), Վայք քաղաքի մշակույթի տան և Սպիտակ քաղաքի մանկապարտեզի շենքերում իրականացնել էներգիայի խնայողությանն ու արդյունավետությանն ուղղված միջոցառումներ:

Ի) Եվրամիության Ինոգեյթ ծրագրի և ՀՀ քաղաքաշինության նախարարության հետ համատեղ 2015 թվականից իրականացման փուլում է գտնվում «Հայաստանում շինարարության և շենքերի էներգետիկ աուդիտի համակարգի ներդրման ծրագիրը», որի շրջանակներում նախատեսվում է մշակել շենքերի էներգետիկ հավաստագրման համակարգի ներդրման ճանապարհային քարտեզը:

2) Չնայած իրականացված վերոհիշյալ միջոցառումներին, դեռևս բնագավառում կան օրենսդրական, ինստիտուցիոնալ, սոցիալտնտեսական և իրազեկման անբավարարության խնդիրներ, որոնք խոչընդոտում են շուկայում էներգաարդյունավետությանն ուղղված լայնածավալ ներդրումների ներգրավմանը: Նշված խոչընդոտների վերացման ուղղությամբ ներկայումս՝

ա) մշակման փուլում է գտնվում ՀՀ էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ազգային ծրագրի կատարմանն ուղղված ՀՀ կառավարության գործողությունների ծրագրի 2-րդ փուլը,

բ) շենքերի էներգաարդյունավետության բարձրացման բնագավառում էներգախնայողության և էներգաարդյունավետության պարտադիր պահանջների կիրառման խնդիրը ներառվել է «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Երևան քաղաքի փոքր կենտրոնի կառուցապատման մասին» ՀՀ օրենքների նախագծերում, որոնք ներկայումս ներկայացվել են ՀՀ Ազգային ժողովի հաստատմանը: Նշված նախագծերով առաջարկվում է նոր կառուցվող շենքերի կառուցապատման և վերակառուցման ենթակա շենքերի համար որպես պարտադիր պայման կիրառել նախագծման և շինարարական աշխատանքների իրականացման ժամանակ ժամանակակից էներգաարդյունավետ շինարարական տեխնոլոգիաների նվազագույն պահանջների ապահովումը, ինչպես նաև էներգախնայող և էկոլոգիապես մաքուր շինարարական նյութերի օգտագործումը:

3) Վերոհիշյալ իրավական ակտերի ընդունումից, ինչպես նաև միջազգային կառույցների աջակցությամբ ընթացքում գտնվող և նախատեսվող ծրագրերի իրականացման արդյունքներով ակնկալվում է բարձրացնել բնակարանային ֆոնդի էներգաարդյունավետությունն ու էներգախնայողությունը և նվազեցնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները, ինչը համահունչ է «կանաչ ճարտարապետության» սկզբունքներին և կարևոր նախադրյալներից է կայուն քաղաքների ստեղծման համար:

4) 2014թ. ՀՀ բնապահպանության նախարարությունը և Երևանի քաղաքապետարանը, ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) և Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի (ԳԷՀ) աջակցությամբ նախաձեռնեցին «Քաղաքային կանաչ լուսավորություն» ծրագիրը, որի նպատակն է փողոցների լուսավորության համակարգերի բարձրացումը, ջերմոցային գազերի արտանետումների նվազեցումը: Առաջին պիլոտային ծրագիրը հաջողությամբ իրականացվել է:

4. Էկոլոգիապես մաքուր շինանյութեր

1) Շենքերում էներգախնայողության ապահովման և էներգետիկ ծախսերի նվազեցման նպատակով ամենարդյունավետ միջոցն եղել է պատշաճ ջերմամեկուսացումը:

Այսօր Հայաստանում լայն կիրառություն են գտել համեմատաբար «նոր» սերնդի շինարարական ջերմամեկուսիչ նյութեր, որոնց կիրառման արդյունքում հնարավոր է զգալիորեն բարձրացնել շենքերի էներգետիկ արդյունավետությունը: *Հայկական շուկայում հիմնականում*

ներկայացված են պեռլիտից, հանքային և բազալտե մանրաթելերից, ապակեմանրաթելերից, փրփրապոլիստիրոլից և փրփրապոլիուրետանից պատրաստված ջերմամեկուսիչ նյութեր և արտադրանք:

2) ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի և Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Շենքերի էներգետիկ արդյունավետության բարձրացում» ծրագրի շրջանակներում 2013 թվականին կազմվել է ջերմամեկուսիչ շինարարական նյութերի տվյալների շտեմարան, որտեղ ներկայացված են ՀՀ շուկայում առկա ջերմամեկուսիչ նյութերի բնութագրերը, մշակվել է շենքերի պատող կոնստրուկցիաների ջերմամեկուսացման տեխնիկական լուծումների խորհրդատվական ձեռնարկը:

3) Հայաստանում դեռևս չի կանոնակարգվում մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա ազդող քիմիական նյութեր պարունակող շինանյութերի կիրառումը: Օրինակ՝ ՀՀ առողջապահության նախարարությունը առաջարկել է հետաձգել ասբեստացեմենտների միջպետական ստանդարտների կիրառումը Հայաստանի տարածքում՝ մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա ասբեստի վտանգավոր ազդեցությունը կանխարգելելու նպատակով: Սակայն ասբեստացեմենտներ պարունակող շինանյութերի կիրառումը, որպես ասբեստի տարատեսակ իսպառ դադարեցված չէ և դրանց անվտանգ կառավարումը՝ ներմուծումը, արտադրությունը և շահագործումը չի կանոնակարգվում և վերահսկվում օրենսդրությամբ:

5. Օդի որակի կառավարում

1) 1994թ. ընդունված «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի արդիականացման նպատակով 2007-2013թթ. ընթացքում ընդունվել են ՀՀ կառավարության մի շարք որոշումներ, որոնք հստակեցրել և ավելի թափանցիկ են դարձրել մթնոլորտային օդի պահպանության կառավարումը: Մասնավորապես.

ա) արգելվել է համապատասխան բեռների տեղափոխումը փոշու համար անթափանց ծածկոցներ չունեցող մեքենաներով,

բ) սահմանվել են միջոցառումներ շինհրապարակներից, վերակառուցվող և նոր կառուցվող շենքերից փոշու արտանետումները կանխարգելելու համար,

գ) արգելվել է այրել խոզանները, բուսական մնացորդներով ու չորացած բուսականությամբ տարածքները, արոտավայրերի ու խոտհարքների բուսականությունը գյուղատնտեսական, անտառամերձ, անտառային ու բնության հատուկ պահպանվող տարածքների հողերում,

դ) վարչարարությունը պակասեցնելու և կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու նպատակով 10 անգամ բարձրացվել է կազմակերպությունների արտանետումների նորմավորման ենթակա լինելու շեմը, ինչպես նաև 2008 թվականից գործում է մթնոլորտ արտանետումների նորմավորման էլեկտրոնային համակարգը: ՀՀ կառավարության 27.12.12թ. 1673-Ն որոշմամբ բնապահպանության նախարարության կողմից տնտեսվարող սուբյեկտներին տրամադրվող արտանետման չափաքանակների/թույլտվությունների գործունեության ժամկետը՝ 5-տարվա փոխարեն մնում է ուժի մեջ, քանի դեռ աղտոտման անշարժ աղբյուրների և աղտոտող նյութերի մասով քանակական կամ որակական փոփոխություններ տեղի չեն ունեցել:

2) Ավտոտրանսպորտից արտանետումների կրճատման նպատակով ՀՀ կառավարության կողմից ընդունվել է հայեցակարգ և միջոցառումների ծրագիր, արգելվել է կապարացված բենզինի օգտագործումը և արտանետումների չեզոքացուցիչներ չունեցող ավտոմեքենաների ներմուծումը: Վերջին տարիների ընթացքում մոտ 10 անգամ նվազեցվել է բենզինում և դիզելային վառելիքում ծծմբի պարունակության թույլատրելի քանակությունը: Տարեցտարի ավելացել է սեղմված բնական գազի օգտագործումը՝ ի հաշիվ բենզինի օգտագործման

պակասեցման: Այս ամենի արդյունքում զգալիորեն զսպվել է վնասակար արտանետումների աճը ավտոտրանսպորտից:

3) Սահմանվել են բնական գազով աշխատող ջերմային էլեկտրակայաններից մթնոլորտ վնասակար նյութերի արտանետումների հաշվարկի մեթոդները:

4) Ընդունվել է մթնոլորտի գերնորմատիվային աղտոտվածության, կլիմայի փոփոխության և օզոնային շերտի վիճակի հետ կապված վտանգավոր հիդրոօդերևութաբանական երևույթների կանխատեսման, ազդարարման և արձագանքման կարգը:

5) Վերջին երկու տասնամյակում Հայաստանում օդի որակի մոնիթորինգը էական փոփոխությունների է ենթարկվել: Ներկայումս օդային ավազանի գետնամերձ շերտի որակի մոնիթորինգ իրականացվում է ՀՀ Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Չարենցավան, Ծաղկաձոր, Սևան, Արարատ, Կապան և Քաջարան քաղաքներում: Մշտադիտարկվում են մթնոլորտային օդի կարևորագույն աղտոտիչներից ազոտի և ծծմբի երկօքսիդների, գետնամերձ օզոնի և ընդհանուր փոշու պարունակությունները: Հանքարդյունաբերության ազդեցության գոտիներում (Քաջարան, Կապան, Ախթալա և այլն) հիմնականում բացակայում է մթնոլորտային օդի աղտոտման մշտադիտարկման ստացիոնար կայանները, իսկ կախված մասնիկների (PM_{2.5}, PM_{2.5}) մշտադիտարկում Հայաստանի Հանրապետության բնակավայրերում ընդհանրապես չի իրականացվում:

6) Մթնոլորտային օդի որակի բարելավման նպատակով նախատեսվում է լավագույն հասանելի տեխնոլոգիաների ներդրման մեխանիզմի մշակում, ինչպես նաև էլեկտրատրանսպորտի զարգացման խթանում:

7) Մշակվել և 2015թ. սեպտեմբերի 10-ի ՀՀ կառավարության թիվ 41 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի ներքո Հայաստանի Հանրապետության «Ազգային մակարդակով սահմանված նախատեսվող գործողություններին/ներդրումին» փաստաթուղթը: Փաստաթուղթը ներկայացվել է ՄԱԿ-ի կլիմայի փոփոխության կոնվենցիայի քարտուղարությանը, որպես Հայաստանի Հանրապետության դիրքորոշում և այն ընդգրկվել է Կողմերի կոնֆերանսի Փարիզյան հանդիպման փաստաթղթերի փաթեթում:

8) Բնակավայրերի մասով ջերմոցային գազերի արտանետումների կրճատման համար նախատեսվում է շենքերում և շինություններում էներգախնայողության բարձրացում, էլեկտրատրանսպորտի զարգացում, բնական գազի մասնաբաժնի ավելացում ավտոտրանսպորտի շարժիչային վառելիքում, կոշտ կենցաղային թափոններից և կեղտաջրերից մեթանի արտանետումների նվազեցում:

9) ՀՀ 9 քաղաքներ՝ Ապարանը, Հրազդանը, Ծաղկաձորը, Երևանը և այլ միացել են «Քաղաքապետերի համաձայնագիր» կոչվող Եվրոմիության քաղաքների քաղաքապետերի նախաձեռնությանը, որի համաձայն քաղաքապետերը պարտավորվում են մինչև 2020թ. կրճատել իրենց քաղաքների ջերմոցային գազերի արտանետումները 20%-ով: Ներկայումս Եվրոմիության կողմից ֆինանսավորվում է մի ծրագիր, որի նպատակն է հորդորել նաև այլ քաղաքների՝ միանալու նշված համաձայնագրին:

10) Բնակավայրերում ջերմոցային գազերի արտանետումների կրճատման (կամ ինչպես ընդունված է անվանել՝ «կլիմայի փոփոխության մեղմման») ծրագրերից է Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի ֆինանսավորմամբ, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի աջակցությամբ իրականացված «Հայաստան. քաղաքային ջեռուցման և տաք ջրամատակարարման էներգաարդյունավետության բարձրացում» ծրագիրը (2005-2013թթ.), որի արդյունքում Երևանի Ավան թաղամասում, մասնավոր կապիտալի ներգրավմամբ, կառուցվել է բազմաբնակարան շենքերի կենտրոնացված ջերմամատակարարման համակարգ: Ներկա դրությամբ համակարգին են միացված 30 շենք:

Ծրագրի շրջանակում մի շարք այլ համակարգերում տեղադրվել են արևային ջրատաքացուցիչներ, որոնց հաշվին նվազում են ջերմոցային գազերի արտանետումները ու բնական գազի սպառումը:

6. Աղետների ռիսկերի նվազեցում

Հայաստանի տարածքն ամբողջությամբ բնութագրվում է որպես սեյսմավտանգ, ինչպես նաև վտանգավոր արտածին երկրաբանական պրոցեսների (սողանքներ, փլուզումներ, քարաթափեր, սելավներ և այլն) լայն տարածվածությամբ ու տեխնածին երևույթների զարգացվածությամբ: Վտանգավոր արտածին երկրաբանական գործընթացներից առավել աղետալի են սողանքները, որոնք հանդիսանում են անընդհատ զարգացող և իրենց ծավալներով մշտական աճող վտանգի աղբյուր:

Աղետների ռիսկերի նվազեցման ուղղությամբ ոլորտում քաղաքականությունը ձևավորվում է, հիմք ընդունելով երկրում աղետների ռիսկերի նվազեցման խնդիրները և դրանց լուծման ուղիները:

1) ՀՀ կառավարության 2012 թվականի մարտի 7-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության աղետների ռիսկերի նվազեցման ազգային ռազմավարությանը և աղետների ռիսկերի նվազեցման ազգային ռազմավարության իրականացման գործողությունների ծրագրին հավանություն տալու մասին» N 281-Ն որոշումը:

2) ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության մարզերի և բնակավայրերի զարգացման ծրագրերում սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզների ներառման, արտակարգ իրավիճակների կանխարգելմանն ուղղված սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումների նախատեսման և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մարտի 7-ի N 261-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N1351-Ն որոշումն ընդունվել է 2012 թվականի հոկտեմբերի 25-ին: Այս իրավական ակտով կարգավորվում է մարզերի և համայնքների զարգացման ծրագրերում սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզների ներառումը և արտակարգ իրավիճակների կանխարգելմանն ուղղված սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումների իրականացումը:

3) Սեյսմիկ ռիսկի գնահատման տեսանկյունից առանձնակի կարևորվում են բազմաբնակարան բնակելի շենքերը, որոնցում բնակվում է հանրապետության բնակչության կեսից ավելին:

4) Շենքերի սեյսմակայունության ապահովմանն ուղղված իրավական հիմքերի ստեղծման և կիրառման նպատակով մշակվել և ՀՀ կառավարության 2013 թվականի N 44 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել «Հայաստանի Հանրապետությունում շենքերի սեյսմակայունության ապահովման հայեցակարգը», որի միջոցառումների ժամանակացույցում շենքերի սեյսմակայունության ապահովման նորմատիվատեխնիկական դաշտի կատարելագործման ուղղությամբ նասխատեսված է՝ ՀՀԾՆ II-06.02-2006 «Սեյսմակայուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերի վերանայումը և արդիականացումը, ինչպես նաև «Շենքերի և շինությունների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում. Հիմնական դրույթներ» շինարարական նորմերի հաստատումը:

5) Գործում է նաև ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի և ՀՀ քաղաքաշինության նախարարի 25.05.2013թ. համատեղ հրամանը, որով հաստատվել է սեյսմաշրջանացման (սեյսմիկ գոտեվորման) աշխատանքների իրականացման կարգը:

6) Հանրապետությունում՝ սողանքային աղետի դեմ համակարգված, հետևողական քաղաքականության և համապատասխան ռազմավարության բացակայության պարագայում, արձանագրվել են մեծ տարածքում տեղի ունեցող սողանքային պրոցեսների ակտիվացումը, դրանց մեջ նորանոր տարածքների ընդգրկումը, ինչը սպառնում է ազգային անվտանգությանը:

Վտանգները կանխելու և ռիսկերը նվազեցնելու նպատակով մշակվել և ՀՀ կառավարության հավանության են արժանացել Հայաստանի Հանրապետության սողանքային աղետի կառավարման հայեցակարգը և հայեցակարգի խնդիրներից բխող՝ Հայաստանի Հանրապետության տարածքում առավել ռիսկային 131 սողանքային տեղամասում միջոցառումների իրականացման ժամանակացույցը:

7) Կատարվել են փոփոխություններ «ՀՀ տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում (23.12.2015թ. ՀՕ-174-Ն), որի համաձայն համայնքի քառամյա զարգացման ծրագրում պարտադիր կարգով պետք է ներառվեն աղետների ռիսկերի կառավարման և քաղաքացիական պաշտպանության հիմնական մոտեցումներ:

7. Ջրի անվտանգ օգտագործման ապահովում /ջրամատակարարում և ջրահեռացում

Ժամանակակից բնակավայրերի պահանջներին, այդ թվում «կանաչ քաղաքներ» մոդելի զարգացմանը համապատասխանող կարևորագույն բաղադրիչն է խմելու և ոռոգման ջրով բավարար ապահովումը, լիարժեք ջրահեռացման համակարգի առկայությունը:

Միջազգային կառույցների աջակցությամբ ջրամատակարարման համակարգերի բարելավման ուղղությամբ իրականացվում են մի շարք ծրագրեր, մասնավորապես՝

ա) Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Համայնքային ջրամատակարարման ծրագրի» շրջանակներում ՀՀ համայնքներում իրականացվել են ջրամատակարարման համակարգերի բարելավման, բաշխիչ ցանցերի, ջրատարների կառուցման աշխատանքներ:

բ) Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող «ՀՀ բնակավայրերի ջրամատակարարման ու ջրահեռացման համակարգերի բարելավում» ծրագիրը, որի շրջանակներում իրականացվում է ջրամատակարարման ու ջրահեռացման համակարգերի բարելավման աշխատանքներ՝ ՕԿՁ-ների, գլխամասային կառուցվածքների, ներքին ցանցի, անհատական տնային միացումների վերանորոգում և վերականգնում:

Ջրամատակարարման համակարգերի վերականգնման աշխատանքներն ընթացքի մեջ են: Բնակավայրերի ջրահեռացման խնդիրները քննարկվում են 3-րդ գլխում:³

8. Թափոնների անվտանգ կառավարում

Թափոնների անվտանգ կառավարումը հանդիսանում է բնակավայրերի կայուն զարգացման կարևորագույն խնդիրներից մեկը, որը մանրամասն քննարկվում է թափոններին նվիրված բաժնում⁴: Նշենք միայն.

ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիսի 23-ի նիստի N30 արձանագրային որոշմամբ սահմանվել են «Շինարարության և քանդման թափոնների անվտանգ գործածության պայմաններ», որոնք կիրառելի են տնտեսական գործունեության արդյունքում առաջացած շինարարական թափոնների հավաքման, փոխադրման, տեղադրման, ժամանակավոր պահման, վերամշակման, վնասազերծման և օգտագործման դեպքում: Դրա հետ մեկտեղ, հանրապետությունում ընդունվել են թափոնների հեռացման և տեղադրման բարեփոխումների ապահովմանն ուղղված մի շարք փաստաթղթեր: 2009 թվականի մայիսի 6-ին ՀՀ նախագահի NՆԿ-68-Ա կարգադրությամբ հաստատվել է ՀՀ-Եվրոմիություն գործողությունների ծրագրի կատարման ապահովող 2009-2012թթ. միջոցառումների ցանկը, որի կապակցությամբ ՀՀ քաղաքաշինության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 29-ի N321-Ա հրամանով հավանության է արժանացել «Աղբավայրերի նախագծում և շահագործում» ձեռնարկը՝ Հայաստանի Հանրապետության տարածքում կիրառելու համար:

³ Տե՛ս «Ջրային ռեսուրսների կայուն կառավարում» բաժինը:

⁴ Տե՛ս «Թափոնների կայուն կառավարում» բաժինը

9. Կայուն լանդշաֆտներ և կանաչ տարածքների պահպանում՝
«կայուն քաղաքի» համատեքստում

1) Կայուն քաղաքների ռազմավարության կարևոր ուղղություններից է լանդշաֆտային բնութագրերի բարելավումը, քաղաքային կենսամիջավայրի բարեկեցության մակարդակի բարձրացումը: Հայաստանի Հանրապետության ազգային լանդշաֆտային քաղաքականության իրականացումը նպատակաուղղված է կայուն զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծմանը՝ Լանդշաֆտի Եվրոպական Կոնվենցիայի գաղափարախոսությանը համահունչ:

2) Վերջին տարիներին այդ ուղղությամբ իրականացված մի շարք հետևողական քայլերն ամրագրվել են համապատասխան իրավական ակտերով:

3) ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 24-ի N308-Ն որոշմամբ հաստատված՝ Լանդշաֆտի Եվրոպական Կոնվենցիայից բխող՝ Հայաստանի Հանրապետության պարտավորությունների կատարման 2011-2012 թվականների միջոցառումների ցանկով նախատեսված կետերի կատարման շրջանակներում մշակվել են.

ա) Լանդշաֆտի ազգային քաղաքականության իրագործման հիմնադրույթները՝ հասարակության կարիքների, տնտեսական գործունեության և շրջակա միջավայրի միջև համաչափ և ներդաշնակ փոխազդեցությունների վրա հիմնված կայուն զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծման նպատակով (ՀՀ կառավ. 2011թ. նոյեմբերի 17-ի N45 արձ. Որոշում),

բ) Հայաստանի Հանրապետությունում Լանդշաֆտների պահպանության, կառավարման ու պլանավորման ռազմավարությունը և դրանից բխող առաջնահերթ ու միջնաժամկետ միջոցառումները, (ՀՀ կառավ. 2012 թ. հուլիսի 19 -ի N29 արձ. որոշում),

գ) մշակվել է «Տարածական պլանավորման փաստաթղթերում «Լանդշաֆտային կազմակերպում» բաժնի մշակման ցուցումներ» մեթոդական ձեռնարկը, որի հիմնական նպատակներից են նպաստել երկրի տարաբնակեցման համակարգի տարածաշրջանային և տեղային կենտրոնների համաչափ զարգացմանը, աջակցել թույլ զարգացած համայնքների կենսունակության վերականգնմանը, պահպանել և բարելավել բնական ու մարդու կողմից ստեղծած միջավայրը:

4) Բարեկարգման և կանաչապատման նախագծերը մշակվում են ինչպե՛ս նախագծային փաստաթղթերի կազմում՝ որպես դրանց անբաժանելի մաս, այնպե՛ս էլ որպես ինքնուրույն փաստաթուղթ՝ ընդհանուր օգտագործման տարածքների (գրոսայգիներ, հրապարակներ, փողոցներ, ճանապարհներ, լողափեր և այլն), բնության հատուկ պահպանվող տարածքների, պատմամշակութային հուշարձանների պահպանական գոտիների և այլ տարածքների լանդշաֆտային կազմակերպման նպատակով:

5) Կանաչ տարածքները քաղաքային տարածքի նշանակալի մաս են կազմում կայուն քաղաքում և ինտեգրված են կոմպակտ քաղաքային կառուցապատման մեջ: Կանաչ ենթակառուցվածքը իրենից պետք է ներկայացնի կանաչապատ տարածքների անընդմեջ ցանց: Այս համատեքստում՝ «Կանաչ ճարտարապետություն» և «Լանդշաֆտի Եվրոպական կոնվենցիայի» դրույթներից բխող պահանջներն ամրագրվել են ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքի գլխավոր հատակագծի փոփոխության նախագծի առաջադրանքում, ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի նոր գլխավոր հատակագծի նախագծման առաջադրանքի միջոցառումների ծրագրի նախագծում, ՀՀ Վայոց Ձորի մարզի Ջերմուկ քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակված նախագծում, ՀՀ Սյունիքի մարզի «Տաթև» վանական համալիրին

հարող քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտի կառուցապատման սխեմայի նախագծում, Երևանի գլխավոր հատակագծի ճշգրտման նախագծի առաջադրանքում:

Դիլիջան քաղաքում «տեղական ինքնակառավարման մարմին – մասնավոր հատված» արդյունավետ համագործակցության շնորհիվ վերջին տարիներին զգալի գործունեություն է ծավալվել կայուն քաղաքի սկզբունքների արմատավորման և զարգացման ուղղությամբ:

6) Բնակավայրերի կանաչ գոտիների խտության խնդիրները կարգավորվում են «Բնակավայրերի կանաչ գոտիների և կազմությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» 30.10.2008թ. թիվ 1318-Ն ՀՀ կառավարության որոշմամբ:

7) ՀՀ կառավարության 09.02.2012թ. «ՀՀ զբոսաշրջային կենտրոններում քաղաքաշինական գործունեության իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 118-Ն ՀՀ կառավարության որոշումն առանձնահատուկ մոտեցում է ցուցաբերում կենտրոնների կազմակերպման համար առանձնացված տարածքում կանաչ տարածքների օգտագործման, զարգացման և պահպանման մասով:

8) «Կովկաս» Տարածաշրջանային բնապահպանական կենտրոնը, միջազգային կառույցների աջակցությամբ, համագործակցելով տեղական ինքնակառավարման մարմինների հետ, մշակել է տեղական բնապահպանական ծրագրեր ՀՀ 8 քաղաքների համար, որոնք կարող են հիմք հանդիսանալ կայուն/կամ խելացի քաղաքների ապագա ծրագրերի համար:

9) Ինչպես արդեն նշվել է, սկիզբ է դրվել Գորիս քաղաքի համար կայուն/կամ խելացի քաղաքի ծրագրի մշակմանը: Այդ պիլոտային ծրագրի փորձը, որն իրականացվելու է ՄԱԿ-ի մի շարք կառույցների աջակցությամբ, հարկ է ապագայում տարածել ՀՀ այլ քաղաքների համար:

10. Կայուն քաղաքների զարգացմանն ուղղված առաջնահերթությունները

Բնակավայրերի զարգացման կայունությունն ապահովող գերակայություններից է տարածական պլանավորման բոլոր մակարդակների փաստաթղթերի ամբողջական բազայի հետևողական համալրումը՝ որպես համայնքների և տարածաշրջանների կայուն զարգացման հիմք և երաշխավոր: Այս առումով կարևորվում է.

- խուսափել խոշոր քաղաքների ուռճացումներից, վարելով փոքր և միջին քաղաքների կառուցապատման ինտենսիվացման քաղաքականություն,

- քաղաքաշինական միջավայրի ճարտարապետա-գեղագիտական հատկանիշների և լանդշաֆտային կազմակերպում, պահպանում ու զարգացում,

- իրականացնել կլիմայի փոփոխությանն առնչվող հարմարվողականության քաղաքաշինական միջոցառումներ,

- զարգացնել արդյունավետ, մթնոլորտի վրա նվազագույն ազդեցությամբ և ավելի անվտանգ հասարակական տրանսպորտի տեսակներ՝ էկոլոգիապես արդարացված ճանապարհային ցանցերի զարգացման հետ մեկտեղ,

- զարգացնել կոշտ կենցաղային թափոնների վերամշակման ենթակառուցվածքները,

- ապահովել բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի անխափանությունը:

11. Երևան քաղաքի զարգացման հիմնական ուղղությունները «Հետ-Ռիո+20» գործընթացի շրջանակներում «կայուն քաղաքներ և կանաչ ճարտարապետություն» ոլորտի իրականացման ասպարեզում:

Երևան քաղաքի կայուն զարգացման և էկոլոգիական անվտանգության խնդիրները, որքանով փոխկապակցված են հանրապետության տարաբնակեցման համակարգի կայուն զարգացման հետ, այնուհանդերձ, պայմանավորված են նաև մայրաքաղաքում իրականացվող առկա քաղաքաշինական գործընթացներով: Քաղաքի փաստացի կառուցապատման համատեքստում այդ հարցերի լուծմանը նպատակաուղղված գործողությունները հիմնականում ներառվում են քաղաքաշինական և իրավական հետևյալ ծրագրային փաստաթղթերում. ՀՀ կառավարության 15.12. 2005թ. «Երևան քաղաքի 2006-2020 թթ. Գլխավոր հատակագիծը հաստատելու մասին» N 2330-Ն որոշում, «Երևան քաղաքի պատմամշակութային հուշարձանների պահպանման հիմնավորման ծրագիր և սխեմա» (2006թ.), Երևանի ազլոմերացիայի տարածքային հատակագծման նախագիծ (2006թ.), Երևան քաղաքի քաղաքամերձ գոտու տարածքային հատակագծման նախագիծ (2007թ.), Երևան քաղաքի ավագանու որոշումները «Երևան քաղաքի զարգացման քառամյա ծրագիրը հաստատելու» և «Երևան քաղաքի զարգացման տարեկան ծրագիրը հաստատելու մասին»:

Քաղաքի նախորդ Գլխավոր հատակագիծը հաստատվել էր 1971թ. և պետք է գործեր մինչև 2002թ. Ժամանակահատվածը, սակայն, ըստ փորձագետների կարծիքի, 90-ականներին, նոր, շուկայական հարաբերությունների պայմաններում Գլխավոր հատակագիծը անտեսվեց և ներդրվեց «կետային կառուցապատման» պրակտիկան, որը զգալի վնաս հասցրեց քաղաքի, հատկապես Կենտրոնի, կանաչ գոտիներին, բակային տարածքներին/մանկական խաղահրապարակներին և պատմամշակութային ժառանգության հուշարձաններին: Այդ պրակտիկան շարունակվեց մինչև 2005թ. նոր գլխավոր հատակագծի, ապա՝ գոտիավորման նախագծերի հաստատումը:

Վերջին տարիներին փորձ է արվում շտկել թույլ տրված սխալները, սակայն բազմաթիվ պարագաներում ստեղծված իրավիճակը անդառնալի է:

Ներկայումս Երևանի քաղաքապետարանի կողմից քայլեր են ձեռնարկվում մայրաքաղաքի համաչափ զարգացման և կառուցապատման գործընթացն ապակենտրոնացնելու նոր ռազմավարության ուղղությամբ: Նման սկզբունքի կենսագործումը ոչ միայն կզսպի կառուցապատման հետագա գործընթացը քաղաքի կենտրոնում, այլև կնպաստի քաղաքի վարչական մյուս շրջանների զարգացմանը, իր հերթին կարևորագույն միջոց հանդիսանալով մայրաքաղաքի ընդհանուր կայուն և համաչափ զարգացման համար: Համաձայն նոր ռազմավարության, մասնավորապես նախատեսվում է.

- քաղաքաշինական ներդրումային ծրագրերը ուղղորդել բացառապես քաղաքային կենսամիջավայրի բարեկեցության պայմանների և որակների բարձրացմանը՝ վերջիններս ներդաշնակելով «Կանաչ քաղաքաշինության» և «Լանդշաֆտների եվրոպական կոնվենցիայի» սկզբունքներին և գաղափարախոսությանը,

- քաղաքաշինական խոշոր ծրագրերն ու նախագծերը և այս ուղղությամբ կատարվող ներդրումները Կենտրոնից և Փոքր Կենտրոնից տեղափոխել այլ վարչական շրջաններ,

ՀՀ կառավարության կողմից ևս միջոցառումներ են իրականացվում խնդրո առարկա հարցի կարգավորման ուղղությամբ՝ ՀՀ կառավարության 2013 թվականի մարտի 7-ի N9 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել «Երևանի «Փոքր կենտրոնի» կառուցապատման մասին» ՀՀ օրենքի հայեցակարգը, ընդ որում օրենքի նախագիծը ներկայումս ներկայացված է ՀՀ կառավարության քննարկմանը:

Այս համատեքստում «Կանաչ քաղաքաշինության» և «Լանդշաֆտների էվրոպական կոնվենցիայի» դրույթներից բխող պահանջներն ամրագրված են Երևան քաղաքի 2006-2020թթ. Գլխավոր հատակածի դրույթներում և դրա իրագործման միջոցառումների ծրագրում:

2006թ. մշակվել է Երևանի ազլոմերացիայի տարածքային հատակագծման նախագիծը, որտեղ հայեցակարգային մակարդակով մանրամասն քննարկվել են Երևան քաղաքի շուրջ օղակաձև անտառի ստեղծման, կանաչապատման և ծաղկապատման համալիր կազմակերպման հարցերը:

Քաղաքի որոշ վարչական շրջանների գոտիավորման 2007-2009թթ. նախագծերում, որտեղ ճշգրտվում էին գոյություն ունեցող կանաչապատ տարածքները, առանձին դեպքերում՝ նախագծային պահանջներից ելնելով, ավելացվել են այդ տարածքների մակերեսները: Գործընթացը դեռ շարունակվում է, քանի որ մնացած վարչական շրջանների նախատեսվող նոր գոտևորման նախագծերում կանաչապատման գոտիների զգալի չափով ավելացման հնարավորություններ կան, մասնավորապես՝ Գլխավոր հատակագծի նախագծում նախատեսված բուֆերային տարածքների հաշվին:

*Երևան քաղաքի մինչև 2025 թվականի զարգացման ուղղությամբ
«Տիո+20՝ կայուն քաղաքներ և կանաչ ճարտարապետություն»
իրականացման գործողությունների ծրագիր*

2015 թվականի ծրագիր

Երևան քաղաքի ավագանու 2014թ. դեկտեմբերի 23-ի N 263-Ն որոշմամբ հաստատված Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրով նախատեսվել է Երևան քաղաքի կայուն և համաչափ զարգացման ուղղությամբ միջոցառումների իրականացում, Երևանի Գլխավոր հատակագծի դրույթներին և գոտիավորման նախագծերում ամրագրված պահանջներին համապատասխան՝ քաղաքի կառուցապատման ամբողջականացում և արդիականացում:

Այդ թվում.

- նոր այգիների հիմնադրում, զբոսայգիների և կանաչ տարածքների վերականգնում,
- բնակելի թաղամասերի բակային տարածքների բարեկարգման նախագծերի մշակում և իրականացում,
- քաղաքաշինական միջավայրում տեղաշարժվելու դժվարություն ունեցողների համար մատչելիության ապահովմանն ուղղված համալիր ծրագրերի մշակում և իրականացում,
- Երևանի 3-րդ և 4-րդ կարգի վթարայնության աստիճան ունեցող շենքերի հիմնախնդիրների աստիճանական լուծման ուղղությամբ վթարային շենքերի բնակիչների համար նոր բազմաբնակարան շենքերի նախագծում,
- Երևանի Ավան վարչական շրջանի որոշակի հատվածների (581 հա)՝ գոտիավորման նախագծի մշակում, որտեղ հնարավորինս կկիրառվեն «կանաչ» ճարտարապետության մոտեցումները: Նշված գործընթացը կարող է հիմք հանդիսանալ Ավան վարչական շրջանը որպես «կայուն» շրջան զարգացնելու պիլոտային նախագիծ իրականացնելու համար:
- Կիրականացվեն նաև նախկինում մշակված որոշ գոտիավորման նախագծերի անհրաժեշտ ճշգրտումներ, մասնավորապես, ճանապարհափողոցային ցանցի կատարելագործման, տրանսպորտային հանգույցների, նոր ուղեբաժանքների և տարբեր մակարդակներով տրանսպորտային հանգույցների ու հետիոտն անցումների մասով:
- Կշարունակվի Երևանի ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների կազմակերպման և զարգացման ծրագրերի իրականացումը, որի ուղղությամբ 2015 թ. նախատեսվել էր 11,28 հա ընդհանուր մակերեսով հանգստի կանաչ գոտիների վերառուցման շինարարական աշխատանքների իրականացում:

- Քննարկման առարկա կդառնան Երևան քաղաքի մինչև 2025 թվականը քաղաքաշինական զարգացման հիմնական ուղղությունները, ինչպես նաև նույն ժամանակահատվածի համար քաղաքի ճանապարհատրանսպորտային ցանցի զարգացման և բարելավման խնդիրները:

2015 թ. ծրագրով նախատեսված միջոցառումները հիմնականում կատարվել են:

Երևան քաղաքի մինչև 2025թ. քաղաքաշինական զարգացման հիմնական ուղղությունները

Ելնելով Երևանի առկա իրավիճակից և զարգացման առաջնահերթություններից, քաղաքաշինության և ճարտարապետության ոլորտում առանձնանում են քաղաքի զարգացմանն ուղղված հետևյալ գերակա ուղղությունները.

- քաղաքի համաչափ զարգացում,
- մայրաքաղաքային գործառույթների հստակեցում,
- Երևան-քաղաքամերձ գոտի-ագլոմերացիա տարածքների քաղաքաշինական գործառույթների իրականացում,
- քաղաքի կառուցապատման ամբողջականացում և արդիականացում,
- պատմամշակութային հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանում և օգտագործում,
- արդյունաբերական գոտիների և արտադրական օբյեկտների օպտիմալացում, ճանապարհափողոցային ցանցի զարգացում,
- հասարակական նշանակության հանգստի կենտրոնների բարելավում,
- բնակելի ֆոնդի նորացում և արդիականացում,
- ինժեներական ենթակառուցվածքների և հաղորդակցուղիների ցանցերի արդիականացում, անհրաժեշտ հզորությունների ստեղծում,
- բնակչության սակավաշարժ խմբերի համար քաղաքաշինական միջավայրում մատչելիության ապահովում:

**VIII. ԱՆՏԱՌՆԵՐԻ ԿԱՅՈՒՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ,
ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ**

Ոլորտի իրավիճակի վերլուծություն, իրավական կարգավորում

1. Անտառների կառավարման ոլորտ

Իրավիճակի վերլուծություն

Անտառը բնական էկոհամակարգի բաղադրամաս է և այն պետք է դիտարկել որպես կազմող բոլոր բիոտիկ և աբիոտիկ բաղադրիչների ամբողջականություն, այսինքն որպես անտառային էկոհամակարգ: Բնական ռեսուրսը բնական էկոհամակարգի այն մասն է, որը կարող է օգտագործվել մարդու կարիքների համար:

Բնօգտագործման, այդ թվում՝ անտառօգտագործման էկոհամակարգային մոտեցումը պահանջում է օգտվել այդ էկոհամակարգից այնպիսի չափավորված քանակներով, որը չի գերազանցի էկոհամակարգի ինքնավերականգման ունակության աստիճանը:

Համաձայն 2011 թվականին Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀՀ, GIZ) կողմից հեռահար գոնդավորման մեթոդով ստացված տվյալների, Հայաստանի Հանրապետության անտառածածկ մակերեսը կազմում է 332,333 հա, կամ ՀՀ ընդհանուր տարածքի մոտ 11,17%-ը:

Հայաստանի անտառների 75%-ը կառավարվում է ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության, իսկ 25%-ը (բնության հատուկ պահպանվող տարածքները)՝ ՀՀ բնապահպանության նախարարության կողմից:

Վերջին տարիներին ավելացել են անտառվերականգնման և անտառապատման աշխատանքների ծավալները, որոնք 10 տարիների ընթացքում իրականացվել են 32100 հա տարածքում:

Անտառների վերականգնումը և անտառապատ տարածքների ավելացումը կբարելավի հանրապետությունում էկոլոգիական վիճակը, կկանխի հողատարման և այլ անցանկալի երևույթների զարգացումը, կնպաստի ռեկրեացիոն գոտիների ավելացմանը, կավելացնի բնակչության մեկ շնչին ընկնող կանաչ զանգվածը և այլն:

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի կողմից կառավարվող անտառային հողերում առկա են թվով 13 արգելավայրեր, որոնցում ներկայումս անհրաժեշտ է իրականացնել սահմանների ճշգրտում և կառավարման պլանների մշակում:

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Հրազդանի անտառտնտեսություն» մասնաճյուղի տարածքում գտնվող Արգական Մեղրաձոր արգելավայրում արդեն իսկ իրականացվել են քարտեզագրման և սահմանների ճշգրտման աշխատանքներ, իրականացվում են նաև կառավարման պլանների մշակման աշխատանքներ: Նմանօրինակ աշխատանքներ նախատեսվում է իրականացնել նաև մնացած արգելավայրերում:

Անտառների պետական հաշվառման բացակայությունը լուրջ խոչընդոտներ է ստեղծում անտառային ոլորտի հեռանկարային զարգացման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարման համար:

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի տնօրենի 2011 թվականի օգոստոսի 3-ի N23 հրամանով «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կառուցվածքում ստեղծվել է Անտառների հաշվառման և կադաստրի վարման բաժին, սակայն անտառային պետական կադաստրի վարման համակարգը դեռևս ներդրված չէ, իսկ անտառների պետական հաշվառումը, որը, համաձայն ՀՀ Անտառային օրենսգրքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի, իրականացվում է 5 տարին մեկ անգամ, վերջին անգամ իրականացվել է 1993 թվականին:

2003-2013թթ. ընթացքում անտառային վնասատուների և հիվանդությունների դեմ իրականացվել են ավիացիոն քիմիական պայքարի աշխատանքներ 76786 հա տարածքում:

Նվազել են ապօրինի հատումների ծավալները. եթե 2003 թվականին արձանագրվել է ապօրինի հատված 42236 ծառ, ապա 2013 թվականին՝ ապօրինի հատված 928 ծառ:

Ավելացել են անտառային հրդեհների ծավալները: Եթե 2003 թվականին գրանցվել են հրդեհներ 3,92 հա անտառային հողերում, ապա 2013թ. անտառային հրդեհներ գրանցվել են 91,575 հա անտառային հողերում:

Կապված համաշխարհային ֆինանսական ճգնաժամի հետ, վերջին տարիներին նվազել էր նաև պետական բյուջեից «Հայանտառ» ՊՈԱԿ-ի ֆինանսավորումը: Եթե 2008-2009թթ. պետական բյուջեից ֆինանսավորումը կազմել էր 1,3 մլրդ դրամ, ապա 2013թթ. այն կազմել էր 734 մլն. դրամ: Սակայն ներկայումս իրավիճակը բարելավվել է և ՀՀ պետական բյուջեից «Հայանտառ» ՊՈԱԿ-ի ֆինանսավորումը ունի աճի միտում: Մասնավորապես ՀՀ 2016թ. պետական բյուջեից «Հայանտառ» ՊՈԱԿ-ի ֆինանսավորում ծրագրավորվել է 1,201.5 մլն դրամ:

Անտառային (բնափայտային և ոչ բնափայտային) պաշարների կայուն օգտագործման կազմակերպումը կարող է հանդիսանալ լրացուցիչ եկամուտների աղբյուր, միևնույն ժամանակ նպաստավոր պայմաններ ստեղծելով հարակից համայնքների բնակչության զբաղվածության ավելացման և կենսամակարդակի բարձրացման գործում:

Անտառային ռեսուրսների օգտագործման դիմաց ստացվող բնօգտագործման վճարներն պետք է ուղղել ստեղծվելիք քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամ (ՀՀ

կառավարության 2013թ. ապրիլի 25-ի և 2013թ. նոյեմբերի 14-ի նիստերի արձանագրային որոշումներով տրված հանձնարարականներ՝ *բնավճարների միջոցներից քաղաքացիական ներդրումային շրջանառու հիմնադրամներ ձևավորելու վերաբերյալ*): Այդ ֆինանսական միջոցներն օգտագործել որպես համաֆինանսավորման բաղադրիչ տեղական ու միջազգային դոնոր կազմակերպությունների աջակցությամբ իրականացվող անտառային տնտեսության զարգացման անտառապատման ու անտառվերականգնման ծրագրերում:

Հայաստանի տարածքում ներքին միկրոկլիմայական փոփոխությունները կարող են հանգեցնել կենսաբազմազանության առանձին բաղադրիչների արեալների կրճատմանը, տեղումների քանակի և հողի խոնավունակության նվազմանը, սերմնային անտառվերականգնման պայմանների վատթարացմանը և կիսաանապատային բուսատեսակների ներթափանցմանը: Բացի այդ, կարող է տեղի ունենալ անտառի ստորին եզրի բարձրացում և անտառի տեսակային կազմի որոշակի փոփոխություն: Վերջին տարիներին կլիմայի փոփոխության նկատմամբ անտառների հարմարվողականության բարձրացման նպատակով իրականացվել են մի շարք միջոցառումներ, որոնք պետք է ունենան շարունակական բնույթ:

Վերջին տարիներին անտառվերականգնման և անտառապատման աշխատանքների մեծ մասն իրականացվել է հիմնականում տեղական ու միջազգային ծրագրերի ֆինանսավորմամբ և «Հայաստա» ՊՈԱԿ-ի սեփական եկամուտների հաշվին:

Իրավական կարգավորում

Անտառային ոլորտի բարելավման նպատակով ՀՀ կառավարության 2004թ. սեպտեմբերի 30-ի թիվ 38 արձանագրային որոշմամբ հաստատվել են Ապօրինի անտառահատումների հետ կապված խնդիրների լուծմանն աջակցող միջոցառումների գործողությունների ծրագիրը և Հայաստանի Հանրապետության անտառի ազգային քաղաքականությունը և ռազմավարությունը, ՀՀ կառավարության 2005թ. հուլիսի 21-ի 1232-Ն որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետության անտառի ազգային ծրագիրը: Վերը նշված փաստաթղթերի ընդունման հիմնական նպատակն է ապօրինի հատումների նվազեցումը, անտառային էկոհամակարգերի պահպանությունը, դեգրադացված անտառային էկոհամակարգերի վերականգնումը, անտառային պաշարների շարունակական ու արդյունավետ օգտագործումը և անտառների կայուն կառավարման ռազմավարության ապահովումը:

Հայաստանի Հանրապետության Քրեական օրենսգրքը պատասխանատվություն է նախատեսում ծառերի, թփերի և բուսածածկի ապօրինի հատման համար:

Հայաստանի Հանրապետության անտառի ազգային ծրագրի պահանջներից ելնելով՝ 2005 թվականի հոկտեմբերի 24-ին ընդունվել է Հայաստանի Հանրապետության անտառային նոր օրենսգրքը, իսկ հետագայում հաստատվել են դրանից բխող մի շարք ենթաօրենսդրական ակտեր:

Ապօրինի հատումների ծավալները նվազեցնելու նպատակով ընդունվել են մի շարք ենթաօրենսդրական ակտեր, այդ թվում.

- ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2013 թվականի մայիսի 6-ի N80-Ն հրամանով հաստատվել է Պետական և համայնքային անտառներում բնափայտի մթերման կարգը, որով հստակեցվում է շինափայտի որակական հատկանիշները, մթերման, հաշվառման և իրացման հստակ մեխանիզմները:

- ՀՀ կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության անտառամերձ բնակավայրերում բնակվող ընտանիքների կողմից ոչ արտադրական (ոչ արդյունագործական) նպատակով օգտագործվող թափուկ վառելափայտի մթերման համար բնօգտագործման վճարի գծով արտոնություն սահմանելու մասին» N1535-Ն որոշումը, համաձայն որի անտառամերձ բնակավայրերում բնակվող ընտանիքներին թույլատրվում է

սեփական միջոցներով մթերել և անտառային տնտեսություն վարող տարածքային կազմակերպություններից անվճար ձեռք բերել մինչև 8 խմ թափուկ վառելիքային:

- ՀՀ կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 15-ի N1157-Ն որոշմամբ լրացումներ է կատարվել ՀՀ կառավարության 2000 թվականի դեկտեմբերի 31-ի N902-Ն որոշման մեջ, համաձայն որի արգելվել է Հայաստանի Հանրապետությունից անմշակ գերանի արտահանումը:

- ՀՀ կառավարության 2013 թվականի նոյեմբերի 14-ի N 1347-Ն որոշմամբ փոփոխություններ և լրացումներ է կատարվել ՀՀ կառավարության 2007 թվականի օգոստոսի 30-ի «Պետական անտառային հողերում անտառային տնտեսության վարման և անտառօգտագործման հետ չկապված աշխատանքների իրականացման կարգը սահմանելու մասին» N1045-Ն որոշման մեջ, համաձայն որի պետական անտառային հողերում անտառային տնտեսության վարման և անտառօգտագործման հետ չկապված շինարարական ու պայթեցման աշխատանքների, օգտակար հանածոների արդյունահանման, մալուխների, խողովակաշարերի և այլ հաղորդակցողիների անցկացման, հորատման և այլ աշխատանքների իրականացման ժամանակ անտառօգտագործողը պարտավորվում է օգտագործման տրամադրվող անտառային տարածքի առնվազն կրկնապատիկի չափով իրականացնել անտառապատման աշխատանքներ:

Անտառների ապօրինի հատման նվազեցման հարցում էական նշանակություն կարող է ունենալ պատասխանատվության սահմանումը կամ առկա միջոցների խստացումը: Մանավորապես, ՀՀ անտառային օրենսգրքի 60-րդ հոդվածով թվարկված են անտառային օրենսդրության խախտման դեպքերը, իսկ, մասնավորապես, 1-ին մասի բ) ենթակետը որպես այդպիսին է համարում անտառային հողերում ծառերն ու թփերը հատելը և արմատախիլ անելը, մինչդեռ հատումները կարող են լինել նաև անտառվերականգնման, խնամքի, սանիտարական կամ այլ բնույթի, որոնք չեն համարվում և չեն կարող համարվել անտառային օրենսդրության խախտում, ուստի այստեղ անհրաժեշտ է հստակ ընդգծել ԱՊՕԲԻՆԻ հատելու հանգամանքը, որի համար նախատեսվում են պատասխանատվության միջոցներ:

2. Կենսաբազմազանության պահպանության և կայուն օգտագործման ոլորտ

Հայաստանի բնակչության բարեկեցությունը և սոցիալական վիճակը սերտորեն կապված են կենսաբազմազանության պահպանության և կայուն կառավարման հետ, որը հանդիսանալով կենսունակ բնության և առողջ կյանքի դեռևս թերագնահատված երաշխիքը՝ գերակա դիրք պետք է գրավի երկրի մնայուն արժեքների շարքում: Այդ տեսակետից Հայաստանի հարուստ կենսաբազմազանությունը, ունենալով էկոհամակարգերի կայունությունը ապահովող բարձր հատկանիշներ՝ միաժամանակ հանդիսանում է երկրի տնտեսական զարգացման կարևոր նախապայմաններից մեկը: Վայրի օգտակար բույսերի և կենդանիների էնդեմիկ ցեղերի ներկայացուցիչները պայմանավորում են գուղատնտեսության այնպիսի բնագավառների զարգացումը, ինչպիսիք են բուսաբուծությունը, անասնաբուծությունը, մեղվաբուծությունը, ձկնաբուծությունը, ինչպես նաև թեթև և սննդարդյունաբերության որոշ կարևոր ճյուղերը: Անգնահատելի է կենսաբազմազանության դերը էկոհամակարգային ծառայությունների քանակական և որակական հատկանիշների պահպանման գործում, հատկապես՝ գենֆոնդի պահպանության, սելեկցիայի, դեղամիջոցների ստացման և կենսատեխնոլոգիաների միջոցով նոր նյութերի արտադրման համար:

Ինտենսիվ բնօգտագործման հետևանքով Հայաստանում բնական լանդշաֆտների մարդածին փոփոխությունների աստիճանը մեծ է: Տարածքի ավելի քան 60 %-ը ներառված է գյուղատնտեսության ակտիվ ոլորտ, իսկ կիսաանապատային և լեռնատափաստանային գոտիներում այդ թիվը հասնում է 80-90 %-ի: Գերօգտագործման հետևանքով տեղի է ունեցել վայրի կենսաբազմազանությամբ զբաղեցված տարածքների կրճատում, աղտոտում, առանձին տեսակների բնակմիջավայրերի կորուստ, էկոհամակարգերի կողմից մատուցվող ծառայություն-

ների փոփոխություն: Ընդ որում՝ բնական գործոնները, որոնք ռիսկային են էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների համար, հիմնականում նույնպես պայմանավորված են բնության հանդեպ մարդու անբարեխիղճ մոտեցումներով: Հետխորհրդային վաղ շրջանում դրա պատճառները կապված էին հանրապետության ծանր սոցիալտնտեսական պայմանների, էներգետիկ ճգնաժամի և ազգաբնակչության լայն խավերի չքավորության եզրին հայտնվելու հետ: Վերջին ժամանակներում կենսաբազմազանության վրա բացասական ճնշումը և էկոհամակարգերի դեգրադացման տեմպերի աճը պայմանավորված են տնտեսական և հասարակական գործունեության որոշակի ակտիվացմամբ, որն արտահայտվում է կենսառեսուրսների գերօգտագործմամբ, հանքավայրերի շահագործմամբ, կառուցապատված տարածքների ընդլայնմամբ, գյուղատնտեսության ոլորտի տեսանելի աշխուժացմամբ, զբոսաշրջության զարգացմամբ: Ըստ էության, Հայաստանի կենսաբազմազանության վրա այս կամ այն չափով ազդում են «Բնության պահպանության միջազգային միության» կողմից առաջարկված հիերարխիկ դասակարգման գրեթե բոլոր մարդածին սպառնալիքները: Դրանց թվին են պատկանում կենսաբազմազանության բաղադրիչների բնակմիջավայրի (ապրելավայրեր/ աճելավայրեր) կորուստը, կենսառեսուրսների գերօգտագործումը, շրջակա միջավայրի աղտոտումը, օտարածին տեսակների ներթափանցումը, կլիմայի փոփոխությունը: Հայաստանի կենսաբազմազանության ներկա վիճակի, փոփոխության միտումների ու սպառնալիքների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը զետեղված է 4-րդ և 5-րդ ազգային զեկույցներում, որոնք «Կենսաբազմազանության մասին» կոնվենցիային են ներկայացվել 2009 և 2014 թվականներին:

Կենսաբազմազանության ոլորտային խնդիրների լուծումը պահանջում է համապարփակ և բազմակողմանի մոտեցում, որի համար անհրաժեշտ է իրականացնել լայնածավալ գործողություններ՝ փոփոխելով բնության, և հատկապես կենսառեսուրսների նկատմամբ երկրում ձևավորված սպառողական վերաբերմունքը, բացառելով անվերահսկելի գործընթացները, կիրառելով կանաչ տնտեսության սկզբունքները, ինչպես նաև ընդլայնելով միջոլորտային համագործակցությունը: Նման գործողությունների հիմքում պետք է դրվեն հետևյալ սկզբունքները.

- Քաղաքական որոշումների կայացման գործընթացը պետք է հիմնվի էկոհամակարգերի և դրանց առանցքային բաղադրամաս կազմող կենսաբազմազանության իրական դերի ու արժեքների վրա:

- Դեգրադացված էկոհամակարգերը պետք է վերականգնվեն շահավետ (քիչ ծախսատար) միջոցներով կամ կոնսերվացվեն՝ բնականոն գործընթացների շնորհիվ դրանց բնական վիճակը վերականգնելու նպատակով:

- Բնակչության կենսամակարդակի աճը պետք է ապահովվի տնտեսական գործունեության մեջ վերականգնվող բնական ռեսուրսների օգտագործման այնպիսի մեթոդներով, որոնք բացառում են նրանց սպառումը ու երաշխավորում են վերականգնումը՝ ի շահ ապագա սերունդների:

- Կենսաբազմազանության հիմնախնդիրների վերաբերյալ որոշումները պետք է հիմնված լինեն լավագույն առկա գիտական տեղեկատվության վրա՝ օգտագործելով էկոհամակարգային մոտեցումը:

- Անհրաժեշտ է պրակտիկորեն ամրապնդել համագործակցությունը կառավարական կառույցների, քաղաքացիների, ձեռնարկատերերի ու շահագրգիռ այլ կողմերի միջև և դրանց հետևողական մասնակցությունը համապատասխան գործընթացներում:

- Կենսաբազմազանության վրա վնասակար մարդածին ազդեցությունը նվազագույնի հասցնելու համար պետք է մշակվեն և որոշումների ու ծրագրերի նախագծերի

նախապատրաստման փուլում ներդրվեն միջոլորտային համագործակցության նոր արդյունավետ ձևերը:

Կենսաբազմազանության պահպանության և կայուն օգտագործման ոլորտում հիմնական հիմնախնդիրները և դրանց լուծման հնարավոր ուղիները ամրագրված են «Հայաստանի Հանրապետության կենսաբազմազանության պահպանության, օգտագործման և վերարտադրության ռազմավարություն և 2016-2020թթ գործողությունների պետական ծրագիր» փաստաթղթում, որը ներկայումս գտնվում է քննարկման փուլում: Այս հիմնախնդիրներից առավել հրատապ լուծում են պահանջում հետևյալները.

Կենսաբազմազանության պահպանություն

- Ըստ հանրապետության մարզերի կենսաբազմազանության գույքագրում և հաշվառում :
- Կենսաբազմազանության մոնիթորինգի համակարգի և տվյալների բազայի ստեղծում:
- Էկոհամակարգային ծառայություններից ստացվող օգուտների գնահատում (հատկապես ԲՀՊՏ-ների և անտառային համակարգերի համար)՝ հաշվի առնելով այդ ցուցանիշը տարբեր ոլորտների կառավարման գործընթացներում, ռազմավարություններում, ծրագրերում, պլաններում:

- «Կենսաբազմազանության մասին» կոնվենցիայի Նագոյայի արձանագրության միացման հնարավորությունների բացահայտում, գենետիկական ռեսուրսների մատչելիության և դրանց օգտագործումից ստացված օգուտների արդարացի բաշխման մեխանիզմների մշակում և ներդրում:

- Կենսաբազմազանության պահպանության ոլորտում միջոլորտային համագործակցության արդյունավետ մեխանիզմների ստեղծում:

- Կենսաբազմազանության պահպանության վերաբերյալ հասարակության լայն զանգվածներում իրազեկության բարձրացում՝ ներառելով տեղական բնակչությանը պահպանության գործողությունների մեջ:

Կենսառեսուրսների կայուն օգտագործում

- Առավել օգտագործվող բուսական և կենդանական տեսակների պաշարների և կայուն օգտագործման հնարավորությունների գնահատում, դրանց օգտագործման ենթակա չափաքանակների որոշում:

- Էկոհամակարգային մոտեցմամբ անտառային ռեսուրսների որոշման մեթոդաբանության մշակում՝ հենվելով վերականգնվող կենսառեսուրսների բնօգտագործման նորմավորման («պոպուլյացիոն կորի» մեթոդ), այդ թվում՝ անտառային էկոհամակարգում գույքագրման ու հաշվառման մեթոդաբանության սահմանում, ներառելով անտառային էկոհամակարգի վիճակը բնութագրող չափորոշիչներ (հողում և բուսականությունում), կուտակվող ու կուտակված օրգանական ածխածնի քանակը :

- Էկոհամակարգերի և տրամադրվող էկոհամակարգային ծառայությունների վրա կլիմայի փոփոխության և անապատացման (հատկապես՝ լեռնահանքային արդյունաբերությամբ պայմանավորված հողերի դեգրադացման) հնարավոր ազդեցության բացահայտում և դրա հետևանքների մեղմացմանն ուղղված գործողությունների ծրագրի մշակում և իրականացում:

Բնության հատուկ պահպանվող տարածքների զարգացում

- «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը Ազգային Ժողովի կողմից ընդունում:

- ՀՀ բնապահպանության նախարարությունում ԲՀՊՏ-ների կառավարմանն աջակցող խորհրդի ստեղծում:

- Համայնքային կառավարմամբ ԲՀՊՏ-ների ստեղծման փորձնական ծրագրերի մշակում և իրականացում:

- Հայաստանում Ազգային էկոլոգիական ցանցի ստեղծման գործողությունների ծրագրի մշակում՝ էկոլոգիական միջանցքների, կենսոլորտային պահպանավայրերի առանձնացման և Եվրոպական էկոլոգիական ցանցին միացման համար նախադրյալների ստեղծման առումով:

- Նոր հատուկ պահպանվող տարածքների հիմնում («Ջերմուկ» ազգային պարկ, «Գնիշիկ» և «Իջևանի անտառային» արգելավայրեր, «Լոռու լճեր» պահպանվող լանդշաֆտ), դրանց ֆինանսական, տեխնիկական, մարդկային հզորությունների ապահովում:

- ԲՀՊՏ-ներում էկոլոգոսաշրջության իրականացման կարողությունների հզորացում:

- ԲՀՊՏ-ների պահպանության, օգտագործման և էկոլոգոսաշրջության զարգացման գործընթացներում համայնքների մասնակցության ձևերի բացահայտում:

Նշված և մի շարք այլ գործողություններ ներառված են 2014 թվականի ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագրում», որտեղ ամրագրված են Հայաստանի ԲՀՊՏ-երի զարգացման և կառավարման բարելավմանը նպաստող սկզբունքները, մոտեցումները, հստակ և իրատեսական գործողությունները:

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը Կ-289-18.06.2013-ԳԲ-010/0 փաստաթղթային կողով 09.09.2013 ՀՀ ԱԺ հինգերորդ գումարման վեցերորդ նստաշրջանի օրակարգում էր, սակայն առ այսօր չորսօրյա նիստերի օրակարգում չի ընդգրկվել:

Սույն նախագիծը ենթադրում է ծավալուն և համակարգային փոփոխություններ «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ գործող օրենքում, ընդգրկելով դրա բոլոր հոդվածները, և նպատակ է հետապնդում առավել արդյունավետ դարձնել բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման գործընթացները, կարգավորել բնության հատուկ պահպանվող տարածքների ստեղծման, պահպանության, օգտագործման և կառավարման հարաբերությունները, ինչպես նաև այն համապատասխանեցնել միջազգային չափանիշներին, մասնավորապես՝

- ապահովել «Բնության պահպանության միջազգային միության» կողմից սահմանված բնության հատուկ պահպանվող տարածքների բոլոր կատեգորիաների ստեղծումը.

- նպաստել տեղական ինքնակառավարման մարմինների ներգրավմանը բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման գործընթացում:

IX. «ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ»

ՄԱԿ-Ի ՏԱՄՆԱՄՅԱԿԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՈԼՈՐՏՈՒՄ

ՀԵՏԱԳԱ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻՆ

Ոլորտի իրավիճակի վերլուծությունը, իրավական կարգավորում

Հանուն կայուն զարգացման կրթության նպատակն է զարգացնել անհատի գիտելիքները, հմտությունները, աշխարհայացքը և արժեքային համակարգը, որպեսզի նա կայացնի

տեղեկացված որոշումներ և թե ներկայումս, թե ապագայում գործի հանուն մարդկային հանրության և բնության բարորության:

Հայաստանը, ի դեմս այլ երկրների, միացել է «Կրթություն հանուն կայուն զարգացման» տասնամյակի շրջանակներում իրականացվող գործընթացին: Համաձայն «ՀՀ կրթության զարգացման 2011-2015թթ պետական ծրագրի», ՄԱԿ-ի «Կրթություն հանուն կայուն զարգացման» ռազմավարությունը Հայաստանի կրթության ոլորտի զարգացման քաղաքականության հիմնաքարերից մեկն է:

Համաձայն այդ ռազմավարության, կրթական նոր չափորոշիչներում սահմանվել են սովորողի կրթության վերջնարդյունքները՝ նրանց կողմից ձեռք բերվող գիտելիքները, հմտությունները և ձևավորվող արժեքային համակարգն ըստ կրթական մակարդակների: Ներդրվել են անձի համակողմանի զարգացում և կրթությամբ ձեռքբերվող կիրառական որակներ ապահովող դասընթացներ՝ քաղաքացիական կրթություն, տնտեսագիտության հիմունքներ, մարդու իրավունքներ, կյանքի հմտություններ, էկոլոգիական կրթություն և այլն:

Անընդմեջ էկոլոգիական կրթությունը ՀՀ կրթական համակարգի անբաժանելի մասն է, որը, համաձայն «Ազգաբնակչության էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին» ՀՀ օրենքի, ընգրկված է կրթության բոլոր մակարդակներում, ինչպես նաև ոչ ֆորմալ կրթության մեջ:

Հայաստանում էկոլոգիական կրթության իրականացման անհրաժեշտությունը բխում է երկրի գերակայություններից, ինչպես նաև մի շարք միջազգային կրթական և բնապահպանական կոնվենցիաների շրջանակներում Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած պարտավորություններից: Այդ հարցում Հայաստանը ղեկավարվում է նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2002թ. կայացած ՄԱԿ-ի Կայուն զարգացման գաղաթաժողովի որոշումներով, որն առաջարկեց 2005-2014թթ. հռչակել «Հանուն կայուն զարգացման կրթության տասնամյակ» (հաստատվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 57/254 որոշմամբ) և ՄԱԿ-ի ԵՏՀ-ի կողմից 2005թ. ընդունված «Կրթությունը՝ հանուն կայուն զարգացման» ռազմավարության դրույթներով: Ընդ որում Հայաստանի Հանրապետությունը ՄԱԿ-ի ԵՏՀ տարածաշրջանի երկրներից մեկն է, որը պատրաստակամություն է հայտնել ինտեգրվելու եվրոպական կրթական գործընթացներին, և Հարավային Կովկասի միակ պետությունն է, որտեղ 2001թվականից գործում է «Ազգաբնակչության էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին» ՀՀ օրենքը:

2009թ. հաստատվել է «Բնապահպանական կրթության, դաստիարակության և իրազեկման ամբողջական և միասնական ազգային համակարգի ստեղծման հայեցակարգը», որի նպատակն է ստեղծել նախադրյալներ բնապահպանական կրթության և դաստիարակության որակի բարելավման, հասարակության էկոլոգիական գիտակցության և մտածելակերպի կայացման և էկոլոգիական խնդիրների մասին իրազեկության մակարդակի բարձրացման համար:

Վերոնշյալ հայեցակարգի իրականացման նպատակով հաստատվել է 2011-2015թթ. միջոցառումների ծրագիրը, որի նպատակն է նպաստել բնապահպանական կրթության, դաստիարակության և իրազեկման ամբողջական և միասնական ազգային համակարգի կայացմանը:

Էկոլոգիական կրթության ուղղությամբ կրթության տարբեր աստիճաններում իրականացվել են հետևյալ քայլերը՝

- «Նախադպրոցական համալիր ծրագրում» առանձին բաժին հատկացվել է էկոլոգիական կրթությանը՝ ըստ տարիքային խմբերի: Երևանում և մարզերում ստեղծվել են մոդելային կենտրոններ, որտեղ պարբերաբար անց են կացվում սեմինարներ և գործնական պարապմունքներ, այդ թվում՝ էկոլոգիական կրթության ուղղությամբ,

- հանրակրթության համակարգի բոլոր մակարդակներում բնագիտական և հասարակագիտական առարկաների շրջանակներում ներառված են ՄԱԿ-ի «Կրթություն հանուն կայուն զարգացման» ռազմավարության հիմնական թեմաները՝ ինտեգրված

դասընթացների միջոցով: «Էներգետիկա և ռեսուրսների օգտագործում» դասընթացը ընդգրկվել է 2010-2011 ուստարվա առարկաների ցանկում: Մովորողները պարբերաբար մասնակցում են Էկոլոգիական թեմաներով Էքսկուրսիաների և ճամբարների, բնապահպանական միջոցառումների,

- բուհերում հաստատվել են բոլոր մասնագիտությունների գծով չափորոշիչները, որոնցում ներառվել են «Էկոլոգիա» և «Էկոլոգիայի հիմունքներ» դասընթացները: Բացի այդ, որոշ բուհերում դասավանդվում են «Մոցիալական Էկոլոգիա», «Մարդու Էկոլոգիա», «Արդյունաբերական Էկոլոգիա», «Ռադիացիոն Էկոլոգիա» և այլ Էկոլոգիական ուղղվածության շուրջ 24 դասընթաց:

Ներկայումս մասնագիտական կրթության ոլորտում իր ուրույն տեղն ունի կայուն զարգացման թեմաների ուսուցումը: Որոշ բուհեր՝ Երևանի պետական համալսարանը, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը, Հայաստանի պետական մանկավարժական համալսարանը, Երևանի Էկոլոգիայի, տնտեսագիտության, իրավունքի հայկական ինստիտուտը իրենց ուսումնական պլաններում ընդգրկել են նաև «Մարդկային հասարակության կայուն զարգացում», «Կայուն զարգացում և գլոբալ անվտանգություն», «Հազարամյակի զարգացման նպատակները՝ որպես կայուն զարգացման կարևոր հենակետեր» «Կայուն զարգացման համաշխարհային ծրագիր», «Կայուն զարգացման հիմունքներ», «Կայուն զարգացման տեսությունն ու պրակտիկան», «Գեոէկոլոգիան կայուն զարգացման համատեքստում» և այլ դասընթացները:

Դեռևս 1996թ. Հայաստանի Հանրապետությունում ՄԱԶԾ-ի աջակցությամբ պատրաստվել և հրատարակվել է «Մարդկային կայուն զարգացման հայեցակարգը՝ տեսությունն ու պրակտիկան» առաջին բուհական ձեռնարկը ռուսերեն լեզվով, որը ներկայացվել է «Ռիո+5» համանրոպական վեհաժողովին Մինսկ քաղաքում և օգտագործվել ԱՊՀ երկրների մի շարք համալսարանների կողմից:

2008թ. ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից որպես բուհական դասագիրք հաստատվել է «Կայուն զարգացման տեսությունն ու պրակտիկան. Համաշխարհային գործընթացը և Հայաստանը» ձեռնարկը, որը մշակվել է ԵՊՀ-ում «Հանուն կայուն մարդկային զարգացման» ասոցիացիա ՀԿ-ի հետ համատեղ, ՄԱԶԾ-ի աջակցությամբ:

Պետական պատվերի շրջանակներում մագիստրոսական և ասպիրանտական տեղեր են հատկացվում կայուն զարգացման առանցքային թեմաների հետ առնչվող մասնագիտությունների ուղղությամբ:

2011թ. ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոնում հիմնադրվել է «Կրթություն հանուն կայուն զարգացման» UNESCO-ի ամբիոն, որի գլխավոր նպատակն է Հայաստանում աջակցել կրթություն հանուն կայուն զարգացման գործընթացին: Ամբիոնի ինդիքներն են՝ նպաստել կրթության և գիտական հետազոտությունների ինտեգրմանը, կայուն զարգացման ոլորտում մասնագետների պատրաստմանը և վերապատրաստմանը, ուսումնական նյութերի մշակմանը, տարբեր նախաձեռնությունների միջոցառումների իրականացմանը, ինչպես նաև միջազգային համագործակցության ապահովմանը:

2012թ. Խ. Աբովյանի Հայկական պետական մանկավարժական համալսարանում (ՀՊՄՀ) քաղվել է «Էկոլոգիա և կայուն զարգացում» համահամալսարանական ամբիոնը, իսկ ԵԱՀԿ-ի աջակցությամբ Երևանի պետական համալսարանում՝ կայուն զարգացման կենտրոնը:

ՀՀ կրթության և գիտության նախարարությունը մշակել է ՀՀ կրթության զարգացման 2016-2025 թվականների պետական ծրագրի նախագիծը, որը ներկայացվելու է ՀՀ կառավարություն: Նշյալ ծրագրի նախագիծը ուղղված է «Մինչև 2030 թվականը կայուն զարգացման օրակարգի» 4-րդ նպատակով սահմանված նպատակի և թիրախների իրականացմանը:

2013թ., ՄԱԶԾ-ի և ՄԱԿ-ի Հանրային տեղեկատվության վարչության աջակցությամբ, Հայկական մանկավարժական համալսարանի և «Հանուն մարդկային կայուն զարգացման»

ասոցիացիայի կողմից պատրաստվել և հրատարակվել է ուսուցողական ձեռնարկ բուհերի համար «Կայուն զարգացման տեսությունն ու պրակտիկան (Համաշխարհային գործընթացը և Հայաստանը): Ձեռնարկում ներկայացված են «Ռիո+20» գագաթաժողովի «Ապագան, որը մենք ցանկանում ենք» եզրափակիչ փաստաթուղթը, ինչպես նաև «Երկրի Հրովարտակը», որը ճանաչվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից որպես կայուն զարգացման դասավանդման կարևորագույն միջոց:

Հայաստանի Հանրապետության վերոհիշյալ փորձը ընդգրկվել է ՄԱԿ ԵՎՏՀ-ի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից պատրաստված դրական փորձին նվիրված հրատարակություններում:

2001 թվականից Հայաստանում իրականացվում է 17 երկրներում գործող SPARE-ԷՌՕԴԾ (Էներգիայի և ռեսուրսների օգտագործման դպրոցական ծրագիր) միջազգային կրթական նախագիծը: Նախագծի առարկան մտել է դպրոցական առարկաների ցանկ և դասավանդվում է որպես առարկայական բաղադրիչ 2010 թվականից: Նախագծի իրականացման շրջանակներում իրականացվել են նաև էներգախնայողական միջոցառումներ:

Ներկայումս Հայաստանում մեկնարկել է էկոլոգիական կրթության բարելավմանը նպատակաուղղված երկու լայնածավալ ծրագիր՝ Եվրամիության, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ու Զարգացման ծրագրի և Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի աջակցությամբ:

Կրթության, որպես կայուն զարգացման հիմնական բաղադրաչներից մեկի, հետագա զարգացումները պետք է ուղղված լինեն.

- հանրակրթության համընդհանուր հասանելիության ապահովմանը,
- կրթական ծրագրերում կայուն զարգացման գաղափարախոսության ընդլայնմանը,
- կայուն զարգացման ոլորտին առնչվող մասնագետների պատրաստման որակի բարելավմանը,
- դպրոցներում կայուն զարգացման միջավայրի ստեղծմանը,
- աղետների ռիսկերի նվազեցման կրթության զարգացմանը,
- երեխաների համար նախատեսված կազմակերպություններում ապահովել երեխայի զարգացման, առողջության և աճի համար առողջ միջավայր, վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների առաջացման և տարածման ռիսկի գործոնների նվազեցման կամ բացառման նպատակով,
- ոչ ֆորմալ կրթության միջոցով ԿԶ գիտելիքների և գաղափարախոսության տարածմանը,
- կրթության ոլորտի ռազմավարական փաստաթղթերում ԿԶ մոտեցումների արտացոլմանը:

X. ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ

ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ,

ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ ԵՎ ՀԱՄԱԹԻՎ

Ոլորտի իրավիճակի վերլուծությունը, իրավական կարգավորում

Ինչպես որոշվել էր «Ռիո+20» գագաթնաժողովում, ՄԱԿ-ի կողմից կազմակերպվեց լայնածավալ միջազգային գործընթաց հազարամյակի զարգացման նպատակները կայուն զարգացման նպատակների վերափոխման ուղղությամբ: Արդյունքում 2015թ. սեպտեմբերի 25-27-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից հաստատված «Մինչև 2030թ. օրակարգ հանուն կայուն զարգացման» համաշխարհային ծրագրի հենակետը կազմում են կայուն զարգացման 17 նպատակները՝ իրենց համապատասխան 169 ենթանպատակներով/թիրախներով: Ուստի

երկրները պետք է ընտրեն և տեղայնացնեն իրենց համար առավել կարևոր նպատակները համատասխան թիրախներով (ու ցուցանիշներով) և ձգտեն ապագա 15 տարվա ընթացքում իրականացնել դրանք:

Դեռևս 1992թ. ՄԱԿ-ի «Երկիր մոլորակ» գազաթնաժողովում, զարգացնելով 1972թ. շրջակա միջավայրին նվիրված ՄԱԿ-ի Ստոկհոլմյան գիտաժողովում առաջ քաշված էկոլոգիական անվտանգության հետ հավասարակշռված կայուն զարգացման գաղափարը, նախանշվեց վերջինիս նպատակաուղղված քաղաքականության մոտեցումները: Առաջ քաշվեցին նաև կայուն զարգացման գնահատման (ցուցանիշների) և երկրների համադրելիության ապահովման հարցերը: Ելնելով այս անհրաժեշտությունից, «Հանուն կայուն մարդկային զարգացման» ասոցիացիայի նախաձեռնությամբ և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի աջակցությամբ Հայաստանի պետական և գիտակրթական հաստատությունների ներկայացուցիչներից ձևավորվեց աշխատանքային խումբ, որը դեռևս 1995թ. մշակեց մարդկային կայուն զարգացման գնահատման, չափման մեթոդաբանությունը և հաշվարկման համակարգը:

Նշված մեթոդաբանությունը և հաշվարկները Հայաստանի ու Վրաստանի 1990թ. տվյալների հիման վրա հրատարակվեցին առանձին գրքույքով, ներկայացվեցին Մինսկում կայացած «Ռիո+5» ՄԱԿ-ի Եվրոպական համաժողովում: Հայաստանի համար ՀՀ վիճակագրության ազգային ծառայության կողմից կատարված հաշվարկները, ինչպես նաև մշակված մեթոդի վերաբերյալ տեղեկատվությունը հրատարակվեցին նաև 1996-2006թթ. ՀՀ «Մարդկային զարգացման ազգային զեկույցներում», ներկայացվեցին այլ միջազգային գիտաժողովներում:

Կայուն զարգացման գնահատման առաջարկված և փորձարկում անցած համաթիվը հիմնված է արդեն տարիներ գործող Մարդկային զարգացման համաթվի վրա, սակայն ներառում է լրացուցիչ «էկոլոգիական» բաղադրիչ: Կայուն մարդկային զարգացման համաթիվը (կամ պարզապես կայուն զարգացման համաթիվը) հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$ՄԿԶՀ = (I_1 \cdot I_2 \cdot I_3 \cdot I_e)^{1/4}$$

- որտեղ՝ I_1 – կյանքի սպասվելիք տևողության համաթիվն է,
- I_2 – կրթական մակարդակի համաթիվն է,
- I_3 – ՀՆԱ-ի համաթիվն է,
- I_e – էկոլոգիական գործոնի համաթիվն է:

Կայուն զարգացման համաթիվը կառուցված է այնպես, որ հնարավոր լինի կատարել համեմատություններ երկրների միջև: Կարելի է փաստել, որ դա փոխզիջման արդյունք է ցուցանիշների ցանկայի խմբի և տվյալների մատչելիության միջև՝ բավականին երկար ժամանակային շարքով երկրների միջև համեմատություն իրականացնելու հնարավորության համար:

Համաթիվն ուղղակի թվային արժեք չէ, այլ եռամակարդակ կառույց: «Ա մակարդակը» բաղկացած է բաղադրիչների չափագրումներում վիճակի քանակական վերլուծությունից: Դա սովորական Մարդկային զարգացման համաթիվն է, որը ընդլայնված է «շրջակա միջավայրի վիճակի» չափագրումով և իրենից ընդամենը ներկայացնում է Մարդկային ընդլայնված զարգացման համաթիվ: «Բ մակարդակը» «Ա մակարդակում» արտացոլված վիճակի կայունությունն է և ենթադրում է «վիճակի աջակցությունը», որը նվաճվում է ամեն մի չափագրման մեջ երկարաժամկետ հեռանկարում: Այն բաղկացած է մի շարք ցուցանիշներից, որոնք օգտագործվում են որպես կշռված գործոններ «Ա մակարդակի» համապատասխան արժեքների անկայունության զեղջման համար: «Գ մակարդակը» իրենից ներկայացնում է կայուն զարգացումն առավել լայն (քաղաքական, ինստիտուցիոնալ) ենթատեքստում, որն ակնհայտ

ազդեցություն է գործում մարդկային գործոնի զարգացման կարգավիճակի և դրա կայունության վրա երկարաժամկետ հեռանկարում, սակայն որը դժվար է թվային ձևով չափել:

Նկատի ունենալով կայուն զարգացման գնահատմանը ներկայացվող նոր պահանջները, ինչպես նաև վերոնշյալ մեթոդաբանության վերաբերյալ ստացված դիտողություններն ու առաջարկությունները, հայաստանյան փորձագետները ձեռնամուխ եղան մեթոդաբանության կատարելագործմանը: ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի փորձագետների օժանդակությամբ վերջնական տեսքի բերված մեթոդաբանությունը և Հայաստանի համար կատարված հաշվարկները ներկայացվեցին 2012թ. հունիսի 12-22-ը Ռիո դե Ժանեյրոյում կայացած ՄԱԿ-ի «Ռիո+20» գագաթաժողովի շրջանակում կազմակերպված զուգահեռ միջոցառման ժամանակ, արժանանալով ՄԱԶԾ-ի Կենտրոնական գրասենյակի պատասխանատու աշխատակիցների, մի շարք մասնակից երկրների պատվիրակությունների և գիտակրթական հաստատությունների (մասնավորապես ՅԷԼԻ համալսարանի) ու միջազգային փորձագետների դրական գնահատականի: Հարկ է նշել, որ նոր մեթոդաբանությամբ կատարվել են կայուն զարգացման գնահատման հաշվարկներ մի շարք այլ երկրների համար:

2014թ. սեպտեմբերին ՄԱԿ-ի Ասիական-Խաղաղ օվկիանոսյան տարածաշրջանային հանձնաժողովի (ԱԽՕՏՀ) կողմից կազմակերպված «Հետ Ռիո+20» օրակարգին նվիրված միջազգային սեմինարում Հայաստանի պատվիրակության կողմից ներկայացված կայուն զարգացման գնահատման վերոնշյալ տարբերակն ընդունվեց մեծ հետաքրքրությամբ և ԱԽՕՏՀ - ի կենտրոնական գրասենյակի կողմից առաջարկվեց համագործակցություն դրա հետագա կատարելագործման և կիրառման հարցերում: Մեթոդաբանությունը ներկայացվեց և հավանության արժանացավ նաև Երևանում 2014թ. հոկտեմբերին ՄԱԿ-ի Տնտեսական ու սոցիալական խորհրդի և Զարգացման ծրագրի, ինչպես նաև ՀՀ Կառավարության կողմից կազմակերպված «Կառավարման բարելավում հանուն կայուն զարգացման» միջազգային գիտաժողովում:

Ներկայումս ՀՀ վիճակագրության պետական ազգային ծառայությունն աշխատանքներ է իրականացնում «Էկոպորտալ» Բնական միջավայրի տեղեկատվական բազայի ստեղծման ուղղությամբ, ինչը խիստ անհրաժեշտ է էկոլոգիական իրավիճակը ամփոփ գնահատելու և համապատասխան որոշումներ ընդունելու համար: Առաջին փուլում իրակացվում է «Սևանա լճի և նրա ավազանի» վերաբերյալ տեղեկատվական բազայի ձևավորումը, ապա ձեռք բերված փորձի հիման վրա կձևավորվի «Էկոպորտալ» Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքի վերաբերյալ: Այդպիսի տեղեկատվական բազայի առկայությունը զգալիորեն կնպաստի նաև Կայուն զարգացման համաթվի Էկոլոգիական բաղադրիչի ճշգրիտ հաշվարկման գործընթացին:

XI. «ԿԱՆԱՉ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ» ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՈՒՄ

Ոլորտի իրավիճակի վերլուծություն, իրավական կարգավորում

Իրավիճակի վերլուծություն

«Կանաչ տնտեսությունը» որպես գաղափարախոսություն, զարգացման մոդել կամ գործիք՝ ընկալվում է որպես կայուն զարգացման կարևորագույն ենթահամակարգ և դրան հասնելու քաղաքականության գործառնական ու ճկուն մեխանիզմների համախումբ: Կանաչ տնտեսության քաղաքականության տրամաբանությունը և միջոցառումները բխում են կայուն զարգացման և աղքատության նվազեցման ռազմավարական նպատակներից և որպես

այդպիսին համեմատաբար կոնկրետ համատեքստ ունեն՝ ամրագրելով գործառնական օրակարգ տնտեսության և շրջակա միջավայրի համերաշխ զարգացման չափելի և կոնկրետ արդյունքների հասնելու նպատակով:

Առաջին անգամ Հայաստանում կանաչ տնտեսության գաղափարը ներառվել է ՀՀ կառավարության կողմից 2008 թվականին հավանության արժանացած Կայուն զարգացման ծրագրում, որտեղ որպես գերակա նպատակներ են սահմանվել՝

- կանխարգելել կամ սահմանափակել մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա վնասակար ներգործությունը,

- վերացնել մթնոլորտի գերնորմատիվային աղտոտվածությունը,

- մեղմացնել կլիմայի գլոբալ փոփոխության բացասական հետևանքները,

- պահպանել կենսաբազմազանությունը,

- ապահովել վերականգնվող բնական ռեսուրսների վերարտադրության անհրաժեշտ ծավալները և բնական հավասարակշռվածությունն ապահովող պայմանները,

- ապահովել չվերականգնվող բնական ռեսուրսների բանական և արդյունավետ օգտագործումը:

Հայաստանում կանաչ տնտեսության սկզբունքների ներդրման ՈԻԹՀՎ (SWOT) վերլուծությունը ցույց է տալիս, որ երկրի ուժեղ կողմերն են՝ ածխաթթու գազի նվազ արտանետումը էներգետիկա, գազով աշխատող ավտոմեքենաների բարձր տեսակարար կշիռը, էներգետիկ և տնտեսական ոլորտի զարգացած օրենսդրությունը, ակտիվ բնապահպանական քաղաքացիական հասարակությունը, էկոլոգիապես մաքուր ապրանքների սերտիֆիկացման առկա համակարգը: Իսկ ՀՀ-ի համար թույլ կողմեր են համարվում՝ արտաքին էներգակիրներից խիստ կախվածությունը, համապատասխան օրենսդրական և մեթոդաբանական հիմքերի բացակայությունը, հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներում շրջակա միջավայրի աղտոտման և բնական ռեսուրսների գերշահագործման բաղադրիչի մասով համապատասխան ուսումնասիրությունների և գնահատումների բացակայությունը, բնապահպանական օրենսդրության որոշ մասի ժամանակակից պահանջներին անհամապատասխանությունը, բնօգտագործման և բնապահպանական վճարների ցածր դրույքաչափերը, բնապահպանական խնդիրների թույլ ինտեգրումը տնտեսության այնպիսի ճյուղերում, ինչպիսիք են՝ հանքարդյունաբերությունը, քաղաքաշինությունը տրանսպորտը, էներգետիկան, բնակարանային տնտեսությունը և գյուղատնտեսությունը, կանաչ էկոնոմիկային անցման անհրաժեշտության ըմբռնման բացակայությունը, գործող հնացած ստանդարտները և տեխնիկական կանոնակարգերի առկայությունը, «կանաչ» տեխնոլոգիաների և նորամուծությունների մասով գիտական ուսումնասիրությունների սահմանափակ ծավալները, դրանց գծով առաջարկների սակավ թվաքանակը, միջազգային բնապահպանական համաձայնագրերի շրջանակներում, զարգացած երկրների կողմից զարգացող երկրներին «կանաչ» տեխնոլոգիաների և նորամուծությունների փոխանցման մեխանիզմների բացակայությունը:

Երկրում կանաչ տնտեսության զարգացման հնարավորություններն են՝ տնտեսական և էներգետիկ ռազմավարությունների առկայությունը, շրջակա միջավայրի պահպանության գործողությունների ծրագրի առկայությունն, այլընտրանքային էներգետիկայի զարգացում և զարգացման համար անհրաժեշտ օրենսդրական և գիտատեխնիկական հնարավորությունները, նոր բնապահպանական քաղաքականության և օրենսդրության մշակումը, կանաչ էկոնոմիկային ուղղված ազատ տնտեսական գոտիների ստեղծումը, էկոլոգիապես մաքուր գյուղատնտեսության զարգացումը, շրջակա միջավայրի կառավարման տնտեսական մեխանիզմների զարգացումը:

Կանաչ տնտեսության սկզբունքներին սպառնացող վտանգներն են՝ առկա ռազմավարությունների կատարման անբավարար մակարդակը, տնտեսական խոցելիությունը,

կլիմայի փոփոխության և տարերային աղետներից խոցելիությունը, իրականացվելիք ծրագրերի համար ներքին ֆինանսավորման բացակայությունը

Կանաչ տնտեսության օրակարգի ձևավորումն առավել կարևորվում է այն հիմքով, որ բնական կապիտալի շարունակական սպառման հաշվին տնտեսական աճի ձևավորման գործելակերպի պարագայում ավելի են սրվում հենց հետագա զարգացման ռիսկերը և սահմանափակումները առնվազն երկու պատճառով՝

- նախ, աստիճանաբար առավել ծախսատար է դառնում ֆիզիկական կապիտալի փոխարինումը բնական կապիտալով: Օրինակ, եթե ջրային պաշարները կրճատվում են կամ աղտոտվում, լրացուցիչ ենթակառուցվածքներ են անհրաժեշտ այն փոխադրելու և մաքրելու համար.

- երկրորդ, փոփոխությունները միշտ չէ, որ կարող են կանխատեսելի հետագծով դրսևորվել: Օրինակ, ձկնապաշարի որոշ տարիների դանդաղ կրճատման արդյունքում այն կարող է միանգամից պարզապես ոչնչանալ:

Չարգացման ներկա մոդելի փոխակերպումը կանաչ տնտեսության մոդելին ոչ միայն չի ստորադասում տնտեսական աճի նպատակը, այլև գերազանցապես տնտեսական փաստարկում և հիմնավորում է պարունակում՝ առաջարկելով աճի նոր հնարավորություններ, որոնց իրացման հիմնական խոդովակներ են՝

- արտադրողականություն և մրցունակություն,
- եկամուտների ավելացում,
- ինովացիոն զարգացում,
- նոր շուկաների և նոր ոլորտների յուրացում,
- առավել հաշվեկշռված մակրոտնտեսական պայմաններ,
- կայունություն,

- վստահություն տնտեսության գործակալների միջև (պետություն, գործարար հանրություն, տնային տնտեսություններ):

Կանաչ տնտեսության հենասյուները չեն շեղվում կայուն զարգացման և աղքատության հաղթահարման հիմնարար դրույթներից, այն է՝

- մարդկային շրջակա բարեկեցության աճ, այսինքն՝ ռեսուրսաարդյունավետ զարգացում,
- հավասար հնարավորություններ, այսինքն՝ սոցիալապես ներառական,
- միջավայրի ռիսկերի նվազեցում, մասնավորապես՝ ցածր ածխածնային գործունեություն,
- բաց/թափանցիկ, մասնակցային և հաշվետու կառավարում:

Կանաչ տնտեսության մոդելին անցումը պահանջում է համարժեք քաղաքականություն և ինստիտուցիոնալ կարգավորում, կախված է ռեսուրսաապահովվածության աստիճանից և բնապահպանական ճնշումների առանձնահատկություններից: Միաժամանակ, կարևոր է հաշվի առնել երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ներկա փուլի առանձնահատկությունները:

Քաղաքականության շրջանակի ձևավորումն անհրաժեշտաբար հիմնված է այն հենքային մոտեցման վրա, որ տնտեսական և բնապահպանական ասպեկտները ընկալվում են որպես փոխլրացնող, բնական կապիտալի ամբողջ արժեքը դիտվում է որպես արտադրության գործոն, իսկ աճի նոր մոդելի առանցքը կազմում է արդյունավետությունը և գործունեության այնպիսի վարքագիծը, որի արդյունքում չի հատվում բնապահպանական «սահմանագիծը»:

Ուստի, կանաչ տնտեսության քաղաքականությունը ենթադրում է նոր աճի մոդել, արտադրության և սպառման վարքագծի, տեխնոլոգիայի և ենթակառուցվածքների փոփոխություն: Նշված համախումբն ընդգրկում է իրագործման համեմատաբար երկար

Ժամանակահատված, մյուս կողմից առկա են նախորդ ժամանակահատվածի որոշումների և վարքագծի հետևանքները: Ուրեմն, կանաչ տնտեսության քաղաքականությունը պետք է լինի բավականաչափ ճկուն՝ մի կողմից նոր տեխնոլոգիաների և հնարավորությունների յուրացման և առավելությունները կլանելու, մյուս կողմից՝ մոտեցումների փոփոխություններ թույլ տալու տեսակետից:

Կանաչ տնտեսության սկզբունքների և հիմնադրույթների վերաբերյալ իրազեկման ոլորտում Հայաստանի Հանրապետությունում զգալի աշխատանք է կատարվել: Մասնավորապես, մի շարք միջազգային կազմակերպությունների աջակցությամբ, Հայաստանի գործատուների հանրապետական միությունը (ՀԳՀՄ), ՀՀ Էկոնոմիկայի նախարարության հետ համատեղ կազմակերպել են տվյալ թեմաներով գիտաժողովներ, անկախ փորձագետների, հասարակական կազմակերպությունների և լրատվամիջոցների մասնակցությամբ:

Բացի այդ, ՀԳՀՄ-ն իր անդամ «Հայ Կոնսալտ» Խորհրդատվական Հիմնադրամի կողմից մշակում և ներդրում է կազմակերպություններում ISO 14001 «Շրջակա միջավայրի կառավարման» համակարգերը և փոքր ու միջին ձեռնարկությունների (ՓՄՁ) համար պարզեցված համակարգեր «7 քայլեր» անվանումով: Վերջինս թույլ է տալիս «7 քայլերով» փոքր ու միջին ձեռնարկությունների ներդնել ընթացակարգեր, ուղղված շրջակա միջավայրի պաշտպանությանը:

Քաղաքականության շրջանակ

Կանաչ տնտեսության քաղաքականության օրակարգի ձևավորումը պահանջում է առկա ինստիտուցիոնալ կարգավորման վերանայում և ադապտացում աճի նոր մոդելին անցման համար անհրաժեշտ նախապայմաններին:

Ռեսուրսների արդյունավետ օգտագործումն ու կառավարումը տնտեսական քաղաքականության առանցքային նպատակն է, և այդ տեսակետից ֆիսկալ ու կարգավորող բնույթի ինտերվենցիաները պետք է կազմեն կանաչ քաղաքականության օրակարգի մաս:

Հարկ է տարբերակել կանաչ տնտեսության քաղաքականության երկու խոշոր մակարդակ՝

- Շրջանակային քաղաքականություններ. ապահովում են տնտեսական աճի և բնական կապիտալի փոխլրացնելիությունը: Այս խումբը ներառում է ֆիսկալ կարգավորումը, կանոնակարգող դաշտը և ինովացիան: Ըստ էության նշվածը «ավանդական» տնտեսական քաղաքականության սովորական օրակարգ է, որում կանաչ աճի մոդելի պարագայում պետք է ներդրվի ընկալումն առ այն, որ կիրառվող գործիքակազմը կարող է դրական էֆեկտներ ունենալ և տնտեսության, և շրջակա միջավայրի տեսակետից հավասարապես:

- Խթանների համակարգ. ոլորտային քաղաքականությունների և կարգավորումների համալիր է, որի շնորհիվ խրախուսվում է բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործում, և ադոտոտումը դառնում է ավելի «թանկ»: Այս մակարդակի քաղաքականությունները ներառում են գնային կարգավորման գործիքակազմը (օրինակ՝ բնապահպանական հարկեր) և ոչ շուկայական մեխանիզմները (օրինակ՝ տեխնոլոգիաների գծով աջակցությունը):

Այս մակարդակների ներքո առանձնացվում են կարգավորման երկու առանցքային ուղղություններ՝ իրավական և տնտեսական մեխանիզմներ:

Տնտեսական մեխանիզմներ

Այս ուղղությունը ներառում է գործիքների ամբողջությունը, որոնք ուղղված են ոչ թե արտադրության գործընթացի բնապահպանական կարգավորմանը, այլ՝ ապրանքների արտադրության և օգտագործման կարգավորմանը և վարքագծի փոփոխության խթանների ձևավորմանը.

- կայուն արտադրություն,
- կայուն սպառում,
- կանաչ գնումներ,
- կանաչ ֆինանսներ:

Տնտեսական մեխանիզմները իրենցից ներկայացնում են աղտոտողների և ռեսուրս օգտագործողների վարքի վրա ազդող գործիքախումբ, որոնք բաժանվում են հետևյալ տեսակների.

- բնապահպանական հարկեր,
- բնապահպանական վճարներ,
- բնապահպանական սուբսիդիաներ,
- գրավային արժեքի փոխհատուցման համակարգեր,
- թույլտվությունների և քվոտաների առքուվաճառքի համակարգեր,
- բնություն-արտաքին պարտք հաշվանցման մեխանիզմներ:

Տնտեսական մեխանիզմներն ունեն կարգավորիչ ֆունկցիա, որ գործում է միկրո մակարդակում և ֆիսկալ ֆունկցիա, որ գործում է մակրո մակարդակում:

Վերջին 16 տարիների ընթացքում այդ վճարների ծավալներն աճել են ավելի քան 57 անգամ՝ 1998 թ. 608,0 մլն. դրամից 2014 թվականին հավասարվելով 35,2 մլրդ. դրամի:

Բնապահպանական և բնօգտագործման վճարների գծով պետական բյուջեի մուտքերը նպաստավոր պայմաններ/հենք են ստեղծում հանրապետությունում բնապահպանական հիմնախնդիրների լուծմանը նպատակաուղղված ծրագրերի և միջոցառումների ֆինանսավորման ծավալների ավելացման համար:

Պետության ընդհանուր ֆինանսական աղբյուրների միջոցների սահմանափակության պայմաններում բյուջետային ծախսային գերակայություններում բնապահպանական միջոցառումները շարունակում են պակաս գերակա համարվել, արդյունքում՝ շրջակա միջավայրի պահպանության միջոցառումների վրա կատարվող ծախսերի ՀՆԱ -ի նկատմամբ ցուցանիշով Հայաստանը զբաղեցնում է ԱԵԿԿԱ երկրների մասով ամենավերջին տեղերից մեկը: Հավաքագրված վճարների մոտ 15,0 տոկոսն է նպատակաուղղվում բնապահպանական միջոցառումների ֆինանսավորմանը:

Բնապահպանական և բնօգտագործման վճարների հասցեական օգտագործումը շարունակում է դեռևս մնալ առկա հիմնախնդիրներից (մարտահրավերներից) կարևորագույնը:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում գործող տնտեսական մեխանիզմների համակարգը չի համապատասխանում ժամանակակից մեթոդներին, քանի որ դրույքաչափերի հիմքում ընկած չեն տնտեսագիտորեն հիմնավորված սկզբունքներ, դրույքաչափերի սահմանման ժամանակ հաշվի չեն առնվել տնտեսագիտական՝ ծախսերի հաշվարկման կամ եկամուտների բաշխման մեթոդաբանությունները և հասցված վնասի համարժեք փոխհատուցումները:

Հայաստանի Հանրապետության գործող բնապահպանական և բնօգտագործման վճարների համակարգի էական թերությունները պայմանավորված է նաև նրանով, որ սկզբնական շրջանում ներդրվելով որպես հիմնականում պետական կազմակերպությունների կողմից վճարվող վճարատեսակներ՝ դրույքաչափերը կրում էին ձևական բնույթ և հիմնականում բավական ցածր էին և հաշվարկված էին խորհրդային ժամանակահատվածում կատարված ուսումնասիրությունների արդյունքում մշակված փոխհատուցման ցուցանիշների, չափորոշիչների, տեսական կամ համեմատական հաշվարկների վրա, որոնց փոփոխության փորձերը մեծամասամբ մերժվել են տնտեսական ոլորտը կարգավորող նախարարությունների կողմից:

Բնապահպանական և բնօգտագործման վճարների հայաստանյան համակարգի հիմնական խոչընդոտներից են համարվում բնապահպանական և բնօգտագործման վճարների դրույքարափերի անհամապատասխանությունը հասցված վնասին կամ օգտագործված ռեսուրսների հետևանքով ստացված եկամուտներին:

Օրինակ, մետաղական հանածոների համար սահմանված ռոյալթիները հանդիսանալով միայն ֆինանսական գործիք՝ ի տարբերություն բնօգտագործման վճարների, չեն խրախուսում ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը:

Ներկայիս գործող ինչպես բնապահպանական և բնօգտագործման վճարների համակարգը, այնպես էլ շրջակա միջավայրի բաղադրիչներին հասցված վնասի օրենսդրական շրջանակը վերանայման կարիք ունի: Առաջնային խնդիրներից է հանդիսանում բնական կապիտալին առավել վնաս հասցնող ոլորտների համար օրենսդրության կատարելագործումը:

Իրավական կարգավորում

Կանաչ էկոնոմիկայի իրավական մեխանիզմները քննարկելիս նախ և առաջ անհրաժեշտ է առանձնացնել այն սկզբունքները, որոնց հիման վրա պետք է իրականացվեն այն իրավական կարգավորումները, որոնք նպատակ ունեն բարելավել ոլորտի օրենսդրական ակտերի որակը: Այս ուղղությունը վարքագծային կանոնակարգումների ամբողջությունն է՝ ներառյալ խրախուսումները, պատժամիջոցները, պարտավորությունները (այդ թվում՝ սոցիալական), օգուտների վերաբաշխումը: Այս առումով անհրաժեշտ է ելակետային ընդունել հետևյալ սկզբունքները.

- խրախուսումների և արտոնությունների ճկուն ու արդյունավետ համակարգի ներդրում,
- ազդեցության գնահատում, պատասխանատվության միջոցների խստացում (Ֆիսկալ գործիքներ, սանկցիաներ և փոխհատուցում),
- խախտումների կանխարգելման կառուցակարգերի ստեղծում,
- օրենքների և այլ իրավական ակտերի համապատասխանեցում, ներդաշնակեցում, մոտարկում,
- օրենսդրական բացերի և հակասությունների հնարավորինս նվազեցում:

Յուրաքանչյուր սկզբունքների բովանդակային կողմը հետևյալն է:

Արտոնությունների համակարգի ներդրումը կարող է էականորեն խթանել կանաչ էկոնոմիկայի գաղափարախոսությունից բխող տեխնոլոգիաների ներդրումը, ռեսուրսախնայող ու արդյունավետ արտադրության կազմակերպումը, և որպես հետևանք էկոլոգիապես անվտանգ արտադրական և տեխնոլոգիական միջավայրի ստեղծումը:

Պատասխանատվության միջոցների խստացումը սերտորեն փոխկապված է խախտումների կանխարգելման համակարգի ներդրման հետ: Էկոլոգիական անվտանգությունն այնպիսի բնագավառ է, որտեղ հաճախ պատասխանատվության կիրառումը կարող է չապահովել մինչև խախտումը եղած վիճակի վերականգնումը. բնականաբար այս ոլորտում առավել արդյունավետ կարող է գործել խախտումների կանխարգելման սկզբունքը: Սակայն, ամեն դեպքում, պատասխանատվության միջոցների կիրառումը լիովին բացառել հնարավոր և նպատակահարմար չէ, ուստի հարկ է, որ այն իր խստությամբ համարժեք լինի թույլ տրված խախտմանը: Պատասխանատվության միջոցները պետք է հետևեն այն տրամաբանությանը, որ խախտում թույլ տված սուբյեկտների համար սանկցիայի բացասական հետևանքները կրելն ու հետագայում առանց խախտումները վերացնելու կամ դրանք կրկնելով գործունեությունը շարունակելը չլինի ավելի նպատակահարմար ու բարենպաստ՝ ֆինանսական տեսանկյունից, քան դրանք վերացնելը:

ՀՀ օրենսդրությամբ բնապահպանական և բնօգտագործման վճարների համակարգի հետ մեկտեղ գործում են նաև օրենսդրական կարգավորումներ շրջակա միջավայրին հասցված

վնասի հաշվարկման համար: Օրենսդրական շրջանակը սահմանափակվում է մեկ օրենքով և ՀՀ կառավարության երեք որոշումներով:

Վերը նշված օրենսդրական կարգավորումները հիմք են հանդիսանում Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի առանձին բաղադրիչներին հասցված վնասի գնահատման և հաշվարկման համար, սակայն որևէ կերպով համապատասխանեցված չեն էկոհամակարգերին հասցված վնասի գնահատման համար: Այսպես՝ անտառապատ տարածքներում այլ տնտեսական գործողություններ իրականացնելու նպատակով անտառհատումների դեպքում չեն հաշվարկվում անտառի կորստի դեպքում հասցված վնասը, այլ հաշվարկվում է փայտանյութը՝ ըստ «Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» ՀՀ օրենքի:

Վերը նշված համակարգերը, հանդիսանալով Հայաստանի Հանրապետությունում գործող շրջակա միջավայրի կառավարման տնտեսական մեխանիզմների կիրարկման գործիքներ, լրացուցիչ հստակեցման կարիք ունեն:

Շրջակա միջավայրին հասցված վնասի հաշվարկման կարգերը և օրենքը կարող են մեթոդաբանական հիմք հանդիսանալ բնապահպանական և բնօգտագործման վճարների դրույքաչափերի վերանայման համար, սակայն մինչ այդ գործող վնասի հաշվարկման կարգերը պետք է վերանայվեն և հիմնավորվեն՝ համապատասխան ներկայիս զարգացման պայմաններին:

2014թ. ընդունված Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) օրենքով արդեն իսկ սահմանվել է, որ ՇՄԱԳ գործընթացի առաջին փուլում պետք է իրականացվի նաև շրջակա միջավայրին հասցված հնարավոր վնասի տնտեսական գնահատում, որի մեթոդաբանությունը հաստատվել է 2015 թվականի մայիսի 27-ի ՀՀ կառավարության նիստում ընդունված «Շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատման և հատուցման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշմամբ:

Միջազգային համագործակցություն

2013 թվականին մեկնարկել է Եվրոպական հանձնաժողովի՝ «Կանաչ տնտեսությունն արևելյան գործընկերության երկրներում» (EaP GREEN) տարածաշրջանային ծրագիրը, որի նպատակը Եվրոպական Միության Արևելյան գործընկերության երկրներին աջակցությունն է կանաչ տնտեսությանն անցման գործընթացներում: Ծրագրի հիմնական ֆինանսավորողը Եվրոպական Հանձնաժողովն է, որին միացել են չորս այլ միջազգային կազմակերպություններ, այդ թվում՝ հանդես գալով որպես Ծրագրի տարբեր բաղադրիչների իրականացման պատասխանատուներ: Ծրագրի իրականացնող գործընկերներն են՝

- Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը (ՏՀԶԿ, OECD),
- ՄԱԿ-ի Եվրոպայի Տնտեսական Հանձնաժողովը (ՄԱԿ ԵՏՀ),
- ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագիրը (ՄԱԿ ՇՄՕ, UNEP),
- ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման կազմակերպությունը (ՄԱԿ ԱԶԿ, UNIDO):

Ծրագրի ընդհանուր համակարգումը ռեգիոնալ մակարդակում իրականացնում է ՏՀԶԿ-ն: ՀՀ էկոնոմիկայի և ՀՀ բնապահպանության նախարարությունները հանդես են գալիս որպես Հայաստանում Ծրագրի ազգային համակարգողներ, ակտիվորեն մասնակցում է նաև «Կովկաս» Տարածաշրջանային բնապահպանական կենտրոնը:

Ծրագիրը գերազանցապես տարածաշրջանային բնույթ ունի, սակայն դրանում ներառված մի շարք գործողություններ իրականացվում են ազգային մակարդակում: Ազգային հայտերի հիման վրա ձևավորվել են շահառու երկրներում ազգային մակարդակում իրականացվելիք գործողությունները: Հայաստանը նույնպես ներկայացրել է ազգային հետաքրքրվածության

հայտ, որի շրջանակներում, ըստ ժամանակացույցի, իրականացվում են աշխատանքներ հետևյալ ուղղություններով՝

Կառավարում և ֆինանսավորման գործիքներ՝

- ներդրումային քաղաքականության կատարելագործում և ֆինանսական մատչելիություն,
- կայուն արտադրության գործընթացի խրախուսում:

Ռազմավարական էկոլոգիական գնահատում և Շրջակա միջավայրի ազդեցության գնահատում: Կայուն սպառման և արտադրության (ԿՄԱ) քաղաքականության իրականացում՝

- առկա ազգային կարգավորող և օրենսդրական շրջանակի վերանայում,
- ռազմավարական էկոլոգիական գնահատման և ՇՄԱԳ-ի ընթացակարգերի կարողությունների զարգացում,
- բնապահպանական գնահատում, իրականացնող գերատեսչությունների վարչական կարողությունների զարգացում:

Ցուցադրական (դեմոնստրացիոն) ծրագրեր՝

- ռեսուրսարդյունավետ և մաքուր արտադրություն:

2014-2015թթ. վերոհիշյալ ծրագրի շրջանակներում արդեն իրականացվել են 10 փոքր և միջին ձեռնարկություններում ռեսուրսների արդյունավետության և մաքուր արտադրության կիրարկման հաջողված ցուցադրական նախագծեր, որոնք, սույն Հայեցակարգում նշված դրական փորձի այլ օրինակների հետ համատեղ, կարող են հիմք հանդիսանալ Հայաստանի Հանրապետությունում կանաչ տնտեսության զարգացման համար:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

I. ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ,

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1) Ընդերքի շահագործման ժամանակ էկոլոգիական ռիսկի ապահովագրության գործընթացի օրենսդրական կարգավորում:

2) ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին հայեցակարգային մոտեցումների մշակում, որի նպատակն է օրենսգրքով հետևյալ սկզբունքների ամրագրումը.

ա. լեռնաարդյունաբերական և մետաղագործական ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեությունը դարձնել թափանցիկ, տարեկան հաշվետվությունները հասանելի հանրության համար,

բ. հանքավայրերի շուրջ հստակ, որոշակի չափեր ունեցող սանիտարական գոտիների նախատեսում,

գ. արդյունահանվող հանքանյութերի համալիր օգտագործում,

դ. հանքավայրերում համեմատաբար աղքատ հանքաքարի օգտագործման ապահովում,

է. տարակազմ երկրորդային և երրորդային հումքի ճիշտ արժևորում (հավասարագոր նոր, արդյունաբերական հանքավայրերի հայտնաբերմանը),

3) Մշակել ընդերքի և նրա հարստությունների օգտագործման ազգային ռազմավարություն՝ սահմանելով բնապահպանական և սոցիալական անվտանգության ապահովման գերակայությունը օգտակար հանածոների շահագործման տնտեսական կարճաժամկետ օգուտների նկատմամբ: Ամրագրել օգտակար հանածոների ամբողջական, համալիր և ռացիոնալ օգտագործման սկզբունքը՝ նպաստելով երկարաժամկետ կտրվածքով հանրապետության կայուն զարգացմանը:

4) Որպես տեխնածին հումքի սկզբնաղբյուր՝ օգտակար հանածոների ուսումնասիրության, արդյունահանման կամ վերամշակման արդյունքում առաջացած ապարների ոչ կոնդիցիոն հանքաքարի լցակույտերի և պոչամբարներում կուտակված հարստապոչերի օգտագործման հնարավորությունների (այլընտրանքային) մեխանիզմների մշակում՝

ա. բոլոր հին և նոր թափոնակույտերի ու հարստապոչերի հաշվառում, դրանց ուսումնասիրություն և անձնագրերի կազմում, որում նշված կլինեն դրանցում պարփակված տարրերի պարունակություններն ու ընդհանուր քանակությունները, դրանց վտանգավորության դասը, պոչամբարների ձևավորման սխեմաներն ու հնարավոր օգտագործման ոլորտներն ու մշակման տեխնոլոգիաները: Թափոնների, որպես հումքի ստացման երկրորդային աղբյուր, օգտագործման համար որոշակի տնտեսական արտոնությունների սահմանում:

5) Եթե հանքավայրի երկրաբանական կառուցվածքը և հանքամարմինների տեղադրման դիրքը թելադրում են հանքավայրի շահագործման ստորգետնյա եղանակն, ապա այդ հանգամանքը պետք է ամրագրվի մի շարք նախագծային փաստաթղթերում (հանքավայրերի շահագործման կոնդիցիաների տեխնիկատնտեսական հիմնավորումներ, օգտակար հանածոների արդյունահանման նախագիծ), որն, ընդգրկելով շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցմանն ուղղված մոտեցումները, կսահմանափակի մասնավորապես մետաղական օգտակար հանածոների հանքավայրերի ներկայիս բաց եղանակով համատարած շահագործումը:

6) Լեռնահանքային արդյունաբերության հետ կապված շրջակա միջավայրի աղտոտվածության և բնակավայրերի ու բնակչության առողջության վրա ազդեցության համալիր ուսումնասիրության/մոնիթորինգի համակարգի ներդրում:

II. ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ (ՎԵՐԱԿԱՆԳՎՈՂ) ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ

ՋԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ԷՆԵՐԳԱԽՆԱՑՈՂՈՒԹՅՈՒՆ

- 1) Մեփական վերականգնվող էներգառեսուրսների (հիդրո-, հողմա-, կենսազանգվածի, արևային, երկրաջերմային և այլն) օգտագործման կարևորումն ու խթանումը էներգետիկ անկախության ապահովման գործում:
- 2) Գիտելիքահենք տնտեսության անցման գործում էներգախնայողության և էներգաարդյունավետ տեխնոլոգիաների լայնածավալ ներդրում, արևային սարքաշինության ձևավորում և զարգացում, համապատասխան աշխատատեղերի ստեղծում:
- 3) Ջերմային պոմպերի և արևային ջրատաքացուցիչների տեխնոլոգիական նշանակության սարքերի, ջեռուցման էներգետիկ համակարգերի (պահեստարանների) կիրառման ընդլայնում:
- 4) Էներգիայի վատնումների նվազեցումը, իսկ հնարավորության դեպքում նաև կանխումը, էներգախնայողությանն ուղղված միջոցառումների իրականացման շնորհիվ, մասնավորապես, շինարարական նորմերի վերանայման և էներգախնայողության ստանդարտների ներդրման ուղղությամբ, որոնց իրականացումը կնպաստի ոչ մետաղական հանքանյութերի օգտագործման խթանմանը շինարարական արդյունաբերության մեջ:
- 5) Հաշվի առնելով վերականգնվող էներգետիկայի ոլորտի զարգացման համեմատաբար բարձր արժեքը և կարևորելով ոլորտի զարգացման ու էներգետիկ անկախության ապահովումը, անհրաժեշտ է իրականացնել վերականգնվող էներգետիկայի նոր տեխնոլոգիաների՝ ի թիվս արևային և բիոտեխնոլոգիաների, երկրաջերմային և ջրածնային էներգետիկայի, զարգացման համար պահանջվող ներդրումների խթանում:
- 6) Խթանել երկրում ոլորտին վերաբերող ինովացիոն նշանակության գիտական, ինժեներական և փորձարարական հետազոտությունների իրականացումը և արդյունքների համակարգումն ու ներդրումը:
- 7) Նավթամթերքների ներկրման հնարավոր խափանումներից Հայաստանի կախվածությունը նվազեցնելու, ինչպես նաև դրանցում վերականգնվող էներգառեսուրսների որոշակի մասնաբաժին ապահովելու նպատակով իրականացնել գյուղատնտեսության տեղական արտադրանքից բիոէթանոլի և (կամ) բիոբյութանոլի ստացման կազմակերպումն ու էլեկտրատրանսպորտային ենթակառուցվածքների կիրառումն ու զարգացումը:
- 8) Վերականգնվող էներգետիկ ռեսուրսների արդյունավետ օգտագործման և էներգախնայողության ապահովման համար 2020 թվականին, և յուրաքանչյուր հաջորդ տարի, Հայաստանի Հանրապետությունում սպառվող ամբողջ էներգիայի առնվազն 20 տոկոսը, իսկ տրանսպորտում սպառվող էներգիայի առնվազն 10 տոկոսը պետք է լինեն հողմային, արեգակնային, ջրային, երկրաջերմային և կենսազանգվածի էներգիայի աղբյուրներից ստացված էներգակիրներ:
- 9) Կարևորվում է նաև ջրածնային շարժիչներով ավտոտրանսպորտի զարգացման հնարավորությունների հետազոտումը՝ ջրածնի ստացման ենթակառուցվածքների ստեղծման նպատակով ապագայում ստեղծվող էլեկտրաէներգետիկ հզորությունների օգտագործմամբ:
- 10) Էներգախնայողության ներդրման նպատակն է նվազեցնել էներգահամակարգի կախվածության աստիճանը ներկրվող վառելիքաէներգետիկ ռեսուրսներից, կրճատել ջերմոցային գազերի արտանետումները էներգախնայողության բարելավման միջոցով, մեծացնել պետական և մասնավոր հատվածի ներդրումները շենքերի էներգախնայողության ապահովման ոլորտում, էներգահամակարգի սարքերի ու սարքավորումների վերազինման ճանապարհով նվազեցնել կորուստները և բարձրացնել էներգաարդյունավետության ու հուսալիության աստիճանը, ինչպես նաև էներգախնայողությունը դարձնել տնտեսության այլ ճյուղերում

իրականացվող պետական ծրագրերի անբաժանելի մաս, իսկ պետական աջակցության շնորհիվ ապահովել մասնավոր կապիտալի ներգրավումը էներգախնայողության ոլորտ:

11) Առաջնորդվելով միջազգային լավագույն փորձով և առաջադեմ տեխնոլոգիաներով՝ մշակել Հայաստանի Հանրապետության էներգետիկ հաշվեկշռի կազմման մեթոդաբանություն և յուրաքանչյուր տարի կազմել հանրապետություն ներկրվող, երկրում արտադրվող և սպառման ոլորտ տեղափոխված բոլոր տեսակի էներգիաների էներգետիկ հաշվեկշիռը:

12) Հստակեցնել էներգատեղակայանքների, շենքերի և կառուցվածքների էներգետիկ փորձաքննության մեխանիզմները:

13) Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտի պետական քաղաքականությունն ուղղել էներգատար համապատասխան ճյուղերում էներգախնայողությունը և էներգաարդյունավետությունը ապահովելուն:

14) Սահմանել էներգասպառող սարքերի, սարքավորումների և արտադրանքի շրջանառության կարգը, այդ թվում դրանց փոխարինող էներգաարդյունավետ արտադրանքի հետագա օգտահանումը ներքին սպառման շուկայում:

15) Հաղթահարել ֆինանսական շուկայի ռիսկային խոչընդոտները, որոնք թույլ չեն տալիս առևտրային բանկերի մասնակցությունը էներգախնայողության ոլորտում:

16) Ցուցադրել շենքերում էներգախնայողության շահավետությունը ողջամիտ ներդրումների պարագայում:

17) Խթանել էներգախնայողության պահանջարկը շենքերում, մեծացնել առևտրային բանկերի իրազեկումը և հմտությունները էներգախնայողության վարկավորման հարցերում:

18) Ձերմաէներգետիկ հզորությունների սերնդափոխությունն իրականացնել՝ ներդնելով զագատուրբինային և համակցված ջերմային և էլեկտրական էներգիայի արտադրության (կոգեներացիոն) համակարգեր, որոնք կգործեն մրցակցային պայմաններում:

19) Մշակել էներգախնայողության և էներգաարդյունավետության, վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործման և շրջակա միջավայրի վրա ներգործության ստանդարտները և ապահովել դրանց հաստատումը:

20) Զարգացած երկրների գիտատեխնիկական, ֆինանսական և կարողությունների հզորացման օժանդակությամբ, մինչև 2016թ. մշակել առաջարկություններ (ազգային համատեքստին համապատասխան մեղմման գործողություններ)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 10.11.2011թ. ընդունված թիվ 1594-Ն որոշմանը համապատասխան:

21) Պետության կողմից պետք է խրախուսվի սեփական կարիքների համար արևային էներգիայի օգտագործմամբ (ֆոտոէլեկտրական և ջրատաքացուցիչ, այդ թվում արեգակից փոխանցված ճառագայթների խտացուցիչ համակարգերի միջոցով) և կենսազանգվածի ու երկրաջերմային էներգիայի կիրառմամբ ոչ ցանցային, ինչպես նաև էներգախնայողության ոլորտում համապատասխան ծրագրերի իրականացումը:

22) Մշակել, ընդունել և գործողության մեջ դնել էներգաարդյունավետության և էներգախնայողության նվազագույն պահանջներ ապահովող ազգային ստանդարտներ:

23) Ուսումնասիրել Հայաստանի Հանրապետությունում վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության ոլորտում արդեն առկա դրական փորձը և երկրում այդ օրինակների տարածման հնարավորությունը:

24) Իրականացնել գործող և կառուցվող փոքր ՀԷԿ-երի մոնիթորինգ, գնահատելով առկա և հնարավոր էկոլոգիական ռիսկերը և մշակել ու կատարել միջոցառումներ դրանք նվազեցնելու ուղղությամբ:

III. ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՅՈՒՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

1) Հայաստանի անձեռնմխելի ջրային պաշարների պահպանում.

ա. համադրել գոյություն ունեցող առկա և օգտագործմանը տրամադրվող ջրային ռեսուրսների չափաքանակները՝ ջրի առաջարկի ու պահանջարկի գնահատում:

2) Ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման հիմնական 4 սկզբունքների կիրառում՝

ա. քաղցրահամ ջուրը սպառվող և խոցելի ռեսուրս է, կյանքի պահպանման, զարգացման ու շրջակա միջավայրի համար ունի կենսական կարևորություն,

բ. ջրային ռեսուրսների կառավարումն ու օգտագործումը պետք է հիմնվի մասնակցային (ջրօգտագործողներ, հանրություն, որոշում կայացնողներ) մոտեցումների վրա,

գ. կանայք կարևոր դեր են խաղում ջրային ռեսուրսների օգտագործման, կառավարման ու պահպանման բնագավառում,

դ. ջուրն ունի սոցիալական, բնապահպանական և տնտեսական արժեք, և պետք է դիտարկվի որպես տնտեսական ապրանք:

3) Ազգային ջրային պաշարի կայուն կառավարում՝ ազգային ջրային պաշարի պահպանմանն ու ավելացմանը, ջրային ռեսուրսների ամբարմանը, բաշխմանն ու կայուն օգտագործմանը նպատակաուղղված միջոցառումների իրականացում:

4) Ջրհեղեղների ու երաշտների կառավարում ու դրանց հետևանքների վերացում: Ջրհեղեղների ու երաշտների աղետաբեր երևույթներից խուսափելու և դրանց հետևանքների վերացման կառավարման համակարգի ստեղծում:

5) Կենցաղային և արտադրական կեղտաջրերի հեռացման ու մաքրման համակարգի ստեղծում և զարգացում, մաքրման նոր կայանների կառուցում:

6) Բնակչությանը շուրջօրյա և որակյալ խմելու ջրով մատակարարման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների և կառավարման համակարգի զարգացում՝ ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործում:

7) Ջրի խնայողության ապահովում.

ա. ջրի խնայողության վերաբերյալ տեղեկատվական, ուսուցողական և կրթական ծրագրերի իրականացում, համապատասխան նյութերի մշակում, հրատարակում ու տարածում,

բ. ջրախնայող տեխնոլոգիաների (կաթիլային ոռոգում, անձրևացում և այլն) ներդրում ոռոգման բնագավառում,

գ. ձկնաբուծարաններում, արդյունաբերական բնագավառներում ջրի շրջանառու կամ փակ համակարգերի ներդրում

դ. ջրի կորուստների նվազեցում,

ե. ջրային համակարգերի փուլ առ փուլ վերականգնում ու պահպանում,

զ. գետավազաններում կայուն և բարենպաստ էկոլոգիական իրավիճակի ապահովման միջոցառումների իրականացում:

8) Ջրային էկոհամակարգերի կայուն կառավարում՝

ա. էկոլոգիական թողքերի հաշվարկման մեթոդաբանության վերանայում և

բ. բնական ջրահոսքերում անհրաժեշտ բնապահպանական թողքերի ապահովում,

գ. Հայաստանի Հանրապետության բոլոր (6) ջրավազանների համար ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան ջրավազանային կառավարման պլանների կազմում և հաստատում,

դ. ջրային էկոհամակարգերի կենսաբազմազանության պահպանության միջոցառումների մշակում:

9) Ջրային ռեսուրսների բնական հոսքի հաշվառման իրականացում, կիրառելի ժամանակակից մոտեցումներն ու մեթոդները՝

ա. տեղումների, գոլորշիացման և հողաշերտի ներծծման տվյալների միջոցով յուրաքանչյուր գետավազանում առաջացող ջրային ռեսուրսների բնական հոսքի հաշվառում:

- 11) Ջրօգտագործման ամսական փաստացի հոսքի հաշվառում:
- 12) Ջրօգտագործման թույտվություններ տալու ժամանակ հստակ պահպանել ՀՀ Ջրային օրենսգրքով և Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին ՀՀ օրենքով սահմանված ջրօգտագործման առաջնահերթությունները:
- 13) Ուժեղացնել վերահսկողությունը ջրօգտագործման թույտվությունների (ՋՕԹ) պայմանների կատարման վերաբերյալ:
- 14) Բարձրացնել հասարակության մասնակցության աստիճանը ՋՕԹ-ի տրման գործընթացում,
- 15) Ջրավազանային կառավարման պլանների իրականացման օրենսդրական ու կառավարող մեխանիզմների ստեղծում, ջրավազանային տարածքային կառավարման մարմինների հզորությունների զարգացում:

IV. ԹՎՓՈՆՆԵՐԻ ԿԱՅՈՒՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Թափոնների գործածության ոլորտում անհրաժեշտ է շարունակել ներդնել քաղաքականության հետևյալ հիմնական ուղղությունները.

- 1) հասարակության կայուն զարգացումն ապահովելու նպատակով հասարակության էկոլոգիական և տնտեսական շահերի գիտականորեն հիմնավորված գույակցումը,
- 2) թափոնների առավելագույն օգտագործման և դրանց առաջացման նվազեցման համար տնտեսական, սոցիալական և իրավական պայմանների ապահովումը,
- 3) թափոնների գործածության ոլորտում գործունեության տնտեսական կարգավորման մեթոդների կիրառումը՝ թափոնների քանակների կրճատման նպատակով, և դրանց ներառումը տնտեսության շրջանառության մեջ,
- 4) թափոնների առաջացման կանխարգելումը և կրճատումն ու առաջացման աղբյուրներում թափոնների վնասազերծումը (վտանգավորության դասի նվազեցում),
- 5) թափոնների քանակների կրճատման նպատակով նյութահումքային ռեսուրսներ համարվող թափոնների համալիր օգտահանումը,
- 6) թափոնների գործածության ընթացքում լավագույն հասանելի տեխնոլոգիաների կիրառումը,
- 7) արտադրողների ընդլայնված պատասխանատվության սկզբունքները, այն է՝ ապրանքներ արտադրողները, ներմուծողները պարտավոր են ապահովել այդ ապրանքների օգտագործումից առաջացած թափոնների օգտահանումը,
- 8) կիրառել միջազգային դրական փորձը և ընդլայնել ձևավորված դրական ազգային փորձը.

ա. կենցաղային թափոնները տարանջատված հավաքելու, վերամշակելու ու օգտագործելու ուղղությամբ,

բ. խթանել «ինդուստրիալ էկոհամակարգերի» ձևավորված դրական միջազգային փորձի կիրառումը, երբ տարբեր ընկերություններ/արտադրական ձեռնարկություններ համագործակցում են բնական ռեսուրսները համատեղ, համալիր, խնայողաբար օգտագործելու, առաջացող թափոնները առավելագույնս օգտագործելու նպատակով,

9) նախատեսել թափոնակուտակիչների (ներառյալ համայնքային աղբավայրերը) վտանգավորության մակարդակը բնութագրող ցուցանիշների մշակում և ներդնում,

10) տե՛ս⁵

⁵ Համաձայն հասարակական կազմակերպությունների կարծիքի, ոլորտում օրենքով համակարգային իմաստով պատասխանատու պետական մարմինը հստակեցված չէ և արդյունավետ վերահսկողություն ապահովելու նպատակով հարկավոր է հստակեցնել համապատասխան օրենսդրական պահանջների կատարման համար պատասխանատու պետական մարմինը:

V. ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

- 1) Օրգանական գյուղատնտեսության մասին օրենքի ու ենթաօրենսդրական ակտերի համապատասխանեցում միջազգային օրենսդրության սկզբունքներին:
- 2) Օրգանական գյուղատնտեսության արտադրության, սերտիֆիկացման և շուկայավարման մասին ուսումնական դասընթացների իրականացում:
- 3) ՀՀ գյուղատնտեսության նախարարության գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների մասնագետների վերապատրաստում՝ օրգանական արտադրության կազմակերպման, ինչպես նաև սերտիֆիկացման և հետերքահավաքի կազմակերպման թեմաներով:
- 4) Օրգանական արտադրանքի արտադրության և շուկայավարման վերաբերյալ սեմինարների ու քննարկումների, շուկայավարման խորհրդատվության կազմակերպում, միջազգային տոնավաճառներին մասնակցության խթանում:
- 5) Պայքար տեղական շուկայում օրգանական, «բիո» կամ «էկո» սննդամթերքի անօրինական մակնշման դեմ:
- 6) Անմշակ հողերի օրգանական արտադրության մեջ օգտագործման խթանման նպատակով միջոցառումների իրականացում:
- 7) Պիլոտային ցուցադրական օրգանական արտադրության տնտեսությունների հիմնում:

VI. ԿԱՅՈՒՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՀՀ զբոսաշրջության ոլորտը կարգավորող օրենքը լրացնել հետևյալ հարցերը կարգավորող դրույթերով.

- 1) Զբոսաշրջային օպերատորների միասնական ռեեստրի ստեղծումը և վարումը, ընդ որում այդ գործառույթն իրականացնում է տվյալ ոլորտի պետական լիազոր մարմինը, իսկ ոլորտում գործունեություն ծավալելու մտադրություն ունեցող սուբյեկտի համար նշված ռեեստրին օրենքով նախատեսված տեղեկությունները տրամադրելը պարտադիր է ու հանդիսանում է համապատասխան իրավունք ստանալու նախապայմաններից մեկը:
- 2) Արտագնա տուրիզմի ոլորտում գործող զբոսաշրջային օպերատորների և գործակալների միության առկայությունը, որը ոչ առևտրային կազմակերպություն է՝ հիմնված ոլորտում գործունեություն ծավալող սուբյեկտների պարտադիր անդամակցության վրա, և որը նման կարգավիճակ է ստանում կառավարության որոշման հիման վրա: Այն նպատակ է հետապնդում զբոսաշրջիկներին օգնություն տրամադրել այն դեպքերում, երբ զբոսաշրջային օպերատորը չի կարողանում իրականացնել պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ապահովում է զբոսաշրջային օպերատորի նկատմամբ ներկայացված ապահովագրական հատուցման, բանկային երաշխիքի կամ հենց գործակալությանը ներկայացվող պահանջի իրավունքի բավարարումը:
- 3) Հատկապես արտագնա տուրիզմի ոլորտում գործող կազմակերպություններին ներկայացնել բավականին լուրջ գույքային և ֆինանսական պահանջներ՝ պայմանավորված իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում համապատասխան հատուցում տրամադրելու պարտավորությամբ և նպատակ ունենալով նրանց մոտ ապահովելու նման ունակություն:
- 4) Առանձնակի կարևորություն են ներկայացնում զբոսաշրջիկների անվտանգության հետ կապված հարաբերությունների կարգավորումները, մասնավորապես այն, որ բացի հնարավոր վտանգների մասին ժամանակին և պատշաճ կերպով զբոսաշրջիկներին տեղեկացնելու զբոսաշրջային օպերատորների համար պարտականություն սահմանելուց, կան դրույթներ,

որոնք ցույց են տալիս, թե պետական որ մարմինն է պատասխանատու իրենց երկրի տարածքում գտնվող զբոսաշրջիկների անվտանգության համար: Այդ դեպքում դա համապատասխան մասնագիտացված պետական մարմինն է, իսկ այլ երկրում գտնվող իրենց քաղաքացի-զբոսաշրջիկների անվտանգության ապահովման պարտականությունը, այլ երկրում արտակարգ իրավիճակ ծագելու պարագայում, կրում է հենց պետությունը. ոչ թե զբոսաշրջային օպերատորը կամ զբոսաշրջային գործակալը, կամ ոլորտի պետական լիազոր մարմինը, այլ հենց պետությունը:

VII. ԿԱՅՈՒՆ ՔԱՂԱՔՆԵՐ/ ԿԱՆԱՉ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

1) Խուսափել խոշոր քաղաքների ուռճացումներից, վարելով փոքր և միջին քաղաքների կառուցապատման ինտենսիվացման քաղաքականություն, հիմնված կանաչ ճարտարապետության սկզբունքների վրա, նախատեսելով.

- տարածական զարգացման ամբողջական մոտեցման կիրառում՝ երկարաժամկետ կտրվածքով և պլանավորման ինտեգրված մոտեցումով, ներգրավելով բոլոր շահագրգիռ կողմերին քաղաքների և տարածաշրջանների պլանավորման և կառավարման գործընթացներում,

- անկառավարելի ուրբանիզացման հնարավոր սպառնալիքների չեզոքացման նպատակով տարածական պլանավորման փաստաթղթերի բազայի հետևողական համալրում,

- բազմաֆունկցիոնալ թաղամասերի շինարարության և կառուցապատման խտության համապատասխան մակարդակների ապահովման միջոցով քաղաքների ընդարձակման կանխարգելում, ռիսկի հակված տարածքներում բնակավայրերի տարածման նվազեցում,

- բնակավայրերի և դրանց վարչական տարածքների էկոլոգիական և կայուն զարգացման համատեքստում վերակառուցման, «կանաչ» ճարտարապետության սկզբունքներին համահունչ շենքերի նախագծման նորմերի ու ստանդարտների մշակում,

- քաղաքների ճարտարապետական և բնական ժառանգության վերականգնման, պատմական քաղաքների կառավարման և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման ուղղությամբ միջոցառումների մշակում,

- կայուն քաղաքների, կանաչ ճարտարապետության վերաբերյալ կրթության, հանրային իրազեկման և հանրության մասնակցության համար համալիր միջոցառումների իրականացման աշխատանքների ակտիվացում,

- քաղաքների կայուն զարգացման չափանիշների և գնահատման մեթոդաբանության մշակում և ներդրում, բնակավայրերի էկոլոգիական կարգանիշի (ռեյտինգների) սահմանման կարգի մշակում, երկրի տարածքի ըստ «կանաչ տարածաշրջանների» գոտիավորում:

2) Քաղաքաշինական միջավայրի ճարտարապետա-գեղագիտական հատկանիշների և լանդշաֆտային պլանավորման կազմակերպում, պահպանում ու զարգացում, որոնց հիմնական տարրերին ներկայացվող պահանջներն ու պայմանները պետք է ներառեն՝

- լանդշաֆտային պլանավորման գործընթացի ինտեգրում՝ հատկապես քաղաքային մշակութային լանդշաֆտների, դեզրադացված լանդշաֆտների, ինչպես նաև բնապահպանական տեսանկյունից արժեքավոր և խոցելի տարածքների համար,

- հանրային օգտագործման կանաչ գոտիների ստեղծում, պահպանում ու բարելավում, որոնք կպաշտպանեն քաղաքը անբարենպաստ կլիմայական պայմաններից և կծառայեն մարդու հանգստի և կենսունակության բարձրացման համար,

- կանաչ գոտիների զարգացում՝ փակ աղբավայրերի կամ նախկին արդյունաբերական տարածքների վերականգնման, կանաչապատման միջոցով, ձեռակերտ լանդշաֆտների ներդաշնակության ապահովում,

- կանաչ ճարտարապետության մշակույթի սերմանում՝ շենքերի և կառույցների հորիզոնական և ուղղահայաց մակերեսների կանաչապատման հնարավոր միջոցառումների իրականացման, այդ թվում՝ կանաչ տանիքների, պատեր-սիգամարգերի, կանաչապատ պարիսպների, կանաչ տարածքները խնամող համակարգերի ստեղծման միջոցով:

3) Իրականացնել կլիմայի փոփոխությանն առնչվող հարմարվողականության քաղաքաշինական միջոցառումներ, այդ թվում՝

- բնակչության առողջությանն ուղղված քաղաքաշինական բնույթի հարմարվողական միջոցառումներ, այդ թվում՝ «ջերմային ալիքների» ռիսկերի կանխարգելում, շենքերում ու սենքերում ջերմաստիճանային բարենպաստ պայմանների ստեղծում, մասնավորապես ջերմամեկուսացման ու օդորակման միջոցով, ջրամատակարարման ու մաքուր ջրի մատչելիության ապահովում,

- բնապահպանական կարողությունների զարգացում և արտանետումների վերահսկման բարելավում, ի թիվս այլ հարցերի՝ բնական աղետների հակազդում,

- ինժեներական ենթակառուցվածքները նախագծել, հաշվի առնելով յուրաքանչյուր թաղամասում վերականգնվող էներգիայի տեղային աղբյուրների օգտագործման հնարավորությունները,

- տարածքների կառուցապատումն իրականացնել գեղագիտական բարձր որակ ունեցող, ներդաշնակ ու հարմարավետ միջավայր ստեղծող կառույցներով, ընտրելով շինարարության, այդ թվում՝ վերականգնվող էներգառեսուրսների օգտագործման, էներգախնայողության ու էներգետիկ տեսանկյունից արդյունավետ տեխնոլոգիաներ, էկոլոգիապես մաքուր շինանյութեր ու կոնստրուկցիաներ,

- տարածաշրջանում գոյություն ունեցող մարդու և շրջակա միջավայրի համար անվնաս և ավանդական բնական շինանյութերի օգտագործում:

4) Զարգացնել արդյունավետ, մթնոլորտի վրա նվազագույն ազդեցությամբ և ավելի անվտանգ հասարակական տրանսպորտի տեսակներ՝ էկոլոգիապես արդարացված ճանապարհային ցանցերի զարգացման հետ մեկտեղ, այդ թվում.

- տրանսպորտի զարգացման ռազմավարական ուղղությունները պետք է ուղղված լինեն հասարակական տրանսպորտի արդյունավետ խթանմանը, մասնավոր տրանսպորտաձևերի օգտագործման կախվածության նվազեցմանը, հետիոտնի և հեծանիվային ճանապարհների ցանցի զարգացմանը և անվտանգության ապահովմանը,

- հետիոտնային և հեծանիվային երթևեկության գրավչությունը խթանելու նպատակով տրանսպորտի կառավարման ռազմավարության մեջ կանաչ ենթակառուցվածքների ինտեգրում,

- մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուր հանդիսացող տրանսպորտային միջոցների արտանետումների նվազեցման միջոցառումների մշակում և կիրառում, այդ թվում՝ էներգաարդյունավետ և սակավ արտանետումներով «կանաչ» տրանսպորտային փոխադրումներ ապահովող հասարակական էլեկտրատրանսպորտի զարգացման միջոցով:

5) Զարգացնել կոշտ կենցաղային թափոնների վերամշակման ենթակառուցվածքներ, այդ թվում.

- էներգիայի արտադրման համար թափոնների օգտագործման տեխնոլոգիաների ներդրում, աղբի տեսակավորման և վերամշակման ռացիոնալացման հետ կապված խնդիրների ինտեգրված լուծումներ,

- սանիտարական մաքրման արդյունավետ համակարգի ներդրում, ժամանակակից պահանջներին համապատասխանող աղբավայրերի, աղբի վերաբեռնման կայանների ստեղծում, գործող աղբավայրերի փակման (ռեկուլտիվացիայի) կամ վերակառուցման ծրագրերի իրականացում:

6) Խթանել ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարումը՝

- բնակավայրերի խմելու ջրի և հոսքաջրերի մաքրման կայանների վերականգնում/ստեղծում, ջրի խնայողական և կրկնակի օգտագործում, այդ թվում՝ կանաչ տարածքների որոգման նպատակով անձրևային ջրի, կեղտաջրերի հավաքման և մաքրման համակարգի շահագործում, դրենաժային համակարգի բարեկարգում:

- բնակավայրերի մարդաշատ վայրերում խմելու ջրի կարգավորվող ցայտադրյունների տեղադրում:

7) Ապահովել համաքաղաքային նշանակության սոցիալական, ինժեներատրանսպորտային, հանրային նշանակության կանաչ տարածքների և քաղաքային տնտեսության այլ ենթակառուցվածքների պլանավորման, զարգացման և գործարկման միասնականությունը:

8) Կազմակերպել համայնքային և համաքաղաքային մրցույթներ հետևյալ թեմաներով՝ կանաչ շենք-շինություն, կանաչ պատշգամբ, կանաչ փողոց, բակ, կանաչ հիմնարկ/ ձեռնարկություն (թանգարան, գրադարան, ուսումնարան, համալսարան, դպրոց, սրճարան և այլն):

9) Իրականացնել հետևյալ խնդիրների լուծումը.

- ապահովել տարածական պլանավորման փաստաթղթերի լիարժեք բազայի ձևավորումը՝ ազգային, ռեգիոնալ (միկրոռեգիոնալ) և, հատկապես, տեղական մակարդակներում,

- բնակավայրերի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի միասնական կադաստրի ձևավորում, քաղաքաշինական ընթացիկ ծրագրերի և իրականացվող կառուցապատման թափանցելիության ապահովում, հերթապահ քարտեզների վարում,

- քաղաքաշինական գործառույթների նկատմամբ խստացված վերահսկողության իրականացում,

- բնակավայրերում ձևավորված պատմամշակութային ժառանգության և հանրային օգտագործման կանաչ տարածքների պահպանում,

- քաղաքաշինական իրավախախտումների հանդեպ վարչական և քրեական օրենսդրական դրույթների մանրամասնում, հստակեցում և խստացում:

10) Խրախուսել տեղական ինքնակառավարման մարմինների միջև հաստատուն կապը՝ փոխանակելով կայուն քաղաքների պլանավորման և կառավարման վերաբերյալ գաղափարները և դրական փորձը:

11) Հայաստանում «կայուն» կամ «էկո», «խելացի» քաղաքների միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա, «կանաչ ճարտարապետության» հիմնական սկզբունքների կիրառմամբ, նախատեսվում է մշակել Գորիս քաղաքի պիլոտային նախագծի հայեցակարգը և դրա իրագործման միջոցառումների ծրագիրը:

12) ՄՄԿ-ի Եվրոպական Տնտեսական Հանձնաժողովի և մի շարք այլ միջազգային հաստատությունների հետ համագործակցությամբ, քաղաքային կայուն զարգացման լավագույն փորձի փոխանակման նպատակով, մշակել «Խելացի քաղաքային լուծումներ անցումային և զարգացող երկրների համար» ծրագիրը, որի նպատակն է ցույց տալ «Խելացի քաղաքների» հայեցակարգային և գործնական կիրառելիության մոտեցումը անցումային երկրների սոցիալ-տնտեսական պայմաններում և նպաստել տեխնոլոգիական և քաղաքաշինական արդյունավետ լուծումներին:

13) ՀՀ քաղաքաշինության բնագավառի մոնիթորինգի և վերահսկման համակարգի առավել արդյունավետ գործունեության համար հարկ է օրենսդրորեն ավելի հստակ ամրագրել որոշ դրույթներ՝

- ավելի հստակ տարանջատել քաղաքաշինական գործունեություն իրականացնողի ու վերահսկողի լիազորությունները,

- նախատեսել վերահսկման գործընթացի առավել թափանցիկ և հասարակության առջև հաշվետու լինելու նոր մեխանիզմներ:

**VIII. ԱՆՏԱՌՆԵՐԻ ԿԱՅՈՒՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ,
ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ**

- 1) Իրականացնել դեգրադացված անտառների վերականգնման և անտառապատ տարածքների ավելացմանն ուղղված աշխատանքներ:
Օպտիմալ անտառապատվածության հասնելու նպատակով մշակել կարճաժամկետ, միջնաժամկետ, երկարաժամկետ ծրագրեր ու գործողությունների պլան՝ իր ժամկետներով, այն դարձնել հիմք REDD+-ի ու NAMA-ի շրջանակում անտառապատման նախագծեր իրականացնելու համար:
- 2) Զարգացնել տնկարանային տնտեսությունները՝ անտառվերականգնման և անտառապատման աշխատանքների ծավալներն ընդլայնելու, պաշտպանական, հակաէրոզիոն անտառաշերտեր ստեղծելու, կատարվող աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:
- 3) Իրականացնել անտառների պետական հաշվառում և կադաստրի վարում: Անտառների պետական հաշվառումն և կադաստրի վարումն ՀՀ Անտառային օրենսգրքով ամրագրված հստակ պահանջ է, որը, սակայն, գործնականում չի ապահովվում: Հնարավոր լուծումը՝ իրավասու մարմնի նկատմամբ վերոնշյալ պահանջը չկատարելու համար Օրենսգրքում որոշակի պատասխանատվություն սահմանելն է:
- 4) Ավարտին հասցնել անտառկառավարման պլանների մշակման աշխատանքները: Մասնավորապես, իրականացնել «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կողմից կառավարվող արգելավայրերի սահմանագատում, դրանց համար կառավարման պլանների մշակում:
- 5) Իրականացնել անտառային համակարգի տեխնիկական վերազինում՝ մասնավորապես տրամադրել համազգեստ, զենք, տրանսպորտային միջոցներ:
- 6) Նախաձեռնել ու կազմակերպել տարածաշրջանային, ներառյալ անդրսահմանային, համագործակցություն՝ անտառների հիվանդությունների, վնասատուների ու հրդեհների դեմ համատեղ պայքար իրականացնելու համար:
- 7) Բարելավել անտառային ոլորտի օրենսդրական դաշտը:
- 8) Ավելացնել անտառային ոլորտի արտաբյուջետային դրամական մուտքերը:
- 9) Անտառային ոլորտի վերաբերյալ հասարակության իրազեկման բարձրացում:
- 10) Իրականացնել անտառային ոլորտի աշխատողների վերապատրաստում, խթանել երիտասարդ մասնագետների պատրաստման գործընթացը:
- 11) Կլիմայի փոփոխության նկատմամբ անտառների հարմարվողականության բարձրացում:
- 12) Անտառների արտադրողականության բարձրացում, անտառածածկ տարածքների ավելացում, օրգանական ածխածնի կուտակման ծավալների մեծացում, երկրի անտառների և անտառային հողերի ամբողջական գույքագրման իրականացում:
- 13) Անտառների վիճակի և տարածվածության վերաբերյալ ամբողջական տեղեկատվության առկայություն, անտառների կայուն կառավարման համար Համապարփակ տվյալների բազայի ստեղծում:
- 14) Անտառային ոլորտի զարգացում, կայուն կառավարման ապահովում, կարճաժամկետ և երկարաժամկետ պլանավորման արդյունավետության բարձրացում:
- 15) Անտառային տնտեսության վարման արդյունավետության բարձրացում, անտառների վիճակի բարելավում, արտադրողականության բարձրացում:
- 16) Անտառային մոնիթորինգի իրականացման արդյունավետության բարձրացում:
- 17) Բարձրորակ մասնագետներով ապահովված անտառային տնտեսության ձևավորում:
- 18) Կենսաբազմազանության հիմնախնդիրների լուծման համար կառավարման արդյունավետ մեխանիզմների մշակում և ներդրում:

- տարբեր ոլորտների կառավարման գործընթացներում, ռազմավարություններում, ծրագրերում, պլաններում կենսաբազմազանության և էկոհամակարգային ծառայությունների գնային արժեքի գնահատման արդյունքների ներառում,

- կենսապաշարների կառավարման համակարգի կատարելագործում, որսատնտեսությունների ստեղծում, կայուն և անվնաս ձկնաբուծության իրականացում,

- ԲՀՊՏ-ների կառավարման բարելավում, այդ թվում մասնակցային կառավարման միջոցով կենսաբազմազանության և էկոհամակարգային ծառայությունների պահպանման իրականացում,

- էկոհամակարգային ծառայություններ մատուցողների և ստացողների միջև տնտեսական հարաբերությունների ձևավորում,

- կենսաբազմազանության համար բնակմիջավայր հանդիսացող տարածքների կառավարման բարելավում, հատկապես հողերն անապատացումից պահպանման, այդ երևույթի վտանգավոր հետևանքների կանխատեսման, կանխարգելման կամ մեղմացման ապահովում,

- կենսաբազմազանության մոնիթորինգի համակարգի կատարելագործում (այդ թվում՝ որսակենդանիների և ձկնատեսակների):

19) Կենսաբազմազանության և էկոհամակարգերին սպառնացող հիմնական վտանգների բացահայտումը և կանխարգելումը.

- խոշոր կաթնասունների պոպուլյացիաների, արժեքավոր ձկնատեսակների, մշակաբույսերի հին ավանդական տորտերի պահպանության և վերականգնման, ինչպես նաև մշակաբույսերի վայրի ցեղակիցների *ex situ* պահպանման ապահովում,

- ֆլորայի և ֆաունայի խոցելի և կարևոր տնտեսական արժեք ունեցող տեսակների պոպուլյացիաների մոնիթորինգի իրականացում,

- կենսաբազմազանության պետական հաշվառման և գույքագրման աշխատանքների իրականացում,

- կենսաբազմազանության վիճակի բարելավում և էկոհամակարգային ծառայությունների որակական և քանակական հատկանիշների պահպանում՝ լանդշաֆտների տարբեր տիպերը (ալպյան մարգագետիններ, անտառներ, տափաստաններ, կիսաանապատներ, ջրա-ճահճային էկոհամակարգեր և աղի ճահիճներ) ներառող նոր ԲՀՊՏ-ների ստեղծում,

- ԲՀՊՏ-ների կենսաբազմազանության միասնական տվյալների բազայի ստեղծում և այդ տվյալների մատչելիության ապահովում,

- էկոցանցի ստեղծման նպատակով կենսաբազմազանության պահպանության համար առանցքային նշանակություն ունեցող տարածքների գույքագրման և որոշման ուղղությամբ աշխատանքների իրականացում,

- ջրա-ճահճային ու անտառային էկոհամակարգերի և դրանց բիոտիկ և աբիոտիկ բաղադրիչների պահպանման և վերականգնման ապահովում,

- կլիմայի փոփոխության նկատմամբ լանդշաֆտների և դրանց բաղադրիչների ադապտացիոն մեխանիզմների ուժեղացման և հետևանքների մեղմացման պայմանների ստեղծում, գործողությունների ծրագրի մշակում և իրականացում:

20) Կենսաբազմազանության կառավարման միջոլորտային հարաբերությունների կատարելագործումը.

- տարբեր ոլորտների քաղաքական փաստաթղթերում և ծրագրերում հաշվի առնել կենսաբազմազանության և էկոհամակարգային ծառայությունների պահպանության հարցերը,

- առանցքային էկոհամակարգերի և կենսաբազմազանության վրա տնտեսության տարբեր ոլորտների (հանքարդյունաբերություն, էներգետիկա, քաղաքաշինություն, գյուղատնտեսութ-

յուն, զբոսաշրջություն) աղդեցության գնահատում, դրա նվազեցմանն ուղղված գործողությունների իրականացում,

- հանքարդյունաբերության հետևանքով ՀՀ աղտոտված տարածքների լեռնատեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիայի իրականացում, տեխնաձին աղտոտված հողերի վիճակի դիտացանցի կազմակերպում, համապետական միասնական տվյալների բազայի և էլեկտրոնային քարտեզների ստեղծում,

- ԲՀՊՏ-ների բնական համակարգերի և օբյեկտների վրա էկոզբոսաշրջության և ռեկրեացիայի թուլատրելի ծանրաբեռնվածության որոշում, գիտականորեն հիմնավորված էկոլոգիական զբոսաշրջության կազմակերպում:

21) Կենսաբազմազանության կայուն օգտագործման միջոցով բնակչության համար սոցիալական և տնտեսական օգուտների ստեղծումը.

- անտառամերձ համայնքների համար անտառային պաշարների երկարաժամկետ կայուն կառավարման սկզբունքների վրա հիմնված անտառօգտագործման ծրագրերի մշակում և իրականացում,

- համայնքային և մասնավոր սեփականության տարածքներում կենսաբազմազանության պահպանության խրախուսման վերաբերյալ մեխանիզմների մշակում և ներդրում,

- տեղական համայնքներում էկո- և ագրոզբոսաշրջության զարգացման ծրագրերի մշակում և իրականացում:

22) Կենսաբազմազանության հիմնախնդիրների վերաբերյալ բնակչության լայն շերտերի իրազեկվածության բարձրացումը.

- կենսաբազմազանության պահպանության և կայուն օգտագործման վերաբերյալ հանրային իրազեկության բարձրացման և տեղեկատվության տարածման ծրագրի պատրաստում և իրականացում,

- Հայաստանի կենսաբազմազանության վիճակի ու խնդիրների մասին, պետական տեղեկատվական համացանցային ռեսուրսի ստեղծում,

- *ex-situ* հավաքածուների նմուշների տվյալների մատչելիությունն ապահովելու համար էլեկտրոնային կայքի ստեղծում,

- կենսաբազմազանության ոլորտում գիտելիքների ձեռքբերման և որակավորման բարձրացման դասընթացների կազմակերպում օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների, գործարարների, լրագրողների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների համար:

23) Կենսաբանական անվտանգության ապահովմանը նպատակաուղղված օրենքի ընդունում:

**IX. «ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ»
ՄԱԿ-Ի ՏԱՄՆԱՄՅԱԿԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՈՐՏՈՒՄ
ՀԵՏԱԳԱ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻՆ**

1) Հայաստանի Հանրապետության բուհ-երում ընդհանուր էկոլոգիայի հիմունքներին նվիրված դասընթացում ընդգրկել նաև «Կայուն զարգացման հիմունքներ» դասընթացը, օգտագործելով ԵՊՀ, ՀՊՄՀ և ՀՀ ԳԱԱ ՅՈՒՆԵՍԿՕ-ի ամբիոնի փորձը:

2) Ավագ դպրոցի դպրոցական առարկայացանկում ընդգրկել «Էկոլոգիայի և կայուն զարգացման հիմունքներ» առարկան՝ նախորդ տարիներին տարբեր առարկաների դասավանդման ժամանակ ստացած հատվածային գիտելիքների ամփոփման և համակարգման նպատակով:

3) Կարևորելով Էկոլոգիական կրթության ու դաստիարակության իրականացումը վաղ հասակից, ներառելով նաև նախադպրոցական հաստատությունները, ընդլայնել այդ ոլորտում ներկայումս կիրառվող պրակտիկան; մանկապատենական ամսագրերում, տարբեր կրթական մրցույթներում ներառել բնապահպանական թեմաներ:

4) Նախաձեռնել ՀՀ քաղաքներում կրթա-ցուցադրական Էկոլոգիական կենտրոնների ստեղծումը, նվիրված կանաչ տնտեսության, կանաչ ճարտարապետության, կայուն բնակավայրերի զարգացման, աղետների ռիսկերի նվազեցման ոլորտներում դրական ազգային և միջազգային փորձի ներկայացմանը: Այդ ուղղությամբ նպատակահարմար է հիմնվել «Օրհուս-կենտրոնների» գործող ցանցի վրա, ինչպես նաև այլ համապատասխան կառույցների (օրինակ, Գյումրի ք. թիվ 1 դպրոցին կից ջերմոցը, Աբովյան ք. Արեգակնային էներգետիկայի պոլիգոնը), ընդլայնելով այդ հաստատությունների հնարավորությունները:

5) Ակտիվացնել գործունեությունը ոչֆորմալ կրթության բնագավառում, մասնավորապես որոշում ընդունող անձերի համար՝ կայուն կառավարման սկզբունքների ձևավորման նպատակով:

6) Նախաձեռնել ՀՀ հանրային հեռուստատեսության ալիքով «Մենք և մեր մոլորակը» (անվանումը պայմանական է) կրթա-ճանաչողական հաղորդաշարի պատրաստումն ու հեռարձակումը:

7) Քննարկել մանկա-պատանեկան հեռուստաալիքի վերականգման հնարավորությունը, որը զգալի հայրենասիրական/դաստիարակչական դեր էր կատարում: Կազմակերպել այդ ալիքով կրթական, մասնավորապես Էկոկրթական հաղորդումների հեռարձակում:

8) Ակտիվացնել ՀՀ մասնակցությունը «Կրթություն հանուն կայուն զարգացման» համաշխարհային գործընթացում՝ ֆորմալ և ոչֆորմալ կրթության ասպարեզում ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Հանուն կայուն զարգացման կրթություն գործողությունների գլոբալ ծրագրի» և «Ճանապարհային քարտեզի» համապատասխան ծավալվող գործունեության ոլորտում դրական փորձի փոխանակման նպատակով:

Նշված ուղղություններով զարգացումների արդյունավետությունն ապահովելու համար անհրաժեշտ կլինի իրականացնել սերտ համագործակցություն ինչպես պետական կառույցների միջև, այնպես էլ հասարակական կազմակերպությունների, գիտակրթական կազմակերպությունների և միջազգային կառույցների հետ:

**X. ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ
ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ,
ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ ԵՎ ՀԱՄԱԹԻՎ**

1) ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից հաստատված Կայուն զարգացման նպատակների իրականացման գործընթացում հաշվի առնել երկրում Հազարամյակի զարգացման նպատակների իրականացման արդյունքում ձեռք բերած փորձը, հատկապես՝

- ուժեղացնել միջսեկտորալ համագործակցությունը հանուն կայուն զարգացման,
- բարձրացնել հանրության իրազեկումը և ապահովել ավելի լայն մասնակցությունը Կայուն զարգացման նպատակների իրականացման գործընթացում:

2) Զարգացնել Կայուն զարգացման համաթվի մեթոդաբանությունը, հաշվի առնելով ներկայումս հաստատված կայուն զարգացման նպատակները, ինչպես նաև աղետների ռիսկերի նվազեցման ցուցանիշները:

3) Նախատեսել միջոցառումներ բնակավայրերի էկոլոգիական կարգանիշի (ռեյտինգների) սահմանման, համակարգի մշակման, ինչը հիմք կհանդիսանա երկիրն ըստ «կանաչ տարածաշրջանների» աշխարհագրական գոտիավորման համար, մասնավորապես ուսումնասիրել և ՀՀ քաղաքների նկատմամբ փորձարկել «Կայուն հասարակության հիմնադրամ» հոլանդական կազմակերպության կողմից մշակված, փորձարկված և 2014թ. հրապարակված «Կայուն քաղաքի համաթիվը»:

4) Հաշվի առնելով, որ վերջին տարիներին միջազգային ասպարեզում զգալիորեն աճել է հետաքրքրությունը վերոհիշյալ հիմնախնդրի նկատմամբ և փորձագիտական հանրության կողմից իրականացվում են բազմաթիվ ու բազմաբովանդակ ուսումնասիրություններ տվյալ ուղղությամբ, (սկսած տեղական նշանակության համաթիվերից մինչև «համաշխարհային կառավարման համաթիվը»), ընդ որում մշակված մեթոդաբանությունները բավականին համահունչ են հայաստանյան տարբերակին, առավել ակտիվացնել Հայաստանում մշակված և փորձարկված մեթոդաբանության միջազգայնացման գործընթացը:

XI. «ԿԱՆԱՉ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ» ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

1) 31 հուլիսի 2014թ. N 32 ՀՀ Կառավարության նիստի արձանագրային որոշմամբ հաստատված «Բաց կառավարման գործընկերություն» ՀՀ երկրորդ՝ 2014-2016 թվականների գործողությունների պլանի կատարման ապահովում:

2) Էկոհամակարգային ծառայությունների գնահատման իրավական և մեթոդաբանական հիմքերի մշակում:

3) Բնական պաշարների օգտագործման քվոտավորում (հանքարդյունաբերություն, ստորգետնյա ջրերի օգտագործում և այլն):

4) Հնարավորության դեպքում պոչամբարների օգտագործում որպես հումք. թափոնների վճարների օպտիմալ դրույքաչափի սահմանում, պարզել յուրաքանչյուր պոչամբարի դեպքում, ինչպիսի մեկուսիչ նյութեր պետք է կիրառել, որոնք կդիմանան ազդեսիվ միջավայրին (պոլիմերային նյութեր, ցեմենտային բլոկից պատեր): Զրային շրջապատույտի նաև ռեկուլտիվացիոն եղանակի կիրառում:

5) Վերականգնվող էներգետիկայի (հատկապես արևային էներգիայի) և էլեկտրական տրանսպորտի և ոչ շարժիչային (հեծանիվ, հետիոտն) երթևեկության ենթակառուցվածքի զարգացման իրավական հիմքերի մշակում և ֆինանսավորման աղբյուրների հայթայթում:

6) Գոյություն ունեցող տնտեսական սպառնալիքների գնահատում և տնտեսական անվտանգության նախապայմանների ու բաղադրիչների ապահովում. պարենային անվտանգություն, էներգետիկ անվտանգություն (ներառյալ հելիոֆիկացիայի ազգային ծրագրի իրագործումը), ժողովրդագրական անվտանգություն, սոցիալական անվտանգություն:

7) ՀՀ կառավարության 2013 թվականի նոյեմբերի 14-ի N 47 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել բնապահպանության ոլորտի նորարարական ֆինանսատնտեսական մեխանիզմների ստեղծման հայեցակարգից բխող խնդիրների իրականացման միջոցառումների կատարման ապահովումը, բնապահպանական (էկոլոգիական) հիմնադրամների համակարգի զարգացման, բնապահպանական և բնօգտագործման վճարների հասցեական օգտագործման ապահովումը:

- 8) Կանաչ տնտեսությունը զարգացնելու գոյություն ունեցող ինստիտուցիոնալ հնարավորությունների ու ռեսուրսների նույնականացում:
- 9) Կառավարության կողմից կանաչ տնտեսության զարգացման վերաբերյալ հաշվետվողականության համակարգի սահմանում:
- 10) Կենցաղային և արտադրական թափոնների վերամշակման հնարավորությունների ներկայացում: Ոչ օրինական աղբավայրերի վերացում:
- 11) Հայաստանի Հանրապետությունում սահմանել գործունեություն ծավալելու թույլտվությունների տրամադրման հստակեցված մեխանիզմ (օրինակ՝ Համալիր թույլտվությունների համակարգի ներդրում):
- 12) Հողային ֆոնդի արդյունավետ օգտագործման և հողի էռոզիայի կանխարգելման ծրագրի մշակում:
- 13) Ռազմավարական նշանակության առանձին ռեսուրսների օգտագործման գծով մշտադիտարկման սահմանում:
- 14) Նվազագույն աշխատավարձի աստիճանական բարձրացում՝ հիմք ընդունելով ՀՀ կողմից միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունները:
- 15) «Ծանր, վնասակար արտադրությունների, աշխատանքների, մասնագիտությունների և պաշտոնների, առանձնապես ծանր, առանձնապես վնասակար արտադրությունների, աշխատանքների, մասնագիտությունների և պաշտոնների ցանկերի, այդ աշխատանքների աշխատաժամերի, ամենամյա արձակուրդների, աշխատավարձերի հաշվարկման մեթոդաբանությունը սահմանող իրավական ակտերի վերանայում և համապատասխանեցում միջազգային չափանիշներին:
- 16) Աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման նորմերը և կանոնները սահմանող իրավական ակտերի համապատասխանեցում միջազգային չափանիշներին, անվտանգության տեխնիկայի վերահսկման ինստիտուցիոնալ համակարգի բարելավում, այդ թվում՝ մասնակցային մոնիթորինգի համակարգի ներդրում/կատարելագործում, դրանցում արհեստակցական միությունների և մասնագիտացված ասոցիացիաների դերի բարձրացումը:
- 17) Աշխատանքի վայրում դժբախտ դեպքերից և մասնագիտական հիվանդություններից պարտադիր ապահովագրության համակարգի ներդրում և կատարելագործում, ինչպես նաև աշխատանքը կորցնելու դեպքում ՀՀ սահմանադրությամբ ամրագրված՝ սոցիալական պաշտպանվածության իրավական երաշխիքների բարելավում:
- 18) Տնտեսության վնասակար ճյուղերում նոր ձեռնարկությունների բացման թափանցիկ գործընթացների ապահովման և թույլտվության ընթացքում համայնքի կարծիքը ներկայացնող ընդհանուր ժողովի որոշման առկայության պարտադիր պահանջը, բնակիչների շահերի պաշտպանության նորմերը, վնասի փոխհատուցման հաշվարկման մեթոդաբանությունը սահմանող իրավական ակտերի վերանայում և համապատասխանեցում միջազգային/եվրոպական ստանդարտներին:
- 19) Տնտեսության վնասակար ճյուղերի արտադրությամբ զբաղվող և խոշոր ձեռնարկությունների համար սահմանել պարտադիր նախապայման ձեռնարկության ռազմավարությունում ունենալ սոցիալական կորպորատիվ պատասխանատվություն սահմանող դրույթ՝ բնապահպանական, համայնքային զարգացման և սոցիալական ծրագրերի իրականացման պորտֆելի և դրանք ոլորտային ՀԿ-ների պատվիրակման սկզբունքի սահմանմամբ:
- 20) Կանաչ տնտեսության վերաբերյալ իրազեկում (դպրոց – բուհ):
- 21) Հատուկ խրախուսանք այն կազմակերպություններին, որոնք օգտագործում են երկրորդական հումք և իրականացնում են անթափոն տեխնոլոգիաների ներդրում/(օրինակ՝ ՀՀ-ում արտադրվում են անվադողեր օգտագործված անվադողերից):

Տնտեսական մեխանիզմներ

- 1) Կանաչ տնտեսությանը խոչընդոտող կարևորագույն բնապահպանական խնդիրների նույնականացում:
- 2) Արտադրական թափոնների և շրջակա միջավայրի համար վնասակար ապրանքների համար բնապահպանական վճարների գանձման մեխանիզմի ներդրում (աղտոտողը վճարում է սկզբունքի ներդրում):
- 3) Հանրային լայն ընդգրկում ունեցող ոլորտների գերակայության հաստատում տնտեսական գործունեության այլ տեսակների նկատմամբ (գյուղատնտեսություն, ջրային տնտեսություն, տուրիզմ և այլն):
- 4) Հանրային կառավարման համակարգում արմատավորել միջազգային պրակտիկայում կիրառվող «կանաչ տնտեսության» կառավարման առավել արդյունավետ մեխանիզմները:
- 5) ՀՀ կառավարությունը խրախուսում է շրջակա միջավայրի կառավարման տնտեսական մեխանիզմների՝ ինչպիսիք են կանաչ հարկերի, վճարների, սուբսիդիաների, դեպոզիտ-վերադարձման, բնություն-արտաքին պարտք հաշվանցման, թույլտվությունների առքուվաճառքի մեխանիզմների ներդրումը, ձգտել դրանց ընդլայնմանը եւ կատարելագործմանը:
- 6) «Կանաչ տնտեսության» զարգացման և դրան միտված առանձին տնտեսական ծրագրերի իրագործումը խթանելու նպատակով առավելագույնս օգտագործել գոյություն ունեցող հարկային և մաքսային արտոնությունները, իսկ անհրաժեշտության դեպքում՝ առանձին ծրագրերի համար դիմել ՀՀ Կառավարությանը՝ լրացուցիչ արտոնությունների տրամադրման հարցով:
- 7) Համաֆինանսավորման մեխանիզմի գործադրման դեպքում առաջնություն տալ այն ծրագրերին, որոնք առավել համահունչ են «կանաչ տնտեսության» զարգացմանը:
- 8) Կանաչ տնտեսության միջոցով Հայաստանում առկա տարածքային զարգացման անհամաչափությունների կրճատման հնարավորությունների բացահայտում և լքված գյուղերի վերաբնակեցման ծրագրի մշակում:
- 9) Երկրում աղքատության կրճատման գործուն միջոցառումների ծրագրի մշակում:
- 10) Կանաչ տնտեսության ռեսուրսների հաշվառում (մարդկային, հանքահումքային, արտադրական, ֆինանսական) և դրանց օպտիմալ ու ռացիոնալ օգտագործման մեխանիզմների մշակում:
- 11) Բնապահպանական վճարների էկոլոգիապես և տնտեսապես հիմնավորված բարձր դրույքաչափերի մշակում և կիրառում:
- 12) Տնտեսական օգուտների և վնասների հաշվեկշռի պարտադիր ներառում՝ տնտեսական և ներդրումային ցանկացած ծրագրի համար:
- 13) Մարդկային զարգացման համաթվի նոր մեթոդաբանության մշակում:
- 14) Հանրային իրազեկում, կրթություն, այդ թվում՝ գիտության, տեխնոլոգիաների, ճարտարագիտության և մաթեմատիկայի ոլորտում անհրաժեշտ հմտություններով մասնագետների պատրաստում:
- 15) Կանաչ տնտեսությունը խթանելու համար միջին մասնագիտական կրթօջախներում և բուհերում ներառել կանաչ տնտեսության մասին գիտելիքների դասավանդում, ներառելով ՀՀ տնտեսության թողարկվող արտադրանքների և ոլորտների մասին պատկերացում տվող կրթություն:
- 16) Էներգիայի այլընտրանքային աղբյուրների կիրառում, այդ թվում՝ ճանապարհային, փողոցային և այգիների լուսավորության համար արևային մարտկոցների կիրառում:
- 17) Օգտագործված նյութերի և թափոնների (ցանկացած տեսակի) վերամշակում, անթափոն տեխնոլոգիաների մշակում/ներդրում, այսինքն նյութերի, մնացորդային դետալների լիարժեք իրացում/վերամշակում:
- 18) Երկրում խթանել այլընտրանքային՝ մասնավորապես քառու էներգիայի ստացումը, այդ նպատակով հողմագեներատորների ներմուծում և տեղադրում:

- 19) Արևային էներգիայով աշխատող պանելային սարքերի ներմուծում և հավաքման արտադրությունների հիմնում Հայաստանի Հանրապետությունում:
- 20) Արևի ճառագայթների կոնցենտրացման բարձր արդյունավետ սկզբունքի վրա հիմնված Հայաստանի Հանրապետությունում մշակված և կիրառված փորձի խրախուսում և ընդլայնում:
- 21) Կանաչ աշխատատեղերի ստեղծում (էներգակիրների խնայողություն, արտադրական թափոնների դասակարգում, այլընտրանքային էներգիայի աղբյուրների օգտագործում):
- 22) Կանաչ տնտեսության հայեցակարգը խթանել փոքր ուղեցույցների հրատարակմամբ ձեռնարկությունների համար:
- 23) Ձեռնարկությունների արդիականացման նպատակով էժան և էքսկյուզիվ վարկերի տրամադրում բանկերի կողմից: Հարցի կարգավորում ԿԲ և ՀՀ կառավարության աջակցությամբ:
- 24) Արտադրողականության և արտահանման խթանումը հնարավորություններ կբացի ձեռնարկությունների համար լինելու ավելի վճարունակ և բարեկամաբար շրջակա միջավայրի հանդեպ:
- 25) Կանաչ տնտեսության ուղղությամբ կազմակերպությունների մոտիվացիայի խթանում՝ պատվոգրեր, պետական գնումներում առավելություն և այլն:
- 26) «Ձեռնարկությունների կանաչեցման» համար կիրառել «Շրջակա միջավայրի կառավարման» համակարգերի պարզեցված ներդրման գործընթացներ և դրանց առկայությունը հիմնավորելու համար ՀԳՀՄ - ՀՀ էկոնոմիկայի նախարարության կամ ՓՄՁ ԶԱԿ-ի հետ կիրականացնի սերտիֆիկատների շնորհում:
- 27) Հատուկ ուշադրություն դարձնել այն առաջարկություններին/միջոցառումներին, որոնք համահունչ են ՀՀ Աղետների ռիսկերի նվազեցման ազգային ռազմավարությանը:

ԱՄՓՈՓ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացված ռազմավարության հայեցակարգը, որը Հայաստանի Հանրապետության իշխանական կառույցների և հանրության տարբեր խավերի միջև կոնսենսուսի արդյունք է, նպատակաուղղված է աջակցելու երկրում ՄԱԿ-ի «Ռիո+20» կայուն զարգացման գազաթնաժողովի հանձնառությունների կատարմանը, ինչպես նաև ստորև ներկայացված մի շարք կարևոր ծրագրերի իրականացմանը և առաջնահերթ հիմնախնդիրների լուծմանը.

- 27.09.2015թ. ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից ընդունված «Մինչև 2030թ. կայուն զարգացման օրակարգ» համաշխարհային ծրագրի, հատկապես կայուն զարգացման նպատակների/թիրախների տեղայնացմանը և իրականացմանը;
- «2016-2020 թթ. Հայաստան – ՄԱԿ զարգացման աջակցության ծրագրի» կատարմանը;
- ՀՀ 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի հայեցակարգի նախագծի արդիականացմանը և ներդրմանը [13];
- Աղետների ռիսկերի ազգային ռազմավարության իրականացմանը;
- Հայաստանի Հանրապետության տարածքի շրջակա միջավայրի հիմնախնդիրների լուծմանը, ինչպես նաև տարածաշրջանային համագործակցությանը՝ նպատակաուղղված ռեգիոնում էկոլոգիական իրավիճակի բարելավմանը;
- Կլիմայի փոփոխության կանխարգելմանն ու ադապտացմանն ուղղված ծրագրերի իրականացմանը:
- Կանաչ էկոնոմիկայի զարգացմանը, կանաչ համաձայնագրի սկզբունքների արմատավորմանը, կանաչ աշխատատեղերի ստեղծմանը;
- Բնակչության կյանքի որակի բարելավմանը և էկոլոգիական աշխարհահայացքի զարգացմանը:

ՀՀ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆՈՒՄ, 05.05.2016 Թ.



Հավելված 1.

Աղյուսակ 1

«ՎԱՇԻՆՏՈՆԻ ՓՈՒՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ» (1979) ԵՎ «ԿԱՆԱԶ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ» (2009) ՄԻՋԵՎ ԵՂԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (UNEP, 2009) 14]

Հիմնական բնութագրերը	«Վաշինգտոնյան համաձայնագրի» զարգացման ընթացիկ մոդելը	«Կանաչ համաձայնագրի» նոր՝ կայուն զարգացման մոդելը
Քաղաքական առաջնային նպատակը	Տնտեսական աճը ընդհանուր իմաստով, չափելի ԱԱՀ-ն: Ենթադրություն, որ աճը բոլոր խնդիրները կլուծի: «Շատը» միշտ «լավ է»:	Կյանքի որակի բարելավման շրջանակներում՝ շեշտը աճից տեղափոխել զարգացման վրա: Գիտակցումը այն բանի, որ աճը ունի նաև բացասական հետևանքներ և «շատը» միշտ չէ, որ «լավ է»:
Զարգացման առաջնային մակարդակը	Համախառն ազգային արդյունքը:	Ավելի ընդհանրական համաթիվ
Մասշտաբ/տարրուկականություն	Խնդիր չէ, քանի որ շուկաները կարող են հաղթահարել ռեսուրսների բոլոր սահմանափակումները՝ նոր տեխնոլոգիաների միջոցով և տվյալ ռեսուրսը մեկ այլ՝ հասանելի ռեսուրսով փոխարինման միջոցով:	Առաջնահերթ խնդիրը, որպես էկոլոգիական կայունության որոշիչ: Բնական կապիտալը և էկոհամակարգերի գործառույթները անսահման կայուն չեն, երկրային էկոհամակարգերը ունեն իրական սահմաններ:
Բաշխումը / աղբյուրությունները	Ազգային քաղաքականության հետ կապված գործընթացները, «ներքև ներծծման» ազդեցությունը: Բարձրացող կապը, կբարձրացնի բոլոր նավակները:	Առաջնահերթ առաջադրանքը, հաշվի առնելով ինչպես շուկայական, այնպես էլ ոչ շուկայական ապրանքները, ծառայությունները և ազդեցությունները: Շեշտը դնել բնական և սոցիալական կապիտալի արժեքների, անհրաժեշտ հաշվման վրա՝ ներդրման էֆեկտիվության ապահովման նպատակով:
Սեփականության իրավունք	Շեշտը՝ մասնավոր սեփականության և ստանդարտ շուկաների վրա:	Շեշտը դնել իրավունքների և պարտականությունների կապի վրա: Հանրային սեփականության ինստիտուտների մեծ դերը մասնավոր սեփականության և պետական սեփականության հետ կողք կողքի:
Ղեկավարության առաջադրանքները	Նվազեցնել, իսկ հնարավորության դեպքում փոխարինել մասնավոր և շուկայական համակարգերով:	Հասարակական ակտիվների նոր սահմանման մեջ կենտրոնական համակարգող դերը:
Ղեկավարության սկզբունքները	Զմիջամտելու քաղաքականություն, շուկայական մեխանիզմ:	Լիսաբոնյան կայուն կառավարման սկզբունքներ, մասնավորապես պետության համակարգող դերի բարձրացում:

ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ



Հավելված 2.

Աղյուսակ 2.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
 «ՀԵՏՈՒՈՒ+20» ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՊԸ
 ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԵՏ

«ՀետՈՒՈՒ+20» գործընթացի ուղղություններ	ՄԱԿ-ի կողմից ընդունված Կայուն զարգացման նպատակներ/ենթանպատակներ	«Հետ-ՈՒՈՒ+20» գործընթացի շրջանակներում գործողությունների համար մշակված առաջարկություններ ընդհանրացված/ համառոտ տարբերակով
<p>1. Հանքարդյունաբերության գործունեություն, շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանություն</p>	<p>Նպատակ 3. Ապահովել առողջ կյանք և աջակցել բոլորի բարեկեցությանը, ցանկացած տարիքում</p> <p>3.9 Մինչև 2030թ. էապես կրճատել վտանգավոր նյութերի ազդեցության և օդի, ջրի, հողերի աղտոտման ու թունավորման հետևանքով առաջացած մահվան և հիվանդությունների դեպքերի քանակությունը:</p> <p>Նպատակ 6. Ապահովել ջրային պաշարների և սանիտարահիգիենիկ ծառայությունների կայուն կառավարում և հասանելիություն բոլորի համար</p> <p>6.3. Մինչև 2030թ. ամբողջ աշխարհում բարելավել ջրի որակը աղտոտման նվազեցման, թափոնների արտանետումների վերացման և վտանգավոր քիմիական տարրերի ու նյութերի արտանետումների նվազագույնի հասցնելու, չմաքրված հոսքաջրերի չափաքանակի կրկնակի կրճատման, ռեցիկլոյացիայի ծավալների էական մեծացման և կեղտաջրերի կրկնակի անվտանգ օգտագործման միջոցով:</p>	<ul style="list-style-type: none"> • Ընդերքի շահագործման ժամանակ էկոլոգիական ռիսկի ապահովագրության գործընթացի օրենսդրական կարգավորում: • ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին հայեցակարգային մոտեցումների մշակում՝ օրենսգրքով հետևյալ սկզբունքների ամրագրման նպատակով. <ul style="list-style-type: none"> - լեռնաարդյունաբերական և մետաղագործական ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեությունը թափանցիկացում, տարեկան հաշվետվությունների հասանելիություն հանրության համար, - հանքավայրերի շուրջ հստակ, որոշակի չափեր ունեցող սանիտարական գոտիների նախատեսում, - արդյունահանվող հանքանյութի համալիր օգտագործում, - հանքավայրերում համեմատաբար աղքատ հանքաքարի օգտագործման ապահովում, - տարակազմ երկրորդային և երրորդային հումքի ճիշտ արժևորում, • «Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերի մշակման ժամանակ անհրաժեշտ է՝

<p>Նպատակ 11. Հասնել քաղաքների և մարդկանց բնակավայրերի անվտանգությանը, հուսալիությանը և կայունությանը</p> <p>Նպատակ 12. Ապահովել կայուն արտադրության և սպառման մոդելների իրականացումը</p> <p>12.2. Մինչև 2030թ. հասնել բնական ռեսուրսների կայուն կառավարմանը և արդյունավետ օգտագործմանը:</p> <p>12.4. Մինչև 2020թ. հասնել քիմիական նյութերի և ամբողջ կենսական ցիկլի ընթացքում բոլոր թափոնների էկոլոգիապես ռացիոնալ օգտագործմանը՝ համապատասխան միջազգային սկզբունքների, և էապես կրճատել նրանց ներթափանցումը օդ, ջուր, հող, որպեսզի նվազագույնի հասցվի նրանց բացասական ազդեցությունը մարդկանց առողջության և շրջակա միջավայրի վրա:</p> <p>12.5. Մինչև 2030թ. էապես նվազեցնել թափոնների ծավալը՝ նրանց կանխարգելման, կրճատման, ռեցիկլույացիայի և կրկնակի օգտագործման միջոցառումների միջոցով:</p> <p>Նպատակ 15. Պահպանել, վերականգնել և աջակցել ցամաքային էկոհամակարգերի կայուն օգտագործմանը, կայուն ղեկավարել անտառները, կանխարգելել անապատացումը, հողերի դեգրադացումը և կենսաբազմազանության կորուստները, իրականացնել վերականգնողական գործունեություն</p> <p>15.4. Մինչև 2030թ. ապահովել լեռնային էկոհամակարգերի, այդ թվում՝ նրանց կենսաբազմազանության պահպանությունը, որպեսզի բարձրացվի կայուն զարգացման համար անհրաժեշտ նրանց բարիքներ տալու կարողությունը:</p>	<ul style="list-style-type: none"> - յուրաքանչյուր հանքավայրի վերաբերյալ գնահատել թափոններով պայմանավորված հնարավոր աղետները և նրանց վնասների չափերը: • Բնական պաշարների կառավարման ազգային ռազմավարության մշակում՝ <ul style="list-style-type: none"> - մշակել ընդերքի և նրա հարստությունների օգտագործման պետական քաղաքականություն: Սահմանել ՀՀ տարածքում մշակման ոչ ենթակա հանքավայրերի տեսակը, արդյունահանման եղանակները, հանքաքարերի որակը (աղքատ հանքաքարեր) և նրանց մշակման տեխնոլոգիաները, ինչպես նաև շահագործվող հանքավայրերի պաշարների նվազագույն շեմը: • Որպես տեխնածին հումքի սկզբնաղբյուր՝ օգտակար հանածոների ուսումնասիրության, արդյունահանման կամ վերամշակման արդյունքում առաջացած ապարների ոչ կոնդիցիոն հանքաքարի լցակույտերի և պոչամբարներում կուտակված հարստապոչների օգտագործման հնարավորությունների (այլընտրանքային) մեխանիզմների մշակում՝ • բոլոր հին և նոր թափոնակույտերի ու հարստապոչների հաշվառում, դրանց ուսումնասիրություն և անձնագրերի կազմում, որոնցում նշված կլիներ դրանցում պարփակված տարրերի պարունակություններն ու ընդհանուր քանակությունները, դրանց վտանգավորության դասը, պոչամբարների ձևավորման սխեմաներն ու հնարավոր օգտագործման ոլորտներն ու մշակման տեխնոլոգիաները: Թափոնների, որպես հումքի ստացման երկրորդային աղբյուր, օգտագործման համար որոշակի տնտեսական արտոնությունների սահմանում: • Եթե հանքավայրի երկրաբանական կառուցվածքը և հանքամարմինների տեղադրման դիրքը թելադրում են հանքավայրի շահագործման ստորգետնյա եղանակ, ապա այդ հանգամանքը պետք է ամրագրվի համապատասխան իրավական ակտով, որն ընդգրկելով շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցմանն ուղղված մոտեցումները, կսահմանափակի ներկայիս բաց եղանակով, մասնավորապես մետաղական օգտակար հանածոների հանքավայրերի, բաց եղանակով համատարած շահագործումը: • Լեռնահանքային արդյունաբերության հետ կապված շրջակա միջավայրի աղտոտվածության և մարդկանց առողջության վրա ազդեցության ուսումնասիրության/մոնիթորինգի համակարգի ներդրում:
---	--

		<ul style="list-style-type: none"> • Հանքարդյունաբերության հետևանքով ՀՀ աղտոտված տարածքների լեռնատեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիայի իրականացում, տեխնածին աղտոտված հողերի վիճակի դիտացանցի կազմակերպում, համապետական միասնական տվյալների բազայի և էլեկտրոնային քարտեզների ստեղծում:
<p>2. Այլընտրանքային (վերականգնվող) էներգետիկայի զարգացում և էներգախնայողություն</p>	<p>Նպատակ 7. Ապահովել բոլորի համար մատչելի, հուսալի, կայուն և ժամանակակից էներգիայի հասանելիություն</p> <p>7.1. Մինչև 2030թ. ապահովել համընդհանուր ոչ թանկ, հուսալի և ժամանակակից էներգամատակարարման հասանելիություն:</p> <p>7.2. Մինչև 2030թ. համաշխարհային էներգետիկ հաշվեկշռում էապես ավելացնել վերականգնվող էներգիայի չափաքանակը:</p> <p>7.3. Մինչև 2030թ. կրկնապատկել էներգաարդյունավետության բարելավման գլոբալ ցուցանիշը:</p> <p>7.ա. Մինչև 2030թ. ակտիվացնել միջազգային համագործակցությունը մաքուր էներգետիկայի, ներառյալ վերականգնվող էներգետիկայի, էներգաարդյունավետության բարձրացման և հանածո վառելանյութի օգտագործման առաջավոր ու առավել մաքուր տեխնոլոգիաների ոլորտում՝ հետազոտությունների և տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունը հեշտացնելու նպատակով, և խրախուսել ներդրումները էներգետիկ ենթակառուցվածքում ու էկոլոգիապես մաքուր էներգետիկայի տեխնոլոգիաներում:</p> <p>7.բ. մինչև 2030թ. ժամանակակից և կայուն էներգամատակարարման համար ընդլայնել ենթակառուցվածքը և արդիականացնել տեխնոլոգիաները բոլոր զարգացող երկրներում, մասնավորապես, ամենաքիչ զարգացած երկրներում, փոքր կղզիների զարգացող պետություններ:</p>	<ul style="list-style-type: none"> • Մեփական վերականգնվող էներգառեսուրսների օգտագործման կարևորումն ու խթանումը էներգետիկ անկախության ապահովման գործում: • ջերմային պոմպերի և արևային ջրատաքացուցիչների տեխնոլոգիական նշանակության սարքերի, ջեռուցման էներգետիկ համակարգերի կիրառման ընդլայնում: • էներգախնայողության և էներգաարդյունավետ տեխնոլոգիաների լայնածավալ ներդրում, արևային սարքաշինության զարգացում, ինովացիոն գիտական, ինժեներական և փորձարարական հետազոտությունների իրականացման և արդյունքների ներդրման խթանում: • էներգիայի վատնումների նվազեցումը/կանխումը, էներգախնայողությանն ուղղված միջոցառումների իրականացման շնորհիվ, մասնավորապես, շինարարական նորմերի վերանայման և էներգախնայողության ստանդարտների ներդրման միջոցով: • Իրականացնել վերականգնվող էներգետիկայի նոր տեխնոլոգիաների՝ ի թիվս արևային և բիոտեխնոլոգիաների, երկրաջերմային և ջրածնային էներգետիկայի, զարգացման համար պահանջվող ներդրումների խթանում: • Իրականացնել գյուղատնտեսության տեղական արտադրանքից բիոէթանոլի և (կամ) բիոբութանոլի ստացման կազմակերպումն ու էլեկտրատրանսպորտային ենթակառուցվածքների կիրառումն ու զարգացումը: • 2020 թ., և յուրաքանչյուր հաջորդ տարի, երկրում սպառվող ամբողջ էներգիայի առնվազն 20 տոկոսը, իսկ տրանսպորտում սպառվող էներգիայի առնվազն 10 տոկոսը պետք է լինի հողմային, արեգակնային, ջրային, երկրաջերմային և կենսազանգվածի էներգիայի աղբյուրներից ստացված էներգակիրներ:

	<p>րում և դեպի ծով ելք չունեցող զարգացող երկրներում՝ համապատասխան աջակցության ծրագրերի համաձայն:</p> <p>Նպատակ 13. Ձեռնարկել անհապաղ գործողություններ՝ պայքարելու կլիմայի փոփոխության և դրա ազդեցությունների դեմ (հիմնվելով «Կլիմայի փոփոխության մասին» ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի համաժողովի համաձայնությունների վրա)</p>	<ul style="list-style-type: none"> • Հետագոտել ջրածնային շարժիչներով աշխատող ավտոտրանսպորտի զարգացման հնարավորությունները: • Մեծացնել պետական և մասնավոր հատվածի ներդրումները շենքերի էներգախնայողության ապահովման ոլորտում, էներգահամակարգի սարքավորումների վերազինման ճանապարհով նվազեցնել էներգիայի կորուստները և բարձրացնել էներգաարդյունավետության ու հուսալիության աստիճանը, էներգախնայողությունը դարձնել տնտեսության այլ ճյուղերում պետական ծրագրերի անբաժանելի մաս: • Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտի պետական քաղաքականությունն ուղղել էներգատար համապատասխան ճյուղերում էներգախնայողությունը և էներգաարդյունավետությունը ապահովելուն; • Վերահսկել 2015թ. դեկտեմբերի 17-ի թիվ 1493-Ն որոշմամբ ՀՀ կառավարության կողմից հաստատված էներգասպառող սարքերի պիտակավորման կարգի իրագործումը: • Հաղթահարել ֆինանսական շուկայի ռիսկային խոչընդոտները, որոնք թույլ չեն տալիս առևտրային բանկերի մասնակցությունը էներգախնայողության ոլորտում, մեծացնել առևտրային բանկերի իրազեկումը և հմտությունները էներգախնայողության վարկավորման հարցերում: • Ցուցադրել շենքերում էներգախնայողության շահավետությունը ողջամիտ ներդրումների պարագայում; • Ձերմաէներգետիկ հզորությունների սերնդափոխությունն իրականացնել՝ ներդնելով գազատուրբինային և համակցված ջերմային և էլեկտրական էներգիայի արտադրության (կոգեներացիոն) համակարգեր: • Մշակել և հաստատել էներգախնայողության և էներգաարդյունավետության, վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործման և շրջակա միջավայրի վրա ներգործության ստանդարտները: • Ջարգացած երկրների օժանդակությամբ մինչև 2016թ. մշակել առաջարկություններ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 10.11.2011թ. ընդունված թիվ 1594-Ն որոշմանը համապատասխան:
--	--	---

		<ul style="list-style-type: none"> • Խրախուսել սեփական կարիքների համար արևային էներգիայի օգտագործմամբ (ֆոտոէլեկտրական և ջրատաքացուցիչ, այդ թվում արեգակից փոխանցված ճառագայթների խտացուցիչ համակարգերի միջոցով) և կենսազանգվածի ու երկրաջերմային էներգիայի կիրառմամբ ոչ ցանցային, ինչպես նաև էներգախնայողության ոլորտում համապատասխան ծրագրերի իրականացումը; • Ուսումնասիրել Հայաստանի Հանրապետությունում ՎԷ և էներգախնայողության ոլորտում արդեն առկա դրական փորձը և երկրում այդ օրինակների տարածման հնարավորությունը; • Իրականացնել գործող և կառուցվող փոքր ՀԷԿ-երի մոնիթորինգ, գնահատելով առկա և հնարավոր էկոլոգիական ռիսկերը և մշակել ու իրականացնել միջոցառումներ դրանց նվազեցման ուղղությամբ:
<p>3. Ջրային ռեսուրսների կայուն կառավարում</p>	<p>Նպատակ 6. Ապահովել ջրի ու սանիտարիայի հասանելիություն և կայուն կառավարում բոլորի համար</p> <p>6.1 Մինչև 2030թ. բոլորի համար ապահովել անվտանգ ու մատչելի խմելու ջրի հասանելիություն՝ հավասար ու համընդհանուր հիմունքներով,</p> <p>6.2 Մինչև 2030թ. բոլորի համար հասանելի դարձնել սանիտարահիգիենիկ ծառայությունները՝ հստակ ուշադրություն դարձնելով կանանց ու աղջիկների, ինչպես նաև խոցելի վիճակում գտնվող այլոց կարիքներին,</p> <p>6.3 Մինչև 2030թ. բարելավել ջրի որակը, կրճատելով աղտոտումը, բացառելով արտահոսքերը, նվազագույնի հասցնելով քիմիկատների ու վտանգավոր նյութերի օգտագործումը, կիսով չափ կրճատելով չմաքրված կեղտաջրերի քանակը, մեծացնելով վերաշրջանառության և վերաօգտագործման չափաբաժինը ամբողջ աշխարհում,</p> <p>6.4 Մինչև 2030թ. հաստատուն կերպով մեծացնել ջրօգտագործման արդյունավետությունը բոլոր բնագա-</p>	<ul style="list-style-type: none"> • Կենցաղային և արտադրական կեղտաջրերի հեռացման ու մաքրման ազգային քաղաքականության և ռազմավարության ընդունում, համակարգի զարգացում: • Ջրահեռացման համակարգերի վերականգնում: • Կեղտաջրերի մաքրման կայանների կառուցման ու շահագործման գործընթացին աջակցող և խրախուսող տնտեսական խթանիչ մեխանիզմների, ինչպես նաև այլընտրանքային, համեմատաբար էժան, տեխնոլոգիաների կիրառում: • Մաքրված կեղտաջրերի և մշակված տիղմի նպատակային կրկնակի օգտագործման նորմերի և համապատասխան իրավական ակտերի ընդունում: • Ջրաբալանսային կայանների ստեղծում: • Ռոտզման նոր ժամանակակից տեխնոլոգիաների՝ այդ թվում կաթիլային ոռոգման ներդրում, ձևափոխ ռեժիմի կառավարման կիրառում: • Ուժեղացնել վերահսկողությունը, այդ թվում հասարակության մասնակցությամբ, ջրօգտագործման թույլտվությունների պայմանների կատարման վերաբերյալ: • Հայաստանի առանձին գետերի ավազանների և 6 ջրավազանների համար մշակել գետավազանային կառավարման պլաններ առաջիկա տարիների համար:

<p>վառներում և ապահովել քաղցրահամ ջրի կայուն ջրառ ու մատակարարում՝ նվազեցնելով ջրի անբավարարությունից տուժող մարդկանց քանակը,</p> <p>6.5 Մինչև 2030թ. իրականացնել ջրային ռեսուրսների համապարփակ կառավարում բոլոր մակարդակներու, այդ թվում՝ համապատասխան դեպքերում անդրսահմանային գործակցության միջոցով,</p> <p>6.6 Մինչև 2030թ. պահպանել և վերականգնել ջրային և ջրի հետ կապված էկոհամակարգերը, ներառյալ գետերը, լճերը, ջրատար հորիզոնները, սարերը, անտառներն ու ջրաճահճային տարածքները,</p> <p>6.ա Մինչև 2030թ. զարգացող երկրներում ջրին և սանիտարիային առնչվող ծրագրերում ու գործողություններում ընդլայնել միջազգային համագործակցությունը և կարողությունների զարգացման աջակցությունը՝ ներառյալ անձրևաջրերի հավաքման, աղազերծման, ջրի արդյունավետության բարձրացման, կեղտաջրերի մաքրման, վերաշրջանառության և վերաօգտագործման տեխնոլոգիաները,</p> <p>6.բ Աջակցել և ուժեղացնել տեղական համայնքների մասնակցությունը ջրի և սանիտարիայի կառավարման բարելավմանը:</p> <p>14.4 Մինչև 2020 թ ., արդյունավետ կերպով կարգավորել որսը և վերջ տալ անչափ, ապօրինի, անհաշվետու ձկնորսությանը, վերջ տալ ձկնորսության վայրագ մեթոդներին ու կիրառել գիտականորեն հիմնավորված կառավարման պլաններ, որպեսզի կարճ ժամանակում հնարավոր լինի վերականգնել ձկնային պաշարները առնվազն այն մակարդակով, որ կարողանան ապահովել իրենց</p>	<ul style="list-style-type: none"> • Հայաստանի անձեռնմխելի ջրային պաշարների պահպանում: • Համադրել գոյություն ունեցող առկա և օգտագործման համար տրամադրվող ջրային ռեսուրսների չափաքանակները՝ ջրի առաջարկի ու պահանջարկի գնահատում: • Ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման հիմնական 4 սկզբունքների կիրառում՝ <ul style="list-style-type: none"> - Քաղցրահամ ջուրը սպառվող և խոցելի ռեսուրս է, կյանքի պահպանման, զարգացման ու շրջակա միջավայրի համար ունի կենսական կարևորություն: - Ջրային ռեսուրսների կառավարումն ու օգտագործումը պետք է հիմնվի մասնակցային մոտեցումների վրա: - Ջուրն ունի սոցիալական, բնապահպանական և տնտեսական արժեք, սակայն բոլոր մրցակցային բնագավառներում ջուրը պետք է դիտարկվի որպես տնտեսական ապրանք: - Կանայք կարևոր դեր են խաղում ջրային ռեսուրսների օգտագործման, կառավարման ու պահպանման բնագավառում: • Ազգային ջրային պաշարների պահպանմանն ու ավելացմանը, ջրային ռեսուրսների ամբարմանը, բաշխմանն ու կայուն օգտագործմանը նպաստակառուցված միջոցառումների իրականացում: • Ջրհեղեղների ու երաշտների կանխարգելման, կառավարման, ու դրանց հետևանքների վերացման կառավարման համակարգի ստեղծում: • Բնակչությանը շուրջօրյա և որակյալ խմելու ջրով մատակարարման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների և կառավարման համակարգի զարգացում՝ ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործում: • Ջրի խնայողության ապահովում՝ <ul style="list-style-type: none"> - ջրի խնայողության վերաբերյալ տեղեկատվական, ուսուցողական և կրթական ծրագրերի իրականացում, - ջրի կորուստների նվազեցում, - ջրային համակարգերի փուլառփուլ վերականգնում ու պահպանում, - գետավազաններում կայուն և բարենպաստ էկոլոգիական իրավիճակի ապահովման միջոցառումների իրականացում:
--	--

	<p>կենսաբանական բնութագրերին համապատասխան առավելագույն կայուն վերարտադրություն:</p> <p>Նպատակ 15. Պաշտպանել և վերականգնել ցամաքային էկոհամակարգերն ու խթանել դրանց կայուն օգտագործումը, ապահովել անտառների կայուն կառավարումը, պայքարել անապատացման դեմ, դադարեցնել և շրջադարձել հողերի վատթարացումը, կասեցնել կենսաբազմազանության կորուստը</p> <p>15.1 Մինչև 2020թ. ապահովել ցամաքային և ներքին քաղցրահամ ջրերի էկոհամակարգերի և դրանց ծառայությունների՝ այդ թվում անտառների, ջրաճահային հանդակների, լեռների և չորային հողերի պահպանումը, վերականգնումը և ռացիոնալ օգտագործումը՝ միջազգային համաձայնագրերից բխող պարտականություններին համապատասխան:</p>	<ul style="list-style-type: none"> • Ջրային էկոհամակարգերի կայուն կառավարում՝ <ul style="list-style-type: none"> - էկոլոգիական թողքերի հաշվարկման մեթոդաբանության վերանայում և բնական ջրահոսքերում անհրաժեշտ բնապահպանական թողքերի ապահովում, - ջրային էկոհամակարգերի կենսաբազմազանության պահպանության միջոցառումների մշակում: • Ջրային ռեսուրսների բնական հոսքի հաշվառման իրականացում, կիրառելի ժամանակակից մոտեցումներն ու մեթոդները, ջրօգտագործման ամսական փաստացի հոսքի հաշվառում: • Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման ծրագրերի իրականացում: • Արարատյան դաշտում ստորերկրյա ջրային ռեսուրսներից նոր ջրօգտագործման թույլտվություն տրամադրել՝ ՀՀ Ջրի ազգային խորհրդի դրական եզրակացության առկայության դեպքում: • Ստորերկրյա հորատանցքերի հորատման գործունեության լիցենզավորում, որի արդյունքում կմեծանա հսկողությունը այդ աշխատանքների իրականացման նկատմամբ:
<p>4. Թափոնների կայուն կառավարում</p>	<p>Նպատակ 12. Ապահովել կայուն արտադրության և սպառման մոդելների իրականացումը</p> <p>12.2. 2030թ. հասնել բնական ռեսուրսների կայուն կառավարման և արդյունավետ օգտագործման:</p> <p>12.4. 2020թ. հասնել քիմիական նյութերի և կենսական ցիկլի ամբողջ ընթացքում բոլոր թափոնների էկոլոգիապես ռացիոնալ օգտագործմանը՝ համաձայնեցված միջազգային սկզբունքներին համապատասխան, և էապես կրճատել նրանց ներթափանցումը օդ, ջուր, հող, որպեսզի նվազագույնի հասցվի նրանց բացասական ազդեցությունը մարդկանց առողջության և շրջակա միջավայրի վրա:</p> <p>12.5. Մինչև 2030թ. էապես նվազեցնել թափոնների</p>	<p><i>Թափոնների գործածության ոլորտում շարունակել ներդնել քաղաքականության հետևյալ հիմնական ուղղությունները.</i></p> <ul style="list-style-type: none"> • հասարակության կայուն զարգացումն ապահովելու նպատակով հասարակության էկոլոգիական և տնտեսական շահերի գիտականորեն հիմնավորված զուգակցում, • թափոնների առավելագույն օգտագործման և դրանց առաջացման նվազեցման համար տնտեսական, սոցիալական և իրավական պայմանների ապահովում, • թափոնների օգտագործման ոլորտում գործունեության տնտեսական կարգավորման մեթոդների կիրառում՝ թափոնների քանակների կրճատման նպատակով և դրանց ներառումը տնտեսության շրջանառության մեջ, • թափոնների առաջացման կանխարգելումը և կրճատումն ու առաջացման

	<p>ծավալը՝ նրանց կանխարգելման, կրճատման, ռեցիրկուլյացիայի և կրկնակի օգտագործման միջոցառումների արդյունքում:</p>	<p>աղբյուրներում թափոնների վնասագերծումը (վտանգավորության դասի նվազեցում),</p> <ul style="list-style-type: none"> • թափոնների քանակների կրճատման նպատակով նյութահումքային ռեսուրսներ համարվող թափոնների համալիր օգտահանում, • թափոնների գործածության ընթացքում լավագույն հասանելի տեխնոլոգիաների կիրառում, • արտադրողների ընդլայնված պատասխանատվության սկզբունքների կիրառում. ապրանքներ արտադրողները, ներմուծողները պարտավոր են ապահովել այդ ապրանքների օգտագործումից առաջացած թափոնների վնասագերծումն ու կրկնակի օգտագործումը, • կիրառել միջազգային դրական փորձը և ընդլայնել ձևավորված դրական ազգային փորձը. <p>ա. կենցաղային թափոնները տարանջատված հավաքելու, վերամշակելու ու օգտագործելու ուղղությամբ,</p> <p>բ. խթանել «ինդուստրիալ էկոհամակարգերի» ձևավորված դրական միջազգային փորձի կիրառմանը, երբ տարբեր ընկերություններ (արտադրական ձեռնարկություններ) համագործակցում են բնական ռեսուրսները համատեղ, համալիր, խնայողաբար օգտագործելու, առաջացող թափոններն առավելագույն չափով օգտագործելու նպատակով,</p> <ul style="list-style-type: none"> • հստակեցնել համակարգում գործող մարմինների պատասխանատվությունները, համակարգող պետական մարմինը և նրա իրավասությունները: <i>(Համաձայն հասարակական կազմակերպությունների կարծիքի, յոթրտում օրենքով համակարգային իմաստով պատասխանատու պետական մարմինը հստակեցված չէ և արդյունավետ վերահսկողություն ապահովելու նպատակով հարկավոր է հստակեցնել համապատասխան օրենսդրական պահանջների կատարման համար պատասխանատու պետական մարմինը):</i>
--	---	---

<p>5. Օրգանական գյուղատնտեսության կարգացում</p>	<p>Նպատակ 2. Վերացնել սովը, հասնել պարենային ապահովության ու բարելավված սնուցման, խթանել գյուղատնտեսության կայուն զարգացումը</p> <p>2.4. Մինչև 2030թ. ապահովել սննդամթերքի կայուն արտադրության համակարգերի ստեղծումը և ներդնել գյուղատնտեսության ղեկավարման մեթոդներ, որոնք թույլ են տալիս բարձրացնել կենսակայունությունն ու արդյունավետությունը և ավելացնել արտադրանքի ծավալները, նպաստում են էկոհամակարգերի պահպանմանը, ամրապնդում են նրանց ունակությունը հարմարվելու կլիմայական փոփոխություններին, էքստրեմալ եղանակային երևույթներին՝ երաշտ, ջրհեղեղներ ու այլ աղետներ և աստիճանաբար բարելավում են հողերի որակը:</p>	<ul style="list-style-type: none"> • Օրգանական գյուղատնտեսության մասին օրենքի ու ենթաօրենսդրական ակտերի համապատասխանեցում միջազգային օրենսդրության սկզբունքներին: • Օրգանական գյուղատնտեսության արտադրության, սերտիֆիկացման և շուկայավարման մասին ուսումնական դասընթացների իրականացում: • ՀՀ գյուղատնտեսության նախարարության գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների մասնագետների վերապատրաստում՝ օրգանական արտադրության կազմակերպման, ինչպես նաև սերտիֆիկացման և հետքերքահավաքի կազմակերպման թեմաներով: • Օրգանական արտադրանքի արտադրության և շուկայավարման վերաբերյալ սեմինարների ու քննարկումների, շուկայավարման խորհրդատվության կազմակերպում, միջազգային տոնավաճառներին մասնակցության խթանում: • Պայքար տեղական շուկայում օրգանական, բիո- կամ էկոսնդամթերքի անօրինական մակնշման դեմ: • Օրգանական արտադրության մեջ անմշակ հողերի օգտագործման խթանման նպատակով միջոցառումների իրականացում: • Պիլոտային ցուցադրական օրգանական արտադրության տնտեսությունների հիմնում:
<p>6. Կայուն զբոսաշրջության կարգացում</p>	<p>Նպատակ 8. Խթանել շարունակական, ներառական ու կայուն տնտեսական աճ, լրիվ և արդյունավետ զբաղվածություն ու արժանապատիվ աշխատանք բոլորի համար</p> <p>8.9. Մինչև 2030թ. ապահովել կայուն զբոսաշրջության ռազմավարության խրախուսման մշակումը և իրականացումը, որը նպաստում է աշխատատեղերի ստեղծմանը, տեղական մշակույթի զարգացմանը ու տեղական արտադրությանը:</p> <p>Նպատակ 12. Ապահովել սպառման և արտադրության կայուն մոդելներ</p>	<ul style="list-style-type: none"> • Մարզային և համայնքային նշանակության ավտոճանապարհների բարեկարգում: Զբոսաշրջային տարածքների մաքրության և հիգիենիկ պատշաճ պայմանների ապահովում, աղբահեռացման, թափոնների կառավարման արդյունավետ համակարգերի ներդրում: • Զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացում ու արդիականացում (այդ թվում՝ միջին կարգի և համեմատաբար մատչելի տեղավորման հաստատությունների ցանցի ձևավորումը): • Հայաստանի զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացում: • Դեպի մարզեր զբոսաշրջության ապակենտրոնացում: • Համայնքներում զբոսաշրջության զարգացում: • Ներգնա զբոսաշրջության մեջ ուղեկցորդների վերապատրաստման և

	<p>12.բ. Մշակել և ներդնել մոնիթորինգի գործիքներ այն ազդեցության նկատմամբ, որը ցուցաբերում է կայուն զբոսաշրջությունը կայուն զարգացման կայացման ասպարեզում՝ նպաստելով աշխատատեղերի ստեղծմանը, տեղական մշակույթի զարգացմանը ու տեղական արտադրանքի արտադրությանը:</p>	<p>լինցենգավորման համակարգի ներդրում՝ կարևորելով նրանց կողմից ներկայացվող մեր երկրի մասին տեղեկատվության անվտանգության ու քաղաքական նշանակության կարևորությունը:</p> <ul style="list-style-type: none"> • ՀՀ զբոսաշրջության ոլորտը կարգավորող օրենքը լրացնել հետևյալ հարցերը կարգավորող դրույթերով. <ul style="list-style-type: none"> - Զբոսաշրջային օպերատորների միասնական ռեեստրի ստեղծում և վարում, ընդ որում այդ գործառույթն իրականացնում է տվյալ ոլորտի պետական լիազոր մարմինը: - Արտագնա զբոսաշրջության ոլորտում գործող զբոսաշրջային օպերատորների և գործակալների միության առկայություն, որը ոչ առևտրային կազմակերպություն է՝ հիմնված ոլորտում գործունեություն ծավալող սուբյեկտների պարտադիր անդամակցության վրա, և որը նման կարգավիճակ է ստանում կառավարության որոշման հիման վրա: - Հատկապես արտագնա զբոսաշրջության ոլորտում գործող կազմակերպություններին ներկայացնել բավականին լուրջ գույքային և ֆինանսական պահանջներ՝ պայմանավորված իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում համապատասխան հատուցում տրամադրելու պարտավորությամբ՝ նպատակ ունենալով նրանց մոտ ապահովելու նման ունակություն: - Հստակեցնել զբոսաշրջիկների անվտանգության հետ կապված հարաբերությունները:
<p>7. Կայուն (լուելացի) քաղաքներ / կանաչ ճարտարապետություն</p>	<p>Նպատակ 3. Ապահովել առողջ կյանք և խթանել բարեկեցություն բոլորի համար՝ անկախ տարիքից</p> <p>3.9. Մինչև 2030թ. էապես կրճատել մահվան և հիվանդությունների դեպքերի քանակությունը՝ քիմիական վտանգավոր նյութերի ազդեցության և օդի, ջրի, հողերի աղտոտման և թունավորման հետևանքով:</p>	<ul style="list-style-type: none"> • Խուսափել խոշոր քաղաքների ուռճացումներից՝ վարելով փոքր և միջին քաղաքների ինտենսիվ կառուցապատման քաղաքականություն, <ul style="list-style-type: none"> - բնակավայրերի և նրանց վարչական տարածքների էկոլոգիական և կայուն զարգացման համատեքստում վերակառուցման, «կանաչ» ճարտարապետության սկզբունքներին համահունչ շենքերի նախագծման նորմերի ու ստանդարտների մշակում, - քաղաքների ճարտարապետական և բնական ժառանգության վերականգնման, պատմական քաղաքների կառավարման և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման ուղղությամբ միջոցառումների մշակում,

<p>Նպատակ 11. Քաղաքներն ու մարդկային բնակավայրերը դարձնել կայուն, ներառական, անվտանգ և դիմակայուն:</p> <p>11.4. Մինչև 2030թ. ակտիվացնել ջանքերը համաշխարհային մշակութային և բնության ժառանգության պաշտպանության և պահպանության ուղղությամբ:</p> <p>11.5. Մինչև 2030թ. էապես կրճատել աղետների (այդ թվում՝ ջրերի հետ կապված) հետևանքով առաջացած մահացածների և տուժածների քանակը ու զգալիորեն նվազեցնել անմիջական տնտեսական վնասը՝ համաշխարհային համախառն ներքին արտադրանքի կորստի տեսքով, առավել ուշադրություն հատկացնելով ազգաբնակչության չունևոր և խոցելի խմբերի պաշտպանությանը:</p> <p>11.6. Մինչև 2030թ. նվազեցնել քաղաքների էկոլոգիական բացասական ազդեցությունը բնակչության մեկ հոգու հաշվով՝ այդ թվում, օդի որակի և քաղաքային ու այլ թափոնների կառավարման վրա հատուկ ուշադրություն դարձնելու միջոցով:</p> <p>11.7. Մինչև 2030թ. ապահովել անվտանգ, հասանելի և բոլորի համար բաց կանաչ գոտիների և հասարակական վայրերի մատչելիությունը՝ հատկապես կանանց և երեխաների, տարեց մարդկանց և հաշմանդամների համար:</p> <p>11.ա. Մատարել դրական տնտեսական, սոցիալական և էկոլոգիական կապերին քաղաքային, քաղաքամերձ և գյուղական շրջանների միջև՝ ազգային և տարածաշրջանային զարգացման պլանավորման որակի բարձրացման հիման վրա:</p> <p>11.բ. Մինչև 2020թ. զգալիորեն ավելացնել սոցիալական արգելքների վերացման, ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացման, կլիմայի փոփոխության հետևանքների մեղմացման, այդ փոփո-</p>	<ul style="list-style-type: none"> - կայուն քաղաքների, կանաչ ճարտարապետության վերաբերյալ կրթության, հանրային իրազեկման և հանրության մասնակցության համար համալիր միջոցառումների իրականացում, - քաղաքների կայուն զարգացման չափանիշների և գնահատման մեթոդաբանության ներդրում: • Իրականացնել միջոցառումներ քաղաքաշինական միջավայրի ճարտարապետա-գեղագիտական հատկանիշների և լանդշաֆտային կազմակերպման պահպանման ու զարգացման ուղղությամբ, մասնավորապես՝ <ul style="list-style-type: none"> - լանդշաֆտային պլանավորման գործընթացի ինտեգրում՝ հատկապես քաղաքային մշակութային լանդշաֆտների, դեզրադացված լանդշաֆտների, ինչպես նաև բնապահպանական տեսանկյունից արժեքավոր և խոցելի տարածքների համար, - հանրային օգտագործման կանաչ գոտիների ստեղծում, պահպանում ու բարելավում, որոնք կպաշտպանեն քաղաքը անբարենպաստ կլիմայական պայմաններից և կծառայեն մարդու հանգստի և կենսունակության բարձրացման համար, - կանաչ գոտիների զարգացում փակ աղբավայրերի կամ նախկին արդյունաբերական տարածքների վերականգնման, կանաչապատման միջոցով, • կանաչ ճարտարապետության մշակույթի սերմանում՝ շենքերի և կառույցների հորիզոնական և ուղղահայաց մակերեսների կանաչապատման հնարավոր միջոցառումների իրականացում: • Իրականացնել կլիմայի փոփոխությանն առնչվող հարմարվողականության քաղաքաշինական միջոցառումներ, այդ թվում՝ <ul style="list-style-type: none"> -բնակչության առողջությանն ուղղված քաղաքաշինական բնույթի հարմարվողական միջոցառումներ, այդ թվում՝ «ջերմային ալիքների» ռիսկերի կանխարգելում, շենքերում ջերմաստիճանային բարենպաստ պայմանների ստեղծում, - բնապահպանական կարողությունների զարգացում և արտանետումների վերահսկման բարելավում, ի թիվս այլ հարցերի՝ բնական աղետների հակազդում և այլն: • Զարգացնել արդյունավետ, մթնոլորտի վրա նվազագույն ազդեցությամբ և ավելի անվտանգ հասարակական տրանսպորտի տեսակներ՝ էկոլոգիա-
--	--

	<p>խությանը հարմարվելու և տարերային աղետներին դիմակայելու ընդունակության ուղղությամբ միջոցառումների ռազմավարություններ ու պլաններ ընդունող և իրականացնող քաղաքների ու բնակավայրերի քանակությունը, և մշակել ու ներդնել 2015-2030թթ. աղետների ռիսկերի նվազեցման միջոցառումների Մենդայի շրջանակային ծրագրին համապատասխան՝ աղետների ռիսկերի համալիր կառավարման ուղղությամբ բոլոր մակարդակներով:</p> <p>Նպատակ 13. Ձեռնարկել անհապաղ գործողություններ՝ պայքարելու կլիմայի փոփոխության և դրա ազդեցությունների դեմ (հիմնվելով «Կլիմայի փոփոխության մասին» ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի համաժողովի համաձայնությունների վրա)</p> <p>13.1. Բարձրացնել վտանգավոր կլիմայական երևույթների և տարերային աղետների նկատմամբ դիմադրողականությունը և հարմարվելու ունակությունը բոլոր երկրներում:</p>	<p>պես արդարացված ճանապարհային ցանցերի զարգացման հետ մեկտեղ:</p> <ul style="list-style-type: none"> • Չարգացնել կոշտ կենցաղային թափոնների վերամշակման ժամանակակից պահանջներին համապատասխանող ենթակառուցվածքներ: • Խթանել ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարումը: • Ապահովել բնակչության սակավաշարժ խմբերի քաղաքաշինական միջավայրում մատչելիություն: • Ապահովել համաքաղաքային նշանակության սոցիալական, ինժեներատրանսպորտային, կանաչ տարածքների և քաղաքային տնտեսության այլ ենթակառուցվածքների պլանավորման, զարգացման և գործարկման միասնականությունը: • Կազմակերպել համայնքային և համաքաղաքային մրցույթներ հետևյալ թեմաներով՝ կանաչ շենք-շինություն, կանաչ պատշգամբ, կանաչ փողոց, բակ, կանաչ հիմնարկ/ձեռնարկություն: • ՄԱԿ-ի Եվրոպական Տնտեսական Հանձնաժողովի և մի շարք այլ միջազգային հաստատությունների հետ համագործակցությամբ, քաղաքային կայուն զարգացման լավագույն փորձի փոխանակման նպատակով, մշակել «Խելացի քաղաքային լուծումներ անցումային և զարգացող երկրների համար» ծրագիրը:
<p>8.Անտառների կայուն կառավարում, կենսաբազմազանության պահպանություն</p>	<p>Նպատակ 15. Պաշտպանել և վերականգնել ցամաքային էկոհամակարգերն ու խթանել դրանց կայուն օգտագործումը, ապահովել անտառների կայուն կառավարումը, պայքարել անապատացման դեմ, դադարեցնել և շրջադարձել հողերի վատթարացումը, կասեցնել կենսաբազմազանության կորուստը</p> <p>15.1. Մինչև 2020թ. ապահովել ցամաքային և ներքին քաղցրահամ ջրերի էկոհամակարգերի՝ այդ թվում, անտառների, ջրաճահճային հանդակների, լեռների և չորային հողերի պահպանությունը, վերականգնումը և ռացիոնալ օգտագործումը՝ միջազգային համաձայնագրերից բխող պարտավորություններին համապատասխան:</p>	<ul style="list-style-type: none"> • Իրականացնել դեգրադացված անտառների վերականգնման և անտառապատ տարածքների ավելացմանն ուղղված աշխատանքներ: • Չարգացնել տնկարանային տնտեսությունները՝ անտառվերականգնման և անտառապատման աշխատանքների ծավալներն ընդլայնելու, պաշտպանական, հակաէրոզիոն անտառաշերտեր ստեղծելու, կատարվող աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով: • Իրականացնել անտառների պետական հաշվառում և կադաստրի վարում: Հնարավոր լուծումը՝ իրավասու մարմնի նկատմամբ վերոնշյալ պահանջը չկատարելու համար Օրենսգրքում որոշակի պատասխանատվություն սահմանելն է: • Ավարտին հասցնել անտառկառավարման պլանների մշակման աշխատանքները: Մասնավորապես, իրականացնել «Հայաստան» ՊՈԱԿ-ի կողմից կառավարվող արգելավայրերի սահմանազատում, դրանց համար կառավարման պլանների մշակում:

<p>15.4 Մինչև 2030թ. ապահովել լեռնային էկոհամակարգերի՝ այդ թվում նրանց կենսաբազմազանության պահպանությունը, որպեսզի բարձրացվի կայուն զարգացման համար անհրաժեշտ նրանց բարիքներ տալու կարողությունը:</p> <p>15.5. Անհապաղ ձեռնարկել նշանակալի միջոցներ բնական բնակավայրերի դեգրադացման կասեցման ուղղությամբ, կանգնեցնել կենսաբանական բազմազանության կորուստը և 2020թ. ապահովել այն տեսակների պահպանությունը և անհետացման կանխումը, որոնք գտնվում են անհետացման սպառնալիքի տակ:</p> <p>15.8. Մինչև 2020թ. միջոցներ ձեռնարկել օտարածին ինվազիվ տեսակների ներթափանցման արգելման և ցամաքային ու ջրային էկոհամակարգերի վրա նրանց ազդեցության նվազեցման, ինչպես նաև գերակա տեսակների քանակության սահմանափակման կամ ոչնչացման կանխարգելման ուղղությամբ:</p> <p>Նպատակ 13. Ձեռնարկել անհապաղ գործողություններ՝ պայքարելու կլիմայի փոփոխության և դրա ազդեցությունների դեմ (հիմնվելով «Կլիմայի փոփոխության մասին» ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի համաժողովի համաձայնությունների վրա)</p>	<ul style="list-style-type: none"> • Իրականացնել անտառային համակարգի տեխնիկական վերազինում՝ մասնավորապես տրամադրել համազգեստ, զենք, տրանսպորտային միջոցներ: • Նախաձեռնել ու կազմակերպել տարածաշրջանային, ներառյալ անդրսահմանային, համագործակցություն՝ անտառների հիվանդությունների, վնասատուների ու հրդեհների դեմ համատեղ պայքար իրականացնելու համար: • Բարելավել անտառային ոլորտի օրենսդրական դաշտը: • Ավելացնել անտառային ոլորտի արտաբյուջետային դրամական մուտքերը: • Անտառային ոլորտի վերաբերյալ հասարակության իրազեկման բարձրացում: • Իրականացնել անտառային ոլորտի աշխատողների վերապատրաստում, խթանել երիտասարդ մասնագետների պատրաստման գործընթացին: • Կլիմայի փոփոխության նկատմամբ անտառների հարմարվողականության բարձրացում: • Անտառների արտադրողականության բարձրացում, անտառածածկ տարածքների ավելացում, օրգանական ածխածնի կուտակման ծավալների մեծացում, երկրի անտառների և անտառային հողերի ամբողջական գույքագրման իրականացում: • Անտառների վիճակի և տարածվածության վերաբերյալ ամբողջական տեղեկատվության առկայություն, անտառների կայուն կառավարման համար համապարփակ տվյալների բազայի ստեղծում: • Անտառային ոլորտի զարգացում, կայուն կառավարման ապահովում, կարճաժամկետ և երկարաժամկետ պլանավորման արդյունավետության բարձրացում: • Անտառային տնտեսության վարման արդյունավետության բարձրացում, անտառների վիճակի բարելավում, արտադրողականության բարձրացում: • Անտառային մոնիթորինգի իրականացման արդյունավետության բարձրացում:
---	---

		<ul style="list-style-type: none"> • Բարձրորակ մասնագետներով ապահովված անտառային տնտեսություն: • Կենսաբազմազանության հիմնախնդիրների լուծման համար կառավարման արդյունավետ մեխանիզմների մշակում և ներդրում, • Կենսաբազմազանության և էկոհամակարգերին սպառնացող հիմնական վտանգների բացահայտում և կանխարգելում, • Կենսաբազմազանության կառավարման միջոլորտային հարաբերությունների կատարելագործում, • Կենսաբազմազանության կայուն օգտագործման միջոցով բնակչության համար սոցիալական և տնտեսական օգուտների ստեղծում, • Կենսաբազմազանության հիմնախնդիրների վերաբերյալ բնակչության լայն շերտերի իրազեկվածության բարձրացում, • Կենսաբանական անվտանգության ապահովմանը նպատակաուղղված օրենքի ընդունում:
<p>9. «Կրթություն հանուն կայուն զարգացման» ՄԱԿ-ի տասնամյակի իրականացումը Հայաստանի Հանրապետությունում և մասնակցությունը ոլորտում հետագա համաշխարհային գործընթացներին</p>	<p>Նպատակ 4. Ապահովել ներառական ու հավասարապես հասանելի որակյալ կրթություն և իյթանել ողջ կյանքի ընթացքում ուսման հնարավորություններ բոլորի համար</p> <p>4.1. Մինչև 2030թ. ապահովել բոլոր աղջիկների և տղաների անվճար, իրավահավասար և որակյալ տարրական ու միջնակարգ կրթության ստացումը, որը թույլ կտա հասնելու ուսուցման պահանջված և արդյունավետ արդյունքների:</p> <p>4.7. Մինչև 2030թ. ապահովել, որպեսզի բոլոր սովորողները ձեռք բերեն գիտելիքներ և հմտություններ, որոնք անհրաժեշտ են կայուն զարգացմանը նպաստելու համար, այդ թվում՝ կայուն զարգացման և կայուն կենսակերպի, մարդու իրավունքների, գենդերային հավասարության հարցերի ուսուցման, խաղաղության, բռնությունը մերժող մշակույթի ու աշխարհի</p>	<ul style="list-style-type: none"> • Հանրակրթության համընդհանուր հասանելիության ապահովում, • Կրթական ծրագրերում կայուն զարգացման գաղափարախոսության ընդլայնում, էկոլոգիական կրթության զարգացում: • Կայուն զարգացման ոլորտին առնչվող մասնագետների պատրաստման որակի բարելավում: • Դպրոցներում կայուն զարգացման միջավայրի ստեղծում: • Աղետների ռիսկերի նվազեցման ուսուցման զարգացում: • Երեխաների համար նախատեսված կազմակերպություններում ապահովել երեխայի զարգացման, առողջության և աճի համար առողջ միջավայր, վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների առաջացման և տարածման ռիսկի գործոնների նվազեցման կամ բացառման նպատակով: • Ոչ ֆորմալ կրթության միջոցով կայուն զարգացման գիտելիքների և գաղափարախոսության տարածում:

	<p>քաղաքացիության քարոզման, ինչպես նաև մշակութային արժեքների բազմազանության ու կայուն զարգացման մեջ մշակույթի արժեքավոր ներդրման գիտակցման միջոցով:</p>	<ul style="list-style-type: none"> • Կրթության ոլորտի ռազմավարական փաստաթղթերում կայուն զարգացման մոտեցումների արտացոլում: • Ուսուցման ընթացքում պրակտիկ աշխատանքների իրականացման հնարավորությունների ընդլայնում: • Կայուն զարգացման սկզբունքներին և գաղափարախոսությանը, ոլորտին առնչվող միջազգային և տեղական դրական փորձին նվիրված տեղեկատվության ներկայացում լրատվամիջոցներում (հոդվածներ, ռադիո- և հեռուստահաղորդումներ և այլն):
<p>10. Հազարամյակի նպատակների վերափոխումը Կայուն զարգացման նպատակների, Կայուն զարգացման ցուցանիշները և համաթիվ</p>	<p>Կայուն զարգացման բոլոր նպատակները՝</p> <ol style="list-style-type: none"> 1. Ամենուրեք վերացնել աղքատությունը՝ իր բոլոր ձևերով ու դրսևորումներով 2. Վերացնել սովը, հասնել պարենային ապահովության ու բարելավված սնուցման, խթանել գյուղատնտեսության կայուն զարգացումը: 3. Ապահովել առողջ կյանք և խթանել բարեկեցություն բոլորի համար՝ անկախ տարիքից: 4. Ապահովել ներառական ու հավասարապես հասանելի որակյալ կրթություն և խթանել ողջ կյանքի ընթացքում ուսման հնարավորություններ բոլորի համար: 5. Հասնել զենդերային հավասարության, զորացնել բոլոր կանանց և աղջիկներին: 6. Ապահովել բոլորի համար ջրի ու սանիտարական պայմանների առկայությունը և դրանց կայուն կառավարումը: 7. Ապահովել բոլորի համար մատչելի, հուսալի, կայուն և ժամանակակից էներգիայի հասանելիություն: 8. Խթանել շարունակական, ներառական ու կայուն տնտեսական աճ, լրիվ և արդյունավետ զբաղվածություն 	<ul style="list-style-type: none"> • ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից հաստատված Կայուն զարգացման նպատակների իրականացման գործընթացում հաշվի առնել երկրում Հազարամյակի զարգացման նպատակների իրականացման արդյունքում ձեռք բերած փորձը, հասկապես՝ - ուժեղացնել միջսեկտորալ համագործակցությունը հանուն կայուն զարգացման, - բարձրացնել հանրության իրազեկումը և ապահովել ավելի լայն մասնակցությունը Կայուն զարգացման նպատակների իրականացման գործընթացում, • Զարգացնել Կայուն զարգացման համաթվի մեթոդաբանությունը՝ հաշվի առնելով ներկայումս հաստատված կայուն զարգացման նպատակները, ինչպես նաև աղետների ռիսկերի նվազեցման ցուցանիշները: • Նախատեսել միջոցառումներ բնակավայրերի էկոլոգիական կարգանիշի (ռեյտինգների) սահմանման, համակարգի մշակման, ինչը հիմք կհանդիսանա երկիրն ըստ «կանաչ տարածաշրջանների» աշխարհագրական գոտիավորման համար, մասնավորապես ուսումնասիրել և ՀՀ քաղաքների նկատմամբ փորձարկել «Կայուն հասարակության հիմնադրամ» հոլանդական կազմակերպության կողմից մշակված, փորձարկված և 2014թ. հրապարակված «Կայուն քաղաքի համաթիվը»: • Հաշվի առնելով, որ վերջին տարիներին միջազգային ասպարեզում զգալիորեն աճել է հետաքրքրությունը վերոհիշյալ հիմնախնդրի

<p>ու արժանապատիվ աշխատանք բոլորի համար:</p> <p>9. Ստեղծել դիմակայուն ենթակառուցվածքներ, աջակցել ներառական և կայուն արդյունաբերականացմանը, խթանել նորարարությունը:</p> <p>10. Կրճատել անհավասարությունը երկրների ներսում և դրանց միջև:</p> <p>11. Քաղաքներն ու մարդկային բնակավայրերը դարձնել կայուն, ներառական, անվտանգ և դիմակայուն</p> <p>12. Ապահովել կայուն սպառման և արտադրության մոդելների իրականացումը:</p> <p>13. Ձեռնարկել անհապաղ գործողություններ՝ պայքարելու կլիմայի փոփոխության և դրա ազդեցությունների դեմ:</p> <p>14. Ապահովել օվկիանոսների, ծովերի ու ջրային պաշարների պահպանությունը և կայուն օգտագործումը՝ հանուն կայուն զարգացման:</p> <p>15. Պաշտպանել և վերականգնել ցամաքային էկոհամակարգերն ու խթանել դրանց կայուն օգտագործումը, ապահովել անտառների կայուն կառավարումը, պայքարել անապատացման դեմ, դադարեցնել և շրջադարձել հողերի վատթարացումը, կասեցնել կենսաբազմազանության կորուստը:</p> <p>16. Խթանել խաղաղ և ներառական հասարակությունների կառուցումը՝ հանուն կայուն զարգացման, բոլորի համար հասանելի դարձնել արդարությունը, բոլոր մակարդակներում ստեղծել արդյունավետ, հաշվետու և ներառական հաստատություններ:</p> <p>17. Կատարելագործել ԿԶՆ-ների իրականացման միջոցներն ու ակտիվացնել գլոբալ գործընկերությունը՝ հանուն կայուն զարգացման:</p>	<p>նկատմամբ՝ փորձագիտական հանրության կողմից իրականացվում են բազմաթիվ ու բազմաբովանդակ ուսումնասիրություններ տվյալ ուղղությամբ, (սկսած տեղական նշանակության համաթվերից մինչև «համաշխարհային կառավարման համաթիվը»), ընդ որում մշակված մեթոդաբանությունները բավականին համահունչ են հայաստանյան տարբերակին, առավել ակտիվացնել Հայաստանում մշակված և փորձարկված մեթոդաբանության միջազգայնացման գործընթացը:</p>
---	---

<p>11.«Կանաչ տնտեսության» տնտեսական և իրավական մեխանիզմների զարգացում</p>	<p>Կայուն զարգացման նպատակները (ԿՁՆ)՝ 1-4, 6-17</p> <p>1.Ամենուրեք վերացնել աղքատությունը՝ իր բոլոր ձևերով ու դրսևորումներով</p> <p>2.Վերացնել սովը, հասնել պարենային ապահովության ու բարելավված սնուցման, խթանել գյուղատնտեսության կայուն զարգացումը:</p> <p>3.Ապահովել առողջ կյանք և խթանել բարեկեցություն բոլորի համար՝ անկախ տարիքից:</p> <p>4.Ապահովել ներառական ու հավասարապես հասանելի որակյալ կրթություն և խթանել ողջ կյանքի ընթացքում ուսման հնարավորություններ բոլորի համար:</p> <p>6. Ապահովել բոլորի համար ջրի ու սանիտարական պայմանների առկայությունը և դրանց կայուն կառավարումը:</p> <p>7. Ապահովել բոլորի համար մատչելի, հուսալի, կայուն և ժամանակակից էներգիայի հասանելիություն:</p> <p>8. Խթանել շարունակական, ներառական ու կայուն տնտեսական աճ, լրիվ և արդյունավետ զբաղվածություն ու արժանապատիվ աշխատանք բոլորի համար:</p> <p>9. Ստեղծել դիմակայուն ենթակառուցվածքներ, աջակցել ներառական և կայուն արդյունաբերականացմանը, խթանել նորարարությունը:</p> <p>10. Կրճատել անհավասարությունը երկրների ներսում և դրանց միջև:</p>	<ul style="list-style-type: none"> • Էկոհամակարգային ծառայությունների գնահատման իրավական և մեթոդաբանական հիմքերի մշակում: • Բնական պաշարների օգտագործման քվոտավորում (հանքարդյունաբերություն, ստորգետնյա ջրերի օգտագործում և այլն): • Հնարավորության դեպքում պոչամբարների օգտագործում որպես հումք, թափոնների վճարների օպտիմալ դրույքաչափի սահմանում և այլն: • Վերականգնվող էներգետիկայի (հատկապես արևային էներգիայի) և էլեկտրական տրանսպորտի ու ոչ շարժիչային (հեծանիվ, հետիոտն) երթևեկության ենթակառուցվածքի զարգացման իրավական հիմքերի մշակում և ֆինանսավորման աղբյուրների հայթայթում: • Առկա տնտեսական սպառնալիքների գնահատում և տնտեսական անվտանգության նախապայմանների ու բաղադրիչների ապահովում: • Կանաչ տնտեսության զարգացման համար գոյություն ունեցող ինստիտուցիոնալ հնարավորությունների ու ռեսուրսների նույնականացում: • Կառավարության կողմից կանաչ տնտեսության զարգացման վերաբերյալ հաշվետվողականության համակարգի սահմանում: • Գործունեություն ծավալելու թույտվությունների տրամադրման հստակեցված մեխանիզմի սահմանում: • Ռազմավարական նշանակության առանձին ռեսուրսների օգտագործման գծով մշտադիտարկման սահմանում: • Ծանր, վնասակար արտադրությունների, աշխատանքների, մասնագիտությունների և պաշտոնների, առանձնապես ծանր, առանձնապես վնասակար արտադրությունների, աշխատանքների, մասնագիտությունների և պաշտոնների ցանկերի, աշխատաժամերի, ամենամյա արձակուրդների, աշխատավարձերի հաշվարկման մեթոդաբանությունը սահմանող իրավական ակտերի վերանայում և համապատասխանեցում միջազգային չափանիշներին:
---	--	--

	<p>11. Քաղաքներն ու մարդկային բնակավայրերը դարձնել կայուն, ներառական, անվտանգ և դիմակայուն</p> <p>12. Ապահովել կայուն սպառման և արտադրության մոդելների իրականացումը:</p> <p>13. Ձեռնարկել անհապաղ գործողություններ՝ պայքարելու կլիմայի փոփոխության և դրա ազդեցությունների դեմ:</p> <p>14. Ապահովել օվկիանոսների, ծովերի ու ջրային պաշարների պահպանությունը և կայուն օգտագործումը՝ հանուն կայուն զարգացման:</p> <p>15. Պաշտպանել և վերականգնել ցամաքային էկոհամակարգերն ու խթանել դրանց կայուն օգտագործումը, ապահովել անտառների կայուն կառավարումը, պայքարել անապատացման դեմ, դադարեցնել և շրջադարձել հողերի վատթարացումը, կասեցնել կենսաբազմազանության կորուստը:</p> <p>16. Խթանել խաղաղ և ներառական հասարակությունների կառուցումը՝ հանուն կայուն զարգացման, բոլորի համար հասանելի դարձնել արդարությունը, բոլոր մակարդակներում ստեղծել արդյունավետ, հաշվետու և ներառական հաստատություններ:</p> <p>17. Կատարելագործել ԿՁՆ-ների իրականացման միջոցներն ու ակտիվացնել գլոբալ գործընկերությունը՝ հանուն կայուն զարգացման:</p>	<ul style="list-style-type: none"> • Աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման նորմերը և կանոնները սահմանող իրավական ակտերի համապատասխանեցում միջազգային չափանիշներին, անվտանգության տեխնիկայի վերահսկման ինստիտուցիոնալ համակարգի բարելավում: • Աշխատանքի վայրում դժբախտ դեպքերից և մասնագիտական հիվանդություններից պարտադիր ապահովագրության համակարգի ներդրում և կատարելագործում • Տնտեսության վնասակար ճյուղերում նոր ձեռնարկությունների բացման թափանցիկ գործընթացների ապահովման և թույլտվության ընթացքում համայնքի կարծիքը ներկայացնող ընդհանուր ժողովի որոշման առկայության պարտադիր պահանջը, բնակիչների շահերի պաշտպանության նորմերը, վնասի փոխհատուցման հաշվարկման մեթոդաբանությունը սահմանող իրավական ակտերի վերանայում և համապատասխանեցում միջազգային/եվրոպական ստանդարտներին: • Վնասակար արտադրությունների և խոշոր ձեռնարկությունների համար սահմանել պարտադիր նախապայման՝ ձեռնարկության ռազմավարության մեջ ունենալ սոցիալական կորպորատիվ պատասխանատվություն սահմանող դրույթ՝ բնապահպանական, համայնքային զարգացման և սոցիալական ծրագրերի իրականացման պորտֆելի և դրանք ոլորտային ՀԿ-ներին պատվիրակման սկզբունքի սահմանմամբ: • Հատուկ խրախուսել այն կազմակերպություններին, որոնք օգտագործում են երկրորդական հումք և ներդնում են անթափոն տեխնոլոգիաներ: • Կանաչ տնտեսությանը խոչընդոտող կարևորագույն բնապահպանական խնդիրների նույնականացում: • Արտադրական թափոնների և շրջակա միջավայրի համար վնասակար ապրանքների համար բնապահպանական վճարների գանձման մեխանիզմի ներդրում: • Հանրային լայն ընդգրկում ունեցող ոլորտների գերակայության հաստատում տնտեսական գործունեության այլ տեսակների նկատմամբ (գյուղատնտեսություն, ջրային տնտեսություն, զբոսաշրջություն և այլն): • Կանաչ տնտեսության միջոցով Հայաստանում առկա տարածքային
--	--	--

		<p>զարգացման անհամաչափությունների կրճատման հնարավորությունների բացահայտում և լքված գյուղերի վերաբնակեցման ծրագրի մշակում:</p> <ul style="list-style-type: none"> • Երկրում աղքատության կրճատման գործուն միջոցառումների ծրագրի մշակում: • Հանրային կառավարման համակարգում արմատավորել միջազգային պրակտիկայում կիրառվող "կանաչ տնտեսության" կառավարման առավել արդյունավետ մեխանիզմները: • ՀՀ կառավարությունը խրախուսում է շրջակա միջավայրի կառավարման տնտեսական մեխանիզմների՝ ինչպիսիք են կանաչ հարկերի, վճարների, սուբսիդիաների, դեպոզիտ-վերադարձման, բնություն-արտաքին պարտք հաշվանցման, թույլտվությունների առքուվաճառքի մեխանիզմների ներդրումը, ձգտել դրանց ընդլայնմանը եւ կատարելագործմանը: • «Կանաչ տնտեսության» զարգացման և դրան միտված առանձին տնտեսական ծրագրերի իրագործումը խթանելու նպատակով առավելագույնս օգտագործել գոյություն ունեցող հարկային և մաքսային արտոնությունները, իսկ անհրաժեշտության դեպքում՝ առանձին ծրագրերի համար դիմել ՀՀ Կառավարությանը՝ լրացուցիչ արտոնությունների տրամադրման հարցով: • Համաֆինանսավորման մեխանիզմի գործադրման դեպքում առաջնություն տալ այն ծրագրերին, որոնք առավել համահունչ են «կանաչ տնտեսության» զարգացմանը: • Կանաչ տնտեսության ռեսուրսների հաշվառում (մարդկային, հանքահումքային, արտադրական, ֆինանսական) և դրանց օպտիմալ ու ռացիոնալ օգտագործման մեխանիզմների մշակում: • Հանրային իրազեկում, կրթություն, այդ թվում՝ «Կանաչ տնտեսությունը» խթանելու համար միջին մասնագիտական կրթօջախներում և բուհերում ներառել կանաչ տնտեսության մասին գիտելիքների դասավանդում, անհրաժեշտ հմտություններով մասնագետների պատրաստում: • Էներգիայի այլընտրանքային աղբյուրների կիրառում, այդ թվում՝ ճանապարհային, փողոցային և այգիների լուսավորության համար
--	--	---

		<p>արևային մարտկոցների կիրառում:</p> <ul style="list-style-type: none"> • Արևային էներգիայով աշխատող պանելային սարքերի ներմուծում և երկրում հավաքման արտադրությունների հիմնում: • Արևի ճառագայթների կոնցենտրացման բարձր արդյունավետ սկզբունքի վրա հիմնված Հայաստանի Հանրապետություն մշակված և կիրառված փորձի խրախուսում ու ընդլայնում: • Քամու էներգիայի ստացում, այդ նպատակով հողմագեներատորների ներմուծում և տեղադրում: • Կանաչ աշխատատեղերի ստեղծում: • Կանաչ տնտեսության հայեցակարգը խթանել փոքր ուղեցույցների հրատարակմամբ ձեռնարկությունների համար: • Ձեռնարկությունների արդիականացման նպատակով էժան և էքսկյուզիվ վարկերի տրամադրում բանկերի կողմից: Հարցի կարգավորում ԿԲ և ՀՀ կառավարության աջակցությամբ: • Կանաչ տնտեսության ուղղությամբ կազմակերպությունների մոտիվացիայի խթանում՝ պատվոգրեր, պետական գնումներում առավելություն, սերտիֆիկացում և այլն: • Հատուկ ուշադրություն դարձնել այն առաջարկություններին /միջոցառումներին, որոնք համահունչ են ՀՀ Աղետների ռիսկերի նվազեցման ազգային ռազմավարությանը:
--	--	---

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԶԲ՝ Ասիական զարգացման բանկ

ԱՄՆ ՄԶԳ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն

ԲՀՊՏ՝ բնության հատուկ պահպանվող տարածքներ

ԲՊՄՄ՝ Բնության պահպանության միջազգային միության (IUCN)

ԲՈՒՀ՝ բարձրագույն ուսումնական հաստատություն

ԳԱԱ՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա

ԳՄՀԸ՝ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն (GIZ)

ԳԷՀ՝ Գլոբալ էկոլոգիական հիմնադրամ

ԳԶՕ՝ Գենետիկորեն ձևափոխված օրգանիզմ

ԵԱՀԿ՝ Եվրոպայում անվտանգության ու համագործակցության կազմակերպություն

ԵՄ՝ Եվրամիություն

ԵՊՀ՝ Երևանի Պետական Համալսարան

ԿԶԾ՝ Կայուն զարգացման ծրագիր

ԿԿԹԿ՝ Կոշտ կենցաղային թափոնների կառավարում

ԿՏԲԿ՝ Կովկասի տարածաշրջանի բնապահպանական կենտրոն

ՀԳՀՄ՝ Հայաստանի գործատուների հանրապետական միություն

ՀԲ՝ Համաշխարհային Բանկ,

ՀՀ ԱՎԾ՝ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն

ՀՀ ԷԲՊՆ՝ ՀՀ էներգետիկայի ու բնական պաշարների նախարարություն

ՀՀ ՏԿՆ՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարություն

ՀԷԿ՝ Հիդրոէլեկտրակայան

ՀԿ՝ հասարակական կազմակերպություն

ՀՆԱ՝ համախառն ներքին արդյունք

ՄԱԿ՝ Միացյալ ազգերի կազմակերպություն

ՄԱԶԾ՝ ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր

ՄԱԿ-ի ԱԽՕՏՀ՝ ՄԱԿ-ի Ասիական-Խաղաղ օվկիանոսյան տարածաշրջանային հանձնաժողով

ՄԱԿ-ի ԵՏՀ՝ ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողով

ՄԱԿ ՇՄԾ՝ ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագիր

ՅՈՒՆԵՍԿՕ՝ ՄԱԿ-ի Կրթության, գիտության ու մշակույթի կազմակերպություն

ՆԴՀ՝ Նախադպրոցական հաստատություն

ՇՄԱԳ՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում

ՊԳԿ՝ ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն

ՊՈԱԿ՝ Պետական ոչ առևտրային կազմակերպություն

ՍԹԿ՝ Սահմանային թույլատրելի կոնցենտրացիա

ՎԷ՝ վերականգնվող էներգիա

ՎԶԵԲ՝ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ

ՏԶՀԿ՝ Տնտեսական զարգացման ու համագործակցության կազմակերպություն

ՏԻՄ՝ Տեղական ինքնակառավարման մարմին

ՓՀԷԿ՝ Փոքր հիդրոէլեկտրակայան

ՓՄԶ՝ փոքր և միջին ձեռնարկություններ

ՕԿԶ՝ օրվա կարգավորիչ ջրամբար

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Резолюция 70/1, принятая Генеральной Ассамблеей ООН , 70-сессия. Пункты 15 и 116 повестки дня. «Преобразование нашего мира: Повестка дня в области устойчивого развития на период до 2030г.». 25 сентября 2015г.
2. Резолюция 66/288, принятая Генеральной Ассамблеей ООН. 66-ая сессия, пункт 19 повестки дня. Приложение. «Будущее, которое мы хотим». 27 июля 2012.
3. Հայաստանի Հանրապետություն. Ռիո+20 ազգային գնահատման զեկույց. ՀՀ Կառավարություն, ՄԱԶԾ –Հայաստանյան գրասենյակ, Երևան, 2012.
4. «Երկիր մոլորակ» ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի և զարգացման գազաթնաժողովի նյութեր, Ռիո-դե-ժանեյրո, 1992.
5. Հայաստանի Հանրապետության աղետների ռիսկերի նվազեցման ազգային ռազմավարության իրականացման գործողությունների ծրագիր. Հաստատվել է ՀՀ Կառավարության կողմից 7 մարտի 2012, 281 – Ն որոշմամբ:
6. 2016-2020 թթ.Հայաստան-ՄԱԿ զարգացման աջակցության ծրագիր. Ստորագրվել է ՀՀ Կառավարության և ՄԱԶԾ –Հայաստանյան գրասենյակի կողմից 31 հուլիսի, 2015թ.
7. Глобальный зеленый новый курс. Доклад UNEP, Женева, 2009.
8. Towards a Green Economy. Pathways to Sustainable Development and Poverty Eradication. UNEP GRID Arendal, 2011.
9. A guidebook to the Green Economy , Division for Sustainable Development, UNDESA, 2012.
10. «Озеленение» экономики: продвижение экологической проблематики в экономическое развитие» Материалы Конференции министров ЕЭК ООН «Окружающая среда для Европы», Астана, Казахстан, 2011.
- 11.«Зеленый рост» и природоохранное управление в странах Восточной Европы, Кавказа и Центральной Азии», OECD, 2012.
- 12.Дорожная карта осуществления Глобальной программы действий по образованию в интересах устойчивого развития. ЮНЕСКО, Париж, 2014.
- 13.Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր. Հաստատվել է ՀՀ Կառավարության 2014 թ. մարտի 27-ի N 442 - Ն որոշմամբ:
- 14.Ежегодник ЮНЕП, 2009. Новые отрасли науки и развитие в условиях изменений в окружающей среде. UNEP, Найроби, 2009.

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ